

633

0

ՏՐԵՅՈՒՐ
 ՏՐԻԿՆ
 ԵՐԿՆՈՍՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԵՆԻԱ



ՄԱՐԿՆ
 ԵՐԿՆՈՍՈՒԹՅՈՒՆ

1993
70.

0

ՀԱՐՅՈՒՐ
ՏԱՐԿԱ
ԵՐԿԻՈՒՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՅՈՒՄՈՒՄ

ԿԱՆՈՒՄՈՒՄ

30.556

ԵՐԿՐԱՆԻ ՆԱԽԱՐԱՅ
ՊՏ 24. Ե ՀԱՄԱՐԱՆՈՒՄ
ԳՐԱԳԱՐԱՆ

Երևան «Հայաստան» 1990

Գրայնա՝ բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր ՍԵՐՉԵՅ ՍԱՐԿՅԱՆ

Կարապետյան Բ.

Կ. 294 Հարյուր տարվա երկխոսություն (Բաֆֆու ճանապարհորդ, հետ-
քերով) — Եր., Հայաստան, 1990. — 224 էջ, 12 թ. նկ.:

Այնտեղ էվիդված է Բաֆֆու ծննդյան 150-ամյակին: Գրեք
Բաֆֆու «Երկու ամիս Ազիանից և Սյունյաց աշխարհում» և «Խամ-
սայի մեխիություններ» պատմագրական աշխատության միջոցով
կենդանի գրայն է հայկական բնակավայրերի — այդ երկրամասի
պատմական անցյալի, հետագա հարյուր տարիներում տեղի ունեցած
խաղաղությունների մասին:

Այն հասցեագրված է ընթերցող լայն շրջաններին:

4702000000 64-90
701 (01) — 90

ԳՄԴ 63.3(22)

Ա. ԹԻՖԼԻՍԻ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ՀՄԱՅԸԸ

Ժամանակակից շքեղ պողոտաներից անցնում եմ նեղ ու հին փա-
ղոցները: Որոնում եմ 1881 թվականի թիֆլիսյան հմայքը՝ իր կինտոնե-
ներով, վաճառականների պննված կանանցով ու շուայորեն ժպիտներ
պարզեղ օրիորդներով, հպարտ կեցվածքով աղքատությունը քողարկող
մտավորականներով, գյուղացիներով, շուկա շտապող թուրքերով, վեր-
ջապես, շքեղ շքամուտքեր ու պատշգամբներ ունեցող տներով: Մեթե-
նայորեն փնտրում եմ նասիրովների խանութը: Ահա և հին խանութնե-
րից մեկը: Ներս կմտնեմ ու կտեսնեմ Հ. Հայկազունու նկարագրած՝
«կարճ մորուքով, հնամաշ պիղակը հագին, կապույտ ակնոցով ցածրա-
հասակ մի երիտասարդի, որը գլուխը միշտ կախ՝ զբաղված է միշտ հա-
շիվներ անելով կամ լրագիր կարգալով»:

Դա Հակոբ Մելիք-Հակոբյանն էր, նույն ինքը՝ Բաֆֆին:

Բայց ես սթափվում եմ: Խանութ չեմ մտնում, հասկանալով, որ 1868
թվականը հետ չի բերվի, ու «փայաջուկցի Հակոբը» այլևս այնտեղ պատ-
րաստի հազուստ չի վաճառում:

Հին փողոցը հատող ծերունուն հարցնում եմ Դվորցովայա փողոցի
տեղը:

— Դվորցովայա, — տնտղեց ուղեղի ծալքերում, — վայ մե դեղա՛, —
ձեռքը զրեց ճակատին, ինչ-որ բան հայտնաբերողի նման բացական-
չեց, — հա էլի՛, տո, Ռուսթավելի խոմ գիղաս... բա վո՛ւր շինքն ի՞նչ
ուղում:

— Հինգ համարը:

— Արծրունու քարվանսարա՞ն:

— Այո, քարվանսարան ու «Մշակի» խմբագրատունը, որտեղ Բաֆ-
ֆին էր աշխատում:

Մեթենաների հոսքն ու նրանց տակ շտրոբիկու հոգսը ինձ կրկին
վերադարձրին 20-րդ դարը: Դվորցովայա փողոցի տեղ Ռուսթավելու

պողոտան է, Արծրունու քարվանսարայի փոխարեն՝ Գրիբոյեդովի անվան
առևտրական պետական թատրոնը:

Գրող Բենիկ Սեյրանյանի հետ հինավուրց Սուրյակի թաղում փրկու-
թում եմ Բաֆֆու վարձած բնակարանը: Գետաքարերով պատած փո-
ղոցներն ու հին տները ինձ կրկին տեղափոխում են 19-րդ դարը: Ձեռ-
նափայտը քահանայի գավազանի պես բռնած հանդիստ քայլերով դեպի
մեզ է գալիս գլխարկը աչքերին քաշած, միջինից էլ ցածր, արտաբուստ
հասարակ վաճառականի տպավորություն թողնոց մի մարդ: Ահա հա-
վասարվում է մեզ, նայում մեր կողմը: «Մի դուրեկան ժպիտ լուսա-
վորեց այդ, ըստ երևույթին, մոռյլ մարդու թախծայի դեմքը»: Թվաց, թե
կարդում եմ նրա մտքերը: Այո, նա կիսատ մնացած «Դավիթ-Բեկի», «Հա-
րեմի», «Մամվելի», «Սայրու» զուգահեռ մտածում էր մի նոր ու ան-
հայտներով լեցուն ճանապարհորդության մասին, որը ծրարել էր սկսել
հենց վաղը: Մտովի շրջում է դարաբաղյան գյուղերով, սար ու ձորերով,
հանդիպում հզոր մելիթների ժառանգներին, լեռնցի խիզախ մարդկանց,
նրանց պատմում, թե ինչպես են իրենց նախնիները պատմական դա-
ժան իրադարձությունների, թոհուրոհների մեջ, սրպես թանկագին մա-
սունք, պահպանել հայրենի երկրի ազատությունն ու ինքնությունը:
Բայց սթափվեցի ու զգացի, որ այս տեսիլքը Շիրվանզադեի սողերի
ազդեցության տակ ծնված նոր պատրանք էր:

Ուշ վերածննդի կնիքը կրող գեղեցկատես տանը Բենիկ Սեյրանյանը
ծանոթ մարդ էր փնտրում, որը կարողանար օգնել մեզ Բաֆֆու տան
որոնումներում:

— Այս տունը Բաֆֆու ժամանակ պատկանել է Պարսկաստանի
հյուպատոսությունը, — ասաց ուղեկիցս:

Տանտիրուհին նկարագրեց նախկին կաթոլիկական գերեզմանատան
տեղը, որի մոտ էլ պետք է փնտրեինք Բաֆֆու բնակարանը: Հարևան
սնից մի մարդ մեր առջև, հենց սալաքարերի վրա փռեց հին Քիֆլիսի
100-ամյա քարտեղը: Ճշտեցինք նովո Օրլովսկի փողոցի տեղը:

— Սա է, — բացականչեց Բենիկ Սեյրանյանը՝ կանգ առնելով փոք-
րիկ ու գեղեցիկ երկհարկանի տան առաջ: — Սվանելի 6, հիշենք, որ
ուրիշներին էլ պատմենք:

Այսանդ ամեն ինչ Բաֆֆիով է շնչում: Սուր կողերով դեպի վեր շար-
ված գետաքարերով փողոցը, փոքրիկ տները, պատշգամբը, փայտե
չքիզ դուռը, փայլուն բռնակը ամբողջ մի դար քարացել են, որպեսզի
պահպանեն նրա հայացքը, չեթմոթյունը: Ձեռքս հպվում է բրոնզե փայ-
լուն բռնակին..., թվում է՝ բռնում եմ նրա ձեռքը: Նեղ ու մուրթ միջանցք:
Փայտե աստիճանները ճոնչում են ինչպես հարյուր տարի առաջ: Սենյակի

խորքում փողոցում հանդիպած այն նույն մարդն է. «բավական մեծ
զլիտով, լայն, բարձր, կնճռոտ ու քունքերի մոտ դուրս ցցված ճակատով,
խանձր ու սև ունքերով, խիտ բեղերով ու կարճիկ մորուրով, ուր նըշ-
մարվում էին մի քանի սպիտակ թելեր»: Առաջին հայացքից անհյուսիս-
կալ ղեմքին մի դուրեկան, անկեղծ ու մեղմ ժպիտ փայլեց: Բուսականու-
թյամբ հարուստ Արևելքում ծնված գրողն իր անշուք բնակարանը շըր-
չուպատել էր բնության գեղեցիկ և գույնզգույն ժապավեններով: Մեր
առջև էր «հայ ազգի վշտերի ու դառնությունների ամենանուսանդուն թարգ-
մանը և նրա նվիրական գաղափարների ամենատաղանդավոր արտա-
հայտիչը»՝ Բաֆֆին: Թվում է՝ լսում եմ նրա «հանգարտ, անփոփոխ որն-
գային ձայնը»:

Բայց մշտական տխուր ժպիտով պարուրված շուրթերը սեղմվում
են, ճակատը ավելի մռայլվում...

— Եթե հայերի մոտ անհատական փառաստանը ընկերական լինե-
ր, տպա կարող էին աշխարհի երեսին ամենագուրեղ ազգերից մեկը լի-
նել: — Ու կյանքի դառը փորձությունների քուրայում ձուլված, կարծրա-
ցած մարտիկի դեմքը պատվում է անսահման թախծով:

Բայց այս ամենը կրկին ու կրկին պատրանք էր միայն:

Հարևան տան բնակիչները հայտնեցին, որ այդ տանը Բայանդուր
անունով մի ծեր ուսուցիչ էր բնակվում: 1881 թվականի հուլիսի 25-ին
նստելով «ձվի կիսատ կենպի նմանվող փստոսյին սալակը», պատմաբան,
հնագետ, փրպատան Բաֆֆին ուղևորվել է դեպի Գանձակ, Ղարաբաղ,
Սյունիք ու Գողթան՝ նպատակ ունենալով ուսումնասիրել Ղարաբաղի
մելիթների պատմությունը, միևնույն ժամանակ տեսնել այն վայրերը,
որոնք կապված են հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի
գեղավարներից մեկի՝ Դավիթ-Բեկի գործունեության հետ, տպա Տաթևի
վանքում գրել վեպի մնացած հատվածներն ու տպագրության համար
պարբերաբար ուղարկել «Մշակ» թերթին:

Հավելաբար հինավուրց թաղամասում գտնվող հայ արվեստի և գրու-
կանության գործիչների պանթեոնը դժվար չէր գտնել: Կենտրոնում Բաֆ-
ֆու հուշարձանն է: «Բաֆֆի 1888»: Քիչ ներքև Հ. Մ. Հակոբյանի խոս-
քերն են՝ «Քար է քո սիրտը, և խիղճդ է մեռած, քանի ըրիններ, քանի
կոտորած տեսար՝ լռեցիր ու դարձնալ պայծառ հայ երկրի վերա
կապում ես կամար»: Հուշարձանը պսակվում է քարակերտ քնարով:
Մի կողմում Հ. Թումանյանի, մյուս կողմում Գ. Սունդուկյանի գրանիտ-
յա շիրմաքարերն են:

Միջին հասակի, լիքը թշերով, ծանրամարմին մի ծերունի պտտվում
էր մահարձանի շուրջն ու ինքն իրեն ինչ-որ բան մտմտում: Հետո սկսեց

զննել պանթեոնի դազոններում շարված մարմարի փորրիկ սալաքարերը՝
Գիմեց ինձ:

— Աչքերս լավ չեն տեսնում, տղա՛ս, ո՞ւմ անունն է այս քարին:
— Մակար Եկմալյան,— բարձրաձայն կարգացի ես, ապա ըսպա-
սելով հաշորդող հարցերին, շարունակեցի,— Ղազարոս Աղայա՛ն, Մուրա-
ցա՛ն, Մերե՛նց, Հակոբ Հակոբյա՛ն, Գևորգ Փիրումյա՛ն, Պերձ Պոռչյա՛ն,
Ստեփան Ներսիսյա՛ն, Գևորգ Արծրունի՛...: Ընդամենը երեսուներկու
անուն:— Փորձելով իմանալ նրա հուզմունքի պատճառը, ասացի,—
զգացվում է, որ վաղուց է, ինչ այստեղ չեք եղել:

— Այո, շատ վաղուց, երևի 56 տարի,— ասաց նա,— Ներսիսյան
դպրոցն ու պոլիտեխնիկական ֆակուլտետը ավարտելուց հետո Քրիլի-
սի դալու առիթ չի եղել:

— Իսկ հիմա...

— Հիմա եկել եմ ներսիսյանականների հավաքին մասնակցելու,—
ասաց նա, ապա զգալով հետաքրքրությունս իր անձի նկատմամբ,
ասաց,— գետաշենցի եմ, լսած կլինես, Գանձակի կողմերում այդպիսի
դյուղ կա, Մուրեն Ղևոնդի Տեր-Իսրայիլյան:

— Բաֆֆին եղել է չէ՞ ձեր գյուղում:

— Իհարկե՛,— հպարտությամբ պատասխանեց ծերունին,— եթե եր-
բևէ Գետաշեն գաս, հանդիպիր ինձ:

— Իսկ ե՞րբ եք ավարտել ներսիսյան դպրոցը:

— 1921-ին, հետո 6 տարի հասարակական գիտությունների պոլի-
տեխնիկական ֆակուլտետում եմ սովորել,— ասաց նա:

Պանթեոնի հուշապատին վրայ բանաստեղծ Սերեթելու տողերն են.

Ես մի վրացի,
Իսկ դու հայ ես մի,
Բայց մենք երկուսով
Եզրայր ենք հիմի,
Երկուսս էլ զավակ
Նույն հողի, ջրի,
Եվ նույն բնության,
Եվ նույն լեռների:

Կողքին՝ մեծ լուռեցու բանաստեղծությունից մի կտոր

Ողջո՛ւյն, ողջո՛ւյն,
Ձեզ, հին ու նոր,
Արի՛, բարի՛ ընկերներ,
Արարատի կողմից էսօր
Սղրայրական երգ ու սեր:

Բ. ԴԵՊԻ ԳԱՆՉԱԿ

Օգոստոսյան Քրիլիսին ամպամած էր Ճայթում է ամպոսպը, շա-
ցուցիչ լույսով մի պահ լուսավորում ինձ անծանոթ ու երևի Բաֆֆու հա-
մար անձանաչելիորեն փոփոխված քաղաքը: Նստեցի կիրովաբադ մեկնող
ավտոբուսը: Գիտեմ, որ հարյուր տարի առաջ մեծ գրողը ամենևին էլ հար-
մարավետ ավտոբուսով չի սկսել իր ճամփորդությունը: Ասֆալտապատ
ճանապարհը ոչ մի կերպ չի կարող համեմատվել հին խճուղու հետ, որի
վրայով զնալուց միշտ խուսափում էր սալապանը, որն «իր խելքով
պակաս չէր երևում իր ձիաներից»: Փոստային սալի դանդաղ ընթացքն
ու հաճախակի կանգառները գրողին հնարավորություն են ընձեռել
նորանոր արկածների, դիպվածների հանդիպել, որոնք էլ երկրի կացու-
թյունը նկարագրելու համար հարուստ նյութ են ծառայել: Ավտոբուսի
տրագ ընթացքը հնարավորություն չի տալիս ինձ նախապես ծրագրված
Բաֆֆու հետքերով ճանապարհորդությունը ճշտորեն իրականացնել:
Ուստի փորձում եմ անձրեից թրջված ապակիներից դուրս նայելով հնա-
րավորին շտի շատ բան ընկալել:

Անշնաք Կարմիր կամուրջն, ու սկզբեց Ազրբեջանական ԽՍՀ-ի տա-
րածքը: Հետ նայեցի, երամի գետի վրացական կողմում բլրի վրա պղըն-
ձակոփ կենաց ծառ էր կանգնեցված: Նրա հակադիր ափին բարձր սյան
վրա Ազրբեջանական ԽՍՀ գերբն էր: Խոշոր տառերով գրված էր՝ «Մադ-
կի՛ր, հայրենի Ազրբեջան»:

«Մենք անցնում էինք դատարկ անապատների միջով: Դեպի ձախ՝
մինչև Կուր գետի՝ Եգեբր, դեպի աջ՝ մինչև Հայ-Գանձակեան լեռները,
այդ ընդունակ տարածության վրա, բացի նախապահորդներից, ուրիշ
ոչ մի մաղկայինն աւարած չէր երևում»:

Ազոալների երամը ծանրորեն պոկվեց այգիներից ու անհետացավ
մերկ բլրի հետևում: Այգիների եզրերին արկղերի կույտեր էին: Տրակ-
տորները շանասիրաբար դեղափոշի են ցրում, բերքահավաքից առաջ
կատարում վերջին աշխատանքները: Քվում է, թե համատարած այգի-
ներին վերջ չի լինելու: Կարծես անէությունից, հանկարծ հայտնվեց
ազրբեջանական առաջին գյուղը: Շիֆրն տանիքներով երկհարկ տները
հպարտ կեցվածքով այգիների արանքից հետաքրքրությամբ մեզ են նա-
յում: Ամեն ինչ անձանաչելիորեն փոխվել էր, ու անհնար էր Բաֆֆու
նկարագրած պատկերից որևէ բան գտնել այստեղ:

«Այստեղ օւ այնտեղ երևում էին գեանափոր խորշեր, օրոնց մեջ
բնակվում է այդ թախառաշրջիկ ժողովուրդը, երբ ձյունը պատում է եր-
կիրը: Մարդը չի կարող այսպիսի մթին և խոնավ խորշերում բնակվել...»

Չարմանալի է, որ ռուսաց տիրապետությունից հետո մտա մեկ դար շրջին շկարողացավ փոխել այդ կիսավայրենիների կյանքից»:

Ճանապարհին երևանյան արտադրության նորաթուխ մեքենաներ հայտնվեցին: Երկու կողմերում կրկին խաղողի այգիներ են: Հիշում եմ, 20 տարի առաջ այստեղ ամառի տարածք էր: Հայկական ԽՍՀ լեռներից ծնվող Աղստևը ծաղկեցրել է երբեմնի ամառի տափաստանը:

Ղաղախում իջավ հարևանս: Նրա տեղը մի հաստամարմին մարդ զբաղեցրեց: Ավտոկայանի ճակատին նույն «Մաղկի՛ր, հայրենի Ազրբեյջան» լողունգն էր: Հարևանս ուզում էր ինչ որ բան ասել: Խզխզոց դուրս թափվեց կոկորդից:

Ամառի տափաստանում մելիորատորների մեխանիզմները փոշի բարձրացնելով հարթեցնում են հողերը:

Գ. ԿԻՐՈՎԱԲԱՂԸ ԵՐԵԿ ԵՎ ԱՅՍՕՐ

«... Վերջապես, ցույց տվեց ինձ մի կանաչագաղ տարածություն, որ հեռվից երևում էր, որպես փոքրիկ օազիս, մերկ անապատների մեջ: Դա Գանձակն էր, իր փոքրիկ այգիներով:

Ի՞նչ տպավորություն կգործե մի պարսիկ իր Բոշեռով, երկար արխալուղով, շալն գոտիով, որ գլխին դրած ունի եվրոպական շլյապա և մերկ պարանոցի վրա կապել է մետաֆոյա սև փողկապ.— նույն տպավորությունը գործեց ինձ վրա կիսապարսկական Գանձակը»:

«Բանվորական Կիրովաբադ» թերթի խմբագրի տեղակալ Ռազմիկ Տեր-Սահակյանի հետ շրջում եմ քաղաքի թաղամասերում ու փորձում տեսնել, ճանաչել և բնկալել այն միջավայրը, որ 100 տարի առաջ հանդիպել, զգացել է Բաֆֆին:

«Բավական հետաբերի բան է լրագրի աշխատակցի հայտնվելը գավառական փոքրիկ քաղաքում, որպես էր Գանձակը: Բոլորը դիտում են, թե նա որտեղ գնաց, ում հետ տեսնվեցավ, ինչ խոսեց և այլն: Ամենից առաջ նրա մոտ այցելում են տեղային վարժապետները և քահանայները»:

Առաջին հերթին որոնեցի Բաֆֆու նկարագրած «Եվրոպա» կոչված հյուրատան շենքը: Այն կամարակապ մուտքով ու պատուհաններով երկհարկանի կառույց էր:

— Մուտքն արգելված է, քննություն է ներսում,— ասաց պահակը, ապա համողվելով, որ տեխնիկումի հետ ոչ մի առնչություն չունենք, և նրա թողեց: Հնդարձակ բակի մեջտեղում աճած սոսնձու տակ ուսուցիչներն ու ուսանողները նստած թեյ էին խմում: Ես պատկերացրի Բաֆֆու

նկարագրած Զավադ անունով «խաս» սպասավորին, որը իր վերքոտ ձեռքով ջուր և ուտելիք էր մատուցում հյուրանոցի կենվորներին:

Հայոց Գանձակը (հետո այդպես էր կոչվել Ատրպատականի Գանձակ քաղաքից տարբերելու համար) հիմնվել է 836 թվականին՝ արաբների կողմից: Երբ 1235 թվականին Մուղանի գաշտից հարձակվում են թաթարները, բնակիչները թաքցնում են ունեցվածքը, հրդեհում քաղաքն ու հեռանում: Սակայն Չարմաղուն զորապետին հարկատու և հնազանդ բաղաքներ էլ էին պետք: Նա վերականգնում է քաղաքն ու վերաբնակեցնում այն: 17-րդ դարի սկզբներին պարսից Շահ-Աբասը ավերում է քաղաքը ու նրանից ոչ հեռու նորը հիմնում, վերանվանում Աբասաբադ: Զուսա մզկիթը, որն այժմ թանգարանի է վերածվել, շահն է հիմնել Պարսիկներից հիշատակ են մնացել նաև Գանձակի հուշակավոր սոսիսները: Իսկ Կիրակոս Գանձակեցին հիշատակում է մի հսկա սոսու մասին, որը տապալվում է: Գանձակեցիք դա օրհասական վտանգի նախանշան են համարում: Եվ իրոք, հետևում է թաթար-մոնղոլների հարձակումը: Երվանդ Լալայանը մի հաստաբուն սոսի է նկարագրում, որի փշակում կոշիկակարի խանութ էր տեղադրված: Սակայն ձիաքարշի գծի կառուցման պատճառով կտրվում է այն: 1721 թվականին գանձակեցիները լեզգիների ավարառու արշավների դեմն առնելու համար օգնության են կանչում Վրաստանի Վախտանգ թագավորին: Վերջինս սակայն թալանում է քաղաքի բնակչությանը, շատերին գերի տանում: 1804 թվականին Ֆրեյհանովի պլանավորած ռուսական զորքը գրավում է Գանձակը, սղոտնելով Զավադ խանին, վերացնում Գանձակի խանությունը: Ե. Լալայանը մանրամասն նկարագրում է 19-րդ դարի վերջի Գանձակը: Այստեղ ապրում էին 8914 հայ, 11139 թուրք, 131 ռուս և 103 վրացի: 10 տարի անց բուռն զարգացում ապրող քաղաքում բնակվում էր 33 հազար մարդ:

Եթե Բաֆֆին տեղեկություններ էր հավաքում իր ժամանակաշրջանից մինչև 300 տարի առաջ Արցախ-Ղարաբաղի հետ առնչված պատմական իրադարձությունների մանրամասների մասին, ապա ինձ ավելի շատ հետաքրքրում էր հենց Բաֆֆու ուղևորության ժամանակաշրջանն ու նրա մանրամասնությունները: Եվ ահա իմ տրամադրություն տակ հայտնված տեղեկագրում՝ նյութեր եմ քաղում 1881 թվականի Ղարաբաղի ու Գանձակի մասին: Տեղեկագիրը հայտնում է, որ Ղարաբաղի ամենաարևելյան կետը Քուռ և Արաբս գետերի միախառնման վայրն է: Սահմանը

1 Տե՛ս «Обозрение российских владений за Кавказом, в статистическом, этнографическом, топографическом и финансовом отношении, часть III, спб. 1836,

Քուռ գետով հասնում է Քյուռակ գետը, ապա Գանձակ գետով հասնում Զուրաբադ, Ղարաբաղի լեռներով ու Հաքառու գետով հասնում Արփա, Խուզաֆերին կամուրջը: Երկրամասի հարավային սահմանը Արաքս գետն էր: Այն ճշտորեն համընկնում է հույն խոշոր աշխարհագետ Սարաբոնի, հետագայի պատմիչների Պաղոմեոսի, Կասիոսի և ուրիշների կողմից նկարագրած Մեծ Հայքի հյուսիսարևելյան սահմանների սահմանագծին: Տեղեկագրի համաձայն Ղարաբաղի տարածքը ընդգրկում է 13 հազար քառ. վերստ (17,75 հազ. քառ. կմ): 1836 թվականին Ղարաբաղի այս տարածքում կար 251 գյուղ, 25 հազար 648 ծուխ, 181 հազար 835 մարդ, 246 գործող եկեղեցի՝ 243 եկեղեցականներով: Հին ժամանակներում այս լեռնային երկրամասը իր անանցանելի լեռներով, անառիկ բերդերով Հայաստանի սրտի՝ Արարատյան դաշտավայրի համար միշտ մի հուսալի պատվար էր արևելյան ու հյուսիսային ավարառու ցեղերի արշավանքների ժամանակ: Եվ իզուր չէ, որ հայոց թագավորներ Արտաշեսն ու Տիգրանը, ինչպես և հետագա թագավորները Մեծ Հայքի ամբողջության մեջ էին ընդգրկում հայ ժողովրդի անբաժանելի մասը կազմող այս հատվածը: Երբ Հայաստանի մյուս շրջանները նվաճվում էին թշնամու կողմից, ապա ապաստան փնտրող քնակիչները Ղարաբաղի լեռներում հուսալի պաշտպանություն էին գտնում: Եթե թաթար-մոնղոլական ու նրան հաջորդող մյուս արշավանքները Հայաստանի մյուս բոլոր մասերում վերացրին ազգային իշխանության բոլոր ճյուղերն ու արմատները, ապա Արցախ-Խաչեն-Ղարաբաղը սրբությունը պահպանեց այն: Ղարաբաղը փաստորեն թաթարական ցեղախմբերով շրջապատված կղզու էր վերածվել, հայկական կղզու՝ իր ժառանգական իշխանություններով: Եվ իզուր չէ, որ Շահ-Աբասը, տեսնելով այս հզորությունը, տեղի հինգ իշխաններին՝ մելիքական տիրոջոսներով վերահաստատեց իրենց երկրներում տիրելու իրավունքը: Այսպես հիմնվում են Խամսայի մելիքությունները: Եվ Բաֆֆին, որն արդեն ճանապարհորդելու և ուսումնասիրելու հարուստ փորձ ուներ, հենց Գանձակում զգաց, որ իրեն է վիճակված Ղարաբաղի մելիքությունների պատմությունը առաջինը հետազոտելու և ընդհանրացնելու առաքելությունը:

Կիրովաբաղում պահպանված ամենահին շինություններից է ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին: Վեց մույթերի վրա հենված թաղածածկ կառույցի գավիթն ու զանգակատունը չեն պահպանվել: Այստեղ էին թաղված 18-րդ դարի նշանավոր գործիչներ Ավագ Վարդապետը (Գալի Մահարաս), Արզուման հարյուրապետն ու մելիք Մեչլումը, որոնք, դաշնակցած Գանձակի խանի հետ, կռվել են օտար նվաճողների ու Շուշիի խանի դեմ, պաշտպանել քաղաքն ու ողջ Ղարաբաղը: Եկեղեցու արևմտյան

պատին արևի ժամացույցի տակ արված արձանագրությունը պատմում է, որ կառույցը հիմնվել է 1633 թվականին: Հայկական պաշտամունքային մյուս հուշարձաններից են ս. Լուսավորիչ (1869), Աստվածածին և ս. Գևորգ եկեղեցիները: Հին Գանձակում են ծնվել հայ այնպիսի գործիչներ, ինչպիսիք են Մխիթար Գոշն ու Կիրակոս Գանձակեցին:

— Իր ժամանակին Գանձակ է այցելել Խաչատուր Աբովյանը, — ասաց Ռազմիկ Տեր-Սահակյանը: — Նա մանրամասն հաղվեցություն է տվել Գանձակի դպրոցական իրավիճակի, դպրոցի նոր ղեկավարի նշանակման մասին: Հաճախ էր Գանձակ այցելում նաև Գերենիկ Գեմիրճյանը, — շարունակեց ուղեկիցս: Լուսանկարիչ Հովհաննես Բալլունասը, որը գրողի հետ բարեկամություն էր անում (նա բանաստեղծական երկու գրքերի հեղինակ է), մեծ արձակագրին առաջարկում է լուսանկարվել: Ողջ գիշեր աշխատում է լուսանկարի վրա: Առավոտյան ուրախ-ուրախ լուսանկարը ցույց է տալիս գրողին: Գեմիրճյանը դժգոհ դն է նետում այն, ասելով՝ «Ի՛նձ պետք է նկարեիր, ինչպիսին որ կամ»: Լուսանկարում վերացել էին դեմքի կնճիռներն ու ակոսները: Հարթ դեմքով, անարտահայտիչ հրիտասարդ էր պատկերված: Գեմիրճյանը ավելի շատ նանչարում էր մնացել, որտեղ պիեսներ, պատմվածքներ ու վեպեր էր գրել:

— Ըստ երևույթին, Գանձակն ու Ելենգորթը նրա համար շատ արգասաբեր էին, — ասացի ես:

Քաղաքի ծայրամասում հին գերեզմաններ նկատեցի: Տապանաքարերը շատ բան կարող են պատմել 18—19-րդ դարերի մասին: Դրանք առանձնանում են հարթաքանդակների ճոխությունը: Քարգործ վարպետները այստեղ հարազատ են մնացել ազգային ավանդական զարդամոտիվներին: Կարելի է ասել, որ այստեղ այն յուրօրինակ զարգացում է ապրել: Զննելով այս հարթաքանդակները, կարելի է պատկերացում կազմել ոչ միայն գանձակցի քարգործ վարպետների արվեստի մակարդակի ու ճաշակի մասին, այլև գանձակցու կենցաղի, տարբեր խավի ներկայացուցիչների հագուստի, արդուզարդի, աշխատանքային գործիքների մասին: Իսկ բանաստեղծական դամբանագրերը արդեն որոշ պատկերացում են տալիս նաև խոսքի կուլտուրայի, փոխառաջադրության, մշակույթի ընդհանուր մակարդակի մասին: Գանձակի քարե պոեզիան, անշուշտ, բանաստեղծական միջավայրի, յուրօրինակ զարգացում ապրող մշակույթի արդյունք է և կարոտ է հատուկ ուսումնասիրության: Ահա դրանցից մի քանի օրինակ՝

Ով այցելու գերեզմանիս,
Մանսթ ինձ թե անձանթ,
Մի գատիր դու ինձ, պատանիս,
Եվ ոչ ասել թե՛ քեզ ամոթի:

Մյուս երեսին գրված էր՝ «Արհեստավոր էր արի, բայց լոյժ ծանր էր ինձ աշխարհ՝ Գրիգորս Խուղավերդյան-չկամեցայ ապրել երկար»։
Կամ՝

Մանուկ կայտառ թոթովտիսս
Այս աշխարհում ցնծութուն մոր
Հանկարծամահ լուռ և անխոս:

Քայլում ենք հայկական թաղամասով ու զրուցում քաղաքի ջրի պորբլեմի մասին: Թաղամասի «հայկական» անվանումը պայմանական է, քանի որ իրենց բնակարանները վաճառող ու քաղաքից ընդմիջտ հեռացող հայ բնակիչները շատ-շատ են: Զրի պորբլեմին իր նոթերում մեծ կարևորություն էր տալիս Բաֆֆին ու որպես ջրապահպան միջոց առաջարկում մերձակա լեռնային անտառների պահպանությունը, որը կապելադեյեր քաղաքի հստող ջրի պաշարը: Այսօր ևս թե՛ խմելու և թե՛ ոտոզման ջրի հարցը լուրջ պորբլեմ է մնում Կիրովաբադի համար: Անընդհատ զարգացող, աճող քաղաքը, նրա արդյունաբերությունը ջրերի նոր բանակություններ են պահանջում: Մի կին իրենց բակից նկատելով մեղձ կանչեց Ռազմիկին, ապա անվճռական մոտեցավ մեզ, կասկածող հայացքով չափեց ինձ:

- Մի բան ունեմ քեզ ասելու, Ռազմիկ ջան:
- Ասա, — դիմեց Ռազմիկը, — այս ընկերոջ մոտ կարելի է:
- Հա՞. — սիրալիր ժպտաց ինձ, — չորանում են ծառերը, ջուր չեն թողնում մեզ հասնի, գուցե գաս, ասես, որ բաց թողնեն:
- Ինչո՞ւ չեն տալիս, — հարցրեց ուղեկիցս:
- Ասում են՝ փող հավաքեք ողջ թաղամասով, տվեք մեղձ ջուրը բաց կթողնենք:
- Ո՞վ է ալդպես ասում, իմացիր և տեղյակ պահիր ինձ, կասեմ՝ կասն:
- Բա չեն ասի՞ թե՛ ինչո՞ւ ես բողոքեի:
- Ոչինչ, կարևորը ջուր ստանալն է, — հանգստացրեց թերթի աշխատակիցը:

Մի հին տան մոտ Թ. Տեր-Սահակյանը ասաց.

— Սա էլ Կիրովաբադի սազանդարների հավաքատեղին է: Տարօրինակն այն է, որ ամսական 90-ական ուրբի են մուծում պետությունը, դրա դիմաց 70-ական ուրբի աշխատավարձ ստանում: Մի անգամ ականատես էի, թե ինչպես էին հարսանքատիրոջից 300 ուրբի պահանջում: Այդ մարդը խնդրում էր՝ գոնե 250-ի իջեք, սազանդարը թե՛ չէ որ չէ: Հետ եկա ու թերթում մի ռեպլիկ գրեցի: Հետո հենց այստեղ պատահա-

բար տեսնեմ՝ իրար հետ խոսում են ու ինձնից բողոքում: Թե՛ չեն թողնում փող աշխատենք: Մյուս կողմից մարդիկ հարսանիքին 50-անոցներ են շաբաշ տալիս, իսկ հաջորդ օրը ափսոսում 3 ուրբի տալ ու բաժանորդագրվել թերթին: Մեր թերթը ծանր վիճակ է ապրում:

— Դա ամենևին էլ Կիրովաբադի հայությունն օգտին չի խոսում:

— Իհարկե: Շրջաններում հեշտ է: Դյուղացիք հաճույքով են գրվում իրենց թերթը: Ու մենք հաճախ նրանց օգնությանն ենք դիմում:

— Իմ ընկերներից մեկը վերջերս վերագործավ Պլատոնովիցից, — ասացի ես, — պատմում էր, որ այնտեղ մի հսկա թաղամաս են հիմնել Կիրովաբադի ու Ղարաբաղի հայերը:

Դ. ԵԼԵՆԴՈՐՑ -- ԽԱՆԼԱՐ

«Մի ամբողջ ժամ տևեց միևնույն ևս դուրս եկա Գանձակի այգիներից և բռնեցի այն նանապարհը, որը տալում էր դեպի գերմանական Ելեն-գորֆ կոչված գաղօրը: Ցանկանում էի տեսնել, թե ինչպես է ապրում եվրոպացի գաղթականը Հայաստանում: ...Այստեղ կարելի է տեսնել մի էաղամակիրք ժողովրդի անտեսությունը»:

Ահա և ես Ելենգորֆ-Խանլարում եմ: Դեպի ուղղագիծ փողոցներն ու Գոթական կամ ոսմանական ոճի շինությունները նեղած առաջին հայացքից թվաց, թե հին արևելքի շունչը մի կերպ պահպանած Գանձակից ինչ-որ հրաշքով գերմանական փոքրիկ ավանում եմ հայտնվել: Եռահարկ գեղեցիկ շենքի մուտքի մոտ միլիցիոներներ էին խմբվել: Փողոցի մյուս կողմում շինություն շքամուտքին բազմաթիվ ցուցանակներ էին փակցված: Դրանց արանքում հայաստա մի ցուցանակ հայտնում է «Լե-նինյան ուղիով» թերթի մասին: Փայտե աստիճաններով երկրորդ հարկ բարձրացա: Թերթի խմբագիր Հենրիկ Բարխուդարյանի ճետ սենյակից պուրս գալիս հարցրի նրան.

— Սա գերմանացիների կառուցած տների՞ց է:

— Իհարկե, — ասաց խմբագիրը, — վառարանը չե՞ս նկատում: Սա Ծորեր եղբայրներին է պատկանել:

Հիշեցի լայացիզցի իմ մի ընկերոջ տան պատի մեջ տեղադրված հին վառարանները, որոնք դեկորատիվ արվեստի իսկական նմուշներ էին:

Մենք քայլում էինք Կաղամախու, բարդենու և սոսու հաստաբուն ծառերով եզերված փողոցներով ու զրուցում հին Ելենգորֆի ու այսօրվա Խանլարի մասին: Բաֆֆու ուղեորության ժամանակ այստեղ 303 տնտեսություն կար, որից 50-ը՝ հայկական: Հետաքրքիրն այն էր, որ 160 հայ բնակիչներից միայն 44-ն էին կին: Հավանաբար, հայերից շատերը

Հարեան բնակավայրերից ու Գանձակից ժամանակավորապես այստեղ բնակութիւն հաստատած առևտրականներ ու արհեստավորներ էին:

«1828 թվականին գերմանական շվարները եկան այստեղ: Մեկ տարի նրանց կերակրում էին հայերը, մինչև կառավարութանից հող ստացան: 1878-ին տոնեցին 50-ամյակը: Այս կողմերում շկա մի ուրիշ աշխատավարձ ժողովուրդ, ինչպես Ելենդորֆի գերմանացիներն են»:

Ուղեկիցս ցույց տվեց դեռևս անցյալ դարում հիմնված ստորգետնյա ջրանցքներն ու ջրաբաշխիչ համակարգը, որն այժմ էլ օգտագործվում է: Մի բնդարձակ բակ մտանք:

— Մեր ոտքերի տակ գինու մառաններ են,— ասաց ուղեկիցս,— նրանց պատրաստած հսկա տակառները դեռևս մառաններում են:

— Զե՞ն օգտագործվում:

— Ոչ,— պատասխանեց Ն. Բարխուդարյանը, ապա շարունակեց,— գերմանացիների հիմնական զբաղմունքը երկրագործութիւնն էր, այգեգործութիւնը, գինեգործութիւնն ու վարեջրի արտադրութիւնը:

— Իսկ հայերն ի՞նչ էին անում:

— Առևտուրն ու արհեստները նրանց ձեռքին էր:

Ճանապարհորդը չէր կարող անտարբեր անցնել տների շքող շքամուտքերի մոտով: Դրանք ներդաշնակ կապի մեջ էին ողջ կառույցի ու փողոցի միջնուղրտի հետ: Շքամուտքի պսակը փայտե դուռն էր: Դրանց մեջ զգացվում է եվրոպական դեկորատիվ արվեստի շունչն ու հմայքը: Դիտելով արվեստի այս նմուշները, թվաց, թե, վերջապես, գտա ինձ վաղուց հետաքրքրող մի հարցի պատասխանը: Ես վաղուց փորձում էի գտնել Կիրովաբադում պահպանված 19-րդ դարի շինութիւնների եվրոպական ոճի փայտե դռների սակզման գաղտնիքը: Ըստ երևույթին, դրանք Շամբորում ու Ելենդորֆում բնակութիւն հաստատած գերմանացի գաղթականներից հալ արհեստավորներն են արագորեն ընդօրինակել ու տարածել:

Փողոցի մի կողմում ուղւրակն էր՝ ձևավորված մեծ տարածքի համեմատ անշուք մի շատրվանով ու աստիճաններով: Մինչև զուգահեռ մյուս փողոցը հասնող պատը աղյուսով էր պատած: Կիրովաբադի ճարտարապետները այսօր ամեն ինչ՝ շենքերը, ցանկապատերը կարմիր աղյուսով են պատում, ու դա կարծես ձևավորում է քաղաքի այսօրվա դեմքը: Բայց այստեղ աղյուսը եվրոպական միջնուղրտին խորթ է ու անհարիր: Այն արդեն Բաֆֆու նկարագրած փողկապով պարսիկի հակառակ պատկերն էր՝ սմոկինգով եվրոպացին շալե գոտի էր փաթաթել:

Միայն է պատմականորեն ձևավորված ճարտարապետական արժեք-

ները ոչնչացնելը: Եռյնիսկ հպանցիկ հույացքն էլ բազմական է, որ զգաս Ելենդորֆ-Խանլար վերանվանմանը զուգորդած վերափոխութիւնները:

Մի ազրբեշանցի հայանեց, որ իրենց փողոցի վրա գտնվող № 19 տան շքամուտքի ճակատին «1798 թվական» է գրված: Ուրեմն Ելենդորֆը ավելի հին է: Մուտքի ներկած կամարի վրա մի կերպ նշմարվում էր 1898 թվականը: Տանը հայ բնտանիք էր բնակվում, որի բնակիչները՝ երեխաներ գրկած գեղեցիկ հարսները, երկարաժամ աղջիկները, տղաները, գերդաստանի մեծերը մի քանի բուպիում լցրին փողոցի այս հատվածը:

— Բեյաեներգների տունն էր,— ասաց տանտերը,— հիմա մենք հնր բնակվում,— ցույց տվեց բազմանդամ ընտանիքը:

— Համեցեք, ներս եկեք,— ասաջարկեց նա:

— Ենորհակալութիւն,— ասացի ես,— մեզ մուտքի ճակատքարի դիրն էր հետաքրքրում: Միայն թեգեղութիւն էի ստացել և ուզում էի ճշտել:

— Հայ մարդ ենք, բա կարելի՞ է հետ գառնալ շիմից:

Ե. ՀԻՆԱՎՈՒՐՑ ԳԵՏԱՇԵՆՈՒՄ

«Ելենդորֆում ես մնացի կես ժամ միայն...»

Գանձակի տափառակը վերջանում է, և նաեպարհը բարձրանում է դեպի բլուրների գառիվերը, և լեռների վրայով պատույաններ գործելով, հասնում է մինչև Հաջիբենդ (Հաջիշեն): Բլուրների հետ էլ սկսվում են անտառները»:

Աշրդը գյուղի մոտով անցնելիս թվաց, թե ամբողջ գյուղը՝ մեծ թե փոքր, նստած ճանապարհի երկայնքով, թոնրի թաթմ հաց են առաջարկում անցորդներին:

— Հիմնականում Գյոգ-գյուլ գնացողներն են հաց գնում,— ասաց վարորդը: Հաջիշենը մենք արագ անցանք: Կարողացա նկատել անտառի մեջ տեղադրված պիտեներական ճամբարները, հանգստյան տներն ու տուրիստական բազան: Ուղւագծովում է Ալհրակ (Քյափազ) լեռը, որի մի մասը 1139 թվականի երկրաշարժից փլվել է, ծածկել լեռնային շրերի ճանապարհն ու գոյացրել շնաշխարհիկ Գյոգ-գյուլ լիճը:

Ազատ ու Կամո գյուղերը անցնելուց հետո մեր առաջ հայտնվեց ձորի երկարութիւնը հանդիպակաց լանջերին փոված հինավորաց Գետաշենը: Գյուղի ծայրում հարյուրամյա մի պառավ, հայացքը մի կետի հառած, անտարբեր փողոցի անցուղարձին, մտքերով դարի խորքն էր ներսուզվել: Նրա մոտ 3-ամյա աղջնակ էր խաղում: Թոռան թոռն է երևի:

Քվում է, թե նա փորձում է պոկել հայացքը այդ կետից, ու դա նրան ոչ մի կերպ չի հաջողվում: Այգիներով շրջապատված տները ձգվում են լանջն ի վեր, հասնում լեռան կատարը, ապա գառիվերով, քովելով ապա-
աամներին. հաճախ մեզքը դեմ տալով ժայռերին, զգուշորեն իջնում են ձորում մոնշայտը Քյուտակ գետը: Մի բարձր տեղ տների խումբը իրար կպցրած տանիքների եզրագծերով կանոնավոր գիգզագ է գույացրել օդում: Կենտրոնական թաղամասում տների պատշգամբները կրկու կող-
մից զբաղվել են փողոցի օդային տարածքը:

Գյուղխորհրդի նախագահ Հրանտ Բարսյանի հեռախոսը անընդհատ գանգահարում էր ու խանգարում մեր զրույցի ընթացքին:

Գյուղխորհրդի ղեմապ, փողոցի մյուս կողմում մշակույթի տունն է: Այնտեղից եկող երաժշտության ձայնը այնքան էր բարձր, որ Հ. Բարսյանի խոսքերը որսալու համար լարում էի լսողությունս: Երևանյան «ուս-
բիսը» լցվում է ամեն մի տուն, հուշում իր գյուղիցն ու իրավունքը:

— Մեր սաղիսկայանի ձայնը լսելի է գյուղի ամենահեռավոր ան-
կյուններում անդամ:

Գույն և դա գյուղը համախմբված պահելու հոգևրանական միջոց է: Նույն բարձր ձայնով գյուղխորհրդի նախագահը հայտարարություններ է անում, օրինակ՝ կոչ է անում երիտասարդությունը մասնակցելու խոտ-
հարրին: Մշակույթի տան մոտ Հայրենական մեծ պատերազմում զոհ-
ված զինվորների հուշարձան-սղբուրն էր: Գետաշենը 2000 զինվոր է տվել պատերազմին, որոնցից 8 հարյուրը չեն վերադարձել: Հուշարձան-
աղբյուրի մոտ Ստեփան Շահումյանի ու Սարգիս Մուսայելյանի կիսան-
գրիներն են:

Գյուղխորհրդի նախագահը ցույց է տալիս այն տունը, որը հյուրըն-
կալի էր Բաֆֆին: Այն մեծ դաշտառ ունեցող կամարակալ մուսրով ու
պատահաններով շենք էր:

«Դա Գաբանյանի գավառի չորս մեկիներից մեկի տունն էր: Ես գտա
այդ տոնձի նեկայացուցիչներից մեկին՝ Մնացական «բեկին» անկազնու
մեջ: 100-ամյա ձեռոնիկ տկար էր. բայց հիշողությունը՝ առողջ: Եվստ
կետաբերական էր խոսել այդ կենդանի հնությունն ես եին անցկերի
մասին: Նա պատմում էր ինչպես մի Խուրնայի: Նրա նա կկատեց, որ
բոլորը գրի եմ անում, ուրախացավ: «Գեեցե՛ք, որդի, թույլ հայոց նախն-
յաց գործերը չկորչեն, երանք շատ երևելի մառդիկ են եղել»»:

Հատկանշական է, որ Բաֆֆին ճանապարհորդության առաջին
օրվանից չի թաքցնում իր անձնավորությունն ու նպատակները: Եթե նա
այլ ուղևորությունների գեպտում ախտավորի անունով էր հանդես գալիս,
«առավնես եմ խենթի տեղ կղնեին, Եթե ես պարզապես ասեի, որ գնում

եմ հայրենիք ուսումնասիրելու», ապա Չարաբաղում հանդես էր գալիս
ուսումնասիրողի անունով, ու ոչ ոք նրան խենթ չի անվանում, այլ, ընդ-
հակառակը, միշտ օժանդակություն էր ստանում:

«Հետո նա հարցրեց. «Հիմա ինչպե՞ս է հայոց ազգի գործը»: Ես
պատմեցի նրան մի քանի բաներ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածից,
ներսես Պատրիարքի աշխատություններից և այլն»: Բաֆֆին լավ գիտեր
այդ վեհաժողովի արդյունքները, որոնք, ի վերջո, իմպերիալիստական
պետությունների և առաջին հերթին՝ Անգլիայի ու Քուրթիայի շահագի-
տական քաղաքականության և միջազգային դիվանագիտական շարա-
շահման առարկա դարձան: Այս հանգամանքն էլ, ինչպես հայտնի է,
խիստ բացասական հետևանքներ ունեցավ արևմտահայերի և ողջ հայ
ժողովրդի պատմական ճակատագրի համար: Ըստ այդ դաշնագրի 61-րդ
հոդվածի «Քուրթիան հանձն է անում հայաբնակ վայրերում անհապաղ
իրագործել տեղական պահանջներից բխող բարեփոխումներ ու բարենս-
րոգումներ և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզ-
ներից: Այդ նպատակով ձեռնարկված միջոցառումների մասին նա պար-
տավոր է պարբերաբար հազորդել պետություններին, որոնք պետք է հըս-
կեն դրանց զործադրությունը»: Իսկ Պուսի Պատրիարք ներսես Վարժա-
պետյանի «աշխատությունների» մեջ Բաֆֆին նկատի ուներ Բեռլինի վե-
հաժողովին մասնակցելու համար ուղարկած ազգային պատվիրակու-
թյունը, որը պետք է նպաստավոր պայմաններ պահանջեր արևմտահա-
յերի համար: Սակայն ինչպես հայտնի է, այս ամենը անուշադրության
մատնվեցին արևմտյան երկրների կողմից, որովհետև զրանք այդ պահին
չէին համապատասխանում նրանց շահերին: Ահա այս ամենի մասին էլ
հարյուրամյա Մնացականին պատմեց Բաֆֆին:

Հ. Բարսյանը միջուհասակ մի մարդու ցույց տալով ասաց.

— Սա էլ հենց Մնացական բեգի ծոռն է՝ Պետրոսը:

Նրան խնդրում եմ ցույց տալ այն սենյակը, որտեղ գիշերել էր Բաֆ-
ֆին:

— Ոչ մի հետաքրքիր բան էլ չկա այս տանը, — խուսափող տոնով
ասաց մեկիքների անհյուրընկալ ժառանգը, — միայն շենքի արտաքին
տեսքն է նույնը մնացել:

— Դո՛ւն տեսե՛մ սենյակը, — խնդրեցի ես ու, չսպասելով հրավերի,
փայտամած աստիճաններով վեր բարձրացա: Մենյակից երկու լուսա-
մուտներ էին դուրս նայում:

— Այս կողմում բուխարին էր, մյուս կողմում խորշ կար, կողքին՝
մյուս սենյակ տանող դուռ, — ստիպված բացատրություններ էր տալիս

Պետրոսը, — դրանք փակել էմ, պատերին պատտա կայցրել, այնպես որ հնից բան չի մնացել:

— Իսկ ձեր պապերի ժամանակվա կահույքը, իրերը շե՞ն մնացել:

— Ոչինչ չկա, — կտրուկ ասաց նա:

— Մի՞ վախեցեք, ոսկեղենի մասին չեմ հարցնում:

— Ձէ, ոսկի-բան չի եղել: Ոչինչ չի մնացել, — պատասխանեց տան այժմյան տերը:

Մուտքի դարպասի վրա փոքրիկ դուռ կար և ներս ու դուրս անելիս ստիպված ես լինում կանալ ու իջեցնել գլուխդ:

— Մելիքներն ու բեգերն է՞լ են կուզեկուզ մտել իրենց տուն, — հարցրի ես:

— Ձէ, — ասաց Պետրոսը, — այս դուռը ես եմ բացել: Նրանք ներս մտնելիս գարպասն էին բացում:

— Դեհ, ուրեմն խնդրում եմ բացեք դարպասը, — ասացի ես:

— Ինչո՞ւ, — հարցրեց նա ու կասկածոտ հայացքով ինձ նայեց:

— Ես Բաֆֆու հետքերով եմ գնում:

Հրանտ Բաբայանը առաջարկեց գլուղի մեծահասակ մարդկանց հանդիպել ու զրուցել, մինչև ինքը կազատվի առօրյա հոգսերից: Հիշեցի հայ մշակույթի գործիչների թրիխսյան պանթեոնում հանդիպած Սուրեն Ղևոնդի Տեր-Իսրայելյանին:

— Գետաշենցի մի մարդ եմ ճանաչում, — դիմեցի ես, — Տեր-Իսրայելյան է ազգանունը:

Գլուղխորհրդի նախագահը ժպտաց.

— Հենց նրա մոտ եմ տանում քեզ:

150-ամյա փայտե նեղ աստիճաններով երկրորդ հարկ ենք բարձրանում: Տանտերը ուղղորդված զննեց գեմբա: Ուղևորության ընթացքում չէի սափրվում, ու դա, թերևս, խանգարում էր ծերունուն ճանաչել ինձ: Սուրեն Տեր-Իսրայելյանը 1927 թվականին թրիխսից գլուղ վերադառնալով 9-ամյա միջնակարգ դպրոց է հիմնում, որը թվով 4-րդն էր Աղբ. ԽՍՀ-ում: Հետագայում դպրոցը գյուղտնտեսական տեխնիկումի է վերափոխվում, որի դիրեկտորն էր նույն ինքը՝ Ս. Տեր-Իսրայելյանը:

— Ինչո՞ւ են մեր գլուղում տներն իրար կպած, — ասաց նա, հարցական ինձ նայեց, ապա շարունակեց, — որովհետև երբ գետաշենցին որդուն պսակում է, տան կողքին նոր տուն է կառուցում նրա համար: Այսպես գլուղում գերդաստան-գերդաստան թաղամասեր են գոյացել: Բացի այդ, հին ժամանակ մարդիկ իրար ձայնելով արագորեն տարածել են վտանգի լուրը, արագ հավաքվել ու կազմակերպել գլուղի պաշտպա-

նութունը: Ընդհանրապես, լավ կլինի, որ դու ինձ հարցեր տաս՝ ես պատասխանեմ, թե չէ շգիտեմ ինչն ասեմ, ինչը՝ թողնեմ...

1767 թվականին իր ընտանիքով այստեղ էր բնակվում Եուզվա խանից նեղված Գյուլխտանի մելիք Հովսեփը: Հովսեփ էմինը նրա հյուրն էր այդ ժամանակ: Ինձ թվում է, որ Մնացական բեգը հենց այդ ժամանակ տեղի ունեցած դեպքի մասին պետք է պատմած լինի Բաֆֆուն: Ուրեմն, Գանձակի Ծահվերդի խանի որդին՝ Մամեդ-Հասան խանը, իբրև թե լեզգիների արշավանքը դիմազրավելու նպատակով 4500-անոց զորքով շարժվում է դեպի Քուռ գետը, բայց հանկարծ զորքը թեքում է դեպի լեռներն ու գլշերը հանկարծակի հարձակվում Գետաշենի վրա: Փոքրաթիվ չոկատը մելիքի քաշ որդու՝ Բեգլարի գլխավորությամբ արագ ամբանում է ժայռերի մեջ ու պաշտպանվում: Էմինը այստեղ է, որ ականատես է լինում, թե ինչպես են կարողանում կովել Ղարաբաղի քաշերը: Փոքրաթիվ չոկատը կարողանում է փախուստի մատնել թուրքերին: Եստ հավանական է, որ էմինն էլ մասնակցած լինի այս կովին ու իր ռազմավարական արվեստի գիտելիքներով օգնած լինի իր քաջությամբ հռչակված մելիքին ու նրա որդուն: Մի քանի օր հետո այս խանը ավելի մեծ զորքով ու թնգանոթներով նորից է հարձակվում Գետաշենի վրա: Մելիք Հովսեփը արդեն հավաքած է լինում իր զորքն ու դիմավորում է թշնամուն: Մելիքը կատարյալ հաղթանակ է տանում: Հետո նա կրկին տիրում է իր հայրական իշխանությանը՝ Գյուլխտանի մելիքությունը:

— Իսկ գլուղի հետ կապված ուրիշ ի՞նչ նշանավոր իրադարձություններ են տեղի ունեցել:

— 1905 թվականի ազգամիջյան ընդհարումների ժամանակ գլուղը չոկատ է կազմավորում, իհարկե, պաշտպանական նպատակով: 1918 թվականին թուրքական մի չոկատ էր եկել այս կողմերը: Պահանջեցին լավագույն ձիերը: Գետաշենցիներից շատերը ասացին՝ տանք, որ լիստորեն մեզ, իսկ մի մասն էլ պնդեց՝ մի տվեք, թե չէ վաղը ձեր կանանց էլ կուզեն: Եվ իրոք մի քանի օր հետո թուրքերը դալիս են, թե՛ ձեր կանանց պետք է տաք: Գետաշենցիք պատասխանեցին՝ կովում ենք: Թուրքերը նախօրոք տեղյակ լինելով գետաշենցու կովելու հմտության մասին, խուսափում են ընդհարումից: Իսկ գլուղը լավ գինված էր, թնդանոթներ էլ ուներ, որոնք դարբին Պավանց Ազան էր պատրաստել: Երկու տարի անց, երբ մուսավաթականները օսմանյան չոկատների հետ հայերի ջարդ են կազմակերպում շրջակա գյուղերում, Գետաշենին լեն համարձակվում մոտենալ: Բոլոր գյուղերից ժողովուրդը այստեղ էր հավաքվել: Իսկ ահա հարևան Ազատը սրի են քաշում, ավերում ողջ գլուղը:

Որովհետև նրանց թվացել էր, որ եթե իրենք զենքի չդիմեն, ապա ոչ ոք ձեռք չի տա իրենց:

— Հետաքրքիր է այդ ամենը,— ասացի ես,— գյուղացիների գլխավոր զբաղմունքը ո՞րն էր:

— Հիմնականում՝ արհեստները: Ակնունց գերդաստանը թամբադործությունը էր զբաղվում: Մեծ հայրենականի օրերին հեծելազորի համար թամբեր էին պատրաստում: Հին ժամանակներում էլ ամեն տեղից գալիս՝ այստեղ էին թամբեր պատվիրում: Գետաշենի շուկան յուրօրինակ կապող օղակ էր Գանձակի ու Խամսայի մեխիթությունների միջև: Դրդխանա ձորում կաշվի վարպետներն էին աշխատում: Գանձակից գալիս էին մեր վարպետների պատրաստած դանակները զնելու: Ելեկորֆի գերմանացիներից զետաշենցիք այգեգործություն, ատաղձագործություն են սովորել:

Հետաքրքրվում եմ Ավետարանով, որի հիշատակարանից հետաքրքիր նյութեր էր քաղել Բաֆֆին:

«Ես տեսել եմ հայոց բազմաթիվ գրչագրեր, բայց առաջին անգամ պատահում էր ինձ տեսնել մի այդպիսի գեղեցիկ աշխատություն: Մագաղաթի նրբությունն ու կանոնավորությունը սքանչելի էր: Համարյա ամեն երեսների վրա կային ճիշակալի պատկերներ... Կազմը ամբողջապես արժաթից էր, նրա վրա դուրս էին փորված առաջյակների և այլ սրբերի պատկերները»:

— Գյուլիստանի տեր մելիք Հովսեփը ավետարանը հետ էր գնել պարսիկներից, այսինքն, ազատել գիրքը գերությունից: Այդպես է, հալեթիս գիրն էլ է գերություն ընկնում, լեռն էլ, մարդն էլ: Գրչագրի առաջին արժանի կազմը պարսիկները սովորած են լինում: Մելիքը նորից է կազմել տալիս և ընծայում Գետաշենի եկեղեցուն:

— Իսկ այժմ ո՞ր է այն:

— 1927—28 թվերին Ավետարանը արժաթյա աշի և ալլ մասունքների հետ կոտնտեսության ղեկավարությունը տանում է Բաբու, հանձնում թանգարանին, որի դիմաց գյուղի համար սպասարաններ, այլ սարքեր է ստանում: Մի քանի տարի հետո գյուղխորհրդի նախագահ Աբգարը դրանք Բաբուի հայկական եկեղեցում է տեսնում: Դրանից հետո ոչ մի տեղեկություն չենք ունեցել մեր ավետարանի մասին¹:

— Ինձ թվում է,— ասացի ես,— որ ձեր մասին կարող եմ կրկնել

100-ամյա Մնացական բեգի վերաբերյալ Բաֆֆու գրած խոսքերը՝ դուր պատմում եմ, որպես մի հուրենացի:

Լայն գեմքը լցվեց ժպիտով:

— Մի տարբերություն՝ 16 տարի հետո կլրանա հարյուրս,— ասաց նա:

Գյուղը աստիճանաբար սուզվում է գիշերվա գիրկը: Ցաք ու ցրիվ լույսերը խոր ձորից ձգվում են լանջերով վեր, խառնվում երկնքի աստղերին: Խոր ձորում Քյուտակը փակ աչքերով զարկվում է քարաբեկորներին, ձորը լցնում ամենի մոնջունով: Փոփրած ալիքները մեկ փայլում են աստղերի ցուլքից, մեկ լուծվում խավարում: Քայլում ենք ձորն ի վեր դեպի լեռան կատարը, սրտեղ Հրանտ Բաբայանն է բնակվում: Եվ ահա ներքևում գյուղ-համատեղությունն է: Հարցնում եմ՝

— Երկնքի աստղերն են շատ, թե գյուղի լույսերը:

Մթան մեջ զգացի ինքնագոհ ժպիտը: Նաև գյուղի ժպիտը:

— 920 տուն կա գյուղում: Աճում է: Երիտասարդները չեն հեռանում գյուղից: Ամուսնու եկամտաբեր տնտեսություն ենք ստեղծել: Տնամերձ հողամասերում հիմնած մոռի այգիներից լրացուցիչ եկամուտ է ստացվում: Անդրկովկասի բոլոր ծայրերից՝ Քրիլխսից, Երևանից ու Բաբուից Գետաշեն մոտ զնելու են գալիս: Ամեն բնտանիք տարում ? հազար ութլու եկամուտ է ունենում: Ամենահամեղ մոռն այստեղ է աճում: Այժմ էլ նոր հուշադրյալի հոգսով ենք տարված:— Գյուղխորհրդի նախագահը պատմում է Իսահակ Առաքելյանի մասին:— Տեր Սարգսի երկրաբանինժեներ որդին Քրիլխսից 1936 թվականին գյուղ է գալիս ու Գետաշենը դառնում համաճարակի ճիւղաններում: Գյուղի մեծահասակ մարդիկ լավ են հիշում բարձրահասակ, թեկնեղ, կաշվե բաճկնով, 40-ամյա գեղեցկադեմ երկրաբանին: «Ես ձեզ կփրկեմ այդ ցավից,— ասում է երկրաբանը,— բոսն ու մյուս հիվանդությունները գետի ջուրն է բերում, որը Չրաղի ձորում խառնվելով կորալտի հանքի կեղտաջրերին, վարակում է գյուղը»: Նա մի ամբողջ տարի թողեց երկրաբանի գործերն ու սկսեց լուսանկարչությունը զբաղվել: Մեծադիր լուսանկարների պատվերներ էր հավաքում շրջակա գյուղերից, կուսակաժ փողով խողովակներ գնում ու Ղոնդաղ աղբյուրի ջրերը հասցնում գյուղ:

— Հենց նրա հիշատակին էլ կնվիրենք հուշադրյուրը,— ասաց Հ. Բաբայանը:

Այնուհետև գյուղխորհրդի նախագահը պատմում է գյուղում ծնված անվանի մարդկանց մասին: Ազգիբալ Հովհաննես Ստեփանի Իստիոֆի նախնիները գետաշենցի են: Գյուղում են հասակ առել Խորհրդային Միության հերոս, մաթեմատիկական գիտությունների դոկտոր էդուարդ Այան-

¹ Զեռագիրը «Հաղբատի ավետարան» անվան տակ այժմ պահվում է Մաշտոցի անվան մատենադարանում:

յանք, հեղափոխական Սարգիս Մուսայելյանը, գրականագետներ Վազգեն Մնացականյանը, Սողոմոն Սողոմոնյանը, գրողներ Արշավիր Գարրեհին, Գրիգոր Բալասանյանը, բնագետ Արարատ Պառավյանը, վիրաբույժ Արտաշես Թուխիկյանը, կենտրոնական հեռուստատեսության քաղաքական մեկնաբան էդուարդ Մնացականովը, փառքի երեք աստիճանների ասպետ Իսահակ Կարախանյանը, անվանի բուսաբույսաբան, աշխարհի հայ առաջին շնմպիտն Իսրայել Հակոբկոխյանը և ուրիշները: Կսելով այս անունները, մտածեցի, որ լեռներում ծվարած այս գյուղն, իրոք, բարձրորակ գենոֆոնդի կազմավորման համար բացառիկ միջավայր է: Հիշում եմ, ընկերներիցս մեկը առաջարկում էր նման բնակավայրերը արգելոցային հայտարարել ու հոգալ նրա պահպանության և անաղարտության մասին:

Երբ տեղ հասանք, Հ. Բաբայանը մեկ այլ դեպք պատմեց (չգիտեմ, կարճ ժամանակահատվածում հետաքրքիր պատմություններ պատմողների հետ հանդիպման գործում իմ բախտը ուղղակի բանե՞ց, թե գետաշենցիք բնատուր այս շնորհքով էլ են առանձնանում):

— 1955 թն 56 թվականն էր, — պատմում է Հ. Բաբայանը, — մեր հարևանուհին մի օր իրենց տուն կանչեց ինձ, թե՛ զրույցի մեր այս հյուրի հետ, մինչև հաց պատրաստեմ: Նա շփոթեցրեց հյուրի հետ, հավանաբար, մտածելով, որ ընդամենը մի ուսանող եմ ես: «Ի՞նչ գրքեր ես կարդացել», — հարցրեց անծանոթ հյուրը: «Րաֆֆու գրքերը», — հպարտորեն ասացի ես: «Լավ է, — ասաց նա, — մյուս գրողներից ո՞ւմ ես կարդացել»: «Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանքը»: Անծանոթի դեմքը աշխուժացավ, ժպիտ փայլեց դեմքին, ասաց. «Հա՛, և ի՞նչ կարծիքի ես»: «Լավ է գրած, — ասացի ես, — բայց հրկարաբանություններ ունի»: «Ինչպե՞ս, որն է օրինակ կարո՞ղ ես բերել», — հարցրեց նա: Ես կրկին չկոհակեցի, թե ինչու էր այդ հարցը հետաքրքրում այս անծանոթ մարդուն ու համարձակորեն պատասխանեցի՝ «Մի ծաղիկը նկարագրելու համար պատվում է Ալհրակ լեռան շուրջը, նոր վերադառնում ծաղիկին»: «Ապրե՛ս, տղաս, — գուցե նա, — եթե ինձ այդ մասին շուտ ասեին, ավելի լավ կլիներ: Ես էլ քո այդ քննադատած Դեմիրճյանն եմ»: Ամոթի և ուրախության զգացումը իմ մեջ իրար էին միախառնվել: Բայց երջանիկ էի, որ տեսա մեծ գրողին:

Առավոտյան գյուղխորհրդի նախագահը գյուղի ուսանող ու հովեկ երիտասարդներին մեկ-մեկ տներից կանչում էր, զգուշացնում խոտհունձին մասնակցելու մասին:

Գնում եմ տեսնելու այն մատուռ-եկեղեցին, որտեղ Բաֆֆին հիացել էր ձեռագիր ավետարանով: Մատուռին կից հրկհարկ տուն էր ավե-

լացել, որն այժմ որպես բուժկետ էր ծառայում: Կարմիր նահատակ կամ ավագ ս. Նշան եկեղեցու բանալին գյուղի վերջին տերտերի ղաջկա՝ 75-ամյա Սիրուհու մոտ էր: Նա բացելու ընթացքում զանազան պատմություններ էր պատմում՝ կապված եկեղեցու հետ:

— Բակում փոշնե ծառեր կային, որոնցից զանգեր էին կախված: Նրանց զողանքները գյուղով մեկ տարածվում են, — ասաց Սիրուհին:

Ըստ ավանդության, եկեղեցու բեմի տակ դամբարան է տեղադրված: Մուսքի կամարի ճակատքարին մի կերպ զանազանեցի հիմնադրման թվականը՝ 1677: Այդտեղ տարօրինակ հարթաքանդակ էր տեղադրված, որն ավելի շուտ յուրօրինակ գաղափարապատկեր էր հիշեցնում: Ուրեքը խաչած, ձեռքերը երկու կողմերում տարածած մարդը պահում էր արդարության կշեռքը: Նժարներից մեկի տակ ծանրոց էր պատկերված:

Աշխարհագրության ուսուցիչ Հայրիկ Քոլոյանի հետ գյուղի միջով կտրուկ թեքությամբ վեր բարձրանալով հայտնվեցինք մի մեծ հարթակում: Այստեղ էր գտնվում գյուղի գերեզմանոցը: Տապանաքարերի մի մասը Գանձակից էր բերված: Ընկնելով զարգացող, աճող քաղաքի հատակագծով յուրացվող տարածքի մեջ, ծանր ու արժեքավոր տապանաքարերի մի մասը փրկելու համար տեղափոխել են Գետաշեն: Սակայն դրանց մի մասը այստեղ ևս պահպանված չէին վտանգից: Հին գրությունները փոխարինվում են նոր մահացածների անուններով: Տապանաքարերին հրևում էին Գանձակի հիասքանչ վարպետների զարդապատկերներն ու արդեն պոեզիայի շնչից զրկված գրությունները: Նսկա գերեզմանոցի կենտրոնում մի քանի խաչքարեր կային:

Ն. Քոլոյանը պատմում էր, թե ինչպես էին 20—30-ական թվականներին պայքարում հին ձեռքերի, սովորությունների դեմ: Այդ պայքարը շարունակվեց հետպատերազմյան ժամանակաշրջանում:

— Իսկ հիմա պարզվում է, որ ավելի շատ ենք պայքարել, քան պետք էր: Շատ արժեքներ, ազգն ու ընտանիքը սրբությունը պահպանող սովորություններ կորցրել ենք առհավետ: Այժմ հին աղաթները չեն պահպանվում:

Ինձ շատ հետաքրքրում էր Պանդալյոնի մասին ավանդությունը:

— Պանդալյոնն, ասում են, բժշկություն էր անում, բուժում ժողովրդին: Մի տեղ սպանում են նրան: Հայրը մատուռ է կառուցում մի լեռան կատարին ու այնտեղ էլ թաղում նրա մասունքները:

— Հավանաբար, — ասացի ես, — դա այն Պանդալյոնն է, որի մասին գրում է Մովսես Կաղանկատվեցին: «Փրիստոսի պատերազմող նահատակ Պանդալյոնի մասունքները այստեղ են բերվում նիկողիմիա քա-

զարքից» ու պատմագրի վկայութեամբ մեծ հանդիսավորութեամբ, Վաշա-
գան Բարեպաշտի մասնակցութեամբ, հողին հանձնում:

Գերեզմանոցի կենտրոնում 16-րդ դարի խաչքարեր կային: Հայկական
միջնադարյան հուշարձանների յուրահատուկ ավանդական զարդամո-
տիվները աչքի էին ընկնում նրբութեամբ ու կատարման վարպետութեամբ:
Ուշագրավ էին ներքևի մասում տեղադրված բարձրաքանդակները: Մի տեղ
հրեք տղա էին պատկերված: Տղաներից մեկը թաթ ունեցող տախտակ էր
բռնել, թաթի մեջ գնդակ էր պատկերված: Մեկ ուրիշի ձեռքին մական էր:
Երկու խաղընկերների միջև գնդակ էր՝ թոփշի պահին: Սա, անշուշտ,
դաստակով գնդակախաղի պատկերն է: Այս խաղը մինչև օրս տարած-
ված է Ղարաբաղում: Թվում է, որ այս խաղը պատկերող միակ օրինակն
է հայկական խաչարձաններում: Մյուս խաչքարի վրա սրածայր սաղա-
վարտով հեծյալ է, ձեռքին՝ վահան ու նիզակ: Այս բարձրաքանդակով
կարելի է գատել 1550 թվականի հայոց սղնախների զինվորական հան-
դերձների մասին: Նրա դիմաց մեկ այլ հեծյալ է պատկերված, սակայն
աղճատված դեմքով: Զինվորի երկար նիզակի ծայրը խրվել է այս հեծ-
յալի մարմնի մեջ: Անշուշտ, պաշտամունքային հուշարձաններում նման
թեմայով բարձրաքանդակները եղակի են: Մեկ այլ խաչքարի վրա հրա-
ցանով զինվոր է քանդակված, դիմացը՝ եղջերու:

Ձ. ՏԵՐ ԴԱՆԻԵԼԻ ԳՅՈՒԴԸ

Գետաշենից ուղևորվեցի Մարտունաշեն (Բաֆֆու ժամանակ այն Ղա-
րաբուլաղ էր կոչվում): Թվում էր, թե Գետաշենը, որը ավելի քան 5 կի-
լոմետր ձգվում էր Քյուռակի երկարությամբ, չի վերջանալու: Երբ անց-
նում էի կամրջով, 8 տարեկան մի աղջնակ ուղիղ աչքերիս մեջ նայելով
հարցրեց մորը.

— Հի՛նչ մարդ ա սա:— Նա այնպես էր հարցնում, կարծես թե ես
մի ինչ-որ հետաքրքիր իր եմ: Մայրը նկատելով ժպիտս, սաստեց աղ-
ջրկան.

— Աղջի սուս, համութ ա:

— Ցանի նկարիչ ա՞, — համառորեն շարունակեց հետաքրքրվել աղջ-
նակը:

— Հա՛, հա՛, անհարմար ա, սուս բրա:

— Ցանի իսկական նկարիչ ա՞...:

Ես չգիտեմ, պարզ անմիջականությամբ այս կողմերում պապերի՞ց
է երիտաներին փոխանցվում, թե հակառակը: Գյուղի միջով անցնելիս
մարդիկ առանց ձևականությունների անմիջականորեն հարցնում են՝

— Ո՞վ ես, ո՞ւր ես գնում:

Բաֆֆին գրել էր գետաշենցիների ազդու հայհոյանքների մասին,
ու ես նախապես որոշել էի նման բան լսելիս ամենևին էլ չազդվել: Բայց
ահա երկու օր այստեղ եմ՝ ու ոչ մի հայհոյանք...:

Անցնող մեքենաներին չէի նայում, որպեսզի նրանք կանց շտանեն:
Մի մարդ մոշով լցված դուլը ձեռքին Գետաշեն էր գնում:

— Սա՞ է Մարտունաշենի ճանապարհը, — հարցրի ես:

— Սա է:

— Չե՞մ շփոթվի:

— Միշտ աչ գնա՛ չես շփոթվի:

Ես քայլում էի խճուղով ու մտածում, որ, հավանաբար, Բաֆֆին
հիշել է իր երիտաներին ու կնոջը՝ Աննային, որոնց թիֆլիս տեղափոխե-
լու համար միջոց չէր գտնում: Գուցե և հենց այստեղ էլ որոշեց, որ Սյու-
նիքից կգնա Նախիջևան, այնտեղից՝ Սալմաստ, հայրենի Փայաջուկ ու
յնտանիքը կտանի թիֆլիս: Մի պահ սթափվեցի ու զգացի, որ ինքնամո-
ռոց հանձնված մտքերի հոսքին, չեմ գնում շրջապատը: Բայց չէ՞ որ ես
գիտավորյալ ոտքով եմ գնում, որ գիտեմ ու գրանցեմ տպավորություն-
ներս: Ծանապարհը թեքվեց աջ՝ ձորում թողնելով տափաստան շտապող
Քյուռակին: Ողորկ բլուրները ցաթի թիփերով էին ծածկված: Ծանապար-
հի ձախ կողմում Դանիել Տեր-Բարաղամյանի այգիներն էին: Ս. Տեր-
Իսրայելյանը պատմում էր, որ այգեգործության բնագավառում այդ հո-
գևորականը Գանձակի կողմերում մրցակից չունեի: Նա մի ծառից պատ-
վաստման միջոցով 13 տեսակի բերք էր ստանում: Նրա պատվաստած
բնկուղենիների պտուղները ձվի չափ էին: Նրա այգին գյուղացիք «Ղրիմ»
անունով էին կնքել: Մելիք-Բեգլարյանները հաճախ էին այգեգործու-
թյան հարցերում այդ հոգևորականի օգնությունը դիմում:

«Առհասարակ, այդ Լահանան ինձ վրա լավ տպավորություն գո-
ձեց, — գրում է Մարտունաշեն (Ղարաբուլաղ) այցելած Բաֆֆին:— Առա-
ջին անգամ տեսնում էի աստծո սեղանի պաշտունյաներից մեկին, որ իր
սպրաւտի հույսը չէր դեռ միայն պակից, մկրտությունից և թաղումից
ստացած փողերի վրա, այլ ապրում էր արդար արեւեստով և գյուղացու
ունեւտութեամբ»:

Հեշտութեամբ գտա Դանիելի թոռ բժիշկ Սիմոն Տեր-Բարաղամյանի
տունը: Նա երկհարկանի մեծ տանը միայնակ էր բնակվում: Սեղանին
էր դրված Բաֆֆու նկարագրած քահանայի լուսանկարը: Պատկերված
էր հաղթանակ, մեծ ձեռքերով արհեստավոր-հոգևորականը: Լուսանկար-
վել է 1885 թվականին 65 տարեկան հասակում, թիֆլիսում: Հնարավոր
է, որ Դանիելը այնտեղ հանդիպած լիներ Բաֆֆուն:

Բժիշկ Սիմոնը իր արտաքինով նույնպես պարթևահասակ էր, ամուր
ու ձիգ կազմվածքով:

— Տղամարդու պատրաստած ճաշ է,— տխուր ասաց նա, սեղանին
դնելով երկու ափսե: Տան մի անկյունում կիսատ մնացած փայտե մա-
տուցարան էր դրված: Որսալով հետաքրքրվող հայացքս, Սիմոնն ասաց.

— Հենց իմ պապ Գանիելի վերջին մատուցարանն է, որ 1917 թվա-
կանից մնացել է կիսատ: Ուզում եմ շարունակել, բայց նման նուրբ դո-
ծի վարժ չեմ ու վախենում եմ փշացնել այն:

— Ուրեմն դուք 15 տարեկա՞ն էիք, երբ ձեր պապը մահացավ:

— Այո,— պատասխանեց բժիշկը:

Բաֆֆին նրան հին կիսավեր իջևանատան մեջ էր հանդիպել, որը
հոգևորականը արհեստանոցի էր վերածել: Այստեղ նա հիմնականում
տակառագործութիւյամբ էր զբաղվում, այն սովորելով Ելենգորֆի
գերմանացիներից: Ծս արդեն պատկերացնում եմ նրա հոգևորական հո-
բը, որը որդուն հոգևոր կրթութիւյանը զուգահեռ արհեստի ուսման էր տվել
Ելենգորֆում:

— Պապիս պատրաստած մատուցարաններից մեկը փոքր եղբորս
տանն է,— ասաց ծեր բժիշկը:

Կազնու փայտից պատրաստած մատուցարանը իր նրբութիւյամբ ժան-
յակի տպավորութիւյուն էր թողնում: Այն արժանի էր տեղ գրավելու ցան-
կացած թանգարանում:

Սիմոնի եղբոր թոռան՝ 17-ամյա Եփրեմի հետ զննեցի գյուղի շրջա-
կայքը: Մի սարալանջի վրա լայն հարթակները հսկա աստիճաններ էին
ստեղծել: Դա հին Դուլուս (Դեպի լույս) գյուղատեղն էր: Այն ավերվել
էր թաթար-մոնղոլների կողմից: Կիսակործան թաղածածկ տներ կային,
Եկեղեցին ևս կիսաքանդ էր: Հենց այստեղ էր Կազ Արովը՝ Գյուլիստանի
մեկիքը, փախցրել գեղեցկուհի Ղամարին: Այստեղ յուրաքանչյուր մարդ
գիտե այդ պատմութիւյունը: Կազ Արովը Գանձակից վերադարձի ճանապար-
հին ջերմում է և այս գյուղատեղում նստում մի ծառի տակ: Այդ պահին
Գանձակի խանի եղբայր, մեծահարուստ Միրզա Մահմադ Մուստաֆայի
գեղեցկուհի աղջիկը՝ Ղամար Սուլթանը, զբոսնում էր աղջիկների հետ:
Արովը տեսնելով գեղեցկուհուն, մոռանում է տկարութիւյունն ու առևան-
գում նրան: Գյուլիստանի Ամենափրկիչ վանքում (Անապատ) Մա-
րիամ է մկրտում նրան ու պսակվում հետը: Գանձակի խանը բազմիցս
փորձում է քրիստոնյայից հետ խլել եղբոր աղջկան, բայց մելիք Արով
Զ-րդից պարտութիւյուններ կրելով հաշտվում է նրա հետ: Մեծահարուստ
Մուստաֆան քաջ մելիքին է զիջում և՛ աղջկան, և՛ իրեն պատկանող 15
գյուղերը: Հավանաբար, հենց այդ ժամանակաշրջանից սկսած Գանձակի

խաների ու Զրաբերդի և Գյուլիստանի տերերի միջև համակրանքի ու
դաշնակիցների կապ է ստեղծվում, ու նրանք հաճախ էին փոխօգնութիւյան
գալիս իրար, միացալ ուժերով կռվում ընդհանուր թշնամու դեմ: Դա
ավելի ցայտունորեն էր դրսևորվել Շուշվա ինքնակոչ խանի ավարառու-
թիւնների դեմ ընդհանուր պայքարում: Դա այն մելիքն էր, որը 1725
թվականի մարտի 10-ին Գանձասարի կաթողիկոս Ծսայի Հասան Զա-
լայանի ու մյուս իշխանների հետ նամակ է գրում Պետրոս Մեծին: Այդ
նամակում նկարագրելով թուրքերի զորքի ջարդի մասին, հալ իշխանա-
վորները գրում են. «...խնդրեմք, աղաչեմք, զի վասն անուն Քրիստոսի
մի անտես արասցես զիհայցուածս մերս: Ինչպես հայտնի է, Պետրոս
Մեծը իր պատասխան հրովարտելով Ղարաբաղի հայութիւյանը առա-
ջարկում էր Պարսկաստանից խլած Գիլան, Մաղանդարան, Քազու եր-
կրները: Այս առաջարկը, բնականաբար, մերժվեց հազարամյակներ շա-
րունակ իր հայրենիքը սրբութիւյամբ պահպանած Արցախ-Ղարաբաղի
հայութիւյան կողմից:

Եփրեմի հետ զննում եմ գյուղամիջի «Աստվածածին» եկեղեցին:
Կառույցի մուտքից վեր ճակատքարին արձանագրութիւյունը պատմում է
եկեղեցու հիմնադրման մասին. «Շնորհք ամենակալին. մեք Ղարապու-
լախի ժողովուրդս մեծ և փոքր շինեցինք ս-բ եկեղեցիս... թվին ՌՃԻԾ
(1676)...

Բաֆֆու այցելութիւյան ժամանակ գյուղում կար 44 տուն 306 բնա-
կիչներով:

Է. ՇՐՁԱԴԱՐՁ ԴԵՊԻ ՐԱՅՑԻ

Մարտունաշենից ուղիղ էրքեջ գյուղը գնալ ինձ շահողվեց: Ժանա-
պարհը վատ էր, ու ավտոմեքենաներ չէին գնում, իսկ ձի և ուղեկցող
գտնել մեր օրերում անհնար էր: Մտիպված պետք է լինեմ Կիրովաբադ
վերագառնալ, այնտեղից էլ՝ Շահումյան ավան, հետո արդեն հեշտու-
թիւյամբ կգտնեմ Բաֆֆու հետքերը: Այսպիսով, 20 կմ-ի փոխարեն պետք
է անցնեմ 150 կմ: Բեռնատար մեքենայի թափքը լիքն էր մարդկանցով:
Թափքի վերջին մասում ոչխարներ էին կապկպած: Երբ ես Գետաշենում
ուղում էի իջնել ու Կիրովաբադ մեկնող ավտոբուսը նստել, թափքի մար-
դիկ առաջարկեցին իրենց հետ Պանդալուսի սարը ուխտի գնալ:

— Լավ քեֆ կանես մեզ հետ, հետո կգնաս,— առաջարկեց մի բարձ-
րահասակ մարդ:

Լեռներից հարթավայր իջնելով մի քանի ժամվա ընթացքում ակա-
նատես եղա բնութիւյան վերափոխման բոլոր ելնէջներին: Բայց Շահումյան

ավանդին մոտենալով, կրկին զգացի լեռների շունչը: Դեռ նոր էի ծանոթացել քնկերոջս հոր՝ շրջանի գավառագիտական Թանգարանի հիմնադիր և գիրեկտոր Մամիկոն Պետրոսյանի հետ, երբ հայտնեցին, որ արձակուրդն անցկացնող օդաշունների մի խումբ Թանգարանի մոտ իրեն է սպասում: Իսկույն մեկնեցինք: Օդաշունները հպարտությամբ էին պատմում, որ գններալ-լեյտենանտ Ստեփան Անաստասի Միկոյանի հետ հաճախ են օդանավեր փորձարկել: Զրույցից զգացվեց, որ Ս. Ա. Միկոյանի շնորհիվ քաջածանոթ են հայ ժողովրդի և Արցախ-Խաչեն-Ղարաբաղի պատմությանը: Թանգարանում իմ ուշադրությունը գրավեց Կարաշինարից բերած սեզամնետածկ մարմարե մի քարաքեկոր: Դեմ հանդիման, երախները բաց առյուծներ էին պատկերված: Ներքևում թվագրությունն էր՝ ՌՃԸ (1659), Հավանաբար, այն մելիքական իշխանության զինանշանն էր: Թանգարանային նմուշներից հետաքրքիր էր նաև զույգ խաչ պատկերող Նուշարձանը: Դրանք Արցախում յուրահատուկ էին 9—10-րդ դարերում:

Ավանք լցվել էր հարսանեկան երաժշտությամբ: Աղջկա ծնողների տանը ավարտելով հանդեսը, հարսանքավորները երգ ու պարով շարժվում էին փեսայի տան կողմը: Առջևից գնում էին վեց երիտասարդներ, ձեռքներին բարձր բռնած մրդերով, քաղցրավենիքով ու աքլորով զարդարած կենաց ծառերը: Այստեղ պահպանվում է մեզ հասած ավանդական այս ծեսը:

Ը. ԵՊՐԱՔԱՆԱԿՈՒՅՍԻ ԵՐԿՐՈՒՄ

Բաֆֆին Ղարաբուլաղից (Մարտունաշենից) ձիով էր էրթեջ գնացել: Վաղ առավոտյան շրջանային կուլտուրայի բաժնի ավտոբուսով ուղևորվեցինք դեպի էրթեջ գյուղը: Ծանապարհի երկու կողմերում կարտոֆիլի համատարած դաշտեր են: Մամիկոն Պետրոսյանն ու վարորդը անհանգիստ էին ձգձգվող երաշտի պատճառով:

— Հագիվ սերմացու դուրս գա, — ասաց Մ. Պետրոսյանը: Կանգ առանք: Ստուգեցինք կարտոֆիլի թաղը: Սրտացավությունը, որ ամեն ինչի նկատմամբ ունի Մ. Պետրոսյանը, զարմացնում էր ինձ:

Թանգարանի դիրեկտորը պատմում էր ինձ հետաքրքրող տեղանունների մասին:

— Այդ գյուղի մոտ մի ապառաժի տակ պարսկական վաճառականների քարավան է իջնանել, որ գիշերն անցկացնի ու առավոտյան շարունակի ճանապարհը: Երկու հոգի ուղտերին իջեցնում են ձորը շուր տալու, վերադառնում են, տեսնում՝ ապառաժը փլվել է, ոչնչացրել բո-

յորին: Մի կտոր փայտի վրա «էրթեջ» են գրում ու հեռանում: Էրթեջ, այսինքն՝ թո՛ղ, հեռացիր:

Հին աղբյուրներում գյուղի անունը Այրթաջ է հիշատակվում ու, հավանաբար, այն աղավաղվել է, կապվել այս լեզվագիտական հետաքրքիր հարցի հետ: Գյուղ հասանք: Սուրեն անունով մի մարդ առաջարկեց մինչ եկեղեցու բացելը հին գերեզմանոց գնալ: Հին խաչքարերը թաղված հողի մեջ, ծայրերը հագիվ են նշմարվում: Պատ-ապառաժը փլվել է երկրաշարժի ժամանակ ու ծածկել հին գերեզմանոցը:

Վերջապես, բացեցին եկեղեցու դուռը:

«Քահանան հայտնվեցավ: Դա Կարաբուլաղի (Մարտունաշենի-Բ. Կ.) առհեստավոր Բախանայի հակապատկերն էր: Նա հոժարությամբ բաց արավ եկեղեցու դռները, կարծելով, թե ես ուխտավոր եմ, և շուտով ավետաբեր և մի կտորած խաչ դրեց սեղանի վրա, որ ես համբուրեմ և նրան փող տամ: Բայց երբ նկատեց, որ ես ճիշատեորը դուրս հանեցի ձոցիցս և սկսեցի մատիտով մի ֆանի նկատողություններ անել նրա վրա, Բախանան սարսափեց, կարծելով, թե ես մի պաշտոնական անձ եմ, և սատանան գիտե, ինչ նպատակով եկել եմ նրա եկեղեցին «գրելու»... Նա ոչինչ չկամեցավ ինձ ցույց տալ»:

Դա Աբրահամ Տեր-Դանիելն էր, որին բթի մեջ խոսելու պատճառով գյուղացիք «սինթի» մականունն էին կապրել: Եկեղեցու հիմքից մի հսկա ճաք զիջվածով վեր է ձգվում, տանիքի մոտ ճաքի լայնությունը հասնում է 30 սմ-ի: Շուրջը տապանաքարեր էին թափված: Սուրբ Սարգիս եկեղեցին 6 սյուների ու 4 կիսասյուների վրա հենված, երկհարկանի զույգ ավանդատներով, 22×13 չափերով եռանավ բազիլիկ կառույց է: Տանիքը գիտնաստան պես հետևի մասում ձուլվում է փողոցին: Եթե մկրտություն ավարտելից մոտ ազուցված զեղաքանդակ փոքրիկ խաչքարի թվագրությունը 9Թ (1260) է, ապա մուտքի բարավորի վրա նշված է 1716 թվականը: Ըստ հավանականության, նոր կառույցի տեղում հին եկեղեցի է եղել: Հետաքրքիր է այն հանգամանքը, որ եթե միջնադարում ընդունված էր պաշտամունքային կառույցների կենտրոնազմբեթ ձևը, ապա 17—18-րդ դարերում Ղարաբաղում ընդունվում են բազիլիկ կառույցները, որոնց ընդարձակ չափերը հնարավորություն են տալիս ներսում մարդկանց մեծ բազմություն հավաքել: Նման հավաքները հաճախ դուրս էին գալիս եկեղեցական շրջանակներից, վերածվում աշխարհիկ հարցեր քննարկող ժողովների:

Որոշեցինք վերադարձին Ռուս և Հայ Բորիսներով անցնել: Մամիկոն Պետրոսյանը շարունակում էր նորանոր ավանդություններ պատմել ինձ:

— Զիք կոչվող վայրում մի սուրբ աղբյուր կա, որից ոչ հետո գանձվող տապանաքարին գրված է՝ «Այս է տապան Եպրաքսյա կույսին, որ կարոտ մնաց կյանքին ու լույսին»: 80-ամյա ծերունուց պարսիկները պահանջում են թոռանը՝ գեղեցկուհի Եպրաքսյային: Պարսիկները գյուղից 5 աղջիկ պետք է տանեին: Սերունի նախքապանը ձեռքի զագանակով հարվածում, սպանում է պարսիկ հարկահանին: Պարսիկ զինվորը մերկացրած սրով հարձակվում է ծերունու վրա: Այդ պահին հրացանի պայթյուն է լսվում: Զինվորը գետին է տապալվում: Քիուտների հետևում տեսնում են հրացանով Եպրաքսյային: Գյուղացիները 4 օր հետո գրտնում են Եպրաքսյայի մարմինը: Գերի ընկած հայուհին իրեն ցած էր նետել ժայռից՝ մահը գերազանցելով անարգանքից:

Բլրի գագաթին կանգ առանք: Երևում են բլուրներին փոխված գյուղերը: Հեռվում լեռնալանջով կարծես դեպի ցած էր սահում Մարտունաշենը: Նրանից աջ Քողանն է, մյուս կողմում՝ Մանաշենը (Մանաս շեն կամ գուցե՝ Մանիշակի շեն): Այս գյուղում բազիլիկ հորինվածքով եկեղեցու մուտքից վեր ճակատկալ բարի վրա գրված է՝ «Մենք՝ Մանաշեն գյուղի հասարակություն, շինեցինք այս սուրբ եկեղեցին, բացի Մարգիս Նազարյանից, 1892 թ.»: Եթե Մարտունաշենի եկեղեցու արձանագրությունում հիշատակվում են բոլոր կառուցողները, ապա այստեղ հիշատակվում է միակ շմանակցողի անունը, դրանով էլ անմահացնելով նրան: Դա նման է հրգեհաձիգ Հերոստրատին, որը նույնպես չի մոռացվել պատմության կողմից:

Փանգարանի դիրեկտորը պատմում է, որ 20-ական թվականներին Մանաշենը երեք անգամ մեծ էր հարևան աղբյուրանական Քողան գյուղից, իսկ այժմ արդեն Քողանն է 3 անգամ մեծ Մանաշենից: Շրջանի 24 հայկական գյուղերից 11-ն են մնացել, իսկ դրանց կողքին ավելացել են աղբյուրանական ևս նոր 7 գյուղեր, որոնք մարդաշատ են:

Ճանապարհի աջ և ձախ կողմերում սագերի բազմաքանակ երամներ են կղկղալով դիմավորում մեր գալուստը: Ու թվում էր, թե սագերի թագավորություն ենք մուտք գործել: Ուրեմն Ռուս Բորիսը հեռու չէ այստեղից: Հայտնվում է գյուղը: Տները կանոնավոր շարքերով ձգվել են մերկ լեռան փեշին: Տնամերձ հողամասերում այգիների փոխարեն կազամբի բանջարանոցներ են: Դաշտերում ևս կաղամբ է աճեցվում: Հիշեցի թանգարանում հանդիպած օդաչուներից մեկի պատմությունը:

— Ռուսների գալը համընկավ Վրաստանի Բոլնիս-Նաշենից հին պարսեցոց վերադարձին: Ընդի հարց պետք է լուծվել: Իհարկե, հայերի իրավունքն էր գյուղատեղ ընտրելը, որովհետև հայրենի երկիր են վերագտնում, իսկ ռուսները քաղաքացիներ էին: Ռուսների աչքը հայերի հին

գյուղատեղի վրա էր: Նրանք էլ հայոց իշխանի (մելիքի) հետ պայմանավորվում են՝ երբ իշխանը հարցնի, կասեք, որ ներքևի գյուղատեղն էք աղում: հայերն էլ կկարծեն, թե գա է լավը, իրենք կընտրեն այն, իսկ վերին հին գյուղը ձեզ կմնա: Այդպես էլ լինում է, ու ռուսը հայ իշխանի օրհուժյամբ խորամանկում է:

— Զէ մի, խորամանկում է,— առարկեց Մամիկոն Պետրոսյանը,— ներքևի գյուղատեղը շատ ավելի լավն է, իսկ Ռուս Բորիսում ջուր չի լինում:

— Բայց այնտեղ առանց ջրելու էլ է լավ աճում,— ասաց օդաչուն, որը լավ ծանոթ էր շրջանի գյուղերին ու պատմությունը:

— Էհ, հիմա առանց ջրելու, առանց ոռոգման յուր չես գնա,— ասաց օդաչուներից մեկը:— Ժամանակակից գյուղատնտեսության պահանջները այլ են:

Այս հիշողություններին զուգահեռ զննում էի էրքեջում արված գրառումներս: Իմ ուշադրությունը գրավեց մի արձանագրություն. «ԹՎ ԽՄԿՁ (1817), որ է Պոլնուսու գալն, մայիսի 20, Քրիստոսի ծառայ տեր Դանիել»: Պարզորեն երևում է գյուղի անվան Պոլնիս-Բոլնիս-Բորիս ձևփոխությունները: Գյուղի անունը մինչ Վրաստան գաղթելը Պոլնիս է եղել: Վրաստանում նոր գյուղը Բոլնիս են կնքում, իսկ վերադառնալուց հետո ռուսների ազդեցությամբ Բորիսի է վերածվում:

Ճանապարհի ձախ կողմում, գյուղին հանդիպակաց բլրի վրա հայկական հինավուրց գերեզմանոցն էր: Մի խաչքարի վրա նշված էր Ո (1151) թվականը: Մի քանի շքեղ տապանաքարերի մեջքին թագեր էին բանդակված: Դրանք մելիքական ընտանիքի քարեր էին, որոնք հիմնականում շրջված էին տեղից: Ընչաքաղց մարդիկ այդպես էլ չեն ուզում հավատալ այն փաստին, որ իրենց նախնիների մոտ ընդունված չէր շիրմներում ոսկեղեն դնելը, ու շարունակում են անցյալների հիշատակները ավերել: Մ. Պետրոսյանը մի քար էր փնտրում, որի վրա գրված էր եղել՝ «ՄԵԼԻՔ ԲԵԳԼԱՐԻ ԴԵՐՁԱԿ ՄՈՍԻՆ»: Շիրմաքարին գերձակի արհեստի հետ կապված պատկերաքանդակներ էին փորագրված եղել: Տապանաքարը շկար տեղում: Թվագրված քարերն ընդգրկում էին 10-ից մինչև 19-րդ դարերը: Ավելի հին խաչքարերն ու տապանաքարերը չէին թվագրված:

Ներքևի Բորիսն արդեն ավանդական հայկական գյուղ էր՝ իր բարդ սելիեֆով, տների բնական, ըստ տեղանքի ու դիրքի բաշխումով: Մի բակում գերեզմանաքարեր էին շարված: Քարագործի տունն էր: Հին քարի երկու կողմի պատկերաքանդակներն ու վիմագրերը մաշվել, շքա-

ցել էին: Այլևս ոչ ոք չի իմանա Մելիք-Քեզլարի պոլնիսեցի դերձակ Մուսու մասին և ոչ էլ այդ արհեստը պատկերող բարձրաբանդակներով պատկերացում կկազմի ժամանակաշրջանի մասին:

Թ. ԿԱՐԱՉԻՆԱՐ

«Գյուլիստանի մահալի այժմյան տիրապետողները միակն են Ղաբարաղի բոլոր մելիֆներից, որ կարողացել են ամբողջպես պահպանել իրանց հայրական ժառանգությունը: Գալով Կաբաչինա՞ր կամ Աղջակալա գյուղը*, ևս ի՞շա Մելիք-Քեզլարովների տանը:

Կալվածատիրոջ տունը համարյա մի ամբողջ է...

Մելիք-Քեզլարյանները առաջինը եղան Գանձակի գավառի մեջ, որ բերել տվեցին եվրոպական զուբան և հեճելու մեֆենա»:

Բաֆֆին այստեղ ծանոթանում է Անդրկովկասի երկրագործական լավագույն տնտեսություններից մեկի հետ, նկարագրում նրա առաջավոր ագրոտեխնիկական ձևերը, միևնույն ժամանակ պատկերում թերի կողմերը: Մելիքական տան նախավերջին շառավիղը՝ Սարգիս Մելիք-Քեզլարովը, բարձրագույն ուսումը ստացել էր Եվրոպայում (1870 թ. ավարտել է Բեռլինի համալսարանը), իսկ 8 տարի անց Քամբրիջ բեկից հետո ժառանգելով հարստությունը, իր տնտեսությունում փորձեց կիրառել գյուղատնտեսության առաջավոր նվաճումները: Նրա վաղեմի փափազն էր Ինչա գետի ջրերը հատուկ ջրանցքով տեղափոխել Քալիշի դաշտերը: Իրա պատվերով գերմանացի ինժեներները հատուկ նախագիծ են կազմում:

Բաֆֆու հետ հանդիպման ժամանակ Սարգիս Մելիք-Քեզլարյանը 35 տարեկան էր:

«Մեկ շաբաթ մնացի Ղաբաչինա՞ր գյուղում Մելիք-Քեզլարյան Սեբեյ բեգ և Ալեքսան՝ բեգ եղբայրների տանը: Տեղային ձեռուներները գնում գալիս էին ինձ մոտ, ոգևորված պատմում էին երկրի մելիֆների պատմությունը»:

Կարաչինարում մելիքական տան հետքերն անգամ չզտնելով, ծանոթացա տնտեսության հետ: Տնտեսության հիմնական ուղղությունը խաղողագործությունն է: 750 տնտեսություն ունեցող գյուղը ծածկվել է այգիների մեջ: Այստեղ առանձնանում են 500 տեղով մշակույթի պալատեր, 650 աշակերտական տեղով հայկական դպրոցը, պանրի ու պահածոների գործարանները:

* Այդ գյուղը կոչվում է Աղջակալա նրա համար, որ երբ Գյուլիստանի մելիքները գաղթեցին Բոլնիս, այնտեղ բնակվեցան Աղջակալա գյուղում և այն:

Ժ. ԳՅՈՒԼԻՍՏԱՆ

Հաջորդ օրը վաղ առավոտյան դուրս եկա հյուրանոցից: Հարևան բակից արևոքը անընդհատ կանչում էր:

Ընկերներիցս մեկը նախապես տեղեկացրել էր, որ Վերին Շեն գյուղի շրջակայքում մի հինավուրց հեթանոսական գերեզմանոց կա, որի տեղը դարոցի ուսուցիչ իր հորեղբայրը կարող էր ցույց տալ: Ուսուցչին գյուղում չգտնելով, դիմեցիք 85-ամյա Վաղարշակ Մարտիրոսյանին: Բարձրահասակ, ջլապինգ մարդ էր: Առանց հապաղելու ուղեկցեց մեզ գեպի ապառաժոտ կտորիվերը: Ապարդյուն փորձում էի նրան համոզել, որ ինքը սպասի ներքևում: Մեզ չհաջողվեց գտնել գերեզմանոցը:

— Ծն շնմ տեսել, բայց տղոս ասել է, որ այս կողմերում է,— արդարացավ ծերունին: Ետ դարձանք, ու Վաղարշակը մեզ տուն հրավիրեց:

— Որ Վահագնիս ընկերն ես՝ առանց տուն մտնելու շնմ թողնի գնաս:

— Գյուլիստան պետք է գնանք, հայրիկ,— ասացի ես,— անապատ ու բերդ էլ պետք է գնանք:

— Ընապա՞տ,— հարցրեց կինը՝ Արմաղան տատը, որի աչքերը փայլեցին հուզմունքից: Դարձավ ամուսնուն,— հիշում ե՞ս, Վաղարշակ, որ անապատ փախանք:

— Պատմեք, մայրիկ,— խնդրեցի ես: Մի անտեսանելի հայացքով ստանալով ամուսնու համաձայնությունը, Արմաղան տատը պատմեց հետևյալը.

— 1920 թվականն էր, նոր էինք պսակվել: Օսմանու թուրքերը հարձակվել էին գյուղի վրա, հրկիզում էին տները, ժողովրդին լցնում եկեղեցիները, կենդանի-կենդանի այրում: Ասացինք՝ փախչենք: Մարտ ամիսն էր: Անապատ հասանք, անտառից ճյուղեր կտրտեցինք, մեծ կրակ սարքեցինք: Ողջ գյուղից մի 4—5 ընտանիք էին փրկվել՝ շուրջ 60 հոգի: Ում կովը, ոչխարը պատահում էր, մորթում էինք, խորովում: Տեսանք մալականների կողմում (Ռուս Բորիսում— Բ. Կ.) թուրքերը շարված մեզ են հետևում: Արագ հանգցրինք կրակը, Յուզակերի կողմը փախանք: Նրանք ուզում էին դալ ու կոտորել մեզ: Այդ պահին Գենիկինի սպիտակ զորքը կարմիրներից փախչելիս է լինում: Թուրքական ջոկատը մեզ թողնում է այդտեղ, ոտսների ահից ձողալրում: Մեկ ամիս անտառում մնալուց հետո գյուղ վերադարձանք: Տները դեռ միում էին...

«Շարունակելով նախապահը նույն ձուրի միջով և կես ժամի շափ առաջ գնալով, անտառը վերջանում է, և նախապահը ընկնում է նաբ բարձրավանդակների վրա, որ զուրկ են անտառից... ԽԱՉԻ ԳԱՏՈՒԿԻՅ

անցնելով, Գաւապարհը հետզհետե ցածրանում է դեպի մի խոր ձոր, որի մեջ գտնվում է Գյուլիստան գյուղը»:

Առաջինը, որ գյուղում գրավեց իմ ուշադրութիւնը, դա բնութիւն շունչն էր: Ամպաքուպաները, կարծես թե հատուկ կանխորոշված հունե-բով մեկ վեր են սահում լեռնալանջերով մեկ, իջնում ձորը, ուր հազար-ամյակներ շարունակ Ինչան է գալարվում, վիշապի նման ալիքների գլուխները վեր են բարձրանում ու բարկացած գյուղի կողմը նայում՝ չլինի՝ թե օտարի ներկայութիւնն է զայրացրել նրան: Բացվում են հսկա երախները: Հիմա կհարձակվեն գյուղի վրա: Բայց նոր ամպաքուպաներ են գալիս, ուժեղ հոսանքի բերանն ընկած մխրճվում վիշապ-ամպի մեջ ու նրանց վերափոխում հսկա թևերով բարի հրեշտակների: Եվ այսպես, ամպերը Մոսվի լեռնապարից այն կողմ՝ Քարթափ կիրճից ծնունդ առած, մկրտվում են Զրաբերդի վանքերում, պատահական մրրկահող-մի բերանն են ընկնում ու անկախ իրենց կամքից, անցնում են լեռը, փորը քանդով անտառին, ողջ ճակատով մեկ արշավում դեպի Գյուլիստան: 9է՛, նրանց նպատակը այս գյուղը գրավելը չէ: Նրանք այն վաղուց են նվաճել: Ամպերը նախ փակեցին արևը, ապա մեղմորեն սահեցին գյուղի վրայով: Այնպես, որ զգացվում էր ամպերի (ու նաև ողջ բնութիւն) սերը այս հինավուրց գյուղի հանդէպ: Իսկ հեռու արևմուտքում պապակ դաշտեր կան, ու ծարավի դեմ պայքարել է պետք:

Լեռնալանջի հարթ տարածքում հին գերեզմանոցն է: Երկու մետր բարձրութիւն ունեցող գեղանի խաչքարերը կիսով չափ խրված էին հողա-շերտի մեջ: Նրանց հետ միախառնվել են մելիքական շրջանի տապանա-քարերը: Առաջնորդեցին գյուղի կենտրոնում գտնվող թաղակապ մի տուն: Միակամար թաղով ընդարձակ սրահ էր: Մուտքի ճակատքարի վիմա-գրութիւնը հայտնում է, որ ապարանքը պատկանել է Աբրահամ սպարա-պետին (Աբրահամ հարյուրապետը Գյուլիստանի մելիքութիւն ամենա-քաջ զորահրամանատարներից էր, նա Իսրայել Օրու պատվիրակութիւն հետ մեկնել էր Ռուսաստան, Հայաստանը օտար լծից ազատագրելու համար գիմել Պետրոս Մեծի և ռուս ժողովրդի օգնութիւնը):

Ավելի հին կառուցել էր գլխատունը: Ենթին մեղ դիմավորեց տան միակ բնակիչը՝ 75-ամյա Բարիշկա Սեփյանը:

— Էս տունը մեր նանին նանի՛ ժամանակներից է,— ասաց նա ու պատմեց, որ իր հարս եղած ժամանակ տան մեջ աղբյուր է եղել: Ինքը ողջ 20 տարի տնից դուրս չի եկել: Ամեն ինչ ներսում էր: Քառակուսի բնդարձակ սրահի կենտրոնում թոնիրն է: Պատերի խոր սրմնախորշերը պահարանների դեր էին կատարում: Երկու տարի առաջ թաղի կեսը փրկ-

վել էր: Ինչ խոսք, որ այս գլխատունը աշխարհիկ ճարտարապետութիւն եզակի, գուցե և վերջին նմուշներից է ու պահպանման, խնամքի կարիք ունի: Հավանաբար, նման տուն մենք շուտով կտեսնենք Երևանում, վերակառուցվող Ձորագյուղի ազգագրական-թանգարանային նոր թաղա-մասում: Սակայն հին նմուշը շատ ավելի մեծ արժեք ունի: Տանախորտ հին հին թաս, բանալիներ ու հին մկրատ նվիրեց ինձ:

— Դրանք թանգարանին տուր, մայրիկ,— ասացի ես,— Մամիկոն Պետրոսյանը լավ թանգարան է հիմնել շրջկենտրոնում:

— Եկել տարել են, բալա ջան, մի մտահոգվիր, Մամիկի աչքից հնութիւն չի վրիպի:

— Հարազատներ ունե՞ս, մայրիկ:

— Հա, քեմատաղ, երկու աղջիկ և մի տղա: Բայց քաղաքներում են: Տղաս հայտնի վիրաբույժ է Երևանում:

— Զե՞ս գնում նրանց մտա:

— 60 տարի այս տանն եմ ապրել, էլ ո՞ւր գնամ:

Մտածեցի, որ հինավուրց տունն ու 75-ամյա Բարիշկան միաձուլլ են: Զավոք, նրանից հետո քաջ զորահրամանատարի տունը անտեր կմնա:

Գյուլիստանում հին տները հիմնականում քանդում են ու տեղը նորը կառուցում: Գյուղը մելիքանիստ լինելուց բացի նաև նշանավոր է նրա-նով, որ 1813 թվականի հոկտեմբերի 24-ին այստեղ է ստորագրվել Ռու-սաստանի ու Պարսկաստանի միջև պատմական կարևոր նշանակութիւն ունեցող Գյուլիստանի հաշտութիւն պայմանագիրը, որով Ռուսաստանին անցավ Անդրկովկասի զգալի մասը: Դա կարևոր նշանակութիւն ունեցավ Անդրկովկասի ժողովուրդների համար: Ներքևում, բլրի հար-թակին գյուղի եկեղեցին էր: Այն այժմ որպես պահեստ էր ծառայում: Կուտնտեսութիւն պահեստապետը կալատեղից եկող ցորենը ընդունելու համար բացեց այն: Զարմանք պատճառեց 6 սյուների վրա հենված եռա-նավ բազիլիկ եկեղեցու ներքին խոշոր ծավալները (23,5×10): Եկեղեցու շուրջը մելիքական շրջանից մնացած հետաքրքիր զարգապատկերներով տապանաքարեր էին:

— Երեկ հացը պուլելիս խմորի մի կտոր պոկվեց, թռավ ցած, ասացի՛ հյուր կունենանք,— շեմին մեղ բարի ծպիտով դիմավորելով ասաց Ռա-ֆիկի կինը՝ Լարիսա Հովհաննիսյանը,— ուրեմն՝ մեր պապերի խոսքը ճիշտ է: Խմորի թոխը հյուր ունենալու նշան է:

Երեկոյան երկինքը պարզ էր ու աստղաշատ: Ամպերը լքացել էին: Երևի նրանք Մոսվից ուղերձ էին տանում Ալեքսի: Երջապատի լեռները տարօրինակ դիզագոգ փոքրացրել էին երկնակամարը:

¹ տարի տարը

Վաղ առավոտյան գրասենյակի մոտ կողմնատեսականներ էին խորմբ-վել: Խոսում են ոմն Ալիի մասին, որը կրկին հովիվ է ընդունվել տեսե-սությունում, հանրային հոտին խառնել իր 200 ոչխարը, 10 կովն ու բազմաթիվ հորթերը:

- Ալին ավելի վտանգավոր է դարձել:
- Ալին ո՞վ է, որ վտանգավոր լինի:
- Ա՛յ մարդ, գողութուն է անում, քիչ է՞:

— Տեսնում ե՞ք, — ինձ դիմեց կողմնատեսության նախագահ Վարդգես Հովասափյանը, — գյուլխտանցիներից ոչ ոք հովիվ չի ուզում աշխատել, արժանապատվությունից ցածր են համարում:

Ապա կողմնատեսության նախագահը պատմում է, որ Բաֆֆին Գյուլխտան է հասել օգոստոսի 4-ին և հյուրընկալվել գյուղի քահանա տեր Կորյունի տանը, որն էլ գրողին ուղեկցել է Ամենափրկիչ վանքն ու բեր-դը: «Պատմում են, — ասում է Վ. Հովասափյանը, — որ Սայաթ-Նովան մեկ շաբաթ մնացել է Գյուլխտան գյուղում: Անտառում նա մի ավազակա-խմբի է հանդիպում, որի գլխավորը Թալիշեցի տիրացուի որդի էր: Հոր սպանությունից հետո նա հեռացել էր գյուղից: Այդտեղ բանաստեղծ-գուսանը հանդիպում է մի թուրքի, որին ինքը Թիֆլիսում ազատել էր կախազանից: Նրանց հետ մեծ երգիչը գիշերում է քարանձավում: Սա, իհարկե, ավանդություն է, որը շուրջ 200 տարի շուրթից-շուրթ է անցել ու հասել մեզ: Մեկ այլ ավանդություն էլ կա, արդեն կապված հայ ժո-ղովրդի ազգային-ազատագրական պայքարի հերոսներից մեկի՝ Անդրա-նիկի անվան հետ: 1905 թվականին նա իջևանում է գյուղի դարբին Սի-մոն Հարությունյանի տանը»:

— Պապս նորածին որդուն՝ այսինքն հորս, կնքում է սիրելի հյուրի անունով, — ասաց կողմնատեսության ֆերմայի վարիչ Վ. Հարություն-յանը:

«Իմ հյուրընկալ ֆանանան քեե մոտ յոթանասուն տարեկան մարդ էր, յուր ձեռքով ձին քամֆելով, մի ձի էլ ինձ նամար պատրաստելով, հրացանը ձգեց ուսին, ձախ նման բուսով նրա վրա և իմ առջև ընկնե-լով, սկսեց առաջնորդել ինձ»:

«... խոսակցության միջոցին տե՛րտերը ինձ հեռվից ցույց տվեց Ամենափրկիչի անապատը»: «Այն գտնվում է Աղ-սու կողմից գետակի մոտ, ոչ այնքան հեռու Մոսով լեռից, մի անտառապատ ձուրակի մեջ»:

«Այդ տանաբը այժմ ամայի է. խաշնառած բուրբերը անասուններ են լցնում նրա մեջ. անասունների աղբը քանձրացած էր հատակի վրա»:

«Այդ անապատի գավթում քաղված են զանազան անձանց գերեզ-

մաններ, որոնց քվում է Արախամ յուզբաշու գերեզմանը (որ գնաց Պետրոս Մեծի մոտ)»:

Ներս մտանք, ու կարծես թե ամեն ինչ պահպանվել էր նույն տես-քով, ինչ որ Բաֆֆու այցելության ժամանակ էր: Այն եռանավ բազիլիկ կառույց է, հենված ամբողջական քարերից տաշված շորս սյուների վրա: Իմ ուշադրությունը գրավեց բեմի դիմացի պատի բարձր լուսամուտը: Այն իր ուրվադժով մտնրանկարներում ու բարձրաքանդակներում մեզ ծանոթ Աստվածամոր պատկերն էր հիշեցնում: Լուսամուտով բազմաթիվ թռչուններ էին դուրս թռչում: Թ՛վաց, թե պատկերը կենդանացավ ու լրց-վեց «սուրբ թռչուններով»: Վանքի տարածքում միաբանների կիսավեր թաղակապ կառույցներն ու հինավուրց մատուռը, անցյալի վկաներն են: Հետաքրքիր է, որ դարաբաղյան շատ ուխտատեղիներ ավելի մեծ հռչակ ունենին և ավելի շատ հավատացյալներ էին ձգում դեպի իրենց, քան թե շքեղ տաճարները: Հավանաբար, այդ ուխտատեղիները դեռևս հե-թանոսական ժամանակներից ժողովրդի հիշողության մեջ քրիստոնեու-թյան շրջանում արմատացած սրբավայրեր են:

«Ես շտապում էի տեսնել Գյուլխտանի բերդը, որի մեջ ամրացած, հայոց մելիքները մինչև վերջին ժամանակները սարսափեցնում էին ման-մեղականներին»: «... իմ սիրտը սկսեց բարսխել: Ես տեսնում էի այն բերդերից մեկը, որի մեջ իմ վեպի (Դավիթ-բեկ-Բ. Կ.) հերոսները գա-ծել էին: Այդ բերդի տեղը բնության հրաշալիքներից մեկն է: Մի անս-գին սեպագած ֆաբաժալո բարձրանում է խոր ձորի միջից, և այդ ֆա-րածալոի գլխին շինված է բերդը»:

Բերդի տարածքում են: Շինությունները հիմնականում փլված են: Կանգուն են եկեղեցու պատերն ու բերդապարսպի մի մասը: Հինավուրց բերդը 1600 թվականին վերակառուցվել է, հարմարեցվել ռազմական նոր տեխնիկային: Պարսպի պատի տակ, հենց անտառի մեջ կտրուկ թե-բույնամբ թաղակապ մի անցք է իջնում: Դա էլ հենց Զրազողի ճանա-պարհն է: Այն բավականին բարձր է, ու կարելի է թեթև կորանալով ցած իջնել, հասնել մինչև բերդը երեք կողմից օդակող Ինջան: «Զրազողի» ողջ երկայնքով ջահեր են շարված եզել, որոնք լուսավորել են շուր տե-ղափոխողների ճանապարհը: Մինչև այժմ մնացել են ջահերի հետքերը: Ավանդությունը պատմում է, որ երբ պաշարող թշնամին մատնությունը իմանում է բերդի գաղտնիքն ու փակում ջրի ճամփան, հայ զինվորները որոշում են մեռնել ծարավից, բայց չհանձնվել: Բերդի տարածքում իմ ուղեկիցը մի անցք ցույց տվեց: Ներսում վիմափոր թաղակապ խոր փոս էր: Դա ջրերի կուտակման վայրն էր: Բերդը յուրօրինակ համալիր-բա-ղաք էր հիշեցնում: Մի ծայրից մյուսը անցնելու համար նեղ միջանցք

կարս Ընդհանրապես, մեր արվեստի պատմագիրները հոգևոր կոթողների ուսումնասիրութեամբ տարված, աշխարհը են արել հայ ժողովրդի կառուցողական արվեստի այս կարևոր էջուղը:

Մուսվի փեշերից Ինչան փոթորկոտ հոսքով ցած էր սահում, բերդը թերակղզու վերածում ու նույն արագութեամբ էլ հեռանում: Գետն այսօր անցնում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սահմանագծով: Գյուլիստանի մելիքութունը, որը Խամսայի (խամսա՝ հինգ) կամ Ղարաբաղի հինգ մելիքութուններից ամենահյուսիսայինն էր, ԱՂԻՄ կազմելիս, բացառութեամբ Քալիշ գյուղի, դուրս է թողնվել մարզի սահմաններից:

«Մուսվ լեռը այստեղից ընդամենը մի երկու վերստ նանապահ է, բայց ես նրա գագաթը բարձրանալու բախտ չունեցա: Չնայելով իմ բոլոր թախանձանքին, ինձ առաջնորդող փահեան չկամեցավ ինձ հետ գալ, անգաղաք կրկնելով, թե մեզ կսպանեն...: Զորմանալի բան է, Աֆրիկայում նանապահորդը ավելի ապահով է իրան զգում, քան թե այստեղ»:

Զիրագործվեց Բաֆֆու այդ ցանկությունը՝ բարձրանալու 3720 մ լեռան կատարը, որտեղ, ըստ ավանդության, մնացել են ճգնավորների կրկնության կացարանները: Նրա գագաթից Բաֆֆին կտեսներ հայոց ամենայն սուրբ լեռը՝ Արարատը ու հավանաբար կզրեր, որ Մեծ Մասիսը իր հայացքի տառ է պահում նաև իր կրտսեր կղբայրներից մեկին՝ Մուսվին՝ կրկին հարազատ ընտանիքում ապրելու փափագով:

Բերդի տարածքից ողջ հասակով մեկ երևում է Մուսվը իր կնճոռտ մերկութեամբ: Ճերմակ ամպերը փարվել են Մուսվին: Սակայն սա արդեն խրախճանք է, սեր ու վայելք: Պագշտ ամպերը մեկ փարվում էին, մեկ վեր էլնում, շրջապատում ալեհեր գագաթը, մեկ թագ դառնում, ապա սահում ցած, հպվում, վերափոխվում ճերմակ թիկնոցի:

Խարխափուտ տանող ճանապարհի եզրին հուշաքարի արձանագրությունը պատմում է, որ 1890 թվականին, Գրիգոր Մելիք-Բեգլարյանը, ի հիշատակ իր հոր՝ Բեգլար Չրիղոնի Մելիք-Բեգլարյանի, կառուցել է այս ճանապարհը:

Գյուլիստանցիք տարբեր դեպքեր են պատմում խարխափուտացիների հետ ընդհարումների մասին: Գյուլիստանցիք ավելի հանդուգն են ու շփոթող: Հին ժամանակներից նրանց մոտ մնացել է կովիլու ոգին: Իսկ Խարխափուտցիք հեշտութեամբ զիջող են, ավելի մեղմ ու բարի: Այս լեռնային երկրում գյուղերի բնակիչները թե՛ բնավորութեամբ և թե՛ բարբառային հնչերանգներով տարբերվում են իրարից: Մի գյուղ տաղանդա-

վոր մարդիկ է ծնում, ուղարկում երկրի տարբեր ծայրերը, մեկը գինավորականներ է տալիս, մյուսը խաղաղ է ու հեզ, աշխարհի գործերին չի խառնվում:

ԺԱ. ԽԱՐԽԱՓՈՐԻ ԶՈՐԱՀՈՎՏՈՒՄ

Բաֆֆին գյուլիստանցի Հովսեփ Հովսափյանի ուղեկցութեամբ անտառով հասնում է Յուզակեր (Քոռուտ) գյուղը: Այդ ժամանակ գյուղում Շուշիից վերադարձած 15 ընտանիք էր բնակվում: Իսկ շատ հնում այն մարդաշատ էր: Այժմ այն կրկին ամառի է ու ավերված: Դրա գլխավոր պատճառներից մեկն էլ ավտոճանապարհ չունենալն էր: Քալիշ կամ Հոռեկ գնալու համար ստիպված այլ ուղի ընտրեցի, Խարխափուտի միջով Քալիշ տանող ճանապարհ կար: Մեքենան շարժվեց, ու բռնատարի վարորդն ասաց, որ իր մայրն ու քույրն էլ են Քալիշ գնալու, ու նրանք ճանապարհին սպասում են մեզ: Երբ հասանք նրանց, ես մեքենայի խցիկը նրանց զիջեցի ու թափք բարձրացա: Բարձր թափքից ես կարող էի զննել շրջապատը: Ծանապարհը անտառի միջով էր անցնում, ու հաճախ թաքնվում էր խցիկի հետևում, խուսափում ճանապարհի վրա կախված ճյուղերի հարվածից: Խարխափուտի ձորը իր մեջ պահպանում է «մի ռումանական նշանակություն երևելի Մելիքի (Մելիք-Բեգլար 2-րդ-Ք. Կ.) կյանքից, որովհետև այդ այգու մեջ էր պահում յուր Բալա անունով խասային»: Այս պատմությունը, որի մասին զրեկ են և՛ Բաֆֆին, և՛ Ե. Լալայանը, և՛ Լեոն, ավանդության ձևով մինչև օրս ապրում է ժողովրդի մեջ: Այս ձորի ամառանոցում պահվող սիրուհու մասին տեղյակ էին մելիքի կինն ու մայրը: Մելիքի կինը՝ Մարիամը, որը վարանդայի տեր Մելիք-Շահնազար 2-րդի դուստրն էր, նախ հանդիմանում է ամուսնուն, ապա ոչ մի արդյունքի չհասնելով, Լալա անունով ծառային գաղտնի ուղարկում է սպանելու մելիքի սիրուհուն: Մտան գեղեցկուհի Բալայի երկար մազերը փաթաթելով պարանոցին, խեղդամահ է անում նրան: Սպանության լուրը հասնում է Դաղստանի ասպատակիչ Ռամա խանի դեմ պատերազմի շտապող Մելիք-Բեգլարին: Մելիքի մայրը վաս բան կանխազգալով, աղաչում է որդուն չգնալ պատերազմի: Բայց մելիքը անդրովելի էր: Ընդհանուր թշնամու դեմ ողջ Ղարաբաղն էր կովում: Հայտարարելով, որ վերադարձին կպատժի ում որ հարկն է, մեկնում է Գյուրանի մոտ՝ Քոն ափին թիկունքից դավաճանի գնդակով սպանվում է քաջ իշխանը: Ավանդությունն ասում է, որ մելիքի կինը, որն իր հոր նման երբեք կանգ չէր առնում որևէ վճռի ընտրության հարցում (հայրը

սպաննեց իր հարազատ եղբորը՝ օրինական իշխանին, ու տիրացավ նրա իշխանութեանը), այս ձևով լուծեց իր առջև ծառայած խնդիրը:

Դանդաղորեն սահելով խիտ անտառի ծառերի արանքով, մտածում էր անցյալի այս հին դեպքերի մասին ու իմ դեմ տեսնում էր տարբեր գրվազներ մելիքների կյանքից: Ահա մելիքը որսի է շտապում: Հսկա կաղնու մոտ վիրավոր արջը մելիքի վրա է հարձակվում: Մելիքը համարձակորեն արջին ընդառայ է շարժվում, գաշտյնի շեշտակի հարվածով սուսպլում նրան:

Հանկարծ բռնատարր կանգ առավ: Վարորդի մայրն ու բույրը թափք բարձրացան, հայտարարելով, թե վատ են իրենց զգում խցիկում, ու պահանջեցին, որ ես գնամ այնտեղ: Նրանք անհարմար էին զգում, որ մեքենան իմ տնօրինությանն է հանձնված, իսկ ես թափքում եմ երթեվեկում:

— Ես ինձ այստեղ լավ եմ զգում,— ասացի ես:

Վարորդի մայրը՝ Տլորա Կոսյանը, իմանալով, որ ես Բաֆֆիով եմ հետաքրքրվում, ասաց.

— Բաֆֆուն գյուղում երեց Սերոբ Մովսիսյանն է հյուրընկալել ու հետո Հաթիրք ճանապարհել:

— Նրանք Գյուլիստանից Հաթիրք լին գնացել,— առարկեցի ես,— Յուզակեր, ապա Քալիշ են գնացել: Մինչև Յուզակեր Հովասափն է ճանապարհել, իսկ այնտեղից մի թուրք է վարձել ու հասել Հոռեկ:

— Բայց Սերոբն ինձ պատմել էր, որ նույնիսկ գիշերել են Գյուղթափա վայրում՝ Պատվական անունով հովվի վրանում:

— Քանի՞ տարեկան է Սերոբը,— հարցրի ես:

— 1980 թվականին վախճանվեց 96 տարեկան հասակում:

— Ինքն է պատմե՞լ, որ ուղեկցել է Բաֆֆուն:

— Այո:

— Բաֆֆին այս կողմերում եղել է ձեր այդ տեղ Սերոբի ծնվելուց 3 տարի առաջ:

— Վա՛յ, իսկ կարող է նա երկու անգամ է եղել Ղարաբաղում: Իրոք, երկրորդ անգամ այցելելիս է հանդիպել Սերոբին,— ասաց Տլորան՝ փորձելով փրկել Սերոբի պատիվն ու իր պատմությունը:

— Ո՛ւշ,— կտրեցի ես,— Սերոբի ծնունդից 4 տարի հետո Բաֆֆին մահացել է:

— Գուցե Բաֆֆին չէր, մեկ այլ գրող...— մտազբազ ասաց նա: Ճանապարհի աջ կողմում, անտառի մեջ, մի գեղեցիկ լճակ մեկնե փայլվեց:

— Բլբուլթա ծովն է,— ասաց Տլորան:

— Բլբուլթա ի՞նչ է նշանակում,— հարցրի ես:

-- Սոխակ, Սոխակի ծով:

Այն 1179 թվականի երկրաշարժից էր գոյացել, լեռը փլվել է, փակել սղբյուրների ճանապարհը:

Քիչ հետո անտառը սկսեց նոսրանալ, վերափոխվել ցաքի թփուտների: Չարս կողմում մի հսկա սոսի էր սապալվել: Մոտի հաստ բունը այրվել էր:

Ի՞նչ ծառ է սա,— հարցրի ես, որովհետև թվաց, թե այդ ծառի ծառիս գիտեմ, կարգացել եմ ինչ-որ տեղ:

Ղանլու չինարն է,— ասաց վարորդի մայրը: Կանգ առանք: Մոտի բնից ոչ հեռու մի սղբյուր էր սկիզբ առնում: Տապալված հզոր ճյուղերը փակել են նրա ճանապարհը ու լճակ գոյացրել:

Բաֆֆու ուղևորության ժամանակ կանգուն էր ծառը,— ասացի ես՝ չիչելով գրողի նկարագրությունը:

1979 թվականին կայծակը հարվածել է ու այրել ծառը,— ասաց Տլորան:

Մոտի տապալված ճյուղերը մասնակից են մելիքական մի կարևոր իրադարձության, որի պատմությունը այսօր կարելի է լսել շատ շատերից:

Կաղ Աբովից հետո Գյուլիստանի մելիքությունը իր ձեռքն է վերցնում 14-ամյա Հովսեփի խնամակալ, Աբովի եղբայր Քամրազը, որը չէր յաապում իշխանությունը առնականացող օրինական ժառանգին դիչել: Մի անգամ, արդեն 16-ամյա Հովսեփը Մրաթերի մելիքական ապարտերում ակնատես է լինում, թե ինչպես հորեղբայրը պարսից շահին նվիրելու համար հարկահանին է տալիս Կաղ Աբովի թանկարժեք հուշակավոր հրացանը: Քամրազը նվիրատվություններով նպատակ ունի պարսից շահից մելիքության իրավունք ստանալ և պատանի Հովսեփին գրկել մտանադական իրավունքից: Հովսեփը շտապում է Գյուլիստան, որտեղ գտնվում էր սգավոր մայրը՝ Մարիամ կնքված Ղամար-Սուլթանը: «Ներս հոր անարժան որդի...» — խիստ հանգիմանում է մայրը: Հովսեփը իր համախոհների ու հոր հավատարիմ ղինվորների հետ արշավում է պարսիկ հարկահանների հետևից, Մատաղիսի մոտ, հենց Քարթլակի կիրճում հանկարծակի հարձակումով կոտորում նրանց, հետ խլում թե՛ հրացանը և թե՛ մնացած հարստությունը: Հետո Հովսեփը Զրաբերդի մեկիբ Հաթամի օգնությամբ կալանավորում է Քամրազ բեգին, կախազան բարձրացնում այս հսկա սոսուց, որի անունը Ղանլու (արյունոտ) են կերում:

Մոտի բնից ոչ հեռու սոսու շիվեր են աճել:

— Բնությունը պահպանում է պատմութեան հետքերը,— ասաց վարորդը: Հատկիւմ մերկ բլրաշարը, մոտենում ենք Քալիշին: Մի տեղ երեսնաները ուլեր ու գաններ էին արածեցնում: Կարճ պոչով մի փոքրիկ շուն անվերջ հալածում էր սև ուլին: Վերջինս փորձում էր ազատվել այդ կարճիկ ու վտանգավոր թվացող շան հալածանքից: Վերջապես, երկու թփերի արանքը մտավ, կտրուկ շրջվեց, գլուխը իջեցրեց, կարճ, սուր պոզերը սպառնալից շարժեց: Շունը վախեցած հետ թռավ ու սկսեց հաշալ: Ուլը գլուխը թեքած զարմացած նայում էր. այս թզուկի՞ց էր ինքը վախենում:

ԺԲ. ՀՈՒՆԷ

Քալիշի գյուղխորհրդի նախագահ Մովսես Սարգսյանը, որը շատ կատակասեր, 45-ին մոտ մարդ էր, ինձ տեղավորեց կոլտնտեսության հյուրատանը, ապա շագանակագույն կազմով մի մեքենազիր գիրք բերեց գրադարանից: Դա Քալիշեցի Նիկոլայ Զալալ Օհանյանի կազմած՝ գյուղի պատմությունն էր: Վերջին տարիներին Ղարաբաղի գյուղերում շատերն են իրենց գյուղի անցյալի մասին նյութեր հավաքելով նման գրքեր կազմում: Ն. Օհանյանը Քալիշի պատմությունը սկսում է Բաֆֆու Կարաչինարում ու Գյուլիստանում շրջագայելու մասին տեղեկությունից, ապա հայտնում է, որ մեծ գրողը Քալիշում մնացել է 3 օր: Նա գրում է, որ գյուղը հիմնվել է 1808 թվականին, երբ Վրաստանի Բոլնիս-նաշեն գավառից վերադարձավ Քալիշ բեգը, որը Վրաստան գաղթած մելիք Ֆրեսկուն Մելիք-Բեգլարյանի շորորդ որդին էր:

Քալիշի խոսակցականը նույն դարաբաղյան բարբառն է, բայց նախադասության վերջին բառերի վերջին վանկերը արտասանելիս մի տեսակ ձգում, ծոր են տալիս: Օրինակ՝ թոռներս քյունո՞ւմ, հինչ ես ասո՞ւմ... Ղարաբաղում շատ են տարածված Քալիշեցիների սրախոսությունները:

Ահա գրանցից երկուսը. Քալիշեցի Շամիրը (Աշամը) Մոսկվա է գնում գինվորական որդուն պսակելու: Հարսնացուի տան վերելակի առաջ հանում է կոշիկները, խնամքով և զգուշությամբ դնում մի անկյունում:

— Կոշիկներդ ինչո՞ւ ես հանում,— հարցնում է ուղեկիցը:

— Խի, սա խնամոնց կարիդորը չի՞,— զարմացած հարցնում է Շամիրը:

Իսկ ահա մեկ ուրիշը. Մի անգամ Քալիշեցի Համբարձին խիստ անհանգիստ էր ձմռան կեսին անտառ՝ փայտի գնացած տղաների համար:

Նրանք ուշանում էին: Հարեանը փորձեց հանգստացնել, բայց ոչինչ չըստացվեց: Քիչ հոնի օղի տվեցին, խմեց, տաքացավ ու հանգստացավ:

— Փառք ասածո,— ասաց նա,— եղանակը կակղեց, հիմա երեսնաները չեն մրսի:

Վաղ առավոտյան մեկնեցի Հոռեկավանք:

«Իմ սիրտը թնդաց ուրախությունից, ես պիտի տեսնեի Գյուլիստանի եի՛ն մելիքների պալատները... Երբ բոլորովին մատեցանք, երևաց սպիտակ պալատը»:

Բաֆֆու նկարագրած պալատական համալիրից քիչ բան էր մնացել:

Նայում եմ կիսավեր, անտառի հսկա ծառերի մեջ կորած հինավուրդ սպարանքի մնացորդներին ու փորձում հասկանալ դրանց հին բնակիչներին, ըմբռնել նրանց նիստ ու կացը, սովորությունները: Ահա մեծ պասի առաջին օրն է: Երիտասարդ հեծյալների մի խումբ գուռնա-դհուլի ուղեկցությամբ Քարիշ գյուղից գալիս է դեպի ապարանքը: Տոնական հագնված մելիքը, որ սպասում էր նրանց, ճարպիկ թոխթով հեծնում է իր ձին, նրանց ընդառաջ դուրս գալիս: Մելիքի ձախ կողմից կեռ թուր էր կախած, առջևից՝ գաշույն, ձախ կողմում վառողամանն է, աջ կողմում՝ փամփշտակալը:

— Շատ պարով, խոխենք, հունցը՞ք,— հեծյալներին է դիմում մելիքը (մեծ թե փոքր, բոլորին նա «խոխենք» էր անվանում):

— Մելիքն ապրած կենա,— պատասխանեց հեծյալներից ավազը,— լավընք:

Միասին շարժվում են դեպի կալատեղ-հրապարակը, որը արդեն ասպարեզի էր վերածվել: Շուրջը հավաքված գյուղացիք սպասում են հեծյալների հայտնվելուն: Մի տեղ երեսնաները դաստակով թոփ են խաղում: Փայտով հարվածում են նախշազարդ բրդե գնդակին: Հակառակորդ կողմը օդում որսում է այն ու հարվածում դեպի իրենց «սահմանը» փախչող տղաներին: Մի այլ տեղ տղաները փոս էին խաղում: Գնդակը փոսորակների կողքով գլորելիս երկու հոգի սկսեցին վիճել: Քիչ անց նրանք իրար անցան: Մեծահասակ տղաները նկատելով մելիքի շքախումբը, փորձեցին բաժանել կովարարներին: Մելիքը ժպտաց, ձեռքով նշան արեց, որ չխանգարեն: Նման մեծամարտերում են կոփվում մելիքի ապագա քաջ զինվորները: Ավելի շատ երեսնաները չիլինգ էին խաղում: Սակայն կալատեղում ամենաուշագրավը ջջլախտին էր: Գյուղացիները, մեծ թե փոքր, կլանված հետևում էին խաղի ընթացքին: Տղաները, նկատելով մելիքին, ավելի աշխուժացան: «Ալլաշ» ասելով շրջագծի տղաները ներս քաշեցին հակառակորդին: Սակայն մի տղա ճարպիկ թոխթով հա-

կառակ կողմից շրջանի մեջ խուժեց ու թիկունքից թոցրեց գոտին: Գոտիով հարվածները անխնա էին:

Մեծ կալատեղում, որտեղ պետք է ձիարշավ անցկացվեր, հեծյալ երիտասարդները մինչ մեկիցի դալը մականախաղով էին տարված: Նրանք տեսնելով մտանցող մեկիցին, ավելի ոգևորվեցին: Խաղաղուններից մեկը արագ ընթացքի ժամանակ թողեց ձիու սանձը, թռավ, կանգնեց թամբի վրա, ձեռքերը տարածելով օդում, սկսեց պարել, ապա կրկին նստեց թամբին, սրարշավ ընթացքի ժամանակ ճարպիկ շարժումով գետնից վերցրեց իր մականը, արշավեց դեպի գնդակը: Տղաները դադարեցրին խաղն ու մեկիցին ընդառաջ քնացին: Այդ ընթացքում էլ կալատեղի երկու կողմերում մեծ բազմություն հավաքվեց: Հեծյալները շարվեցին մի գծով ու մեկիցի նշանով առաջ սլացան: Նրանք պետք է հասնեն նշված սահմանն ու հետ դառնան: Քիչ հանդստանալուց հետո չիզիթները տարբեր խաղեր են անում, մրցում բարդ վարժություններում: Այստեղ է, որ մեկիցի իր համար ապագա զինվորներ է ընտրում: Այդ պահին էլ փոքրիկ կալում հնչում է զուռնա-դճոլի ձայնը: Մարդիկ շտապում են դեպի լարախաղացը: Վերջում մեկիցի խումբը պտտվում է գլուխում: Թալիշի նշանավոր տներից ուտեղիքով, գինով ծանրաբեռնված խոնջաներ են մատուցում հեծյալներին: Վերջում նրանք իշխանին Մրաթերի պալատն են ուղեկցում: Մեկիցն իր հերթին հյուրասիրում է տղաներին: Սրանք թասերը բարձր պահած գոլում են՝ «մեկիցի մին օրը՝ հազար», խմում են գինին ու ցրվում իրենց տները: Հեծյալները նոր էին հեռացել, երբ գլուխից մի քանի հոգի մի ուշաք, հաց, մի տիկ գինի բերեցին մեկիցին ու խնդրեցին, որ մասնակցի իրենց հարսնահանդեսին:

Մրաթեր: Շրջում եմ կիսավեր ապարանքում ու փորձում գտնել այդ տեղանվան ստուգաբանությունը: Բազմաթիվ տարրերակներից ընտրում եմ ամարաթներ (պալատներ) — Մրաթեր ձևափոխությունը: Սենյակներից երկուսը 8×8 մ չափեր ունեն հատակազծում. պատերի մեջ խորշեր են արված: Անկյուններում կարմիր աղյուսի շեղակի շարվածքը յուրօրինակ մուլթեր են ստեղծել, որոնց վրա էլ հենված էր գմբեթաձև հսկա թաղը իր երդիկով: Ընդամենը հաշվեցի 8 սենյակներ: Մի հաստ պատի մեջ, 4 մ երկարությամբ ընդարձակ ճեղք կար: Ըստ ավանդության, հենց սա է այն դադունարանը, որտեղ Կաղ Աբովը թաքցրել է իր փախցրած Դամար-Մարիամ գեղեցկուհուն: Ինչ խոսք, որ Բաֆֆու ժամանակ ապարանքը ավելի լավ վիճակում էր: Այն սյունազարդ ընդարձակ պատշգամբ էր ունեցել, որի հետքն անգամ չի մնացել:

«Առհասարակ հնության այդ գեղեցիկ հիշատակարանները, որ կառուցված են բառով և կրով միայն, ոչ այնքան տարավում են ժամանակից,

որքան ժողովրդի բարբառու ձեռքերից: Թալիշեցի հայերը դրանց մաս ունեն կիր այրելու փորձեր. փանդում են պալատների փայտեր և փորձերի մեջ այրելով, կիր են պատրաստում»:

Հնարավոր է, որ Գյուլիստանի հզոր մեխիքները նման ապարանքներ կառուցելու հնարավորություն ունենային, բայց թվում է, որ սրա շինարարության ժամանակը շատ ավելի հին է: Ապարանքը շրջապատված է եղել անկյուններում կտր աշտարակներ ունեցող բարձր պարիսպներով, որոնց մի մասը պահպանվել է:

Ապարանքից ոչ հեռու հռչակավոր Հոսեկա վանքն է: Վաղ միջնադարի նշանավոր հուշարձաններից մեկը: Ըստ Կաղանկատվացու, այստեղ Ռուսեկան կոչվող գյուղ է եղել, որի անունով էլ կոչվել է վանքը: Տաճարը կառուցվել է 1279 թվականին, գավթի՝ 5 տարի ուշ: Մուտքի մաս թռչունների ու կենդանիների մորթիներ, փետուրներ ու այլ մասեր էին թափթփված, որոնք տհաճ հոտ էին արձակում: Մասի ճյուղերը զարդարված են լաթի կտորներով: Հազարամյակներ են անցել, իսկ հեթանոսական սովորությունները կենդանի են մնացել: Գավթի մուտքի կամարաձև ճակատքարի արձանագրությունը հայտնում է կառուցման ժամանակաշրջանի մասին. «ՅԵՄԵԱՐԶԱԿԱՆ ՏԵՐՈՒԹԵ ԱՊԱՂԱ ԽԱՆՆԻ ԵՒ Ի ԶԱՅՐԱՊԵՏՈՒԹԵ ՏՐ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ԵՒ ՊԱՐՈՆՈՒԹԵ ՆՈՐԱԳԻՆԻՆ ԵՒ ՍՐԱԶԱԳԻՆԻՆ ԵՒ ԳՈՒՐԶԱԳԻՆԻՆ, ԵՍ ՏՐՅՈՂԱՆՆԵՍ ՇԻՆՆՑԻ ԶԳԱՎԻԹՍ ՅԻՇԱՏԱԿ ԻՆՁ ԵՒ ԵՂԱՐՍԵ ԵՒ ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ: ԶԼԳ»: Հավանաբար, խանի և պարոնների անունները նշվել են հենց մոնղոլ տիրապետողների դրոմամբ, որոնք քրիստոնեություն էին ընդունել: Գավթի հատակը ամբողջությամբ հսկա տապանաքարերով էր ծածկված: Խաչվող կամարները պահում են թեթև ուտոնդան:

Ինձ հետաքրքրում էին Գյուլիստանի հռչակավոր մեխիքների տապանաքարերը: Դրանք հիմնականում շրջել ձորն են գլորել 1936—1937 թվականներին: Իսկ սրբատաշ քարերը հանել են ապարանքի պատերից, տեղափոխել գյուղ ու պահեստներ կառուցել:

Թալիշից վեր, մի սարալանջի վրա գտնվում է Գյուլթական գյուղը, որի մասին հիշատակում է «Հայոց արևելյան կողմանց» պատմահայր Մովսես Կաղանկատվացին: Այստեղ էր դնվում արքայական ամառանոցն ու կաթողիկոսարանը: Մեսրոպ Մաշտոցն այստեղ դպրոց է հիմնել, ուր հայոց գիր, քրիստոնեություն էին ուսուցանում քրմերի որդիներին: Հնագույն կառույցներ ծառերի, թփերի ու հողաշերտի տակ են մնացել:

Գյուղ իշանը: Յուրջ տվեցին այն մատուռը, որտեղ Բաֆֆուն թույլ չեն տվել զննելու գրչագիր ավետարանը: Ներսում ասեղնագործ կտորներ, լուսանկարներ, սրբանկարներ էին շարված: Ինձ ուղեկցողն ասաց:

— Բեգյունց նուշին պատմում էր՝ «Ափոն (Բաֆֆին—Բ. Կ.) եկավ, բայց լիողեցինք, որ ավետարանը դուրս բերի մատուռից: Բա ի՞նչ անենք, մեր հացը, ապրուստը այդ գրքով էր ստեղծվում»: 1060 թվականի այդ գրչագիրը 1957 թվականին հանձնվել է Երևանի մատենադարանին:

Այդ թանկարժեք ձեռագիրը ևս ծանր ճակատագիր էր ապրել, գերվել էր, հետո ազատվել գերությունից, վերջապես, գտել իր իսկական տեղը:

Մենք գնում ենք իսանագյաճ (խանի գաճ կամ նստավայր) կոչվող տեղամասը: Գյուղխորհրդի նախագահը պատմում էր Սարգիս Մելիք-Բեկլարյանի (Սարգիս բեգը պետական դումայի անդամ էր) կողմից 5 կմ երկարության ջրանցքի կառուցման մանրամասները: Այն պետք է 200 մ թունելով ձեղքեր լիոր և ինչա գետի ջրերը հասցնեք Քալիչ ու իսանագյաճի դաշտը: Գյուղացիներին համոզելով, որ ջուրը առաջինը գյուղը կստանա, Սարգիս բեգը համոզեց նրանց ձեռնարկելու այն ժամանակվա տեխնիկական միջոցների բացակայության պայմաններում շատ ծանր կառուցքի շինարարությունը: 1885 թվականին ջուրը հասցվեց իսանագյաճ: Հետո բեգը հայտարարեց, թե գերմանացի ինժեներների կազմած նախագիծը սխալներ է ունեցել, և անհնար է այն ուղղել: Բայց ավելի հավանական է թվում, որ կալվածատերը ջուրը Քալիչ հասցնելու ոչ մի նպատակ էլ չէր ունեցել, պարզապես խոստումներով կարողացել էր թալիշեցիներին աշխատեցնել կառուցում: Այսօր դաշտերը այդ ջրանցքի ջրերով են ոռոգվում:

Հասանք Չափարխան վայրը, որը բարձր հարթակ էր և իշխում էր իսանագյաճի վրա: Այստեղ էր գտնվում բեգի տոհմաբուծական ֆերման, ցորենի պահեստներն ու կալատեղերը: Հարթակի մի կողմում ապարանքի մնացորդներն են: Հենց այստեղ էլ երեք օր մնացել էր Բաֆֆին: Ներքևում երևում է «բագին բաղը»: Ապարանքի մի մասը վեր է ածվել կոլտնտեսության ֆերմայի:

Հին հուշարձանների, պաշտամունքային ու քաղաքացիական ճարտարապետական նմուշների պահպանության հարցերում եթե քաղաքներում որոշ ձեռքբերումներ կան, ապա նախնիների ստեղծած ճարտարապետության պահպանությունն այստեղ դեռ չի էլ սաղմնավորվել: Շրջակենտրոններում հնությունների պահպանությունը սովորաբար դործից անտեղյակ մարդկանց է հանձնարարվում համապատասխան մասնագետ չլինելու կամ էլ ընդհանուր կուլտուրայի ցածր մակարդակի պատճառով: Իսկ ահա մայրաքաղաքում տասնյակ ճարտարապետներ կամ հնություն ուսումնասիրող մասնագետներ ամենևին էլ ծանրաբեռնված

չեն: Շրջաններ նշանակվելով, նրանք ոչ միայն ուսումնասիրման հարուստ նյութ կգտնեն, այլև կկազմակերպեն դրանց պահպանությունը:

Գյուղի եկեղեցին, որը պահեստի է վերածվել, կառուցվել է դարասկզբին: Պատմում են, որ թաղը հատուկ տախտակամածի վրա շարեկապելուց հետո գյուղացիների մտահոգությունը այդ տախտակամածը հեռացնելն էր: Սակայն բոլոր կողմերից տնադելով, թալիշեցիք համոզվում են, որ անհնար է այն հեռացնել: Մեկն առաջարկում է բազիլիկ կառուցքի թաղը պահող սյուները կտրել հանել, որի դեպքում միայն փայտամածը դուրս կգա: Մեկ ուրիշը առաջարկում է այրել տախտակամածը:

— Զէ՛, ժողովուրդ,— ասում է մեկը,— եկեք ճարտարապետին պատժենք, եկեղեցին քանդենք ու նորը կառուցենք:

Կառուցող ճարտարապետը, որը ուշագիր լսում էր գյուղացիներին, խնդրում է դուրս գալ տաճարից: Հենց մուտքի մոտ մուրճի թեթև հարվածով տեղից հանում, հեռադնում է սեպն ու ամբողջ տախտակամածը, ի դարձանս թալիշեցիների, գետին է փլվում:

Բաֆֆու ուղևորության հաջորդ կետը Մատաղիս գյուղն էր:

ԺԳ. ՄԱՏԱՂԻՍՈՒՄ

«Վերջապես, ճանապարհորդի առջև բացվում է մի լայնածավալ, հարթ տարածություն, որի միջև հեռվից անցնում է Կուր գետը, սեղմված իր կանաչագաղ ափերի մեջ, և կատաղի բարձրար, որ անձուկ ձուրերի միջից դուրս գալուց հետո, հենց որ անցնում է լայնաբերան դաշտերի վրա, նյուղավորվում է, բազմաթիվ գետակներ է կազմում»:

Ինձ շատ էր մտահոգում մի անհայտ մնացած հարցը: Բաֆֆին, արդյոք, չի՞ այցելել 1828 թվականին Սալմաստից այստեղ դաղթած Չայու գյուղի մարդկանց: Հենց Մատաղիս չհասած, Քարթառի գետահովտում երևում է խաղողի ու մրգատու այգիներով հռչակված գյուղը: Չորի այն կողմում դաշտային Ղարաբաղի մյուս գյուղերն են՝ Լեռնարխը, Մարալյանը, Հասանդյան, Մարգուշեանն ու Մարաղան (այժմ՝ Լենինավան): Դեպի Մատաղիս շարժվելիս մեր առաջ հայտնվեց նույն Մոավ սարը, որը տեսել էի Գյուլիստանի բերդից: Լեռը սուր գագաթը վեր եցած Քաչալ սարի վրայից կարծես հսկում էր հարթավայրում տեղի ունեցող իրադարձությունները: Նրա փեշերից ջուր խմելով, հզորացած Քարթառը դեպի դաշտ էր շտապում: Գետը վերջին տարիներին մեծ փոփոխություններ էր կրել: Մարսանգում ու Մատաղիսում ամբարվելով, հատուկ ջրանցքով հոսում է դեպի Ղարաբաղի ու Միլի տափաստանները, կենդա-

նացնում 150 հազար հեկտար պապակ հողեր: Պատվարից ներքև դեռևս կանգուն է Պատավի կամուրջը: Միակամար կառույցը ցեմենտ-բետոնի օգնությամբ վերականգնել են շրամբարի շինարարները: Այն չի համապատասխանում հուշարձանի ոգուն. հնության վերականգնման սխալ մտտեցում է: Մակար Բարխուդարյանցը իր «Արցախ» գրքում գրում է, որ «Պատավի կամրջի» շինողը եղած է հայ բարեպաշտուհի ոմն տիկին: Սակայն այդ տիկնոջ անունը չի պահպանվել: Կամուրջը առևտրական հին ուղու վրա էր: Մատաղիս գյուղի մի մասը մնալով ջրամբարի տակ, տեղափոխվել է ներքևի հովիտ, որտեղ էլ նոր գյուղ է հիմնվել: Գյուղի վերին կեսը շրջապատի լեռների հետ արտացոլվում է լճի վճիտ ջրերի մեջ: Տոնաշենցի Արամայիս Սարգսյանի հետ սկսեցինք մեծահասակ մարդկանց որոնել, որոնց միջոցով կարող էի մանրամասներ իմանալ Բաֆֆու այցելության մասին: 92-ամյա Հարությունը 20-ական թվականների դեպքեր էր պատմում: Պարզվեց, որ նա 1920 թվականին գաղթել է Ղարսից, ու Ղարաբաղի հին դեպքերի մասին ոչինչ չգիտե: Որոշեցինք Հին Ենն թաղամասում փնտրել: Արամայիսը փայտե ճաղերով մի դարպասի մոտ կանգ առավ ու շան կատաղի հաշոցների արանքում հարմար պահ որսալով՝ կանչեց.

— Բա՛գրատ, հե՛ Բագրատ, հե՛ Բագրատ...

— Ա, հու՛վա՛,— ուշացումով լավեց բակի խորքում գտնվող տան պատշամբից:— Վա՛, Արամայի՛ս, տոն եկաք լի:

— Զէ, Բագրատ, մին մոտի եք, պան օնենք հարցնելի:

— Բաֆֆուն հյուրընկալած տունն եմ փնտրում,— ասացի ես:

— Է՛ս ա լի,— ցույց տվեց իրենց տան շարունակությունը կազմող տունը:

— Նույն տո՛ւնն է,— հարցրի ես:

— Զէ, 1905-ին վերականգնվել է այն: Գյուղի տանուտեր Պուղի Մովսիսյանի տունն է: Այստեղ գալու հաշորդ օրը Բաֆֆին նրա եղբոր՝ Սարգսի հետ Նղշերոաքել է գնացել:

Քիչ հեռվում, լճափին բարձր շինարին հսկա ստվեր էր ձգել, որի տակ գյուղի ծերերը նստած զրուցում էին:

— Քանի՞ տարվա շինարի է սա,— հարցրի ես, մտածելով նոր կապ գտնել Բաֆֆու ժամանակաշրջանի հետ:

— 120 տարի առաջ Մինաս ամին է տնկել ծառը,— ասաց Բագրատը: Նրա խորհրդով ես գնացի գյուղի գրադարանը, որտեղ Մատաղիսի մասին պատմական նյութերով զբոք կար կազմած: Գրքի հեղինակը երկրաբանական գիտությունների դոկտոր, մատաղսեցի Ահարոն Մովսիսյանցն էր: Ծանոթանալով գրքին, այն համեմատում էի «Թալիշ» աշխատանքի հետ: Սա ավելի խնամքով կազմված զիրք էր:

ԺԴ. ՎԱՉԱԳԱՆ ԲԱՐԵՊԱՇՏԻ ԾԻՐԻՍԸ

Մատաղիսի տանուտեր Պուղի Մովսիսյանի կրտսեր եղբոր՝ Սարգսի հետ օգոստոսի 15-ին Բաֆֆին ուղևորվում է դեպի Նղշեն առաքյալի վանքը:

«Մատաղիս գյուղից մինչև Նղշեն առաքելա վանքը ընդամենը 4—5 վերստ հազիվ կլինի, բայց ես այդ հինգ վերստը անցա 5 ժամվա մեջ, այն էլ ռոֆավ, որովհետև ձիով անհնարին է գնալ: Թեև մեզ հետ ձիաներ էին վեր առած, բայց նրանց ֆառ էին տալիս մեր հետևից...: Մի մարդկային շուն անգամ չէր երևում լեռների ամայության մեջ»:

Հինավուրց վանքում Բաֆֆուն հետաքրքրում էր Վաչագան Բարեպաշտ թագավորի, Ղարաբաղի ամենաբաշ ու զորեղ մելիքներից մեկի՝ Զրաբերդի տեր Ադամի շիրմաները ու այն կացարանը, որտեղ երկար ժամանակ բնակվել էր հայ ազգային-ազատագրական պայքարի նշանավոր հերոսներից մեկը՝ վանքի միաբան, մեծշենացի հսկա Ավագ վարդապետը:

Մատաղիսի ջրամբարը կորուսյալ մտնում է Թարթառ-Տրտուակա-նի կիրճը, ձգվում մինչև Տոնաշենի կամուրջը: Կամրջի մոտ լավեց գետի խոլ մոնչուներ: Զրաբերդի աշունը իր ողջ հմայքով փովել է ձորում: Հոսանքն ի վեր այն սահում է դեպի Երիցմանկանց վանքը, երբեմն էլ մտնելով անտառ, լցնում այն ոսկով: Զրվշտիկ (Նղշեն առաքյալի) վանք ուղևորվեցի տոնաշենցի Արամայիսի ու Վիկտորի հետ: Ինձ զարմանք էր պատճառում կուսական անտառում իմ ուղեկիցների ճիշտ կողմնորոշման ընդունակությունը:

— Մենք էլ քաղաքում ենք սխալվում,— ասաց Արամայիսը,— մանավանդ նոր թաղամասերում, ուր տները ինկուբատորի նման շեն տարբերվում իրարից:

— Բայց այստեղ էլ ծառերն են իրար նման,— ասացի ես:

— Ոչ մի ծառ մեր անտառում նման չէ մյուսին,— պատասխանեց Արամայիսը:

— Եվ ճանաչո՞ւմ եք բոլոր ծառերը:

— Գուցե և ճանաչենք, օրինակ ա՛յ էն ծառի տակ 1956 թվականին որսկան Օսեփը մի արջ է սպանել: Իսկ այն կաղնու տակ հաց ենք կերել երկու տարի առաջ: Իսկ այս հացենու տակ երկու տարի առաջ Վիկտորը փոշաացել է:

— Տեսա՞նք ոնց էլ հիշում է,— թթի տակ փնթփնթաց Վիկտորը:

— Իսկ ինչո՞ւ էիք եկել,— հետաքրքրվեցի ես:

— Երևանում մի Մովսիսյան ունենք, ունեցնուց պրոֆեսոր է,

Միջայիլ Աստամովիչ են ասում քաղաքում, կճանաչես, անտառ շատ է սիրում: Միասին այս կողմերն էինք եկել:

Քիչ հետո Վիկտորը թեքության վրա մի մեծ անցք ցույց տվեց ու ասաց.

— Արջի որջ է: Մի բանի տարի առաջ որսորդները հետապնդում են արջին, արջը այս որջն է մտնում: Մեր գյուղացի Արշակը հետևից մըտնում է ու մթության մեջ քոռեքոռ կրակում:

— Սպանում է արջին:

— Չէ մի, պողեր, — ասաց Արամայիսը, — արջը մի հարվածով երկու կողն ու ուսը ջարդել էր: Հսկա, ուժեղ մարդ էր, ասում էր՝ արջին կխեղդեմ մերկ ձեռքերով, բայց հազիվ փրկեցին կատաղած կենդանու ձեռքից:

Վիկտորը մատը դրեց շուրթերին: Կոեցինք: Շունը պահել էի ու համակ ուշադրություն դարձած փորձում էի անտառային խոր լուսվյան մեջ նրա խորհրդավոր ձայներն ունկնդրել: Եվ ահա լսեցի մոտեցող զոփյունի ձայնը: Հուզմունքից սիրտս արագ էր բարախում: Արամայիսի նշանով դուրս եկանք արահետից: Դոփյունները արագորեն լցվում-տարածվում էին անտառով մեկ: Եվ ահա երեք եղնիկներ նազելի թռիչքներով, երևի խրտնած ինչ-որ բանից, նույնիսկ ուշադրություն չդարձնելով մեզ վրա, արագ անհետացան անտառի խորքում:

— Որսագողեր չկա՞ն անտառում, — հարցրի ես:

— Ո՞նց չէ, — ասաց Արամայիսը, — Չայլու գյուղից մեկը կա, գիշերներն է գալիս, լուսարձակի լույսը դեմ տալիս խեղճ կենդանու ալքերին ու կրակում:

— Եղնիկի, արջի միսը կիւղորամը 10—15 ուրլի է վաճառում, — ասաց Վիկտորը:

Նեղ արահետը հաճախ անցնում էր խոր անդունդների եզրերով: Բավական էր փոքր սայթաքես...

«Ճանապարհի չկա, նեղ շալիղը, որ ոլորվում էր խիտ անտառի միջով, սառսպիլի էլնեջներ ուներ»:

Ես մի պահ հետ ընկա ու կանգ առա բացատում: Այստեղից երևում էր ջրամբարից դուրս եկող ջրանցքների զիգզագը, որը ասես հավիում էր հարթությունում: Անտառի տերևները փայլում էին: Դեղին ծաղիկները անհանգիստ ճոճվում էին: Բացատի կենտրոնում հսկա շոր ծառը մերկ ճյուղերը դեպի վեր ձգած երկնքից անձրև էր խնդրում: Հսկա սարերը կողք կողքի փռվել, խոր քուն են մտել: Փաշալ սարը, ամբողջովին ծածկված փարթամ կանաչով, փառահեղորեն բազմել է ծեր ու կնճոռտ Մոսվի ծնկներին: Ինչ-որ անհերկույթ բան սոսափյունելով անցավ ծաղիկների

վրայով ու մտավ անտառ: Ճոռոց լսվեց, ապա տնքոց-փնչոց: Անտառը սարսափելի է նրա լեզուն շիմացողի համար: Շտապեցի հասնել ընկերներին:

«Մազե» կոչվող ճոճվող, նեղ կամրջակով անցանք Քարթառի Եղջերտաքել վտակն ու տեղանքին անժանոթ մարդու համար աննկատելի արահետով կտրուկ թեքությամբ սկսեցինք վերընթացը:

— Երկու եղբայր են լինում՝ Եղիշե և Առաքել, — բացատրում է Արամայիսը, — այս ջրից խմում են ու մահանում: Այդ օրվանից այս ջուրը նրանց անունով է կոչվում:

Ինչ խոսք, որ դա վանքի անվան յուրօրինակ վերծանությունն է, որը ավանդություն է դարձել:

Մի հարթակում մատուռների խմբեր հայտնվեցին:

— Այս էլ մեր Եղջերտաքելը, — ասաց Արամայիսը, — մեր նախահայրերը սրբավայրերը քոչվորների, ասպատակիչ օտարների հայացքից հեռու վայրերում են կառուցել, որ խուսափեն ավերմունքից ու թալանից:

Կամարակալ դարպասից ներս մտնելով հայտնվեցինք Վանքի տարածքում: Նախքան Քաղեստ առաքյալի աշակերտ Եղիշե քարոզչի (Քրիստոսի 12 առաքյալների 100 աշակերտները ևս առաքյալ էին կոչվում) նահատակվելը և 5-րդ դարի վերջերում Վաչագան Բարեպաշտ թագավորի նախաձեռնությամբ նրա մասունքները այստեղ ամփոփելը, այս վայրը, ըստ Մովսես Կաղանկատվացու, կոչվել է «Ներամիհրայ սբ. ուխտ, որ այժմ կոչի Ջրվշտիկ»: 7-րդ դարի երկրորդ կեսին այն կաթողիկոսության գրապահոց-արխիվն էր: Վանքի կենտրոնում տաճարն է, որն ավարտվում է թեթև ոտտնգալով: Նրա շուրջը տեղադրված են 7 եկեղեցիներ ու մատուռներ: Հյուսիսային եկեղեցու բարավորի գրությունը հայտնում է, որ այստեղ է թաղված Վաչագան թագավորը: Դամբարանը կառուցվել է 1286 թվականին: Ետանկյուն պրոֆիլով հսկա տապանաքարը շատ ավելի վաղ շրջանի է: Այս երկրամասի հայոց առաջին կուսակալ Առանից սերված տոհմի ժառանգ Վաչագան Բարեպաշտն էր, որ 5-րդ դարի վերջերին հայոց Ազվանքում թագավորություն ստեղծեց: Դա Մեծ Հայքի թագավորության անկումից հետո նրա տարածքում գոյացած վարչաքաղաքական առաջին ինքնուրույն կազմակերպությունն էր: Ըստ Կաղանկատվացու, Վաչագանը Արցախում հիմնել է տարվա օրերի չափ եկեղեցիներ: Դամբարանի հրկու պատերը ներսից զարդարում են հսկա խաչքարերը: Առանձին հետաքրքրություն են ներկայացնում վանքի բարձրաբանդակները: Եկեղեցիներից մեկի մուտքից վերև մեղալիտն է քանդակված, հեծյալի պատկերով: Ըստ էության, ձին Արցախում պաշտամունքի առարկա է եղել: Վանքի պարսպի ներսում շարվածքի մեջ պատկած դիրքում երեք

մետրանոց խաշասյուն է տեղադրված: Այն վաղ քրիստոնեական շրջանի հուշարձան-կոթող է եղել (գուցե և հենց Վաչագան Բարեպաշտին նվիրված): Վանքում է գտնվում նաև Զրարեբրդի հզոր մելիք Ազամի շիրիմը: Ավագ վարդապետի կացարանը, որը կիսաքանդ եռահարկ տուն է, իր բազմաթիվ անցքերով նաև դիտարան ու ամրոց է ծառայել թշնամու առաջն առնելու համար:

«Նրա կացարանը մի երեքհարկանի աշտարակ է, որ կառուցված է ապառաժի վրա և նայում է դեպի խորին անտառապատ անդունդը, որ բացվում է ստորտում և որի միջով անցնում է Եղիշե առափելու գետակը: Նա լեզգիների հոգեառ հրեշտակն էր, իսկ թուրքերի՝ սարսափը: Նրա որոտալից ձայնը լսելիս ամեն մարդ փախչում էր կովի դաշտից»:

Վանքը հնում Աղվանից կաթողիկոսանիստ, ապա եպիսկոպոսարանի է վերածվել: Մի տապանքարի վրա ընթերցում եմ՝ ԱՅՍ է ՏԱՊԱՆ ՄԵԼԻՔՍԵԹ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԱՌԱՋՆՈՐԳ ՍԲ ՈՒԵՏԻՍ, ՈՐ ԱՆՄԵՂ ԸՍՊԱՆԵՑԻՆ ՕՍՄԱՆՅԻՔ ՌՃ (1651 թ.):

Տոնաշեն տանող ճանապարհից շեղվեցինք ու մտանք Դստագիր (Դասաակերտ) հինավուրց գյուղը:

«Գյուլիստանյան» կոչվող դարպասներից արահետը տանում է հինավուրց աղբյուրը, որը ինձեներական ու ճարտարապետական տեսանկյունից բավականին հետաքրքրություն է ներկայացնում: Այն Դ տառի ձև ունեցող թաղակապ թունել է, որտեղ կուտակվում են աղբրաջրերը:

«Նալ այս բոլոր սրբաբանների մեջ ինձ հետաքրքրում էր տեսնել կացարանը այն քաղաքի, որ ամբողջ Սյունյաց աշխարհում Քարողուի նման անուն է թողել: Դա այդ վանքի միարան մեծշենացի Ավագ վարդապետն էր, որ հայտնի է Դալի-Մահրասա (խենք-վարդապետ) անունով»:

Հիշելով Բաֆֆու նկարագրությունը, ճանաչեցի այդ քաջի կացարանը: Պատերի վրա դիտանցքներ էին արված: 18-րդ դարի երկրորդ կեսում ապրած այդ հսկան հաճախ այս կողմերը ասպատակող Վեզգիների հոգեառ հրեշտակն էր, իսկ թուրքերի՝ սարսափը: Մինչև օրս պատմում են, որ կովի դուրս գալուց առաջ նա իր ահարկու և որոտալից ձայնը տարածում էր թշնամու վրա, սարսափի մեջ գցում անբնական ուժեղ ձայնով ու նոր միայն նետվում նրանց վրա: Հետաքրքիր է, որ այդպես են վարվում նաև առյուծները, որոնք ահարկու մոնչյունով կաթվածի են ենթարկում, ապա առանց դիմադրության հանդիպելու տիրում զոհին:

Տոնաշեն տանող ճանապարհից շեղվեցինք ու մտանք Դստագիր (Դասաակերտ) գյուղը:

ՇԵ. ՏՈՆԱՇԵՆՅԻՔ

«Գյուլից մնացել է կիսավեր եկեղեցին միայն և գերեզմանատուներ, որ պատած է անտառով»: Գյուղի մասին հիշատակում է նաև Մ. Կաղանկատվացին: Դասաակերտի անունը դարաբաղից կապում են Վաչագանի մեկ այլ աղջկա անվան հետ: 1500 տարի է անցել, իսկ սերունդների մեջ մնացել է սերը, գուցե և կարողը դեպի իր Բարեպաշտ թագավորը:

Այժմ գյուղը ամայի է: Ոչ ոք չի ապրում այստեղ: Այգիների ծառերը ծանրացել են առատ բերքի տակ: Մ՛վ պետք է փրկի ծառերը այդ ծանրությունից: Արամայիսը մի դարպաս ծեծեց: Պատասխան չկար:

— Միակ բնակիչը գյուղում Արտաշ Հակոբջանն է:— Ասաց նա:— Զորացրվելուց հետո գյուղ է վերադարձել կնոջ հետ: 20 տարի առաջ գյուղը դատարկվեց: Արշերն ու գայլերը գյուղի փողոցներով ազատ ման են գալիս: Մեքենայի նորմալ ճանապարհ՝ չի նկատու պատճառով ամուսնացավ ոստանը: 20-րդ դարում անհնար է 19-րդ դարի կյանքով ապրել: Մինգեշաուրը դատգիրների կառուցեցին: Շատերին եմ հանդիպել, ասում են՝ եթե ճանապարհը վերակառուցվի՝ հետ կգանք: Իհարկե, եթե պայմաններին համապատասխան տնտեսություն ստեղծվի... Ահա մեր Տոնաշենը Զայլվի, Մատաղիսի սովիտոլին է միացված:

Ամեն ասածու օր 50 կմ ճանապարհ են կտրում խաղողի այգիներում աշխատելու համար: Դա անտնտեսավարություն է: Իսկ կարելի էր գյուղին հարմար տնտեսություն ստեղծել:

Արտաշը՝ գյուղի միակ բնակիչը, տանը չէր: Թ՛վաց, թե Թումանյանի «Մուտլիկ որսկանի» «անշունչ» գյուղում ենք հայտնվել: Բայց այս «անշունչ» գյուղում մի 30 տարի առաջ եղում էր կյանքը: Գյուղի տակ ստեղծող Անտառապահի աղբյուրից շուր խմեցինք ու անտառի միջով շարժվեցինք դեպի Տոնաշեն: Ահա և Ղարաբաղի դաշտավայրը կրկին մեր հայացքի առաջ է: Մատաղիսի ջրամբարից սկիզբ առնելով, փայլփյուն գիծը գեղեցիկ զիգագով բարակում, կորչում է տափաստանում:

Գյուղ տանող ճանապարհը կառուցելիս հողի խորքից կարասներ են հայտնվել: Կալատեղի շուրջը վար անելիս դաշտով մեկ ջնարակված ամանեղենի կտորներ են հողի երես դուրս գալիս: Ինչ-որ միտք ինձ հանգիստ չէր տալիս: Իսկ ինչու Աղվեն՝ Վաչագան թագավորի ամտանոցը, հենց այստեղ շփտրեհնր: Աղվենում է կայացել Աղվանից աշխարհի ժողովը, որը սահմանադիր կանոններ է ընդունել: Աղվեն չէր կարող Պարտավի մոտ լինել, Վաչագանի գերեզմանն այստեղ է: Կաղանկատվացին նրա գործունեությունը հիմնականում այս լեռների հետ է կապում: Հենց այս լեռներում է, որ նա տարվա օրերի թվին հավասար եկեղեցիներ է

հիմնել: Ուղեկիցներս պատմում են իրենց գյուղի՝ Տոնաշենի մասին, որը կարող էր Դաստակերտի ու Յուզակերի ճակատագրին արժանանալ: Այսօր էլ գյուղացիք քիչ շանք չեն թափում փրկելու հայոց հին ու շին օջախը:

— Երեխայի ոտքը ընդմիջտ կտրվում է գյուղից, — ասաց Արամայիսը: — Ինչ էլ անես, էլ նա գյուղ եկողը չէ: Էն օրը Գուրգենն ասում է՝ երկու թոռ ունեմ, մեկը Տալիխում է, մյուսը՝ Օղեսայում: Իրար չեն ճանաչում: Մեծ դարդ է դառել էդ մարդու համար:

— Գուրգենը վերն ա՞, — հարցրեց Վիկտորը:

— Գրիգորյան Գուրգենին ճանաչում չի՞ս, — խիստ տոնով հանդիմանեց Արամայիսը, ապա շարունակեց, — էն օրը որդիները եկել էին, որ տանեն հորը քաղաք, սա թե՛ պառավ ծառը չեն տեղափոխում, շուտ է շորանում: Ասում է՝ էս մեր գյուղում ծնված ջահելները գնում շենացնում են Ռուսաստանի ոչ սևահողային խոպանք, նոր շենքեր են կառուցում այնտեղ, իսկ մեր այս դրախտավայրը վարան (ավերակ) են անում:

Վիկտորն ասաց.

— Բա Եղիգարյան Միշայի եղբայրը, որ վաղուց Մինգեշաուրում է ապրում, եկել էր աղջկա հարսանիքի համար բան-ման էր տանում գյուղից: Միշան, թե՛ եթե այստեղից ես տանում ամեն ինչ, ավելի լավ չէ՞ր լինի աղջկադ բերես այստեղ հարսանիք անենք:

— Տարին 12 ամիս մեր անտառում ուտելու բան կգտնվի, — գրույցի թեման փոխեց Արամայիսը: — Իրօք, հաճախ էինք տանձի, խնձորի բերքով ծանրաբեռնված վայրի ծառերի հանդիպում: Իսկ դեղին ու կարմիր սալորի առատ բերքը զարմանք էր առաջացնում: Եթե մարդիկ հավաքեին այս բերքը, կարելի էր հազարավոր տոննաներով կոմպոտներ ու հյութեր պատրաստել:

Տոնաշենից իրենց մաղավուզցի են համարում, որոնք այստեղ են եկել 19-րդ դարի սկզբներին: Հավանական է, որ դա ավերված Բերդակուրից (մայրաքաղաքից) ավելի հին ժամանակներում Մաղավուզ տեղափոխված տոհմ է եղել, որը հարմար պահին, երբ այս գյուղը դատարկվել էր, տեղափոխվել է այստեղ: Իսկ գյուղը հին աղբյուրներում Դանիելի կամ Դոնի շեն է հիշատակվում: Հենց Դոնաշենն էլ վերաբնակիչների շուրթերում Տոնաշենի է վերածվել: Հավանաբար, գյուղի հին բնակիչները իրենց մելիքի հետ, հալածվելով օտար բռնակալներից, 1797 թվականի երաշտից ու հաշորդ տարում մոլեգնած ժանտախտից, Վրաստան են գաղթել: Ինչքան մոտենում ենք գյուղին, այնքան հաճախակի են հանգիպում բացատները: Երկինքն ակոսող անթիվը հսկա թևերով որսալու

օդի հոսանքը, դանդաղ պտտվում է մեր գլխավերևում: Թվում է, թե ինչ-որ բան է ուզում հայանել մեզ: Քանի՞ տարեկան է նա: Գուցե 100 տարի առաջ հենց այս արծիվը պտտվել է երկնքում, ինչ-որ բան հուշել Բաֆֆուն: Մեր շարժմանը զուգահեռ լեռները քնաթափա վեր էին բարձրանում: Սակայն ոչ մի ծառ չի հանդգնել հսկա բացատում բնակվել: Մի ծառ միայն անշատվել էր անտառից ու կանչում էր մյուսներին՝ եկեք, մի՛ վախեցեք, միասին այստեղ հեշտ կլինի: Աստիճանաբար բարձր ու մութ լեռները կլանեցին ուղեկիցներին, որոնք երբեմն ձուլվում էին անլուծյանը, ինչ-որ սարսափ էր պատում ինձ: Լուսնի լույսի տակ ապառաժները ահարկու տեսք էին ստանում: Խոր կիրճում Թարթառն էր:

— Տրտուն չի՞ հոսում, — գետի ձայնը լսելով ասացի ես:

— Թարթառ՞ուր, չէ, ջրամբարի ծայրը այստեղ է հասնում:

Գետի մի կտոր փայլիլեց: Հեռվից լսվում էր գետի միապաղաղ մոնջյունը: Կրկին անտառ մտանք: Մտածեցի գիշերային որսագողի մասին: Հանկարծ վայրի կենդանու տեղ չգնի մեզ ու... Արագացրի քայլերս, որ հասնեմ ընկերներին:

Ուղեկիցս պատմում է Տոնաշենի «Պլըպուզու»՝ Ալիսանի սրախոսություններին:

— Ալիսա՛ն, Ալիսա՛ն, տունդ չթանգվի, ձեռ էր առնում տոնաշենցի պահեստի գնդապետ, բծիշկ Սարգսին, թե՛ քեզանից ի՞նչ գնդապետ: Կողքի Գուրգենը թե՛ չես տեսնո՞ւմ մայրը ոնց է պատիվ տալիս: Տո, — ասում է, — որ այդ ուսադիրները իմս լինեին, իմ առաջ էլ զգաստ կկանգնեին այդ մայրները, տո որ էն կոճղի վրա էլ գցենք գնդապետի ուսադիրներով պիջակը, էլի պատիվ կտան:

Ու քահ-քահ ծիծաղը լցվում է ձորը, լանջն ի վեր ձգվում, զարկվում ապառաժներին, մարդացնում մութ գիշերը:

— Բա մի անգամ էլ Տոնաշենի սառնորակ աղբյուրներից մեկի մոտ խնջուցքի հրավիրված մարդկոմի քարտուղարին է նեղը գցում, թե՛ գյուղ բերող ճանապարհը քարուքանդ է, շինել տուր: Քարտուղարը պատասխանում է, որ ինքը գյուղ գալիս չի նկատել: Տո, քեզ համար չեմ ասում, է՛, — վրա է պրծնում Ալիսանը, — քո բանը խեր ա, փափուկ «վուզայի» մեջ չես զգա լավն ու վատը, ես գյուղացիների համար եմ ասում:

Մի սովեր հեռվում ձուլվում է մութ սարերին, ապա կրկին պոկվում ու հստակորեն ընդգծված գալիս դեպի մեզ:

— Ա, էդ հուլը՞ս, — կանչեց Վիկտորը:

— Հենց ա Զիվանն ա, — ասաց Արամայիսը, — Զիվա՞ն:

— Հե՛յ, — արձագանքեց սովերը, — ա՛, կովն ա կորալ է՛, եկալ չի հանդա: Ըշկրներավրա չի ընդա՞լ:

Ուղեկիցներս բացատրեցին, որ գյուղում նախրապահ չկաւ Անասու-
նը հենց էնպես, քշում են դեպի անտառը, ամառ, ձմեռ, մի բան ճար-
վում է այնտեղ, երեկոյան իրենք-իրենց հետ են գալիս:

— Իսկ գողութուն չի՞ լինում,— հարցրի ես, հիշելով Բաֆֆու նկա-
րադրած միջադեպերը գուանիներին ու հայերի միջև:

«Գուանին Զուանչիի խաշնարած թափառական ցեղերից մեկն է
նա երկրի ցեցն է, որ, լցնելով անառակները, գողանում է հայ գյուղացի-
ների կովը, եզր, ոչխարը, ձին և այլն... Ես մի շնչին առիթով մարդ կըս-
պանե, կվիտարեմ, միայն թե մի բան լինէր հափշտակելու: Ցերեկները
եւ զարանամուտ է լինում անառակների խլուրջան մեջ, որպես սարդը
իւր օտաւայնում, սպասում է իւր օրսին»:

— Մի երկու դեպք է եղել,— ասաց Արամայիսը:

— Չի՞ բացահայտվել:

— Անտառ է, տարան՝ տարան, ո՞վ է տերը:

— Գուցե արջերն են տանում:

— Չէ, արջը կարող է խող բռնի, բայց կովին հեշտ չէ:

— Խող տանում է՞:

— Ինչքան ուզես: Մի ամիս առաջ մեր խողերի գոմն էր մտել, որն
ուղում էր գուրս գալ, բամփում էր գլխին: Վերջը մի խող էր գրկել ու
փախել: Բայց անտառում վայրի խողեր շատ կան: Հիմնականում ձմե-
ռանն է արջը գյուղ իջնում: Գիշերը էսպես թափերը խաշած գալիս է դի-
մացից, կարծում ես թե մարդ է: Անցյալ տարի էլ մի միրբաշիրցի էր
գոշս՝ տարել, գցել էր մեքենայի թափքն ու փախել: Հետևից ուղիղ
իրենց տուն գնացի: Գույնը գցել էր, «մանօլումներով» գլուխ տարավ,
բե՛ մեկի տեղ նրկունն եմ տալիս, միայն թե չհայտնես միլիցիային»:

— Բաֆֆին էլ էր գրում գողութունների մասին,— ասացի ես:

— Գե չէ, էն ժամանակ շատ վատ էր: Հայրս շատ էր պատմում:

Գյուղից եկող մի լույս սահում էր ծառերի, թփերի վրայով, ասես
շոյում Կաթողկասարի ապառաժները: Թեքությամբ անձայն եկող բեռ-
նատարը կտրուկ արգելակեց մեզ մոտ: Վիկտորը խուճապահար մի կողմ
ցատկեց:

— Շահեն,— վիրավորված գոչեց Վիկտորը,— կարգին քշի՛ր, էլի՛,
մարդ կա ըռաշիդ:

— Ա, հիշը՞ս քեզ էսդու, էնդու քցում, համութ չի՞,— իր հերթին
բողոքեց բեռնատարի վարորդը,— խե, տեսնում չը՞մ: Ա՛րամայիս, հե՛
Արամայիս, Միշան է, Միշան, եկալ ա...

¹ խոյ

— Հինչ Միշա, Շահեն,— հարցրեց Արամայիսը,— Փյասունց Մի-
շա՞ն:

— Չէ՛ յէ, չէ՛, Առուստամապորունց: Եկել է ու քեզ է հարցնում:
Մեքենան անձայն ցած իջավ: Թափքին մարդիկ կային կանգնած:

— Վարորդը մեր Ձիվանի եղբայրն է,— բացատրեց Արամայիսը,—
մեր պրոֆեսորն է Երևանից գյուղ եկել: Նա մի ուրիշ մարդ է՝ պարզ, հա-
սարակ, հենց գյուղ է գալիս, հագնում է տըրխտանները ու օրերը ան-
տառում անցկացնում: Ասես ոչ մի պրոֆեսոր էլ չի եղել, էն դիտական
գրքերը ինքը չի գրել: Լավ կլինի՞՝ միասին գնանք, տեսնենք ինչ է ասում,
հին գրույցներ իմացող մարդ է:

— Ես տուն մտնեմ, կհնդանինները տեղավորեմ,— ասաց Վիկտորն ու
լուծվեց խավարում:

Մ. Մովսիսյանենց տունը գյուղի Շեն թաղամասում էր: Կուսակա
երկնքի ֆոնին բարձունքի վրա ուրվագծվում են գերեզմանոցի քարերն
ու սրակատար նոճիկները:

Տեղ հասանք, 85-ամյա Միքայել Մովսիսյանը մեծ մատուցարան
դրեց՝ լցված միրգ ու պտղով:

— Մեր այգու քարիքն է,— հանդարտ ասաց նա,— Երևանից այս-
տեղ այգի եմ պահում:

— Մեր հյուրին հին գրույցներ, Բաֆֆու հետ կապված ավանդու-
թյուններն են հետաքրքրում,— առանց նախաբանի գործի անցավ Արա-
մայիսը:

— Իսկ Բաֆֆուց հետո իրադարձությունները՞,— հարցրեց պրոֆե-
սորը:

— Հետաքրքրում է,— անմիջապես պատասխանեցի ես:

— Այդ դեպքում կարող եմ ձեզ օգտակար լինել,— ասաց Միքայե-
լը:— Ղարաբաղի մասին գրել՝ չիմանալով 1917—20-ական թվականնե-
րի դեպքերը՝ անհնար է:

— Գրականութուն չկա,— ասացի ես:

— Կա,— պատասխանեց գիտնականը,— Հայրիկ Թումյան անունը
ձեզ որևէ բան ասո՞ւմ է:

— Թումյան...,— հիշողությանս մեջ փնտրեցի այդ ազգանունը,—
նա ձեռագիր ունի՞՞ գրած, երևի մատենագարանում եմ հանդիպել:

Մ. Մովսիսյանը գրապահոցից մուգ շագանակագույն կազմով մի
հաստափոր գիրք հանեց և զգուշությամբ դրեց սեղանին:

— Ահա այն,— ասաց նա,— հեղինակն այդ դեպքերի ականատեսն է
ու մասնակիցը: Նա Ղարաբաղի ղեկավորական կոմիսարն էր:

— Կարո՞ղ եմ կարդալ,— հարցրի ես ու թերթեցի այն: Թովանդա-

կության մեջ իմ ուշադրութիւնը գրավեցին գլուխների ենթավերնադրերը, կուսակցութիւնների ժողովրդական բլոկ-

Ղարաբաղի հայութեան առաջին համազումարը, ժողովրդական կառավարութիւնը:

Մտեփան Շահումյանի հետ կապ ստեղծելու ձախողումը:

Զինամթերքը Զանգեզուրից Ղարաբաղ տեղափոխելու անհաջողութիւնը:

Թուրքերի մուտքը Շուշի:

Օսմանցիների 22-օրյա սկուպացիան և զորապարպը Շուշիից:

— Ղարաբաղի պատմութեան ճակատագրական այս երեք տարիները, չգիտես ինչու, պատմագիրները լուսթյան էին մատնել, ասես ոչինչ էլ չի եղել, նույնիսկ վիպասաններն են գգուշուցում շրջանցել, — ասաց Մ. Մովսիսյանը:

— Դե, երեկ դեմոկրատացումն ու հրապարակայնութիւնը կհարթեն ամեն ինչ, — խոսակցութեան մեջ մտով Արամայիսը:

— Չէ, — առարկեց պրոֆեսորը, — ուղղակի կարծում էին, թե ճշմարտութիւնը հրապարակելով կարող են վերադարձնել ինչ-որ մեկին: Բայց դա այդպէս չէ: Գրքի մասին իրենց գրական կարծիքներն են հայտնել Անաստաս Միկոյանն ու Աշոտ Հովհաննիսյանը:

— Թումյանի մասին կուզենայի լսել, — ասացի ես:

— Հայրիկը իմ աներն էր: 1980 թվականին մահացավ՝ 95 տարեկան հասակում: 1928 թվականից կոմկուսի շարքերում էր, ամբողջ 60 տարի: Երկար տարիներ է. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի հեռակա ֆակուլտետի դեկանն էր:

Գյուղամիջոց լսվում են մայրերի տուն կանչող ձայներին համառորեն չլսել տվող որդիների աշխույժ ու զրնգուն հնչյունները: Նրանք մեկ հայտնվում են ծուռ սյունից կախված էլեկտրական լամպի աղոտ լույսի տակ, մեկ լուծվում մթնշաղի մեջ: Շրջապատի սարերը, ծաղիկ-աստղերը, լուսեղջյուրը, անտառը, խորհրդավոր ծառերն ու գյուղի մոտ հայտնված հինգ ձիավորները հանդարտորեն սուզվում են գեղերվա մեջ:

Կրկին լսվում էր Քարթառի խուլ մոնչյունը: Նույն ձայնը, ինչ որ վաշագանի, Առան կուսակալի ժամանակներում էր:

Տոնաշենի շուրջ 70 տների մեծ մասը դատարկ են, ու քաղաքներում: Կրկին տոնաշենցիների ժառանգների համար միայն ամառանոց են ծառայում: Եթե մի ժամանակ դպրոցը լցված էր աշխույժ ճիչերով, ապա այժմ դպրոցի հետքն էլ չկա գյուղում: Սակայն Մոսկի փեղին ծվարած այս փոքրիկ գյուղը հասարակութեանը տվել է գիտութեան մի շարք գործիչներ: Լեոնային գյուղերն այժմ քայքայում են ապրում ու դանդա-

ղորեն լուծվում, կուլ գնում բուն զարգացում ապրող հարթավայրային գյուղերին: Սակայն լեոնային գյուղերն են, որ հասարակութեանը տվել են տասնյակ գիտնականներ, արվեստի, գրականութեան գործիչներ, անվանի զորահրամանատարներ: Թեկուզ միայն որպէս գեներալ-մայոր պահպանելու իմաստով արժե վերանայել լեոնային գյուղերի նկատմամբ տնտեսական քաղաքականութիւնը:

Գիշերը Տոնաշենում չկարողացա քնել: Աշերիս առաջ ֆիլմերի պես անցնում են վանքերը, մելիքները, պատմական իրադարձութիւնները: Այդ ամենին հետաքրքիր երանդ էր հազորում զույգ թռչունների սիրերգը: Գետի խուլ մոնչյունի հետ նրանց մեղեդիները ձգվեցին մինչև առաջին արևոտականը:

Աբրորը ուժեղ թափահարեց թևերն ու դիւ, ինչքան ուժ ուներ, կանչեց: Գյուղի բոլոր արևոտները հերթով արձագանքեցին: Շենքը արթնացան:

ԺՁ. ՏՐՏՈՒԱԿԱՆ

«Քարթառը հայոց մեծ գետերի ամենակրօնէր եղբայրն է: Նա փոքրիկ է, բայց ահարկու է: Բնութւնից վիճակված է եղել նրան կատարել մի ամենազովարին դեր: Նա չէր վազում ընդարձակ, հարթ հովիտներ և լայնատարած դաշտերի միջով, որ ուրեքն ցանկանաւ, այնքան լայնացներ իր արիւնքը, և խաղալով, խաչալով, ուրախ հոսանքով շարունակէր իր ընթացքը: Զակատագիրը Քարթառին սեղմեց Ղարաբաղի լեոնային ձորերի մեջ: Նա հազարավոր տարիներով պիտի կալեր անզգա քաղցի և անսիրտ ապառաժների հետ: Այդ ննջված, նեղված դուրսյան մեջ ևս Քարթառը պահպանել էր իր վեհութիւնը»:

Քարթառի հովիտը իսկական թանգարան է բաց երկնքի տակ: Այս տեսանկյունից քիչ գետեր կարող են համեմատվել Տրտու-Քարթառի հետ: Ամեն մի քայլափոխին այստեղ մի պատմաճարտարապետական նշանակալից հուշարձանի, խաչքարի, հինավուրց քանակավայրի ենք հանդիպում: Այսօր գետահովտում կարելի է տեսնել հեթանոսական շրջանից մինչև ուշ միջնադարն ընդգրկող պաշտամունքային ու քաղաքացիական շինութիւններ: Հենց Ջրաբերդի մոտ է գտնվում մի հին ավանդութեամբ Տիգրան Մեծի անվան հետ կապվող առևտրական կարևոր ուղու վրա գտնվող կամուրջը: Ավանդութիւնն ասում է, որ գետի այս անունը ծնվել է Ալեքսանդր Մակեդոնացու շուրթերից, որը տեսնելով խոր ձորում գալարվող խելահեղ գետը, բացականչել է՝ «Օ՛, տարտար...»: Սակայն հայտնի է, որ Մակեդոնացին Հայաստանը չի նվաճել և Հայաստան չի մտել: Օտարներին սարսափ պատճառող Տրտուականը (Քարթառը) մի

մայր է հայութեան համար, որը հազարամյակներ շարունակ իր շուրջն է համախմբել, իր անառիկ բերդերում, քարայրներում պատսպարել արցախցուն օտարերկրյա ասպատակիչներին, խաղաղ օրերին ուսուցանել հայ դպրութեանը իր շուրջը գտնվող բազմաթիվ վանքերում, նրանց փոխանցել իր փոթորիկուն ոգին, սերը դեպի երկիրը:

— Այլևս Քարթլոսը չի կարող հին ժամանակների նման կամուրջներ ավերել, — ասաց Տոնաշենից ինձ Զրաբերդ ուղեկցող Զիվան Սարգրսյանը, ապա շարունակեց, — Մարտանգում՝ Հաթիրքի մոտ, հսկա ծով են կառուցել: Այնտեղից էլ կարգավորում են ջրի հոսքը:

Գետի երկու ափերը վայրի նոսն աչքիներ են հիշեցնում: Նոսն թփերը ծանրացել էին առատ բերքի տակ: Ոչ ոք չի հավաքում այն: Նոսն «աչքիները» մեկ ընդհատվում են թևատարած հսկա ընկուզենիներով, մեկ տանձի, խնձորի ծառերով, մեկ անտառի ծայրը ընդհուպ մոտենում է գետին: Իսկ աշունը լեռներից դանդաղ, բայց հաստատուն քայլերով իջնում էր ձորը, լանջերը լցնելով ոսկով:

Զրաբերդին մոտ վայրը ձրբմսկներ (Ջերմուկ) էր կոչվում: Ուղեկիցս պատմեց, որ 30-ական թվականներին երկրաբանական արշավախումբը արծաթի երակներ էր որոնում գետահովտում:

— Հենց այստեղ էլ ուժանակի պայթյունից կուրանում է հայրս, — ասաց նա:

Հիշեցի 80-ամյա բարձրահասակ, չլապինդ մարդուն: Նա գլուղում որևէ տեղ գնալու համար նույնիսկ թոռան օգնութեանը չէր դիմում: Գիտեր ամեն մի քարի, թփի, ջրափոսի տեղը:

Զիվանը կիրճի մեջ ցցված մի հսկա ապառաժ ցույց տալով՝ ասաց.

— Զրաբերդն է:

«Զրաբե՛րդ, այդ անունը լսելիս իմ սիրտը բախում էր ե՛ր առաջնությունից, ե՛ր արտոմությունից: Ես պիտի տեսնեի այն բերդը, որ շատ անգամ պահել, պահպանել էր մեր նայրեթին պարսիկների, բաթաբների, արաբների և կովկասյան լեռնաբնակների հաճախումներից»:

Բաֆֆին գետի երկու կողմի ապառաժներն իրար կապող կամրջով էր մտել բերդի տարածքը: Սակայն ուղեկիցս այլ ճանապարհ ցույց տվեց: Լեռան մեջ թունել էր փորված, որը ևս 30-ական թվականներին այստեղ գործած երկրաբանների հետքերից էր: Թունելի օգնությամբ մենք հայտնվեցինք բերդի տարածքում: Այն շատ ավելի մեծ էր Գյուլխտանի բերդից: Տներն մեծ մասը փլվել էր՝ տեղը զիջելով հաստաբուն ծառերին:

Վերջապես, բերդի տարածքից երևաց Քարթլոսի վտակ Թրդին, որը Քարթլոսի հետ երեք կողմից պաշտպանում էր բերդը: Դրանք կարծես

պահապան հսկա վիշապներ լինեին, որոնք իրենց մարմինը անվերջորեն քսում են բերդի հիմքին, համոզվելով նրա գոյութեան մեջ, ուժ են առնում, ավելի կատաղորեն հոսում դեպի հարթավայր: Զրաբերդի (Զարաբերդ, Զարաբերդ) անունը Մովսես Կաղանկատվացին հիշատակում է 7-րդ դարի առաջին կեսում իսաղարների արշավանքի կապակցությամբ (620 թ.): Բայց այն կապելով ոչ հեռու գտնվող Տիգրան Մեծի կառուցած կամրջի հետ (այստեղից այնքան էլ հեռու չէ հայոց մեծ թագավորի հիմնած շորս Տիգրանակերտներից մեկը), բերդը կարող ենք կապել մեր թվարկութունից առաջ առաջին դարի պատմական անցքերի հետ: Ուղեկիցս ցույց տվեց ժայռափոր սանդղաձև «ջրագող» կոչվող անցքը, որը բերդի տարածքը կապում էր գետի հետ: Անցքը գետի հունի մեջ էր վերջանում, այնպես, որ ջուրը միշտ ծածկում էր անցքի ելքը, ու թշնամու կողմից աննկատելի էին մնում գետից ջուր վերցնող հայ զինվորները: Հենց այստեղից էր, որ Զրաբերդի հզոր մեխիքները ա՛հ ու սարսափ էին տարածում թշնամու վրա: Բաֆֆին մանրազնին ուսումնասիրելով մեխիքության պատմությունն ու 17—19-րդ դարերի իրադարձությունները, հայ ազգային-ազատագրական պայքարում առանձնահատուկ տեղ էր հատկացնում Զրաբերդի իշխանությանը: Այդ շարժման ղեկավարների՝ Ռուսաստանի կայսր Պետրոս Առաջինին հասցեագրած նամակը ստորագրել էր նաև Զրաբերդի մելիք Սուային: Զրաբերդի մելիքության տերերը՝ Մելիք-Իսրայելյանը, սերել են Խաչենի տիրակալ Հասան-Ջալալյաններից: Ինչ խոսք, որ բերդի տարածքը, որպես պատմաճարտարապետական հուշարձան ավելի մանրամասն ուսումնասիրման, շափազման կարիք ունի: Բերդի տարածքից անտառի մութ ֆոնին, հեռվում կաթնագույն կառույց է նշմարվում:

— Ընդեղ՞ էլ մեր Իրեքմանկուքն ա լի... — ասաց Զիվանը:

Շարժվեցինք դեպի Երիցմանկանց վանքը: Ծանապարհի վրա երկու կողմերից կախված մոշի ողկույզները հագեցնում էին մեր ծաղավը: Ծանապարհին հատապտուղ հավաքող մի կնոջ հանդիպեցինք: Մեզ բարեփելուց հետո շրջվեց դեպի ճերմակ վանքը, խաչակնքեց ու ասաց.

— Շղըկալա՛մ ճկա՛տիտ մատաղ, ա Խ՛րեքմանկո՛ւք...

Մոտեցա ու հետաքրքրվեցի, թե ինչ արտահայտություն էր դա:

— Մեր մեծ տատից՝ Սալբի բիրուց եմ սովորել: Մեծ Շենից Տոնաշեն գալիս միշտ շրջվում էր դեպի վանքն ու այդ խոսքերը մրմնջում: «Երիցմանկանց վանքում մնացի մի օր: Մերունի Տոնի-ապերը, միակ միաբանը այն վանքի, որի մեջ մի ժամանակ կաթողիկոսներ էին նստում,

* այնտեղ

ամբողջ գիշերը պատմում էր ինձ Չալաղան Յուզբաշու և Մելիք-Խորա-
յելյանների տոհմի զանազան ներկայացուցիչների մասին, և զարմանում
էր, որ նրա պատմածներին այնքան նշանակություն էի տալիս, որ գրի
էի առնում»:

Խոր ձորից մեզ է հասնում Քրդի գետի խուլ, միալար մոնչյունը:
Սրբատաշ սպիտակ կրաքարը մուժ անտառի ֆոնին ավելի էր ընդգծում
առճարի ճերմակութիւնը, նրան դարձնում ավելի վեհաշուք: Մուտքի
կամարածև ճակատքարի արձանագրութիւնը հայտնում է, որ վանքը
հիմնել են 1691 թվականին մեծշենացի Սարգիս քահանայի որդի, աղ-
ժանից կաթողիկոս Միմեոնն ու նրա եղբայր Իգնատիոս վարդապետը:
Հենց այդ Միմեոնն է, որ այստեղ հիմնելով Գանձասարի Աղվանից կա-
թողիկոսութիւնը հակաթոռ թեմը (այն հաճախ, «կեղծ կաթողիկոսու-
թիւն») անունն էր կրում գրականութիւն մեջ), բացասական դեր է կա-
տարում Արցախ-Ղարաբաղում ծնունդ առած հայ ազգային-ազատագրա-
կան պայքարում: Այդ նույն ժամանակ Աղվանից կաթողիկոսութիւն
աթոռակալն էր Երեմիա Հասան-Ջալալյանցը (1676—1700), որին հա-
ջորդեց այդ պայքարի ղեկավար և շատագուց Յասյի Հասան-Ջալալյանցը:
«Երբ հայրենիքը տագնապի մեջ է գտնվել, հաճախ ծագել են
կրօնական կամ եկեղեցական վեճեր: Դա այն ժամանակամիջոցն էր,
երբ Ղարաբաղի հայերի ամեն մի իգուր վատնած բոսպեն նրանց համար
մեծ կորուստ էր»:

Հակաթոռ եկեղեցու կաթողիկոս Իսրայելն էր, որ սպանել տվեց
Գանձասարի Հովհաննես Հասան-Ջալալյան կաթողիկոսին և դրանով
մեծ ծառայություն մատուցեց հայ ժողովրդի թշնամիներին: Եկեղեցին
չորս սյունների վրա հենված քառամուկթ գմբեթավոր բազիլիկ կառույց
է: Հյուսիսային պատի մույթի պատի վրա պահպանվել է «ՇԻՆՈՂ ԵՎ
ՎԱՐՊԵՏ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ՈՒՄՏԱ ՍԱՐԳԻՍՆ ՅԻՇԵՅԵՔ Ի ՔՍ» արձանագրու-
թիւնը: Շինարարը տաճարի պատերի մեջ է տեղադրել ավելի հին ժա-
մանակաշրջանների խաչքարեր: Հավանաբար, այն ավելի հին շրջանի
տաճարի տեղում է կառուցվել: Վանքի շրջակայքում հին գյուղատեղերի
հետքեր շատ կան:

ԺԵ. ՆԱՆԴԻՊՈՒՄ

«Երիցմանկանց վանքից շարունակելով իմ նախապահը, եկա Մեծ
Շեն, որ բուրեհեր կաշում են Ալու-Կարաբեկ»:

Այս գյուղը ստեղծման օրվանից Մեծ Շեն է կոչվել: Ընդհանրապես,
նման դեպքերի շատ են հանդիպում, որը ևս գրավել է մեծ գրողի ուշա-

գրութիւնը: Այն թվում է, թե թուրքերը, ցանկացած բնակավայր հանդի-
պելիս անմիջապես իրենց ուզած անունով են կոչում: Գետաշենը միշտ
Գետաշեն է կոչվել, իսկ ահա թուրքերը այն թարգմանում են, Չայքենդ
անվանում, այդպես էլ քարտեզների մեջ մտցնում: Թվում է, որ դա եր-
կիր նվաճելու առաջին քայլն է: Նույնիսկ շին խորշում ողջ երկրամասը
նոր անունով կոչվելուց:

Մեծ Շենում ուղեկցիս՝ շրջանային թերթի աշխատակից Սելվա Մո-
սունցի հետ փնտրեցինք Բարկին Մովսիսյանին, որը գյուղի պատմական
անցյալի մասին նյութեր էր հավաքում: Նախկին ուսուցիչը ցույց տվեց
ձեռագիրը:

— Բաֆֆուն երեք օր հյուրընկալել է գյուղի քահանա Մկրտիչ Տեր-
Ասատրյանը: Հենց այդ տոհմից էր Եղիշն Առաքյալի վանքի վարդապետ,
ազգային-ազատագրական պայքարի հերոս Ավագ Ասատրյանը (Դալի-
մահրասան): Բաֆֆին Տեր-Մկրտիչի հետ պտտվել է հնավայրերում, գրու-
ցել մեծահասակ մարդկանց հետ: Գյուղի մի թաղամասը դեռևս պահ-
պանել է Ջորատափ անվանումը: Այն Արցախի կարևորագույն սղնախ-
ներից էր: Գյուղը, Ավագ վարդապետից բացի, ազգային-ազատագրական
շարժմանը տվել է այնպիսի հերոսներ, ինչպիսիք են Ալան Հարյուրա-
պետը, Քյուլի Արզումանը (Քաբաղանց տոհմից) և Չալաղան Հարյու-
րապետը (Տեր-Դանիելյան): Քյուլի-Արզումանը Մելիք Ադամի քաջարի
զորապետներից էր: Փանահ խանը այդ քաջից վրեժ լուծելու համար Մեծ
Շենից գերում է նրա հորը՝ Սարգսին, տանում Շուշի:

— Նրատիր քո Արզուման որդուն, որը հանգիստ չի տալիս ինձ,—
ասում է Խանը:

— Ես Արզուման անունով որդի չունեմ,— պատասխանում է հերո-
սի հայրը:

— Մի՞թե նա քո որդին չէ:

— Իմ որդին չէ,— պատասխանում է ծերունին,— եթե նա իմ որ-
դին լիներ, քեզ մինչև այսօր կենդանի չէր թողնի և այս բերդի ավերակ-
ները քո գերեզմանը պիտի դարձներ:

Իսկ մյուս լեզենդար հերոսը՝ Չալաղան Հարյուրապետը, որպես պատ-
գամավոր բազմիցս մեկնել է Ռուսաստան՝ օգնություն հայցելու հայ
ժողովրդի ազատագրական պայքարում, բայց, հուսահատվելով, սեփա-
կան սրի ուժին է դիմել: Գյուղի պատմագիրը գրի էր առել Տեր-Դանիել-
յանի պատմած մի ավանդությունը, որի մեջ ևս զգացի, թե ինչպիսի
արմատներ էր գցել հակաթոռ Երիցմանկանց տերերի թշնամանքը Գան-
ձասարի տերերի նկատմամբ: Նա գրի էր առել նաև մի ավանդություն
Խաչենի հզոր իշխան Հասան Դուա Ջալալ մեծ իշխանի մասին:

Սա վախի որոշ զգացումով պատկերացրի, թե ինչպես էր մեծշենացի տեր Մկրտիչը Բաֆֆոնն պատմել Երիցմանկանց եկեղեցականների հերյուրանքը մեծ հայրենասերի՝ Զալայան հզոր իշխանի հասցեին: Գուշե, Բաֆֆին սկզբից թյուրիմացության մեջ էր ընկել: Բայց ոչ, մեծ վիպասանը ծանոթ էր Կիրակոս Գանձակեցու, Սալի Հասան-Զալայանի աշխատություններին, ու անմիջապես զգացած կլիներ հերյուրանքի աղբյուրը: Այստեղ էս տեսա այն կույր թշնամանքը, որ Երիցմանկանց եկեղեցականներին մղել էր դավաճանական, հայ ազգային-ազատագրական պայքարի շահերը ոտնակոխ անող քայլերի, մինչև մասնություն և սպանություն: Յավոք, Բերդակուրը ավերված էր: Ըստ հավանականության, միջնադարում Մեծ Շեն գյուղի հզորացումը կապված էր հարևան Բերդակուրի բնակչության մեծ մասի այստեղ՝ Մեծ Շեն տեղափոխվելու հետ:

Յանկացած ավանդություն, զրույց իր մեջ իրականության նշույլ է պարունակում: Հավանաբար, 12 և 13-րդ դարերում հաշիների իշխանների հզորանալուն զուգահեռ Բերդակուրի տերերը ապստամբում են և ճրջվում: Այդ թշնամանքը նորից է բորբոքվում մելիքական շրջանում, երբ Զրաբերդը որոշ հզորություն է ձեռք բերում: Եկեղեցականները, որոնք, ըստ երևույթին, Բերդակուրի տերերի ժառանգներն են, հիշում են իրենց պապերի պատմությունները ու հակաթոռ կաթողիկոսություն հիմնելով պայքար ծավալում Գանձասարի դեմ: Բայց այս տխուր ու հիասթափեցնող պատմություններին հաջորդեց մեկ այլ ավանդություն, որը ուրախություն պատճառեց ինձ: Այդ իրադարձության պատմողն ու անմիջական մասնակիցն էր բանաստեղծ Բոզդան Զանյանը: 1948 թվականին, որպես գրողների միության Ղարաբաղի մասնաճյուղի քարտուղար, Բ. Զանյանը Ավետիք Իսահակյանին կուսապատյի Հովհաննես Սուվարյանի հետ ուղեկցեց Շուշի: Մինչ Շուշի գնալը նրանք այցելում են Լիսազորի սովխոզը, որի գիրենկատը մեծշենացի Միշա Սարգսյանը ցանկություն էր հայտնել ծանոթանալու Վարպետի հետ: Այդ պահին Լիսազորում էր գտնվում նաև Մեծ Շենից, եղբոր որդուն մեկ շաբաթով այցի հկած 90-ամյա Աննա Մարգսյանը (Աննա-րիբը): Երբ պատմեցին հյուրի մասին, պառավն ասաց.

— Շատ շուտ Մեծ Շենում մի գրողի էլ եմ տեսել:

— Ո՞վ էր, մայրիկ — հետաքրքրվեց Վարպետը:

— Բաֆֆի էր անունը: Քեզ նման խոնարհվեց, համարեց ձեռքս: Հետո, երբ կարդացի նրա գրքերը, իմացա ինչ մարդ էր նա:

— Զլինի՞ թե ամուսինդ եկեղեցական էր, — հետաքրքրվեց Ավ. Իսահակյանը, — նա սովորաբար եկեղեցականների տանն էր իջևանում:

— Զէ, քմամտաղ, — պատասխանեց 90-ամյա կինը, — գյուղի քահանան եղբայրս էր: Զահել էի ես: Երեք օր այդ գրողը մնաց մեր տանը: Պոետը հուզվում է այս հանդիպումից, նորանոր հարցեր տալիս մեծ վիպասանի մասին:

«Հետո Իսահակյանի հետ Շուշի իջանք, — շարունակում է Բ. Զանյանը, — գերեզմանոցում դժվարությամբ գտավ իր կնոջ՝ տիկին Սոֆիկի ծնողներին՝ Զաքարյանների տապանաքարը, որը մի խումբ քարերի հետ շրջված էր ձորի մեջ: Հետո այցելում ենք Ղազանչեցոց եկեղեցին: Մեծ բանաստեղծի վրա խոր տպավորություն թողեց Շուշիի համայնապատկերը: Տեսնելով ավերված հայոց թաղամասը, դարձավ իր ընկերոջը՝ կուսապատյի Հովհաննես Սուվարյանին, որին ծանոթ էր արտասահմանից. «Փախչենք այստեղից, Հովհաննես, փախչենք, ես այլևս չեմ դիմանում...»: Տեսնելով ավերակները, մեծ պոետը իր վառ պատկերացմամբ տեսնում է այն եղեռներ, որ հայերի վիխն դյուրեցին օսմանցիք»:

ԺԸ. ԻՆՇ ՄԱՍ

Հաջորդ վայրը, որն ինձ հետաքրքրում էր կապված Բաֆֆու ուղևորության հետ, դա Մելիք Ազամի ապարանքն էր ու ինը մասանց անապատը: Ըստ ավանդության, Գրիգորիսի մասունքները Արցախ բերվելով, 9 մասի են բաժանում ու թաղում տարբեր տեղերում: Այդ մասունքներից բաժին է հասնում նաև Մոխրաթաղին ու Մեծ Շենին: Վաչագան Բարեպաշտը այդ գերեզմանների տեղում եկեղեցիներ էր կառուցում: Մեծ Շենում այն կառուցվել էր Հրթրատոկ (Զիլ) լեռան կատարին: Ըստ ավանդության, հենց այդ լեռան հարթ կատարը, որտեղից երևում է Քուս գետն ու սղջ Միլի-Մուխանքի տափաստանը, Բերդակուրի ու Զրաբերդի տերերին և Զորատափի զինվորականությանը որպես գիտակետ է ծառայել արևելքից եկող վտանգը կանխելու համար:

Ինը մասանց անապատի ճանապարհին անտառում մոխրաթաղցիք մոշ ու հոն էին հավաքում: Եկեղեցին գտնվում է հին Մոխրաթաղի հարավային եզրին, բարձունքի հարթակում: Արձանագրությունը տեղեկացնում է, որ այն վերակառուցվել է 1881 թվականին՝ հենց Բաֆֆու այցելության ժամանակ:

«Այդ անապատը ավերակ էր. այժմ նայումվել է մի վարդապետ, որ գյուղերից նվիրատվություններ հավաքելով, սկսել է շինել անապատը: 5 Բակուր Կարապետյան

Այդ վարդապետի հսկողութեանը հանձնված են մի քանի ուրիշ վանքեր ևս, որոնց բողիկ է անտե, իսկ այստեղ նոր վանք է շինում: Շատ հասկալի է, որ նորը շինելը ավելի ձեռնառն է հրան, քան հիները պահպանելը: ... միշտ հավաքող մատեններ կլիգե...»

Անապատի մուտքի մոտ բակով մեկ փետուրներ էր ցրված: Ուխտավորները չեն մտածում ոչ հիգիենայի, ոչ էլ մաքրութեան մասին: Ճյուղերից հավի գլուխներ էին կախված, որոնցից նեխահոտ էր փչում: Տաճարի երկու կողմերում 17—19-րդ դարերի տապանաքարեր էին: Մի հսկա քար տեղահան էր արված, շրջված, տեղը փոքած, որի մեջ ոսկորներ էին թափթփված: Սլավա Մոսուսնցը հավաքեց ոսկորներն ու շարեց տապանաքարի վրա: Ոսկորները անբնական խոշոր էին: Այստեղ թաղված իշխանազուն կամ զորականը, որի գերեզմանը պղծել են ստոր ոսկեխույզները, հուժկու մարդ էր եղել: Քարը ծանր էր, ու մենք ոչ մի կերպ չկարողացանք շրջել ու մյուս երեսին կարողալ արձանագրութունը: Անապատից ոչ հեռու, հարթ տարածքում բարձր պարիսպներ էին երևում:

— Մեխր Աղամի ապարանքն է,— ասաց ուղեկիցս: Փլված քարերի վրայով ցատկոտելով հայտնվեցինք ապարանքի բակում, որը մացառնեքով էր ծածկված: Թաղածածկ սենյակները հերթով փլվում էին, պատահական այցելուներին ցուցադրում 18-րդ դարի շինարարների վարպետութունը: Այն, ինչ խոսք, գիշում էր 12—13-րդ դարերի շինարարների հմտութեանը: Սակայն այն ճարտարապետական կարեոր հուշարձան է, ու մանրագնին ուսումնասիրութունը կարող է պատկերացում տալ ժամանակի շինարարական արվեստի մասին: Մակար հայկապոս Բարխուդարյանցը այստեղ գրի էր առել մեխր Աղամի արձանագրութունը, ըստ որի ապարանքը կառուցվել է 1771 թվականին:

ԺԹ. ԿՈՒՍԱՆԱՑ ԱՆԱՊԱՏ

1881 թվականին Կուսապատ գյուղի երկդասյան դպրոցը միայն երեք տարվա կենսագրութուն ուներ: Այստեղ Բաֆֆու մասին ավանդութուններ որոնելիս հանդիպում եմ 74-ամյա Հրանտ Երիցյանին:

— Գյուղում մի մեծահասակ կին կար,— ասաց Հ. Երիցյանը,— անունը չգիտեմ, բայց Այա էինք ասում, պատմում էր, որ Բաֆֆին սպիտակ ձիու վրա նստած մի երիտասարդի հետ է հայտնվել գյուղում: Գրողին այդ կնոջ քոջ տանն են հյուրընկալել: Այան, որ այն ժամանակ ջահել աղջիկ էր, ազգեցել էր տաք ջրով հյուրի ոտքերը լվա, հին սովորութուն էր զոս մեզ մոտ, բայց Բաֆֆին չի թողել ու ինքն է լվացել՝ մեծ

զարմանք պատճառելով կանանց: Այդ նույն Այան աղ ու հացով է գիմավորել 11-րդ կարմիր բանակի զորաբաժնի մուտքը գյուղ, իսկ հրամանատար Վայցեխովսկին վերցնելով հացը, ասել է՝ «Սպասիր», կրասավիցա»:

Այնուհետև ուղեկիցս 1892 թվականին հրատարակութեան մի գրքույկ է տալիս ինձ, որի խորագիրն է՝ «Сборник материалов для описания местностей и племен Кавказа»: Հոգվածի հեղինակն է Կուսապատի դպրոցի վերակացու Գ. Իգրախովը:

— Իսկ ինչպե՞ս է այս գրքույկը ձեզ մոտ հայտնվել,— հարցրի ես:

— Ոմն Զամալս գիրքը 50-ական թվականներին ուղարկել է դպրոցի դիրեկտորին:

Ինչպես երևում է, Գ. Իգրախովը իզուր չի անցկացրել իր օրերը Կուսապատում: Նա սկզբից բերում է գյուղի անվան ծագման մասին ավանդութունները: Իբր պարսիկները գյուղի կիսակառույց եկեղեցու պատին կատվի նշան են դրել, ու գյուղի անունը «Կիսատ պատ» է մնացել: Իսկ եկեղեցին ունեցել է 7 հենասյուն, որի յուրաքանչյուր սյունը մի ընտանիքի միջոցներով է կառուցվել: Հ. Երիցյանը բացատրեց, որ 1937 թ. այն քանդել են: Երկրորդ ավանդութունը պատմում է, որ եկեղեցին կառուցող վարպետը, որն ուզում էր առանց վարձի, իր միջոցներով կառուցել այն, հալածվելով գյուղացիներից, կառույցը թողել է կիսատ ու հեռացել: Մյուս ավանդութունը, որն ավելի հավանական է, «Կուսապատն է»: Նոր եկեղեցու տեղում կուսանոց-վանք է եղել: Տեղանքն ու գյուղը հռչակված էր Կույսերի անապատով: Ժողովրդի լեզվում սղվում են որոշ տառեր, ու կույսերի անապատի տեղ մնում է «Կուսապատ» անվանումը:

Գ. Իգրախովը գրում է կուսապատի մեխր Վանի Աթաբեկյանի (Հովհաննես հարյուրապետ) մասին: Իր բազմաթիվ սխրագործութուններով Վանին նպաստել էր կուսական զորքերի հաղթանակներին Շուշիի խաների և պարսիկների դեմ մարտերում (1804—1812 թթ): Նա սկզբում որպես կալվածք ստացավ Կուսապատ գյուղը, ապա ողջ Զրաբերդի մելիքութունը, որը կառավարեց մինչև խոր ծերութուն՝ 1854 թվականը: Գրքույկի հեղինակը ավանդութուններ է գրի առել մի շարք տեղանունների մասին:

Նղնիկի ալքյուր.— մշտապես մի եղնիկ էր գալիս աղբյուրից ջուր խմում ու այդտեղ էլ հանգստանում: Գյուղացիք բռնում են, մորթում ու հավասար բաժանում իրար մեջ: Մեկ ուրիշ եղնիկ է գալիս ու նույն տեղում հանգստանում: Այս անգամ գյուղացիք իրար մեջ հավասար չեն բաժանում: Դա այդտեղ նկատած վերջին եղնիկն էր:

Ղարիբի խաչը գտնվում է հսկա կաղնու տակ: Հեթանոսները մի քրիստոնյա են սպանում այդ ծառի տակ: Իբր հաջորդ օրը երկնքից շող է իջնում ծառի վրա, ու այն սրբատեղի է դառնում:

Տավարի խաչ կոչված վայրում հովիվների մոտ սովորութուն կար ջարդել մահակներն ու կախել ծառից, այդպես փայտի հետ թողնելով կենդանիների հիվանդությունը:

Գյուղի գերեզմանոցում իմ ուշադրութունը գրավեց մի հին խաչքար, որի արձանագրությունը ջարդված լինելու պատճառով անհնար էր ընթերցել: Հետաքրքիր էին քանդակված գույգ խաչերի զարդամուտիվներն ու նրանց տակ տեղադրված զույգ ֆիգուրները:

Կուսապատ գյուղը դարասկզբին ունեցել է 300 ընտանիք՝ 2279 բնակիչներով: Այժմ մնացել է 175 տուն:

Հ. Երիցյանը պատմում է Կուսապատում ծնված հուլիսիանոս մարդկանց մասին: Դրանց շարքում առաջինն է աշխարհահռչակ գիտնական, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Սերգեյ Նիկոլայի Նիկոլայուպյանը:

Կիրճով վեր ձգվող ճանապարհը, ոլորապատույտով հատում, անցնում է հինավուրց Կուսապատն ու շրջանցելով Սարսանգի հսկա ջրամբարը, տանում է դեպի Քյալբաջար, որը հայոց հինավուրց Սար իշխանության Քարավաճառ ավանն է (այժմ էլ մնացել են ջրաղացքարերի հին հանքատեղերը):

Ի. ՀԱԹԵՐՔ

Ամեն անգամ ճշտելով Բաֆֆու ուղերթը, հաճախ ինքս ինձ հարց էի տալիս. մի՞թե նշանավոր Հաթերքը չի գայթակղել մեծ գրողին: Հաթերքը Արցախ-Ղարաբաղի հնագույն բնակավայրերից է: Այստեղ էին նրատում վերին ևաչենի հզոր իշխանները, որոնք 12-րդ դարում իշխող դիրք ունեին ողջ ևաչենի նկատմամբ: Հայտնի է, որ 1184 թվականին Մխիթար Գոշը, 12-րդ դարի խոշորագույն մտածողներից մեկը, հայածվելով մահմեդականներից ու Աղվանից կաթողիկոս Ստեփաննոսի խարդավանքներից, ապաստան է գտնում Հաթերքի իշխանաց իշխան Վախտանգի մոտ: Այստեղ խոշորագույն իրավագետի ու պատմիչի աշխատանքի համար լավագույն պայմաններն են ստեղծվում, ու հենց այստեղ էլ ծնունդ են առնում նրա լավագույն աշխատությունները:

13-րդ դարից Հաթերքը կորցնում է իր իշխող դիրքն ու մտնում Սարի իշխողների (Գափյանների) տիրապետության ոլորտը: Մեկիսական շրջանում նա այն կարևոր դեր չունեւր ու հեռու էր վճռական իրադար-

ձությունների թատերաբեմից: Հավանաբար, հենց դա էլ հանդիսացել է Բաֆֆու այստեղ չգալու պատճառը: Ճանապարհորդը շտապում էր ավելի շատ նյութեր հավաքելու մելիքական ժամանակաշրջանի մասին, իսկ ավելի վաղնչական շրջանների համար նա ժամանակ չունեւր: Մի պատահական առիթով (Հաթերք մեկնող մեքենա հանդիպեց ինձ) Հաթերք մեկնելի, նպատակադրվելով այնտեղից Թարթառի հոսանքով վեր բարձրանալ ու հոչակավոր Դագի վանք հասնել, որը հին ժամանակներում նույն Հաթերքի տերերի հողեր կենտրոնն էր:

Սպիտակ կրաքարից կառուցված երկհարկ տները երբեմն հայտնվում էին աշնան գունեղանքներով զարդարված այգիների արանքից ու զարմանք պատճառում ինձ (չգիտեմ ինչու, ես ներկայիս Հաթերքը փոքրիկ ու խղճուկ գյուղ էի պատկերացնում):

— Սարսանգի հիպոհանգույցի կառուցման ժամանակ են ծնվել այս տները, — որսալով հայացքս, ասաց հաթերքցի ուղեկիցս: — Օտար քաղաքներում հաստատված, ամռան ամիսներին այստեղ հանգստանալու համար, գյուղում նոր առանձնատներ են կառուցում:

— Տները հիմա դատա՞րկ են:

— Մի մասը դատարկ է, իսկ մյուսներում դեռ ծերունիներ կան:

Մխախտի պլանտացիաները թեթությունների վրա կարծես ալիքավոր շուրջպար են բռնել գյուղի շուրջը: Այն խոր ձորում մրգատու այգիների էր վերածվում, ապա կրկին շարունակում իր ալեձև ընթացքը: Իսկ այդ ամենը շրջապատված էին դեպի հզոր լեռները տարածվող կուսական անտառներով: Մխախտի կանաչ տերևների արանքից երբեմն մի անզուսպ քրքիչ էր դուրս թռչում, զրնգոցով զարկվելով ապառաժներին, ցրվում դաշտով մեկ: Ժխախտ հավաքող կանայք շէին երևում բարձր ցողունների ու հսկա տերևների արանքում: Փորձեցի որսալ քրքիչին նախորդող խոսքերը: Հաթերքցիք հռչակված են իրենց պատմությամբ ու զվարճախոսություններով: Նրանց յուրահատուկ է նաև պարզ անմիջականությունը: Թեկուզ եզակի առիթներով շփվելով նրանց հետ, զգացել եմ բնավորության մեջ երևի դարերի ընթացքում ձևավորված բնական այն գծերը, որոնք հարևան գյուղերին չես կարող վերադրել:

Գյուղի շրջակայքում գտնվող հին հուշարձաններն էի զննում, երբ գյուղի կողմից պայթյունով մի մեղեգի դուրս պրծավ ու ձգվեց, հասավ Բերդաքար: Հինավուրց բերդից գյուղ իջնելուն զուգահեռ զուռնա-ամրալայի մեղեգին ավելի հստակ էր դառնում:

— Հինչա՞, հրսանեթյ ա՞ շնունձը, — դիմացից եկող ժպտաղեմ կնոջը դիմելով հարցրեց ուղեկիցս:

— Ը՛մ, չէ՛ մին չհա՛ հրսանեք, — պատասխանեց կինը, — մեր ժաննան ա հվաքալ շնիրքի պովնեն, նկրտումըն:

— Հա՛, — ասաց ուցեկիցս ու բացատրեց, որ Հայաստանի հնագիտութեան և ազգագրութեան ինստիտուտի աշխատակից, հաթերքիցի Ժաննա Խուրշուդյանը հավաքելով ավանդապահ գյուղի մեծահասակներին, արցախի ժողովրդական մշակույթի մասին հետազոտութեան չափը դրում է պատրաստում:

Գյուղի կենտրոնում անսովոր եռուզեռ էր: Նսրակառույց մշակույթի տան դիմացի հրապարակում տիրություն էր անում զուռնա-տմբլան: Բարձր լարի վրա Արշավիր Անտոնյանը շանախարար լարախաղացի իր հարուստ գինանոցն էր ցուցադրում: Կինոպերատորը կինոխցիկը մեկ դեպի բազմությունն էր ուղղում, մեկ դեպի լարախաղացը, ապա սրտնում ծաղրածուին, որն իր ճարպիկ և աշխույժ շարժումներով ու սրամտություններով շրջապատը լցնում էր ծիծաղով: Մշակույթի տան բակը ազգագրական ցուցահանդես էր հիշեցնում: Մտոի շիվերով հյուսած պատնեշների վրա էին փռել Հաթերքի ու Վաղուհասի գորգերն ու կարպետները: Ուշագրավ էին արցախյան հռչակավոր փշապագորգերն ու օձակարպետները: Անձրեն ու ցեխը ամենեին էլ չէին խանգարել 80 և ավելի տարիք ունեցող ծերերին Դրմբոն, ԿՏողոտ, Խունգութալա, Վաղուհաս, Մաղավուզ ու Հոռաթաղ գյուղերից, Մարտունու և Հաղրուբի հեռավոր շրջաններից հասնելու Հաթերք և ցուցադրելու դարերի խորքից սերնդեսերունդ փոխանցված ժողովրդական խոսքն ու զրույցը, երգերը, մեղեդիները, արհեստներն ու կենցաղը: Մշակույթի պալատ մտնելով, առաջին հայացքից թվաց, թե ինչ-որ հրաշքով միջնադարում եմ հայտնվել: Արխալուղներով, արծաթյա գոտիներով ու ճակատկալ զարդերով կանայք ողջագուրվում էին, քաղցր ու բարի խոսքեր փոխանակում: Մերունիները, հենված ձեռնափայտերին, հին իրադարձություններ էին վերհիշում: Դահլիճը միանգամից լցվեց զուռնա-գճուլի երաժշտությամբ: Ռեժիսոր Սեդա Մախլյանը կանչեց օպերատորին:

— Գրի՛գոր, Վեթ՛լյան, Ի՞նչ ես քարացել, նկարի՛ր, Ռոմի՛կ, Գևորգ՛յան, միացրո՛ւ մագնիտաֆոնը, շարժվեք: Վույ, ես կգժվեմ սրանց ձեռին, ամա՛ն...

Լուսարձակների առատ լույսերը լցվեցին կարպետներով ծածկված գահլիճը: 80-ամյա Ապրեսը իր կնոջը՝ Գյուլխասին, համողում էր պարել իր հետ: Պատավ կինը զարաբաղցուն յուրահատուկ աղջկական ամոթխածությամբ հրաժարվում էր պարել: Քիչ անց նա ևս իր ամուսնու կողքին էր: Գարերի շունչն իր մեջ ներառած ծանր ու զուսպ պարի մեջ զգացվում էր արցախյան հզոր ուժն ու խոր իմաստությունը: Հաղորդման հեղինակի՝

Ժաննա Խուրշուդյանի աշքերը լցվեցին հուզմունքից: Ինձ զարմացրեց այն ընդհանուր ոգևորությունը, որ տիրում էր այստեղ: Անմասնակից կամ անտարբեր մարդ չկար: Բոլորն էլ ապրում էին այս իրադարձությամբ, ամեն ինչով ձգտում օգնել նկարահանմանը, ի վերջո, աշխարհին ցուցադրելու իրենց ապուսպակերից ժառանգած արցախյան մշակույթը, ցույց տալու, որ հայ ժողովրդի այս անբաժանելի հատվածը ևս ամբողջականի մի մասը լինելով, միևնույն ժամանակ ունի իր յուրօրինակ հնչերանգը, արվեստը, վարժն ու բարբը: Ժաննան բակ դուրս եկավ ու սկսեց անհանգիստ հայացքով զննել մարդկանց: Նա կոճուղուցի զուռնա նվագող Բախշի Պողոսյանին ու մարտունեցի շվիահար Ռուդիկ Հայրապետյանին էր փնտրում: Համոզվելով, որ նրանք դեռ Հաթերք չեն հասել, տխուր հետ դարձավ:

Այս ամենը ազգագրական յուրօրինակ փառատոնի տպավորություն էր թողնում: Այն նաև անցած գնացածի, անհետացածի վերածննդի նշան էր: Լավ կլիներ, եթե մարդի կուլտուրայի աշխատողները այն ազգագրական ամենամյա փառատոնի վերածննդին:

Ինչքան կուզենայի, որ այս ամենին ականատես լիներ Բաֆֆին: Նրա ճանապարհորդության ժամանակ Մաղավուզ գյուղում պարող աղջիկները տեսնելով մորտքով ու ակնոցներով օտարականին, իսկույն այս-այն կողմ էին փախել, մեծ քաղաքացուն կարոտ թողնելով դարաբաղյան երգ ու պարին:

Դահլիճ մտավ հաթերքցի 100-ամյա ավանդասեր ու խոսքասեր հողագործ Մուխանը, իր 96-ամյա կնոջ՝ Սոֆի բիբու հետ: Մեկ դար ապրած ծերունին նստեց, ուղղվեց դեպի լույսերն ու կինոխցիկը, հանգիստ, հետազոտապետության մեկնարանի երկարամյա փորձ ունեցողի նման վրտահորն սկսեց իր առակների ու հեթիաթների շարքը: Նա պատմելիս ոգևորվում էր, ձեռքը թափով վեր պարզում: Մատները ճաքճաք ծառարմատներ էին հիշեցնում: Նա չէր կորցրել հաթերքցուն հատուկ նուրբ հումորի զգացողությունը: 15-ամյա մի պատանի ներս մտավ ու հեխհե գիմեց ժաննային:

— Մաշի հասին կյամ լի, — քիչ շունչ քաշեց, ապա շարունակեց, — ասում ա՛ մենակ օգում շքմ, թոռանս, կովիս, խնոցուս նհետ պիտի նկարվեմ:

— Ինչ արած, — ռեժիսորին դիմելով ասաց ժաննան, — ստիպված ենք ինքներս գնալ: Մաշի Պետրոսյանի մոտ: Առանց զարաբաղյան օրոցային հին երգերի հաղորդումը բանի նման չի լինի:

— Բա կենացասացե՞, — հարցրեց Սեդան:

— Հա, Վաղարշակ Հովհաննիսյանին կանչեք, կենաց ծառերն էլ բերեք: Արագ նկարենք ու գնանք:

Դադի վանք մեկնելու պատճառով չկարողացա ականատես լինել արցախ-զարաբաղյան այս յուրօրինակ ազգագրական փառատանի շարունակությանը: Ինձ հետաքրքրում էր նաև կենցաղային ծեսերի, հին, նույնիսկ հեթանոսական (նախաքրիստոնեական) ժամանակաշրջանից մնացած սովորութիւնների, օրինակ՝ «միշիխ» ցուցադրումը: Լեռնային գյուղերում դեռևս պահպանվել է այն հնագույն սովորութիւնը, երբ հարևանները համատեղ ուժերով օգնում են աղքատ կամ աշխատող ուժից զրկված ընտանիքներին:

Ու. ԴԱԴԻ ՎԱՆՔ

Տրտու-Քարթառի հովիտ...

Գետն այստեղ չի աղմկում, կարծես թե վախենում է արթնանան լեռները: Թվում է, թե ինչ-որ հրաշքով կամ շփոթմունքով երկնքի մի կտոր է իջել ցած, ապաստանել ձորում, և ահա ուր-որ է՝ վեր կաահի ու կմիանա Մոավին հենված հավերժական կամարին: Քարթառը սանձվել է, Սարսանգում ու Մատաղիսում ամբարվելով, ջրանցքներով ուղղվել զեպի պապակ դաշտեր, այգիներ: Մոավը ձյունածածկ սուր բաշը լեռների վրայից ձգում, վեր է ցցում, որ Սարսանգի հայելիի մեջ գեթ մեկ անգամ տեսնի իր պատկերը: Ահա Քարթառը իր տարերքի մեջ է: Ասես զգալով մոտալուս վտանգը, ավելի է կատաղում, ահազներեն խփվում ապառաժներին:

Արդեն երկու հազարամյակ է, ինչ լեռան փեշին ապաստանած Դադի վանքը ունկնդրում է Տրտու-Քարթառին, նրա մոնչյունի մեջ կարգում հավերժ լինելու գաղտնիքը: Իսկ գետի աջ ափին լեռան հարթ կատարից անթարթ, դեռևս անտեղյակ իրադարձութիւններին, վանքի անդորրն է փորձում հսկել Լեռնաբերդը:

Վանքի պատերին արված բազում արձանագրութիւնները վերակենդանացնելով 12 և 13-րդ դարերի դեպքերը, կարծես լրացնում են Քարթառի խուլ մոնչյունների մեջ կորչող ու խեղդվող բառերը, մեզ անմիջականորեն կապում անցյալի պատմական իրադարձութիւններին:

Պատմիչ Միքայել Ասորու վկայութիւնները վանքը հիմնվել է Քաղեսու առաջալի աշակերտներից մեկի՝ Դադիի հիշատակին, նրա գերեզմանի տեղում մեր թվարկութիւնի առաջին դարի երկրորդ կեսին: Այն պատմական Արցախի Մեծկվանք գավառի առաջնորդարանն էր: Վանքը ավերածութիւնների է ենթարկվել արաբական, ապա սելջուկյան արշավանք-

ների ժամանակ, հատկապես զորապետ Զուլի կողմից 1145 թվականին: Սակայն շատ ժամանակ շանցած այն վերականգնվում է: Միջնադարի մշակութի խոշորագույն գործիչ Մխիթար Գոշը, հյուրընկալվելով Վերին Խաչենի իշխանաց իշխան Վախտանգի տանը, նրա նահանգներն ու վանքը գտնում է բարգավաճած վիճակում: Հենց այս վանքում էլ մեծ մտածողը ստեղծում է իր հուշակավոր «Դատաստանագիրքը»: Վախտանգն ու իր հինգ եղբայրները հետագայում նրա համար կառուցում են Նոր Գետիկի վանքը:

Հինավուրց շինութիւնների ու հետագա կառույցների արանքում մինչև օրս իր գունային երանգներն ու ճարտարապետական ձևերը թարմութիւնով է պահպանել Կաթողիկեն՝ համալիրի ամենաշքեղ կառույցը: Տաճարը հիմնադրվել է 1214 թվականին Հաթիբբի մեծ իշխան Վախտանգի կողմից՝ Արզու-խաթունի կողմից, ի հիշատակ պատերազմներում նահատակված իր ամուսնու և զույգ որդիների: Կաթողիկեն գմբեթավոր սրահների տիպին պատկանող ընդարձակ կառույց է, որն ավարտվում է բազմանիստ թմբուկով ու սրածայր վեղարով: Գոշը ու սև որձաքարերը տեղական վարդագույն տուֆի հետ մի բազմերանգ գունաշխարհ են ստեղծել: Արևելյան ու հարավային պատերի նեղ լուսամուտների երկու կողմերում զույգ պատվիրատու իշխաններ են պատկերված, ձեռքերին՝ կաթողիկեի մանրաքանդակը: Հավանաբար, երկու տեղում էլ պատկերված է Վախտանգ իշխանը մեկ Հասան, մեկ Գրիգոր որդիների հետ: Զարդամոտիվների որակով առանձնանում է հյուսիսային շքամուտքը: Բուսական հյուսվածքներն ու կամարի ներսի եռանկյուն զարդանախշերը վկայում են քանդակագործի մեծ վարպետութիւնը և ներդաշնակ կապը ընդհանուր շինութիւն հետ: Հետաքրքիր է, որ հենց այստեղ էլ գտնում ենք քանդակագործի մասին «Նկարող սուրբ նշանացս զՊողոս զհիշեցեք» արձանագրութիւնը: Դադի վանքում արվեստի գլուխգործոց կարելի է համարել կաթողիկեի պատերին արված եզակի որմնանկարները: Ցավոք, նրանք մի քանի տասնամյակների ընթացքում խնամքի բացակայութիւն պատճառով փշացել են: Հյուսիսային պատին պատկերված է սուրբ Ստեփանոսի քարկոծման տեսարանը: Հարավային պատին նիկոլայ հրաշագործի հայտնութիւն տեսարանն է: Իր շքեղութիւնով առանձնանում է գմբեթը: Գրեթե շարունակ չեն խամրում կիսասյունների ֆոնին բուսական ներկերով արված շրջագծերը, որոնք յուրահատուկ երանգ են հաղորդում կառույցին: Դադի վանքի զարդը 1283 թվականին վանքի առաջնորդ Աթանասի պատվերով արցախցի Պողոս վարպետի կերտած զույգ խաչքարերն են: Սուրբաբար զարդաքանդակները բացառիկ են և լավագույն նմուշներից մեկը միջնադարի հայկական քանդակագործական

արվեստում: Ավանդութիւնն ասում է, որ վանքի զարգաբանդակները հինց Արզու-խաթունի ասեղնագործ ժանյակների կրկնօրինակներն են: Այսօր Քարթառի հովտի Հաթիրք և Վաղուհաս գյուղերում պահպանված բազմերանգ արցախյան գորգերն ու կարպետները այդ հրաշալի արվեստի շարունակութիւնն են: Կաթողիկէին կից են թաղակապ գավթով եկեղեցին ու սյունասրահը: Հուշարձանախմբի մեջ առանձնահատուկ տեղ ունեն միանավ եկեղեցին ու քառամույթ գավիթը, որը 1224 թվականին կառուցել է Վախտանգ Մեծի եղբայր Գրիգորիս կաթողագոսը:

Իսկ վանքի հարավային հատվածում գտնվող հուշարձանախումբը աշխարհիկ շինութիւնների համալիր է: Առանձին հետաքրքրութիւն են ներկայացնում դահլիճը, գրատունը, սեղանատունը, բնակելի և արտադրական շենքերը: Սրանք ինքնատիպ լինելուն զուգահեռ, ընդհանուր անամբ կրկնում են 12—13-րդ դարերում Հայաստանում ընդունված նույնանման ճարտարապետական հորինվածքները:

Դադիվանքը այսօր համարվում է 13-րդ դարի մի ինքնատիպ դպրոց, որտեղ ընդհանրացված են հայկական թե՛ պաշտամունքային և թե՛ աշխարհիկ ճարտարապետութիւն լավագույն ավանդույթները:

Վանքի պահակը, որը շրջակայքում փոված Վանք գյուղի բնակիչներից էր, ուշադիր հետևում էր ինձ:

— Կարողանո՞ւմ ես կարգալ այս գրերը, — զարմացած հարցրեց նա:

— Իհարկե, — պատասխանեցի ես:

— Տառերը հայերե՞ն են:

— Իսկ ուրիշ ի՞նչ լեզվով պետք է լինեին:

— Ձեզանից առաջ մի գիտնական՝ Գեյուշն ազգանունով, ասում էր՝ տառերը հայերեն են, իսկ իմաստը, լեզուն՝ աղվաներեն:

— Այդ ի՞նչ աղվաներեն է, որ ես այդքան լավ գիտեմ, — կատակով հարցրի ես:

— Կարո՞ղ եք կարգալ, թե ինչ է գրած այս պատին, — հարցրեց նա:

— Խնդրեմ, — ասացի ես, ու կարդացի՝ «ՇՆՈՐԶԻՎ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՍՏՈՅ ՀԱՎՈՒՐ ԵՎ ՄԻԱՄԵՒ ՈՐԴՈՅ ՆՈՐԱ ՅՈՒՄԻՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՎ ՊԱՐԳՏԱՎ ՄՄԵՆԱՍՈՒՐԲ ԼՈԳՈ. ԵՍ ԱՐՁՈՒԽԱԹՈՒՆՍ ՆՎԱՍ ԱՂԱԽԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԴՈՒՍՏՐ ՄԵՍԻ ԻՇԽԱՆԱՅ ԻՇԽԱՆԻՆ ՔՐԴԻՆ ԵՎ ԱՄՈՒՄԻՆ ՎԱԽՏԱՆԿԱ ՔԱԳԱՎՈՐԱԶՆՈ ՏԱՆ ՀԱԹԵՐՔՈ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՎԵՐԻՆ ԽԱԶԵՆՈ ՀՈՒՍՈՎ ՄԵՍԱՎ ՇԻՆՅՅԻ ԶՍՈՒՐԲ ԿԱԹՈՂԻԿՅՍ Ի ՏԵՐՈԶ...»: — Արձանագրութիւնը շատ էր մեծ, իսկ ազգութիւնը քուրդ պահակը ոչինչ չէր հասկանում իմ կարդացածից: Պատմեցի Կաթողիկէի կառուցող Արզուխաթունի մասին, որը հասարակական գործունեութիւնը զուգահեռ ասեղնագործութիւնը էր զբաղվում: Հաղպատի, Մակարավանքի, Դադի վանքի

համար նրա գործած վարազույրները Կիրակոս Գանձակեցիին համեմատում է բիբլիական նկարիչների՝ Բեսելիելի և Նդիարի գործերի հետ:

Տաճարի ու փոքրիկ եկեղեցու արանքում հիմքին մոտ փորած մի խոր փոս ցույց տվեցի պահակին:

— Ի՞նչ փոս է սա, — հարցրի ես:

— Գեյուշն է փորել տվել:

— Բայց այս ապառաժները ինչպե՞ս են քանդել:

— Չգիտեմ, Բայց կարծեմ գեղեցիկ շիրմաքար կար այտեղ:

Փոսը մոտ է հիմքին ու կարող է այս հուշարձան տաճարի փլուզման առիթ հանդիսանալ: Հետազայում Ամարասի դամբարանի ներսում տեսա հայոց Արևելից կողմանց առաջին կաթողագոս Գրիգորիսի (4-րդ դար) դուրս թափած մասունքները: Այստեղ ես ասացի, որ նույն «գիտնականն» է շիրիմը քանդել, իբր 4-րդ դարի մասին նյութեր գտնելու նպատակով:

— Ձեր գյուղացիք չե՞ն վնասում վանքը, — պահակին դիմելով հարցրի ես:

— Դե, գիտե՞ք ինչ, եթե թույլ տամ, մի օրում կքանդեն ու քարերը կտանեն: Շատերն են տներ կառուցում: Բայց, ասենք՝ տարան, վանքն էլ վերացավ, ինձ ո՞վ աշխատավարձ կտա, երբ պահակակեալը չլինի: Կրկնվեմ աշխատավարձից և վերջը Տեսնում ե՞ս, ինչ հեռատեսն եմ:

— Իրոք, — ասացի ես, — շատ հեռատեսն ես: Բայց այս տները, — ցույց տվեցի մոտիկ թաղամասը, — վանքի քարերով են կառուցվել, չէ՞, պատերի մեջ խաչեր կամ գրեր պարունակող սրբատաշ քարեր եմ տեսել:

— Դա առաջ էր՝ երբ պահակ չկար: Հիմա ինքս չեմ թողնում որ քանդեն:

Վանքի տարածքից երևում է Տրտուն՝ Քարթառը: Արդեն երկու հարամյակ է, ինչ նույն սարին բազմած Դադի վանքը ունկնդրում է Տրտուականի ձայնը: Վանքի պատերին թողնված տասնյակ արձանագրութիւնները վերակենդանացնելով 12—13-րդ դարերի դեպքերը, կարծես լրացնում են Քարթառի խուլ մոնչյունի մեջ կորչող ու խեղդվող բառերը, մեզ կապում անցյալի պատմական իրադարձութիւններին: Վանքը մի հին ավանդութիւնը կապվում է նաև Մեսրոպ Մաշտոցի անվան հետ, որն այստեղ ես դպրոց է հիմնել:

Բաֆֆին, պատմելով վանքի հետագա ճակատագրի մասին, գրում է, որ այն Շահ-Աբասի կողմից բռնի կերպով Պարսկաստան քշված հայերի փոխարեն այստեղ գաղթած մահմեդական քրդերի համար անասնազոմ էր ծառայում:

Անդնդախոր կիրճերից, սրագագաթ լեռներից ու բերդերից, հազարամյա վանքերից, կուսական անտառներից ու լեռնային գյուղերից հետո Մոսկի դանդաղորեն հանգչող ալիք-բլուրներից սկիզբ առնող Մարտակերտի հարթավայրը առաջին հայացքից խորթ ու անհետաքրքիր էր թվում: Մասվը հազիվ կարողացել էր ձյունածածկ սուր բաշը վեր ձգել ու ողորկ քաշալ սարի վրայով հետևել անծայրածիր դաշտավայրում կատարվող իրադարձություններին: Մանձվել է Մոսկի որդին՝ Տրտու-Յարթառը: Մոռացած Քուռին, երկու տեղ՝ Սարսանգում ու Մատաղխում, գետը փրփվում, ամբարվում է, հետո փոխում հազարավոր տարիների հունը, բետոնապատ ձիգ ու երկար ջրանցքներով թշուրջով հոսում դեպի տափաստան, լայնարձակ դաշտերն ու այգիները:

«Մարտակերտ գյուղում ես տեսնվեցա Միրզա ասու հետ. այդ իննսունամյա ծերունին Ղարաբաղում պատահած անցքերի կենդանի վկան է: Նա գիտե հայերեն, ռուսերեն և պարսկերեն, ուսել է Շուշի քաղաքում մի ժամանակ եղած գերմանացի միսիոներների մօտ. հետո Մեհտի խանի մոտ գրագրի պաշտոն է կատարել և այնուհետև երկար ծառայել է մելիք Վանիի մոտ որպես ֆարսուղար: Ցավում եմ, որ ես այդ մարդուն պատահեցա նրա ծերության այն տարիներում, երբ ուղեղը դադարում է առողջ գործունեությունից և երևակայության մեջ մնում են անցյալի ազդու ու խառնաշփոթ տպավորությունները միայն... Այնուամենայնիվ, նա ինձ պատմեց շատ բան...»

Մարտակերտ քաղաքում ինձ շահողվեց գտնել Միրզա ասու (սարի՝ գրագիր) նման մեկին, որը հետաքրքիր հուշեր պատմեց անցյալից: Շըրջում էի հին թաղամասում՝ Բաֆֆու այցելության ժամանակաշրջանի հետ կապող որևէ բան գտնելու հույսով (բուրդ տներն էլ դարասկզբի կառույցներ են), երբ մի երիտասարդ առաջարկեց՝ հետաքրքիր քար ցույց տալ: Այն ուղղակի փողոցի եզրին ընկած մեկ ու կես մետր բարձրությամբ ունեցող կուռք-արձան էր: Մի կին ասաց, որ իր մեխանիկատոր ամուսինն է քարը տալով բերել դաշտից: Մայթեզրին պատկած կուռքը իր կլոր ու շատ խոշոր աչքերով տարակուսած մեզ էր նայում: Այստեղից ոչ հեռու մեկ այլ բակում նման արձաններ էին թափված:

— Դաշտից բերել եմ այս քարերը, որ շարգեմ ու տուն կառուցեմ: Տեսնում եք կիսատ մնացած տունս,— ասաց դաշտից տուն վերադարձած մեխանիկատորը,— բայց կինս նախատեց ինձ՝ ուրիշի գերեզմանաքարի՞ց ես ուզում տուն կառուցել մեզ համար, նման տուն ես չեմ ուզում:

Այդպես էլ թողել եմ, շնայած, ինչքան խելքս կտրում է՝ սրանց աստված ուրիշ է եղել:

- Բայց նույնպես մարտակերտցի էին,— ասացի ես
- Քարերը ներքևի դաշտից եմ բերել: Այգի հիմնելու համար ակոս անելիս ենք բացել դամբանադաշտը: Քարերի մեծ մասը ձորն ենք լցրել: Իսկ գերեզմանները հսկա վիճափոր քարեր են:

ԻԳ. ՐԱՖՖՈՒ ՉԵՌԱԳԻՐԸ

«... Իշխանեցի բժիշկ Ա.—ի մոտ, որ ժամանակավոր կերպով բնակվում էր այդ գյուղում ամառը անցկացնելու նամար»:

Հիշեցի մոխրաթաղցի բանահավաք Ասատուր Բաբայանի պատմությունը Բաֆֆու անհետացած մի ձեռագրի մասին: Նա պատմում էր, որ Կուսապատում Ղասունց խնդրանքով, որոնց տանը իջևանել էր Բաֆֆին (Ղասունք նույն Աղասարյաններն են), հենց բժշկի խնդրանքով գրի է առնում նրանց տոհմի հետ կապված ողբերգությունը ու ձեռագիրը նվիրում բժշկին: Դա Անուշի, Սարոյի ու Մոսիի ողբերգությունն է: Ասատուրը ձեռագիրը պատահականորեն Կուսապատում է տեսել: Միմոնենց Նախշունը, 70-ամյա մի կին, ամեն օր ձեռագրի վերջից կամ սկզբից մի էջ էր պատռում ու կպցնում լամպի պատրույզը: Ասատուրը Բաֆֆու ձեռագրի մեջ տեսնում է Հովհաննես Թումանյանի անմահ պոեմի՝ «Անուշի» դարաբաղչան ակունքը:

— Որոշ տարբերություն կար սյունեի մեջ,— ասում էր Ասատուրը.— Անուշը իրականում կախվել էր և ոչ թե իրեն ձորը նետել: Գերեզմանաբարը հին Կուսապատի գերեզմանոցում է գտնվում: 1939 թվականին ձեռագիրը Ավետիք Իսահակյանին եմ ցույց ավելի: Մեծ բանաստեղծը հուզմունքով կարդաց ու պատվիրեց լավ պահպանել այն:

1941 թվականին ռազմաճակատ մեկնելուց առաջ Ասատուրը իր զբոսերը այդ ձեռագրի հետ լցնում է արկղի մեջ, տեղափոխում Մեծ Շեն՝ զոքանչի տուն: Արկղի վրա Ասատուրը գրել էր. «Այս արկղում է զբոսնելով իմ ամենամեծ գանձը: Խնդրում եմ ձեռք չտալ մինչև որդուս 20 տարեկան դառնալը»:

— Մլաճի տղա Սարգիսը մի օր գալիս է զոքանչիս տուն,— դառնությունը պատմում է Ասատուրը,— ես ռազմաճակատում էի այդ ժամանակ, դիմում է զոքանչիս, թե՛ Մարգուշ, Ասատուրը մի արկղ գիրք է բերել, ո՛ւր է Սա ցույց է տալիս արկղը: Սարգիսը կարգում է արկղի վրա «գանձի» մասին գրածս, ու հարցնում՝ ո՛ւր է դրա գանձը: Մարգուշը, թե՛ խաբար չեմ: Սարգիսը փորփորում է արկղը, հետո ասում՝ «Այս»

տեղ վտանգավոր գրքեր կան, Չարենց, Բաֆֆի... քեզ կմեղադրեն այս գրքերի համար: Եվ ի՞նչ, Մարգուշը արկղից հանում է Բաֆֆու ձեռագիրն ու Չարենցի գրքերը ու լուռ նետում թոնիրը... Պատերազմի ավարտից հետո Խաչակյանը կանչում է ինձ իր մոտ, թե՛ ս՛ր է, բեր Բաֆֆու ձեռագիրը, հիմա տպագրելու հնարավորություն կա Տխուր-տրտում պատմում եմ ձեռագրի ճակատագիրը:

Իմ այն հարցին, թե ինչպես է այդ պատմությունը հասել Հովհաննես Թումանյանին, Ասատուրը հայտնում է, որ կուսապատեցիների մի մասը, զբաղեցնելով Ղաստունց (Աղասարյանենց) տոհմի կեսը 19-րդ դարում տեղափոխվել են Լոռի՝ Շուշիի կողմերը, իրենց հետ տանելով և այս պատմությունը, որն էլ հիմք է ծառայել Թումանյանի անմահ պոեմի համար:

Ասատուր Բարսեղյանը ցույց է տալիս իր արխիվը: Նա Ղարաբաղում հազարավոր ջանգուլումներ էր հավաքել, որոնց մեծ մասը մինչ այժմ անհայտ են մեր բանահյուսությանը: Միայն զարմանք է առաջացնում, թե ինչո՞ւ է այս հարուստ գանձարանը մինչ այսօր անհայտ մնացել մեր գիտական աշխարհին: Միջնադարյան ժողովրդական պոեզիայի նման նմուշներ արդեն դժվար է գտնել, որովհետև ժամանակակից կյանքից արդեն վերացել է այդ կուլտուրան:

— Մոխրաթաղցի Շահնեհն էր մի իսկական հանրագիտարան էր, — ասում է 70-ամյա Ասատուրը, — հազարավոր ջանգուլումներ գիտեր: Մեծ մասը նրանից եմ գրի առել:

Բաֆֆին այս գյուղի անունը «Գյուլ-յաթաղ» է գրում: Բարբառում այն Կյուլյաթաղ է հնչում: Երբեմն այն կապում են «գյուլ» (վարդ) կամ «գայլ» բառերի հետ: Հավանական է հնդեվրոպական կուլ-կուլտ-կյուլ արմատի կապը: Մինչև օրս Ղարաբաղում հաճախ է օգտագործվում կյուլ-լիկապ (վայրի ձիերը հնագանգեցնելու համար հատուկ կապ) բառը: Այս գյուղից հեռու չէր արքունի ձիերի գործարանը, որը հինավուրց դարաբաղյան ցեղի դիմացկուն ձիեր էր բուծում ու մատակարարում ուսական զորքերին: Իսկ որ Ղարաբաղյան այսօրվա բարբառում շատ են հնդեվրոպական հինավուրց արմատները, ապացուցում է փիլիսոփայական գիտությունների դոկտոր Ալեքսանդր Մանասյանը:

Հանդիպեցի 80-ամյա Սերգեյ Մարգսյանին՝ բարձրահասակ, թիկնեղ մարդ էր: Հսկա ափի մեջ կարծես անհայտացավ ձեռքս:

Նստեցինք բակում շարված կոճղերին:

— Հին դեպքերից ի՞նչ պատմեմ: Եղբայրս՝ Սեդրակ Հակոբջանի Մարգսյանը, 1927—1930 թվականները Հայաստանում ղեկավար կարևոր պոստ է գրավել: 1920 թվականի մայիսին նա 11-րդ կարմիր բանակի

հետ Պարտավ հասավ: Ս. Մ. Կիրովի հանձնարարությամբ գյուղ է գալիս: Միրզանց Նիկոլայն էր պրիստավը: Շրջակա գյուղերի բեգերը, լսելով եղբորս մասին, հանդիպելու առաջարկություն են անում: Էսօրվա պես հիշում եմ, 10 հոգի եկան արծաթյա ղենքերը կապած, զուգված: Մի քարի հետևում թաքնված եղբայրս մատուցելու ուղղում է նրանց կողմն ու հրամայում ցած նետել ղենքերն ու ետ մոտենալ: «Ի՞նչ է լինելու մեր հայր», — հարցնում է Մուսայել բեգը: «Կարո՞ղ եք յուրաքանչյուրը 20-ական կով, 100-ական ոչխար, ցորեն տալ մեր բանակին», — հարցնում է եղբայրս: Բեգերը թե՛ այո, միայն թե մեզ չկոտորեն: Եղբայրս թե՛ «թուղթ կտամ, կտանեք այդ ամենը Պարտավ, ու ձեզ ոչ ոք ձեռք չի տա»: Իրոք, երկու օր հետո երեք սայլ ցորենով բեռնած, կարմիր զորոշներով, 200 կովերի ու 2 հազար ոչխարի հոտով բեգերը գնում են Պարտավ, ներկայանում Ս. Կիրովին:

— Բեգերին ազատ արձակեցի՞ն, — հարցրի ես:

— Հա, մինչև 1930 թվականը նրանք ազատ էին: Բայց կոլեկտիվացման ժամանակ նրանց չխնայեցին:

— Իսկ եղբայրդ ի՞նչ էր անում 11-րդ բանակում:

— 1918 թվականին Ստեփան Շահումյանը եղբորս՝ Սեդրակին հատուկ հանձնարարությամբ Կենտրոն է ուղարկում: Նրան նշանակում են 11-րդ բանակի Երկաթե դիվիզիայի կոմիսար: Հետագայում, երբ գրավում են Գանձակը, Կիրովը եղբորս առաջարկում է խորհուրդներ ստեղծել երկրամասում:

Կյուլյաթաղում են գտնվում հույ սոցալազարական պայքարի նկատմամբ թշնամական դիրք բռնած Մելիք-Ալավերդյանների ամրոցի փլատակները:

Շրջակա անտառում կարելի է տանյակ հուշարձանների հանդիպել, որոնք տեսել և ուսումնասիրել է Բաֆֆին: Գյուլից 4 կմ հեռավորության վրա անտառում հին շինատեղն է: Հին հուշարձաններից է Կոտրած եղցին, Իրիցի խրմբհատը (խամը հատած տեղ), Սառնաղբյուրի գերեզմանները, Խաչին յալը:

Հարցնում եմ Մեհմանյանի պղնձի և արծաթախառն արձնի հանքավայրի մասին, որը նահապետական պրիմիտիվ ձևով արդյունահանում էին հույն վարպետները: Հենց այս հանքը նկատի ունենալով է, որ Ղարաբաղում Պետրոս Մեծի պատվիրակ Իվան Կարապետը իր ղեկուցագրերից մեկում գրում է՝ «էս երկրում առճճի մաղան շատ կայ, յենց մաղան կայ, որ յեփ խալես կես վե կես դուրս է ջե գոյ...»: Կիրճում այժմ իր հետազոտական աշխատանքներն է սկսել երկրաբանական արշավախումբը, որը հին հանքավայրերից բացի պղնձի ու արճճի նոր երակներ է որոնում:

«Այստեղից գեացի հաչեն՝ Հասան-Ջալալյան իշխանների զարևոր բնակավայրը: Տեսա Գանձասարի հուշակավոր վանքը— Աղվանից կաթողիկոսների վեհաբանք, որը վերջին ժամանակներում դարձավ Ղաթարաղի մեկիսենների գաղտնի ժողովների խառնրդատունը»:

Հեռվից, զեռ դյուր շհասած երևում էր վանքը: Զննում եմ շրջապատը: Ինչ խոսք, որ Բաֆֆին տեսնելով գետի հոսքը, անտառապատ լեռները, բարձրաբերձ Կաշաղակաբերդն ու Խոխանարբողը, մտածել է, որ հենց գրանց միջոցով էլ հաղորդակցվում է հայ մեծ իշխանների, և ամենից սուտջ՝ Խաչենի հղոր տիրակալ Ջալալի հետ, որը նուրբ դիվանագիտության շնորհիվ կարողացավ երկրամասը փրկել մոնղոլների ավերածություններից, հեաագայում էլ միջնորդ հանդիսացավ Կրիկիայի Հեթում թագավորի ու մոնղոլ-թաթարների միջև չհարձակման և փոխօգնության դաշինք կնքելուն: Նրա հայրենասիրության և հզորության վկայությունը ոչ միայն ամուր բերդերն են, այլև գեղեցկագույն Գանձասարը:

Հավանաբար, գիտատեխնիկական հեղաշրջման դարում երևի թիշ տեղեր են մնացել, սր անաղարտորեն սրահակնված լինի մանրածախ առևտրի նահապետական՝ փոխանակման ձևը: Այս տեսանկյունից եզակի են Վանք դյուղի արհեստանոցները, որոնք մի երկար շարքով ձգվել են գեպի յայլազներ տանող ճանապարհի երկայնքով: Մի անգ զարբինները պայտ են կտում, կողքին՝ հատուկ հարմարանքի վրա ձիեր կամ ավանակներ կապում ու պայտում, մյուս տեղում կլայելում են, զուգահեռաբար նախարական նախշաղարդ ու լարապատ կոպալ (մի ծայրը կեռ ու կյոր գավազան) առաջարկում: Եվ այդ ամենը փոխանակում են ուշխարի, բրդի, այլ մթերքների հետ: Նույնիսկ թվում է, թե փողն այստեղ ոչ մի դեր չի էլ կարող խաղալ: Իրոք, այս արհեստանոցները Գանձասարի այցելուին միանգամից տեղափոխում են միջնադար, նախապատրաստում 13-րդ դարի մասունքների հետ հանդիպմանը: Հենց այստեղ ջահելների խումբը շրջապատել էր հարյուրամյա մի ծերունու Զրուցեցի Մևրոպ պապի հետ, ու թվաց զգում եմ Բաֆֆու ժամանակաշրջանի շունչը: Նա պատմում էր սուս-թուրքական պատերազմի մասին, որի մասնակիցն էր, ափսոսանքով էր հիշում Ղարսի բերդը հանձնելու հանդամանքները, պատմում կոտորածների, Սարդարապատում տարած հաղթանակի հետ կապված անցքերը: Մի երիտասարդ պատմեց, որ մեջքից կորացած ծերունին մի ժամանակ դյուղի ամենատուժեղ և քաջ մարդն էր, միայնակ մի գավազանով 15 ուղազակների է հաղթել: Զեռքս մտերմա-

բար հպեցի ծերունու շոր, ոսկրոս ուսին: Եվ կրկին թվաց, թե անսխալանորեն առնչվում եմ Բաֆֆու հետ:

Երկար գրուցեցինք, նրա խոսքերում և՛ ափսոսանք կար, և՛ համակերպում ճակատագրի հետ:

Գանձասարի վանքը մեկ հայտնվում է ծառերի, ժայռերի տրանքում, մեկ կորչում նրանց հետևում: Տաճարի կողքին կղմինդրյա ծածկով կառույց էր հայտնվել: Դժվար էր միանգամից բնականալ այս նորոյթին, մանավանդ որ կղմինդրի վառ զույնը շեղում էր դիտողի ուշադրությունը տաճարից: Ուղեկիցս երբեմն անհետանում էր, ինձ թողնում իմ մտքերի հետ:

— Ո՞ր ես անհետանում,— հարցրի ես:

— Մորու լավ ժամանակն է,— տասց նա,— էս կողմերում լավ մտքի կա:

Ուշադիր նայում եմ ճանապարհի եզրի կանաչին, որի մեջ նշմարվում են կարմիր պտուղները: Ուղեկիցս ծառի փշակի վրա քար դրեց:

— Ինչո՞ւ ես դնում:

— Դու էլ դիր,— ասաց նա: Կաղնու փշակը ծանրաբեռնված էր քարի բեկորներով:— Կա հին ժամանակներից մնացած սովորություն է: Քարի հետ համբերատար ծառին ենք հանձնում մեր հոգսերը, հարազատների հիվանդությունները:

Հավանաբար, այս հինավուրց ծեսը ևս պետք է վկայի, որ վանքի տեղում հեթանոսական շրջանի տաճար է եղել:

Պարսպի մյուս կողմից բարձրաձայն խոսակցություն ու մուրճի հարվածների ձայներ էին լսվում: Շինարարները զարոցի վերակառուցումը ավարտելուց հետո սկսել են պարսպի վերանորոգման աշխատանքները:

Փայտաշեն դարպասը ճառալով հետ է գնում, ու մեր առջև հանում է հռչակավոր վանական համայնքը: Գանձասար... Թվաց, թե ես այս անգամ պատրաստ չեմ այս հանդիպմանը: Հանդիպում 800 տարի առաջ ապրած, ստեղծագործած ճարտարապետի, քանդակագործի հետ, պատրաստ լինել զրուցելու նրանց հետ, լսել ու հասկանալ նրանց... Իսկ բարերը անվերջորեն պատմում են: Տաճարի կառուցողական արվեստի, քանդակների մեջ տեսնում ենք իշխանաց իշխանի ճաշակն ու խորթափանց իմաստությունը: Հավանաբար, նրա ձեռվորման մեջ կարևոր դեր ունեցրել է Սարգիս ամիրսպասալարի քույր Խորիշահը, որը իր որդուն դաստիարակել էր հայրենասիրական ոգով, սովորեցրել հայոց գրերը, պատմությունը, պատմել Անի քաղաքի, նրա հաղար ու մի տաճարների մասին:

1240 թվականի հուլիսի 22-ին նորակառույց վանքի օծման արարողությունը ականառես հայ մեծ պատմիչ Կիրակոս Գանձակեցին այն

անվանում է Երկնամասն տաճար փառացն աստուծոյն: Ըարտարապետութեան պատմարան Յակոբսոնը գրում է՝ «Էփիրատ այն կարող ենք անվանել 13-րդ դարի հայկական ճարտարապետութեան հանրագիտարանը»: Աշխարհահռչակ բյուզանդացի Շարլ Դիլը Գանձասարի այս կոթողը դասում է հայկական միջնադարի այն հինգ նշանավոր կառուցյանների շարքում, որոնք մտել են համաշխարհային մշակույթի ոսկե ֆոնդի մեջ: Ծածարն ու դավիթը առանձնանում են բարձրարժանքակների առատութեամբ: Պատերին արված շուրջ 200 արձանագրութունները հայ պատմագիրների ուսումնասիրութունների համար հարուստ նյութ են ծառայում: Միջնադարյան Արցախում այսպիսի մի ավանդույթ կար. ունեւոր մարդիկ վանքից գնում էին պատի տվյալ հատվածում գրելու իրավունքն ու արձանագրում իրենց բարեգործութուններն ու նվիրատվութունները: Գանձասարի քանդակները հայկական միջնադարյան քանդակագործական արվեստի մի ուրույն ճյուղավորութուններից են: Այն եւս քանդակագործական գուտ արցախյան դպրոցի գոյութեան վառ արտահայտութունն է: Բազում տապանաքարերին, խաչքարերին ու այլ հուշարձաններին արված ուրիշների մեջ նս թաքնված են այդ դպրոցի արձանները: Հասան-Ջալալի որդին է հիմնել դավիթը: Այստեղ էին հավաքվում լուծելու ոչ միայն եկեղեցական, այլև քաղաքական ու հասարակական հրատապ հարցեր: Այս իմաստով էլ հենց Գանձասարի վանքին վիճակված էր խոշոր դեր խաղալ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարում: Գանձասարի Պետրոս կաթողիկոսը դեռևս 1672 թվականին նամակ է ուղարկել ուսուց թագավոր Ալեքսեյ Միխայլովիչին, որով խնդրում էր օգնել բռնակալների ճիրաններում տառապող հայ ազգին: Դա Հայաստանից ուսուց արքունիք գնացած առաջին գիրն էր: 1701 թվականի գարնանը այստեղ դումարվում է Ղարաբաղի հինգ մելիքների զաղտնի խորհրդակցութունը: Մելիքները Եսայի-Հասան Ջալալյան կաթողիկոսի ղեկավարութեամբ որոշում են պարսից ու օսմանյան բռնակալներից երկիրը ազատագրելու համար դիմել Պետրոս Առաջինի ու ռուս ժողովրդի օգնութեանը:

Գանձասարի անկրկնելի պատկերաքանդակները, զարդամոտիվներն ու բազմաթիվ արձանագրութունները գնեկիս հանկարծ հիշեցի մի հաթերքցու պատմած առակը: Մի օտարական, որի հայրն, անշուշտ, մոլի մահմեդական պետք է լիներ, գալիս է Ղարաբաղ ու հայտարարում՝ «Դուք հայ չեք, ձեր հայրերն ու մայրերը, բոլոր նախնիները, ինչպես և դուք, «ալթան» եք, Ղարաբաղի վանքերը, եկեղեցիները «ալթանական» են, ուրեմն և երկիրը «Ալթանիա» է»: «Բայց մենք հայեր ենք, մեր երկիրն էլ Հայաստան»,— ասում են մարդիկ: «Դա նշանակութուն չունի,— ասում

է այդ օտար մարդը,— մենք ձեզ այսօր «ալթան» ենք կնքում և վերջը Մոսացիք, մոսացիք հայ լինելու մասին...»:

Ո՞վ կարող էր լինել այդ օտարականը, հարցնում են ինքս ինձ, չնայած գիտեմ, որ առակը կոնկրետ մարդու մասին չէ: Ես Բաթթու օրինակով գրքեր էի վերցրել ինձ հետ, որոնք ազատ ժամերին կարդում էի: Մ. Խորենացու, Մ. Կաղանկատվացու, Կ. Գանձակեցու, Բաթթու, Ստ. Ջալալյանցի, Մ. Բարխուդարյանցի, Ե. Ալալյանի, Մ. Բարխուդարյանի ու Բ. Ուլուբաբյանի հայ ժողովրդի արևելյան այս հատվածի պատմութունն ու մշակույթը ուսումնասիրող գրքերից բացի, ինձ հետ էի վերցրել նաև Գ. Ա. Ախունդովի «Ազրբեջանի հին և վաղ միջնադարի քրիստոնեական հուշարձանները», Ռ. Գնյուշևի «Քրիստոնեութունը Կովկասյան Ալթանիայում» գրքերն ու Գ. Ա. և Մ. Գ. Ախունդովների «Աղվանքի վանքերի ու հուշարձանների վրա գրոշմված ժխական սիմվոլիկան ու աշխարհի պատկերը» բրոշյուրը, որոնք, սակայն, չէի հասցրել կարգալու Քոչ խոսք, որ հենց Գանձասարի վանական համալիրում դրանք կարգալը ընկալվան անմիջական իրավիճակ է ստեղծում: Կարծես թե քարերն էլ մի առանձին ցավ են զգում նրանց գրածներից: Այո, մի նոր եզրեն է սկսվել: Մորթում են հազարամյակներով ստեղծած մշակույթը, պատմութունը: Ահա թե ովքեր կարող էին լինել հաթերքցու պատմած առակի հերոսները: Ախունդովները ամեն ինչ կամայականորեն «աղվանական» են հայտարարում: Նրանք, արհամարհելով հայ և օտար պատմագիրների վկայութունները, բուն Աղվանքի սահմանների մեջ են ներառում հայոց Արցախը, Ռուսիքը, Սյունիքն ու նախիջևները: Միջնադարյան Հայաստանի մշակույթը, ներառյալ և արվեստը կամայականորեն աղվանական են համարում, մոռանալով, որ Մ. Կաղանկատվացին խոսելով Աղվանքի մասին, նկարագրում է հենց հայ ժողովրդի հյուսիսարևելյան հատվածի պատմութունը: Գանձասարի վանքի բարձրարժան գանդները արհեստականորեն և առանց հիմքի կապելով իրանական Միհր աստծո պաշտամունքի հետ (մ. թ. ա. 5—4-րդ դարեր), ազգային նույնացնում են աղվանականի հետ, իսկ վերջում մեկնաբանում արքեպիսկոպոս աղբրեջանական արվեստի հուշարձանները Մանի ավազանում Գանձագորանն ու Մոզակում գտնված Մարդուր 2-րդի (մ. թ. ա. 764—735 թթ.) արձանագրութուններում խոսելով Ռարանիումի (Արցախ) և էթիոպի (Ռուսիք) երկրների նվաճման մասին, ոչ մի խոսք չի ասում Ալթանիա երկրի մասին: Հռոմ-հռոմեական հեղինակները միշտ էլ կովկասյան Ալթանիայի ու Հայաստանի միջև սահման են անաչել: Քուր գետը: Իսկ պատմահայր Մովսես Խորենացին ընդգծում է, որ Մեծ Հայքի հիմնադիր Ղարաբաղի թագավորը (մ. թ. ա. 2-րդ դարի առաջին կես) իր երկրի

սահման է գծել «գեղերը հայկական խոսիցս», այսինքն, հայոց լեզվի տարածման եզերքներով: Վաղարշակ Թագավորը հայոց հյուսիս-արևելյան շրջանների կուսակալ է կարգում Սիսական տոհմի ժառանգ Առանին: Դրանից 150 տարի հետո Քուռի ձախ ափին բազմալեզու 26 ցեղերը միավորվում են Ալբանիա պետության մեջ: Սակայն 387 թ. այն կորցնում է իր ինքնուրույնությունն ու հայոց Արցախ, Ուտիք և Քուռից Հյուսիս գտնվող Կամբեճան նահանգների հետ միասին Իրանին ենթակա մի մարզպանության մեջ ընդգրկվում: Մարզը ավելի խոշոր միավոր Ալբանիայի անունով էր կոչվում: Հենց դա էր պատճառը, որ շուրջ 80 տարի հետո Մ. Խորենացին Արցախի կամ Ուտիքի մասին խոսելիս որպես հայոց Աղվանք էր ընդգծում, Քուռից հյուսիս գտնվող երկիրը անվանելով Բուն Աղվանք: 5-րդ դարի վերջերին հայոց Աղվանքում ստեղծվեց Թագավորություն այս երկրամասի հայոց առաջին կուսակալ Առանից սերված տոհմի ժառանգ Վաշագան Բարեպաշտի գլխավորությամբ: Դա Մեծ Հայքի Թագավորության անկումից հետո նրա տարածքում գոյացած վարչաքաղաքական առաջին ինքնուրույն կազմակերպությունն էր: Իսկ Անդրբոտլյան Ալբանիայում (հին հայկական աղբյուրներում՝ Բուն Աղվանք) երկիրը մասնատվեց բազմաթիվ 14 ցեղային միավորների: Այստեղ, ընայած շուրջ 300 տարի գոյություն անկցած Թագավորության, ցեղերը այդպես էլ չմիավորվեցին և ընդհանուր էթնիկական միավոր չկազմեցին: Նույնիսկ Մեսրոպ Մաշտոցի կողմից զարգացրեցին զենստեղծելու փորձը շոգնեց նրանց միավորելուն: Մարզպանության տարիներին հայոց Աղվանքում հիմնվում է էջմիածնից կախյալ Աղվանից կաթողիկոսություն:

Սակայն հայ քարոզիչներին մեծ դժվարություններ ու գոհերի գնով է հաջողվում տարածել քրիստոնեությունն ու այն ընդգրկել նորաստեղծ կաթողիկոսության ոլորտում: 706 թ. արաբական իշխանության հաստատումից ի վեր Աղվանք անունը որպես քաղաքական կամ պետական միավոր գոյություն չունի: Այն գործածվում էր հայերի կողմից որպես երկրամասի եկեղեցական թեմի անուն և շնորհիվ կաթողիկոսության, պահպանում էր աշխարհագրական տերիտորիալ հասկացությունը: Ուշ միջնադարում օղուկ-թուրքերի Իրանից դեպի հյուսիս գաղթից հետո անդրբոտլյան Ալբանիայի հարթավայրային հատվածը Շիրվան է կոչվում, իսկ լեռնային մասի համար եկվորները երկրի հին անունը (Ալբանիա՝ լեռների երկիր) Թարգմանեցին իրենց լեզվով և կոչեցին Դաղստան: Քուռից հարավ ապրող, իրենց կրոնը, լեզուն, մշակույթն ունեցող բնիկ ժողովրդի՝ հայերի մեծամասնության համար նվաճող ցեղերից պաշտպանվելու միակ միջոցը Արցախի անմատչելի լեռներ քաշվելն էր: Ինչ վերա-

բերում է երկրամասի Արցախ անվանը, ապա որոշ «գիտնականներ» իզուր են փորձում դրան մոտ հնչող աղբբեջանական (թուրքական) բուներ որոնել: Հայտնի է, որ հին Հայքում (ինչպես և այսօր) շատ տեղանուններ, բառեր ԱՐ-ով են սկսվում, օրինակ՝ ԱՐմենիա, ԱՐարատ, ԱՐագած, ԱՐա լեռ, ԱՐև, ԱՅՐուժի և այլն, այնպես, որ Հայքի կազմի մեջ մտնող այս երկրամասի համար ԱՐ-ով սկսվելը պատահական երևույթ է: Իսկ ԱՐ-ը, ըստ Աճառյանի ԱՅՐ-ի կրճատ ձևն է, որը նշանակում է տղամարդ, արու մարդ: Հեթանոսական Արցախում արու մարդը պաշտամունքի առարկա էր: Դրա աղացույցներից էր հին Տիգրանակերտի մոտ գտնված երեք մետրանոց հսկա Ֆալսոը, որին մինչև վերջերս էլ լքեր կանայք երկրպագելու էին գնում: Գերեզմանոցներում միայն աղամարդկանց շիրիմներին էին հուշարձան կանգնեցնում, Իսկ երկրի անվան երկրորդ մասը՝ ՅԱև-ը, ըստ երևույթին ՅՆՂ բառի առաջնային ձևն է: Ղարաբաղյան բարբառի որոշ ենթաբարբառներում պահպանվել է ՅԱՂ ձևը: Այսպիսով՝ ԱՐՅԱևԸ՝ ԱՐՅԵՂՆ է, արանց ցեղ (Արան Հայկ նահապետի որդիներից մեկի անունն է), հավանաբար և արմենների նախահայրենիքը:

Բայց ահա Ախունդովները, իբր խաչքարերի կամ Գանձասարի վանքի զարդապատկերներից էլնելով, ամեն ինչ որպես աղբբեջանական արվեստի հուշարձաններ են մեկնաբանում, թեև այդ խաչքարերի կամ վանքի զարդամտիվների բուսական հարդարանքը (երկրաշափակների հետ զուգակցված) հենց հայկական արվեստին է յուրահատուկ, իսկ Ատրպատականի (Աղբբեջանի) զարդանախշը մինչև 15-րդ դարը զուտ երկրաշափական էր:

«Անհասկանալի է, թե հեղինակների (Ախունդովների—Բ. Կ.) ինչի՞ն էր պետք հայկական միջնադարյան դեկորատիվ արվեստի իմաստային ու գեղարվեստական բովանդակության աղավաղումը, թեթև ու անմիտ կերպով «կցելով» այն ժամակակ արդեն գոյություն չունեցող Ալբանիայի (իսկ հեղինակների հասկացությամբ՝ Աղբբեջանի) արվեստին,— Կ. Ա. և Մ. Գ. Ախունդովների կամայական հողվածին պատասխան «Գանձասարի վանքը և խաչքարերը, փաստեր և հերյուրանքներ» հողվածում գրում է լենինգրադցի մեծահուշակ գիտնական, պատմական գիտությունների դոկտոր Ա. Լ. Յակոբսոնը:— «Ափսոսանքով խոստովանում ենք, որ Ախունդովների հողվածը թե՛ իմաստով և թե՛ ոգով ժայրահեղ տեղեկեցիկ է: Նման հողվածները, իմ կարծիքով,— ավելացնում է լենինգրադցի գիտնականը,— կարող են միայն ապակողմնորոշել ընթերցողներին»: Ախունդովները հայկական բոլոր խաչքարերը, որ գարում և պատմական Հայաստանի որ անկյունում էլ ստեղծված լինեն, ալբա-

նական-ազդերեղանական են հայտարարում, կպցնելով «խաշղաշ» անու- նր: Քե ուշ միջնադարում մահմեդական ազդերեղանցիները ինչպես և երբ են մոտացել իսլամի օրենքներն ու քրիստոնյա դարձել ու իրենց թույլ ավել իսլամի կողմից անիծված «խաշ» բառն օգտագործել, անհայտ է բոլորին: Սակայն ահա Ռ. Գեյուշը գրալով իր գործընկերների «սխալը», արագորեն «ուզողում» է այն, «խաշղաշի» փոխարեն հորինելով «ելիշան- դաշ» բառը: Հավանաբար, վաղը մեկ այլ բառ կփորձեն կպցնել մեր ար- վեստին, քանի ղեռ ախունդովների ու գեյուշների մտայածին մեկնաբա- նությունները ղեռնս կենսունակ են: Գ. և Մ. Ախունդովները Գանձա- սարի տաճարի թմբուկի նիստերին էլ են «ձեռք մեկնում», զարդապատ- կերները փորձելով կրկին Միհրի պաշտամունքի հետ կապել: Թմբուկի 16 նիստերին պատկերաքանդակները միջնադարի հայ քանդակագործ- ները այնպես են տեղադրել, որ դրանք արտահայտեն աստծո կառքի իմաստը, այն է՝ քառադեմ շորս կենդանիների՝ մարդ-անյուծ-եզ-արծիվ հասկացություն մեջ դնելով անվերջ-անվախճանի գաղափարը: Նիստերի բոլոր պատկերաքանդակներն ու զարդապատկերները ցողունների միջը- ցով արտահայտում են նաև կենաց ծառի իմաստը: Բուսական անսկիզբ ու անվերջ հյուսվածքները արտահայտում են հարստեման գաղափարը: Պատկերները միևնույն ժամանակ շորս ավետարանիչների նշաններն են: Իսկ խաչը ինքը՝ Քրիստոսն է, հովհարածե վեղարը՝ նրա ճառագայթները: Այնպես որ, պարսկական Միհրի պաշտամունքն (մ. թ. ա. 5—4-րդ դար) այստեղ որևէ գործ ունենալ չէր կարող, և ինչպես Ա. Լ. Յակոբսոնն է նշում՝ «Հայաստանի այս ողջ «այբսնիզացիան» մտացածին է ու ոչ մի կերպ և ոչնչով չի հիմնավորված»:

Թմբուկի երկու նիստերի վրա ծնկաշոք աղոթողներ են պատկերված՝ ձեռքերը կրծքի ուղղությամբ վեր պարզած: Հիշեցի մարտակերտյան նախաուրարտական շրջանի մահարձանները: Թվաց, թե նրանք վաղ եր- կաթե դարաշրջանից ինչ-որ հրաշքով հայտնվել են միջնադարում ու նույն հայացքով մեղ են նայում: Ավելի քան երկու հազար տարի էր ան- ցել, իսկ հայ ժողովուրդը պատմական դաժան թոհուրոհների միջով անց- նում, պահպանում է իր արվեստը, իր աշխարհընկալումը:

Կիրակոս Գանձակեցին «Հայոց պատմություն» գրքում Հասան-Ջա- լալին ներկայացնում է որպես բարեպաշտ, հեզ ու հանգիստ, ողորմած ու աղքատասեր, անապատականների նման աղոթքների ու աղաչանքների մեջ ճգնող, ուսումնասեր: Մոր՝ Խորիշահի մասին գրում է, որ ամուսնու՝ վախտանգ իշխանի մահից հետո գնում է Երուսաղեմ, ճգնությամբ անց- կացնում իր օրերը: Նա իր նրբահյուս ձեռագործով էր հոգում իր ապ- րուստը:

Հեռվից երևում է Խոխանաբերդը: Պատկերացնում եմ մոնղոլ զո- րապետ Բորա նոյինի զորաբանակով շրջապատված Խոխանաբերդը: Բո- լոր տեսակի բերդեր, ամրոցներ տեսած ու խորտակած մոնղոլական բա- նակը երկյուղեց անմատչելի բերդի տեսքից: Սակայն նրանք այն նվա- ճելու ձևն էլ գիտեն: Պաշարումը այնքան են երկարաձգում, մինչև բերդի պաշտպանները սպառեն բոլոր պաշարներն ու սովամահ լինեն: Ըստ ավանդության, նման ճակատագիր էր վիճակվել այս բերդի դիմաց գտնվող Կաշաղակաբերդի պաշտպաններին: Քշնամին երկար պաշարու- մից հետո անմատչելի բերդի հարթակում միայն գիակներ էր գտել: Իսկ ահա այստեղ Բորա նոյինը Հասան-Ջալալի գեղեցկուհի աղջկան՝ Ռու- զանին է պահանջում: Մինչև օրս շրջակա գյուղերում պատմվում է Ռու- զանի՝ հանուն հայրենիքի անձնազոհության մասին դրույցներն ու ավան- դությունները: Մուրացանը դրանց հիման վրա էլ գրում է «Ռուզան» պատմական դրաման: Իշխանի դուստրը կնություն է գնում ատելի մոն- ղուլին, դրանով իսկ կործանումից փրկում հայրենի երկիրը: Արցախի տիրոջը պարտավորեցնում են մասնակցելու մոնղոլների արշավանքնե- րին: Հենց Կիլիկիայի մատույցներում Հասան-Ջալալը, որը միշտ կապեր էր պահպանում հայկական այդ պետության թագավորական տան հետ ու նրա հետ Մեծ Հայքը վերականգնելու ծրագրեր մշակում, նուրբ գիվա- նագիտությամբ միջնորդ է դառնում Հեթում թագավորի ու մոնղոլների միջև փոխշարժակման և փոխօգնության դաշնագիր կազմելուն, դրա- նով իսկ փրկում հայկական այս պետությունը կործանումից: Սակայն Բուզա զորապետն ու Արղու ոստիկանը 1251 թվականին նեղում են Ար- ցախի իշխանին, քանդում նրա բերդերը, ծանր հարկ դնում վրան: Նրան շօգնեց նաև Ղարաղորում՝ Մանգու խանի օգնությանը դիմելը: 1261 թվականին Արղուն սպանել է տալիս մեծ հայրենասերին:

Կիրակոս Գանձակեցին, որը ականատես էր մոնղոլների ավերիչ ասպատակություններին ու գերի էր ընկել, ապա փախել դիրությունից, այսպես է նկարագրում երկրի վիճակը. «... Երկիրը թափուր դարձավ իր բնակիչներից, իսկ նրա վրա օտար որդիներ էին շրջում: Ընկածների բազմությունից հողը ծածկվեց, իսկ արյունը առու կազմած ջրի նման հոսում էր: Ոսկորները երկար ժամանակ անց քարակույտերի նման դիզ- ված երևում էին...»

Անցնելով Խաչենագետը, հայտնվում ենք փարթամ բուսածածկի թա- գավորությունում, որը ղոժվարացնում էր ղեպի Հասան-Ջալալի ապա- րանքները՝ Դարպասներ ընթացքը: Խոխանաբերդի ստորոտում խիտ ծա- ռերի արանքում հին շինությունների փլատակներ են հայտնվում: Ան- կյուններում կլոր աշտարակներ ունեցող լայն պարսպից ներս ընդար-

հակված էր այն ժամանակ Ռուսաստանի հայոց արհեստակցութեան, բայց ավելի քաղաքական գործերով էր զբաղված, քան թե եկեղեցական:

Վանքի հիմնադրման ճշգրիտ թվականն անհայտ է: Մ. Կաղանկատվացին հիշատակում է Մեծիրանքի եպիսկոպոսութունը: Այն դարերի ընթացքում աստիճանաբար ավելացված 8 եկեղեցիների համալիր է: Եկեղեցիներից մեկի մուտքից վեր արձանագրութունը վավերացնում է Վախտանգ իշխանի կին, Մեծ Սարգսի դուստր, Զաքարե և Իվանե եղբայրների քույր հորիշահի կողմից եկեղեցու վերակառուցման կամ նորոգման փաստը:

Վանքից լավ է երևում գյուղը: Քոլատակը Արցախի ամենահին բնակավայրերից է: Բաղմաթիվ վավերագրեր ու հիշատակարաններ մեծահուշակ դիտնական և կաթողիկոս, ծնունդով դարաբաղցի (Մարազա գյուղից) Կարեգին Նովսեփյանին հանգեցրել են այն եղրակացության, որ Պոռոյան կամ Խաղբակյան տոհմի (երանք հետադայում իշխել են Վայոց Ձորում) հայրենի բնակավայրը Քոլատակն էր:

Վաղ առավոտյան Կոշիկ անապատ եմ գնում: Երկու ճանապարհներից ընտրեցի ամենակարճը: Այդ հուշարձանախմբի մասին գիտեի Նովսեփ Օրբելու մի աշխատութունից, որտեղ մեծ գիտնականը մանրամասն նկարագրում է խաչքարերի պատկերաբանականները ու բարձր գնահատական տալիս այդ շուտամենասիրված արվեստին:

— Մի ժամուկեսից կհասնենք, 10 կմ հազիվ լինի, — ասաց ուղեկիցս:

Ճանապարհի եզրին մի բար ցույց տվեց, որի վրա երկու փոս էր փորված՝ մեջը լցված անձրևաջրով:

— Սուրբ ոսնահետքերն են, — ասաց նա, — սուրբ է իջել այստեղ:

Փոսորակները եղրագծով հսկա ոսնահետքեր են հիշեցնում: Հավանաբար, այն ինչ-որ մեկն է փորել: Ասլաոսմին կառուած թզուկ ծառի տակ խաչքար էր դրված: Աջ կողմում հսկա ապառաժներ էին շարված: Զարմանքից քար կտրած նայում եմ բնության կերտած քարեղեն դեմքերին, ֆանտաստիկ ֆիգուրներին, հիանում պլաստիկայի անկրկնելի գեղեցկութամբ:

— Սա էլ խաչերի ջուրն է, — ասաց ուղեկիցս, երբ անցնում էինք ձորով հոսող առուն, — իսկ ձորը Փրկածն էր կոչվում:

— Ինչո՞ւ:

— Այստեղ շատ մարդիկ են փրկվել:

Արդեն շորս ժամ է, ինչ բարձրանում ենք լեռնալանջով ու իջնում ձորերը:

— Էս ա հա՛, հասանք... — անընդհատ հանգստացնում է խաչիկը: Բայց մի բացատում նա շվարած շորս կողմը նայեց:

— Մի քիչ էստեղ սպասիր, ես էս կողմերում փնտրեմ, հետո կգամ: — Մեկ ժամ հետո ձորից լավեց խաչիկի ձայնը: Նա կորցրել էր բացատն ու իմ արձագանքով էր փորձում գտնել այն:

— Մոտավորապես գտա այն, — ասաց նա, — պարզապես մի երկու սար անցել ենք անապատից:

Լեռնաբաղուկի կատարին խուլ անտառի մեջ անսպասելիորեն քարակերտ մի կամար հայտնվեց իմ առաջ:

— Ո՞ր է տանում այս մուտքը, երբ երկու կողմում անտառն է:

— Զգիտեմ, — ասաց նա, — բայց այն վանքի մուտքն է:

Մտերի արանքում մամուռով ծածկված հսկա շափերի խաչքարեր էին ընկած: Դրանց առատութունը զարմանք էր պատճառում: Եթե խնամք լիներ ու անտառը մուտք չզործեր այստեղ, այն չէր զիջի Նորադուզին, իսկ պատկերաբանականների արվեստով, թերևս, գերազանցեր բոլորին: Զննելով խաչքարերի արձանագրութունները, հանդիպեցի «նե՛՛՛» թվագրությանը: Այն գրված էր եկեղեցու պատի մեջ ազուցված գեղաբանդակ խաչքարի վրա: Այն Արցախում իմ տեսած ամենահին խաչքարն էր (9-րդ դար): Մի սրահի խորշի մեջ տեղադրված արձանագրության մեջ (1244 թ.) հանդիպում ենք Պոռո իշխանի անվանը: Իշխանը հայտնում է իր նվիրատվութունների մասին: Հետդարձի համար մենք այլ ուղղություն ընտրեցինք: Կրկին ամեն քայլափոխի հողաշերտի մեջ խրված խաչքարերի էինք հանդիպում: Հսկա ծառերի արանքում նշմարվում էին հին շինութունների փլատակները: Անտառը լրիվ նվաճել է այս հին բնակավայրի տարածքը: Ձորում լսվում է խաչների վտակ Քոլատակի ջուր կոչվող գետի մոնչյունը: Աղբյուրներից ծնունդ առնող լեռնային գետը մեկ հայտնվում էր խոր ձորում, մեկ անհետանում վիհի մեջ:

ԻՉ. ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ

«Խաչեն գետի ընթացքով ցած իջնելով և թե՛վելով դեպի Խենդրատան գյուղը, տեղեկություններ հավաքեցի Մելիք-Միրզախանյանների մասին: Այստեղ մնացի միայն մեկ օր, որովհետև սաստիկ վատ ընդունելություն գտա: Ինձ, առհասարակ, չէր հաշտվում այն տեղերում, ուր գտնվում էին մելիքների ժառանգներ, և մանավանդ, երբ նրանց տոհմի պատճառով մեջ կային առատավոր կետեր: Այստեղից անցա Շուշի»:

Սակայն մինչ Շուշի հասնելը ինձ հետաքրքրում էր Տիգրանակերտը՝ Տիգրան Մեծի հիմնած 4 Տիգրանակերտներից մեկը: Մեծահասակ մար-

դիկ Ղարաբաղում այն Տկրակներու են անվանում: Մարտակերտից Աղզամ տանող ճանապարհին, Խաչինի գետաճովիս չհասած, աչ կողմում հեթանոսական գերեզմաններ են՝ ֆալոսներ ու սովորական ձևի տապանաքարեր: Հայտնի է, որ հայերը հեթանոսական շրջանում նման շիրմաքարեր դնելու սովորություն են ունեցել: Մի ժամանակ մահմեդական գերեզմանոցը խառնվել է նրանց հետ: Այժմ հանվել են ֆալոս-շիրմաքարեր: Հողի մեջ խրված երեք քար էր մնացել երեք հազարամյա հետաքրքիր հուշարձաններից: Իրանցից մեկը նոր էր տեղից հանված ու ընկած գետնին: Զննելով ճանապարհի ձախ կողմի մահմեդական սրածայր շիրմաքարերը, գտա քարերի անհետացման պատճառը: Մույլ քարտաշների համար շատ հեշտ էր պատրաստի քարտերը տեղից հանել, տաշելով ծայրը սրել ու տնկել նոր մահացածի շիրմին: Այն Խորհրդային Ադրբեյջանի տարածքում պահպանված միակ նման հուշարձանն է հայկական հեթանոսական ժամանակաշրջանից: Տարօրինակ է, որ ոչինչ չի ձեռնարկվում խնամքով կազմակերպված ոչնչացումից փրկելու պատմությունն կարևոր հուշարձանները: Շորքուպազ վայրում վերակառուցվել է հինավուրց ամրոց-իջևանատունը: Այն անկյուններում շորս աշտարակներով տիպիկ մելիքական շրջանի կառույց է: Սակայն բարձունքը, որի վրա էլ մի ժամանակ գտնվում էր Տիգրանակերտը, այժմ բարձանքի էր վերածվել: Բաֆֆին նկարագրում է, թե կուսապատցի Վանի հարյուրապետը (հետագայում՝ մելիք Վանին) ինչպես է երկու անգամ ուսու հայ զինվորներից կազմված ջոկատի հետ պաշարման ժամանակ թշնամու համար առեղծված մնացած ձևով անհետացել բերդի տարածքից: Իսկ մի քանի տարի առաջ մի մարդ լեռան հակադիր կողմում ինձ մի մեծ անցք ցույց տվեց, ասելով, թե դա բերդից եկող գետնափոր անցքի ելքն է: Ըստ հավանականություն, հենց այդ անցքով էլ քաջ կուսապատցին փախցրել էր զորքը, շփոթության մեջ գցելով թշնամուն:

ԻԷ. ՇՈՒՇԻ

«Իջևանելով Շուշիի առաջնորդարանում, ինձ հաշտվեցավ բննկ հոգևոր կոնսիտորիայի արխիվը...»:

Շուշի... միշտ փորձում ենք պատկերացնել Արցախ-Ղարաբաղի համար աղետալի իրադարձություններով լեցուն 18-րդ դարը: Հեռվից երևում է անտիկ բերդը: Անհերքելի վավերագրերը պատմում են, որ 1717 թվականին, երբ «Շուշի դալայում» հաստատվում, ամրանում է հայ աղագլին-ազատագրական պայքարի հերոսներից մեկը՝ Ավան հարյուրապետը, արդեն գոյություն ունեւ Շուշիի բերդը: Սակայն դիմենք Կիրակոս

Գանձակեցուն: Նա հայտնում է, որ Բաթու զորապետի որդի Սարթաղը 1251 թվականին Հասան-Ջալալին է վերագրվում Չարաբերդը, Ակնան ու Կարկառի բերդերը: Կարկառ անվան տակ մենք չենք էլ կարող մեկ ուրիշ բերդ պատկերացնել, քան հետագայում Շուշի կոչված բերդը: Սակայն այս բերդի գոյությունն մասին ավելի հին ժամանակաշրջան ընդդրկող աղբյուրներ էլ կան: Եվ շնայած այս ամենին որոշ վայ-պատմաբաններ բերդի հիմնադրումը Փանահ Ալիի Ղարաբաղում 1252 թ. հայտնվելու հետ են կապում, համառոտ են շրնդունելով բերդի մինչ այդ գոյությունը:

Եվ ահա այն բերդը, որը փառահեղորեն ծվարել է Ղարաբաղի լեռնաշղթայից իջնող լեռնաբազուկի հարթ կրճթին, աիրապետում է Կարկառի հովտին: Մա այն բերդն է, որը մի ողջ հազարամյակ հուսալի ապաստան էր հայ զորականների համար, ու որպես ամուր պատվար, բարեխղճորեն ծառայեց օտար նվաճողների դեմ պայքարում: Սակայն ազատագրական շարժմանը դավաճանած մելիք Շահնազար 2-րդի ձեռքով այն անցավ քոչվոր ցեղապետ Փանահ Ալիին: Արշան և ավարառությունների կարոտ իր ցեղակիցների հետ նա այստեղից ասպատակում էր, թալանում հայոց գյուղերն ու ավանները: Շուշիի բերդը գարձավ Արցախում հայ աղջային-ազատագրական պայքարի թշնամին ու ջլատեց Ղարաբաղի երբեմնի հզորությունն ու միասնությունը: Փանահի որդի Իբրահիմ խանը սերտ կապեր հաստատելով օսմանյան սուլթանությունից հետ, ամեն կերպ ձգտում էր խափանել Արևելյան Հայաստանի միավորումը Ռուսական կայսրությունը:

«Ռուսները Ղարաբաղի մելիքների ջանքերով տիրելով Ղարաբաղին, նույն մելիքներին թշնամի Իբրահիմ խանին թողեցին որպես այդ երկրի ղլխավոր կառավարիչ: Իբրահիմ խանը դավաճանեց ռուսներին և սպանվեց հայ միլիթի ծեղով (դա մելիք Շահնազար 2-րդի որդի մելիք Ջաւշուզն էր, այսպիսով՝ «անպիտան հոր պիտանի ուղին քաղեց հոր մեղքեր...»: Քայց նրա տեղը նշանակեցին դավաճանի մեծ որդի Մեհտի խանին՝ ավելի ընդարձակ իրավունքներով: Նա ավելի մեծ դավաճանություն գործեց: 1822 թվականին փախավ Պարսկաստան ու պարսից գործի հետ վերադառնալով, սկսեց պատերազմել ռուսների դեմ: Անհապաստան է, թե նույն ժամանակվա ռուսաց պաշտոնակալները ի՞նչ էին գտնում այդ նենգավոր, այդ երկրին խուճ ու օտար տաւր խաների մեջ, որ նրանց գերադասում էին հայոց մելիքներից, որոնք ամենայն զոհաբերությամբ անձնատուր էին եղած Ռուսաստանին»:

Շուշին կառուցապատելու համար խանը օգտագործում է հայերի կառուցողական հմտությունը: Շուշի քաղաքը 19-րդ դարում Անդրկով-

կատում եղել է առևտրի ու մշակույթի կարևորագույն կենտրոններից մեկը: 1805 թվականին, երբ Ղարաբաղը անցնում է Ռուսաստանին, Շուշին տնտեսական ու մշակութային զարգացման մեծ հնարավորություններ է ստանում: 1820-ական թվականներից սկսում են գործել հայկական դրամարոցն ու տպարանը: Օտարերկրացիները «հայոց փոքրիկ Փարիզ» անունով են կնքել այս քաղաքը: Կրկին երևան է գալիս հայ մարդու շինարարական հանճարը: Այսօր էլ իր փառահեղ տեսքով ողջ քաղաքի վրա իշխում է Ղազանչիցոյ եկեղեցին: Բաֆֆու այցելության ժամանակ այն դեռևս չէր ավարտվել: Այստեղ հրապարակվում էին բազմաթիվ պարբերականներ: Քաղաքի կյանքին սակաս աշխուժություն չէր բերում Նանգամիրյանի 350 տեղով թատրոնը: Շուշին դառնում է հայ մտավորականության կարևորագույն կենտրոններից մեկը: Այստեղ են ծնվել ու դաստիարակվել ականավոր հեղափոխականներ Բ. և Ի. Կնունյանց եղբայրները, Մ. Կասյանը, Ս. Տեր-Փարբիկյանը, Ա. Հովհաննիսյանը, Ս. Համարձումյանը, Հ. Գյուլիբեկյանը, Ա. Բեկզազյանը, Հ. Թ. Թևոսյանը, Ն. Ստեփանյանը: Շուշին մշակույթի ու գիտության գործիչների գննալին ֆոնդի իսկական շտեմարան էր: Շուշին տվել է մշակույթի այնպիսի գործիչներ, ինչպիսիք են գեղանկարիչ Ս. Աղաջանյանը, քանդակագործ Հ. Գյուրջյանը, գրող Մուրացանը, պատմաբան Լեոն, աշխարհահռչակ ակա: հմիկոսներ Ի. Կնունյանցը, Ա. Թախտաջյանը և շատ ուրիշներ:

1881 թվի ապրիլին առանձին գրքով լույս էր տեսել Բաֆֆու «Խենթեր»: «Վեպը դուրս թողնվեց տպարանից և հավելեց, սպառվեց մի քանի շարաքնների ընթացքում», — պատմում էր գրքի սրբազրիչ, հետադալում հռչակավոր պատմաբան Լեոն: Այնպես, որ Բաֆֆին մտավորականության շրջանակներում արդեն հանրահայտ դեմք էր, ու նա կարող էր այստեղ օժանդակության հույսեր ունենալ:

Ղազանչիցոյ (ս. Ամենափրկիչ) եկեղեցու բակից մուրճի հարվածների ձայներ էին լսվում: Պարսպի մուտքի մոտ հողթանդամ ու ժպտահեմ մի մարդ դիմավորեց մեզ: Դեմքը ծանոթ թվաց: Բայց տարիներ առաջ այս բարի ժպիտի ու կրակոտ խոշոր աչքերի հետևում վերականգնվող Գառնիի հեթանոսական տաճարն էր: Ճարտարապետ Ա. Սահինյանը գովասանքի քիչ խոսքեր շատաց այս շինարարի հասցեին, որը ամենազովարիին պահերին անսպասելի մտահղացումներով ու առաջարկություններով շատ օգնեց անտիկ հուշարձանի վերականգնման աշխատանքներին: Եվ ահա Գառնիում իր աշխատանքային մկրտությունը ստացած բազմափորձ շինարարը մի նոր հանդուգն քայլ է նախաձեռնել: Նա մի խումբ զարբաղցի շինարարների հետ իրականացնում է Ամենափրկիչ տաճարի և զանգակատան վերականգնման աշխատանքները: Ծա-

նարը կարծես նոր ճերմակ հագուստ է հագել: Պատերը լրիվ շարվել են: Հերթը հովհարածև վեղարինն է: 1987 թվականին լրացավ եկեղեցու շինարարության ավարտի 100-ամյակը: Վոլոդյա Բաբայանը արդեն 5 տարի է, ինչ նվիրվել է այս գործին:

— Հերթը Գանձասարի վանքին կհասնի՞, — հարցրի ես:

— Դա իմ կյանքի գերագույն նպատակն է, — պատասխանեց շինարարը:

Շուշիի հայկական թաղամասում փորձում եմ գտնել կոնսիստորիայի շենքը, որտեղ Բաֆֆին հանդիպումներ էր ունեցել եկեղեցու առաջնորդների, քաղաքի առաջագեմ մտավորականների հետ, դնել արխիվները:

«1881 թվին ես հանապարհորդում էի Ղարաբաղում տեղային մելիքների պատմության համար նյութեր հավաքելու: Սեպտեմբեր ամսի 10-ին գնացի Շուշի, Իջևանցի առաջնորդաբանում, քեմի հաշորդ. առժ. Կարապետ վարդապետ (այժմ Եպիսկոպոս) Այվազյանի մոտ: Իմ հանապարհորդության նպատակը իմ բոլոր ծանոթներին հայտնի լինելով, յուրաքանչյուրը աշխատում էր օգնել ինձ: Մեկը բերանացի ավանդություններ էր հագորդում, մյուսը բերում էր որևէ ձեռագիր, որ պատմական հշակություն ուներ: Այնպես, որ Շուշիում ինձ հաջողվեցավ հավաքել բավական պաշար:

Ես մնացի այդ քաղաքում ամբողջ 2 շաբաթ: Այն ժամանակ Մակար վարդապետը համարյա ամեն օր իմ մոտ էր լինում: Երբեմն Կարապետ հայր սուրբի և իմ հետ հաշում էր, երբեմն մեզ մոտ քեյ էր խմում: Մեր խոսակցության առարկան բոլոր մեծի մասին Ղարաբաղի մելիքները և նրանց գործերն էին: Ինձը Մակար վարդապետը աշխատում էր ինձ նյութեր մատակարարել, երբեմն ամբողջ օրով այս կողմ, այն կողմ էր գնում՝ նյութեր որոնելու»:

Ոչ որ չկարողացավ ստույգ ցույց տալ այդ շենքի տեղը: Մի մեծահասակ, բայց ամուր կազմվածքով մարդու նկատեցի, որը դանդաղ քայլում էր, ինչ-որ բան հիշելով շրջվում որևէ կողմ, երկար, քննախույզ գիտում Շուշիի տեսարանները:

— Շուշեցի ե՞ք, հայրիկ, — նրան դիմեցի ես:

— Հա՛, Շուշվա ծնունդ եմ, — ասաց նա, ապա շվատահող հայացքը ինձ հռոնց:

— Հին Շուշին է ինձ հետաքրքրում, հայրիկ:

— Զարեհ Սամսոնի Մեխիք-Շահնազարյան, — հանդիսավոր ներկայացավ նա, — մինչև 1920 թվականը այստեղ եմ ապրել: Հիմա նրանում եմ բնակվում: Հարցրու, տեսնեմ քեզ ի՞նչ է հետաքրքրում:

— Ինձ հետաքրքրում են Բաֆֆու այցելած վայրերը: Կոնստանտնուպոլսի
սրահն է:

Նայեց շուրջը: Մի բաց տարածք ցույց տալով ասաց՝

— Ա՛յ, այստեղ էր:

Փողոցով դեպի վեր բարձրացանք: Կանգնեց մի երկհարկանի շենքի
մոտ:

— Սա Մարիամ Ղուկասյանի կանանց գիմնադրան էր:— Մոտե-
ցավ, աղբյուրից ջուր խմեց:— Նույն անուշ ջուրն է: 1905 թվականին
շուշեցի Քամիրյանն է էն սարից 18 կիլոմետր երկարության խողովա-
կաշարով հասցրել քաղաք: Այսպիսի մի աղբյուր էլ թաթարական թա-
ղամասում էր կանգնեցրել: Իսկ ահա այս գեղեցիկ շենքը ուսուցիչական նոր
դպրոցն է, դիմացինը՝ ժամհարյանների հիվանդանոցը:

— Իսկ ինչքա՞ն ժամանակ է, որ Շուշիում չեք եղել, — հարցրի ես:

— Հայրենական մեծ պատերազմի սկսվելուց ի վեր: Ո՛ր գամ, երբ
ոչ մի հարազատ չի մնացել:


— Իսկ տունը, որտեղ ձեր մանկությունն եք անցկացրել, չե՞ք հի-
շում:

Տխրության քող իջավ ծերունական դեմքին: Գլուխը բարձրացրեց,
նայեց դիմացի լանջի կողմը:

— Այնտեղ էր... 1917 թվին 16 տարեկան հասակում կամավոր գրը-
վեցի Գանձակի ու Ղարաբաղի պաշտպանության բանակում: Ողջ Ղա-
րաբաղը օսմանյան զորքերի ու մուսավաթականների օղակի մեջ էր առ-
նրված:

Հայրիկ թումյանը «Գեղպերը Ղարաբաղում» գրքում գրում է.
«Քարվից հետո թուրքական ջոկատները կենտրոնացել էին Աղզամում՝
Ջամիլ-Ջալիլ-բեյի հրամանատարությամբ և պատրաստվում էին հար-
ձակվելու Ղարաբաղի վրա: Սեպտեմբերի 25-ին (1918 թ.) Շուշիում տա-
րածվեց նորի փաշայի վերջնագիրը՝ ուղղված Ղարաբաղի հայությանը,
որտեղ ասվում է. «... տաճկական հրամանատարությունը Բաբուն գրա-
վելուց հետո իր «հաղթական» զորամասերը ուղղել է Ղարաբաղի դեմ և
պահանջում է հայերից զինաթափվել, ճանապարհ տալ թուրքական և
աղբրեջանական զորքերին անցնելու Շուշի և ճանաչել Աղբրեջանի իշ-
խանությունը»: Թուրք փաշան զարաբաղցիներին հիշեցնում է Ջեյթունը,
Սասունը, որոնք «չգիմացան թուրքական բանակի հարվածներին»:


Վերջնագիրը չահարեկեց հայերին, որոնք իրենց մեջ վառ են պահում
նախնիների հայրենասիրությունը, ազգասիրությունն ու մարտական ոգին,
որի մեջ վառ էր աղզային ինքնագիտակցությունը և արժանապատվու-




Գանձակ. 19-րդ դարի
տապանաքար.




Տեառան Գետաշենից.



Դանիել Տեր- Բարսղամյան.



Բժիշկ Սիմոն
Տեր-Բարսղամյան.



Գետաշեն. Մելիք Մնացականի
տունը.




Էրեւնի սր. Սարգիս Եկեղեցի.




Դանիել Տեր-Քարաղամյանի
պատրաստած մատուցարանը.




Տեսարան անապատի ձորից.



Գյուլիստան գյուղը.



Գյուլիստանի բերդը. չրագողի
նանապարհ.



Տեսարան Գյուլիստանի բերդից.



Անապատի ձորը.



Գյուլիստանի բերդ. եկեղեցու
փլատակները.




Տեսարան դեպի Նիշն
առաջյալի վանքը.



Վաչագան բարեպաշտ
բազավորի դամբարանը.




Եղիշե առաքյալի վանքը.



Երիցմանկանց վանքը.




Հին իջևանատան բեկորներ.



Մանձասարի վանքը.


Դաղի վանքը.




Տեսարան Մանձասարի վանքից.

Մանձասարի վանքի սր.
Հովհաննես Եկեղեցու բմբուկը.





Կաշաղակաբերդ.



Հակոբավանք.




Մարտակերտյան հին
հուշարձաններ.


Ֆալափայ կոթող
Տիգրանակերտի հեթանոսական
գերեզմանոցում.




Խաչքար.
Կոշիկ անապատում.




Տիգրանակերտ.
Միջնադարյան ամրոց.



Շուշի. Կանաչ ժամ եկեղեցի.



Տիգրանակերտյան
ամրոցի ներքո.




Շուշի.
Ղազանչեցոց եկեղեցին.



Շուշի. Ագուխսեցոց եկեղեցու
ավերակները.



Ավետարանոց գյուղ. Կուսանաց
անաղատ.



Բաֆի հուշարձանը
Փայաջուկում.




Մեկնական տներ Տող
գյուղում.


Միջնադարյան հյուրատուն.




Տեղ. Սարգսի տունը.



Խնածախ գյուղը.




Միծեռնավանք.



Քանգունց Գալուստի
ժայռափոր բնուտանոցը.




Տեսարան
քանգունց բնուտանոցից



Բռա.
Քանգունց Գալուստր.

Ազգային 19-րդ դարի վերջին.



թյունը, մի ժողովուրդ, որը ապավինած իր անառիկ լեռներին՝ վիզ չէր ճկել և ոչ մի ահեղ բռնակալի առաջ:

Հավանաբար, թուրքերը չեն մոռացել Ղարաբաղում իրենց կրած ջախջախիչ պարտությունները անցյալում: Թուրքերի նպատակն էր մըտնել Շուշի և այն դարձնել պլացդարմ ողջ Ղարաբաղը գրավելու համար: Նրանք նպատակ ունեին Ղարաբաղից հետո հարձակվել Զանգեզուրի և Վալոց Զորի վրա և այն ևս միացնել Ադրբեջանին: Դա Թուրքիայի և մուսավաթականների պանթյուրքիստական ծրագրի մի մասն էր:

Սակայն թուրքերը խուսափում էին Ղարաբաղի հետ ղինված բախումից:

— 1920 թվականի մարտի 13-ին շտաբս կապիտան Գարեգինը Գանձակում ինձ հանձնարարում է մեկնել Շուշի ու այցելել ծանր վիրավոր հորս: Հայրս մահամերձ էր: Խնդրեց, որ կանչեմ իր երաժիշտ եղբորը: «Դիւ յամանի» հնչյունների տակ ժպտը ղեմքին հանգչեց հայրս: Հաջորդ օրը գնացի շուկա մածուն գնելու: Փողոցի ծայրից ղինվորների մի ջոկատ էր գալիս ղեպի հրապարակը: Մուսավաթիստների գրածո, գեներալ-նահանգապետ, ազդությամբ քուրդ ու հալերի արշուներբու թըշ-նամի խոսքով բեզ Սուլթանովն էր իր պահակախմբի հետ: Մարդիկ փրսփրսալով ծաղրում էին նրան, բայց նրա հայտնվելուն պես բարձրացան տեղերից ու հանեցին գլխարկները: Սակայն մեկը համառորեն չէր նայում նրա կողմը: Դա մեր հարևան Դովլաթենց Արմենակն էր: Նրա զբաղմունքը ասեղ, սանր, հրազեն վաճառելն էր: Զինվորները մոտեցան նրան:

— Ինչո՞ւ պատիվ չես տալիս, շե՞ս տեսնում, որ գեներալ-նահանգապետն է քո առաջ:

— Ի՞նչ է, ուզում եք, որ ես նրան իր քոտ աչքով ճանաչե՞մ՝,— համարձակորեն պատասխանում է Արմենակը:

Ասկյարները իսկույն բռնում են թևերից ու տանում: Բայց հաջորդ օրը ես նրան իրենց բակում եմ տեսնում: Հետո իմացա, որ սպանել է երկու ղինվորների ու փախել:

— Բայց այդ ժամանակ Ղարաբաղում «Ազգային խորհուրդ» կար, չէ՞:

— Այո,— ասաց ծերունին,— երկրամասի պաշտպանությունը կազմակերպելու համար Շուշիի մտավորականության ներկայացուցիչները, անկախ կուսակցության պատկանելությունից, 1917 թվականի սեպտեմբերի 18-ին հավաքվելով Լևոն Վարժապետյանի բնակարանում, ժամանակավոր կառավարություն ստեղծեցին:

Վտարով բեզ Սուլթանովը մի աչքից կույր էր:

— Երևի դա միակ անկուսակցական կառավարությունն էր աշխարհում:

— Ի՞նչ կուսակցություն, երբ լինել-լինելու հարց էր վճռվում: Բայց դրանք անփորձ մարդիկ էին: Քաթարական թաղամասի հետ փոխհարձակման պայման էին կնքել: Մարտի 23-ին, երբ հորս մահվան յոթը պետք է նշեինք, թաթարական թաղամասից կրակոցներ լսվեցին: Մատախլապատ օր էր: Հետագայում իմացանք, որ Նուրի և Խալիլ փաշաների գլխավորությամբ օսմանյան ջոկատներ են մտել Շուշի ու նախապատրաստել այս սպանողը: Տեսնելով, որ հայերի կողմից ոչ մի դիմադրություն չկա, հրկիզել են հայերի աները, որոնք յուզաներկով էին ներկված ու հեշտ էին բռնկվում: Ես գերեզմանոցից տուն եմ շտապում: Զոհվել էին փոքր եղբայրս՝ Հովսեփը, ապա կույր մորաքույրս, հետո՝ մայրս: Կորցնելով հարազատներին, ևս հինգ հոգանոց ջոկատ կազմեցի ու փորձում էի դանդաղեցնել ասիլարների առաջխաղացումը, որպեսզի ժողովուրդը կարողանա հեռանալ քաղաքից: Նրանք մտնում էին հարուստ հայերի աներն ու թալանում ունեցվածքը:

— Զինված ջոկատներ չունե՞ր այդ «Ազգային խորհուրդը»: 22 հազար բնակչություն ունեցող թաղամասը չէ՞ր կարող հոգալ իր պաշտպանության մասին:

— Զենք չկար: Ղարաբաղ բերող բոլոր ճանապարհները փակ էին, — կարծես թե հին դինվորը փորձում էր արգարանալ: — Իսկ կռվելու ընդունակ մարդիկ ռազմաճակատում էին: Իրր պետք է հարևան գյուղերից օգնության գալին: Այլ ոք չէ կամ:

Փոքրիկ ջոկատով հետ նահանջելիս Շուշիի քաղաքագլուխ Գիգի աղայի բակում հավաքված բազմություն տեսա: Նրանց առաջարկեցի անմիջապես հեռանալ, խոստանալով ապահովել էվակուացիան: Բայց Գիգի աղան գլխարկը զարկեց գետնին ու հայտարարեց, թե ոչ մի թուրք իր մոտ եկած մարդկանց ձեռք չի տա: Ստիպված հեռացանք: Առավոտյան 4 անց 30 րոպեին թողեցինք մեր դիրքերն ու հեռացանք քաղաքից: Բռնկված քաղաքը ամբողջ գիշեր լուսավորում էր շրջապատի լեռները:

— Իսկ Գիգի աղայի բակում հավաքված մարդի՞կ. — հարցրի ես:

— Հետագայում հանդիպեցի գեղեցկուհի Տաթևիկին, որն այն ժամանակ իր որդու հետ այստեղ էր եղել: Նա պատմեց, թե ինչպես թուրք զահիճ Նուրին սև բազկաթոռին նստած մեծ բազմության առաջ մեկմեկ երկու մատով երեխաների ունեզերից բռնած վեր էր ձգում ու յաթաղանի շեշտակի հարվածով հատում գլուխը: Այդպես սպանել էին նաև Տաթևիկի 14-ամյա որդուն: Տղամարդկանց սպանում էին, կանանց, աղջիկներին ու երեխաներին՝ բռնաբարում, գեղեցկուհիներին իրենց տները

տանում: Տաթևիկը կիսախելազար թափառում էր Շուշիի փողոցներում ու անվերջ կրկնում այս պատմությունը:

— Իսկ քաղաքագլուխ Գիգի՞ն:

— Պատահականորեն 30-ուկան թվականներին այդ դավաճանին տեսել եմ Բաքվում:

Հայրիկ թունյանի գրքում բերված է արխիվում պահվող մի նամակի տեքստը (2ՊՊԿԱ, ֆ. 200, 563), որը Բաքվում ապրող իր եղբորն էր գրել աղբբեշանցի վինվոր Իսմայիլ Ալմանդարբեկովը. «Տեսածդ էրմանիստանը (հայկական թաղամասը — Ղ. Թ.) այրված է: 5 կամ 10 տուն պահեցին: Հաղարից ավելի հայեր գերի բռնվեցին: Տղամարդկանց բուլդոզի կոտորեցին, մինչև անգամ խալիֆին (վահան եպիսկոպոսին), բուլդոզի մեծամեծ մարդկանց... Նշանավոր հայերին կոտորելուց հետո գլուխները կտրած բազարներում պտտեցնել էին տալիս... Այս կողմերում (քաղաքում) այլևս ոչ մի հայ չեք գտնի, և ոչ էլ այնպիսի թուրքի կարող եք հանդիպել, որը հարուր հազարից պակաս թալան բերած լինի: Այնպիսի մարդ կա, որ մեկ միլիոնից ավել ապրանք է բերել: Բոլորը եղան մեկ դասակարգ, էլ ոչ հարուստ կա, ոչ շունկոտ, բոլորը հավասարվեցին... Հայերի ողջ հարստությունը քաղաքի բնակիչ մուսուլմանները թալանեցին: 18 ռազար (1920 թ. 7 ապրիլի)»:

ԻԸ. ԴԱՏՐԱՎԸ ՏԻՇՈՒՄ Է

«Շուշիում բավական տեղեկություններ հավաքելով այդ բերդի իշխողների՝ Փամակ խանի, Իրահիմ խանի ու Մեհաբ խանի մասին, ես անցա Վարանդայի գավառ, Մելիխ-Շահնազարյանների տիրապետության երկիրը»:

Բաֆֆու Դահրավ գյուղ այցելելու մասին որոշ տեղեկություններ ունենալով, դարաբազցի բանաստեղծներ Գուրգեն Գարրիելյանի և Հրաչյա Բեգլարյանի հետ շտապում եմ ժամ առաջ հասնելու այդ գյուղը: Փնտրում ենք Բաֆֆու հյուրընկալած Սամվելյանների տունը: Զուտվեք փողոցները գետաբարերով էին սալարկված: Տունը կամարակապ պատահաններ ուներ: Գեղեցկազեմ կինը տեղեկանալով մեզ հետաքրքրող հարցերի մասին, անմիջապես գիլ ձայնով կանչեց.

— Հե՛, տատի՛, հե՛, տատի՛...

— Քանի՞ տարեկան է ձեր եսթեր տատը, — հարցրի ես:

— Յոթնամասուն:

— Հե՛յ է՛, հե՛յ... — ձորի կողմից, որտեղ գյուղի մյուս ծայրն էր, լսվեց եսթեր տատի պատասխանը:

— Մարդ ա եկալ է՛, մա՛րդ...

— Էջսա կյամբ է՝, կյամբ մ...
Ներքևում փոփած ընդարձակ դաշտը ցույց տալով, Գ. Գաբրիելյանն
ասաց.

— Փոքր Արարատյան դաշտ ենք ասում այս հովտին:

Ջննեցի տան առաջին հարկը: Այն թաղածածկ կառույց էր: Հատակը
ապառաժ էր: Բակում աղորիք, երկանք, հինավուրց այլ գործիքներ էին
շարված: Թվում էր, թե գիտավորչալ են դրսում շարել, որ Բաֆֆու ժա-
մանակաշրջանը զգանք մտորիկից: Երևի հենց Բաֆֆու ժամանակ էլ էր
այդպես շարված: Թոնիրում կանաչք հաց էին թխում:

— Որտե՞ղ է Բաֆֆու աղբյուրը, — նրանց դիմեցի ես:

— Համեցեք, քմամտաղ, մին պատառ թածած հաց յերկալ, ետ-
նան կասենք, — ասաց 50-ամյա ժպտադեմ մի կին: Մեկ այլ կին, ձեռ-
քի երկար ծհանը բնկերուհուն հանձնելով (մինչ այդ նա ուշադիր հե-
տևում էր, որ հացը չընկնի թոնիրի պատից՝ կուտանա շղառնա) ինձ
բացատրեց, թե ինչպես կարող եմ գտնել Բաֆֆու «հիշատակը»:

— Բայց աղբյուրը շատ գտնի, փակել են, խողովակներով գյուղ բե-
րել ջուրը:

Ապառաժները մազլեցելով գոտ պլխավոր խողովակն ու նրա հետա-
գծով գնալով, ձորակի մեջ՝ փոքրիկ ցեմենտապատ աղբյուրը: Այն լրիվ
ծածկված էր: Երթի ճայն էր լսվում ներսից: Երաշտի տարի է, ու ջուրը
խիստ պակասել է: Հիասթափված հետ դարձա, մարումս նախատելով
գյուղի մարդկանց, որ այս սրբավայրը բնական տեսքով պահպանելու
հնար չեն գտել: Գուցե ե ինքը՝ Բաֆֆին, դեմ շինեք աղբյուրի ջուրը գյու-
ղացիների աներին մոտեցնելուն: Երբ տուն դարձա, Գ. Գաբրիելյանը դի-
մեց ինձ՝

— Ո՞ր ես, քեմատաղ, տյան հկել, մի ամբողջ ժամ էնքան բաներ
է պատմում Բաֆֆու մասին:

— Ոչինչ, — Եսթեր տատի ժպիտին ժպիտով պատասխանելով ասա-
ցի ես, — հիմա ստիպված նորից պիտի պատմի:

70-ամյա Եղսան արագաշարժ, աշխույժ կին էր: Նման կանաչք Ղա-
բաբազում սովորաբար շատ երկար են ապրում:

— Աշկիս յիրա, հինչ ա իննական, — ասաց նա, — նորից կպատ-
մեմ, լհա մին պեն էլ էլիլ:

Ալբոմից մի քանի հին լուսանկարներ առանձնացրի ու ցույց տվեցի
Եղսա մայրիկին:

— Այս մարդիկ Բաֆֆու հետ որե՞տ աննույն ժամանակն են, — հարց-
րի ես:

— Ձէ, դրանք իմ քեռիներն են, իսկ ես էս տանը հարս քմ եկած:

— Բաֆֆին հենց այս տա՛նն է գիշերել:

— Երկրորդ հարկը 1881 թվին դեռ պատրաստ չէր: Հրածարվել է
տանը գիշերելուց ու խնդրել, որ տանիքում գցեն տեղաշորը: Այս փայ-
տե հատակը կար, բայց ծածկը դեռ պատրաստ չէր: Բաֆֆուն հանդի-
սողը կեսրայրս էր՝ Աբրահամ Սամվելի Բալայանը: Ուրեմն Սամվելը՝
կեսրայրիս հայրը, առևտրի գործով Շուշի է գնացած լինում (գյուղի
առևտրական գործերը նա էր վարում), պատահում է Բաֆֆուն, զրուցում
հետը, զնահատելով նրա առաքելության կարևորությունը, գյուղ է
բերում: Գյուղացիք, որ տեսնում են Սամվելը օտար մարդ է բերում
գյուղ, կարծում են՝ ուսուցիչ է, սառն են քնդունում:

— Ինչո՞ւ:

— Գյուղի զպրոցը նոր էին փակել: Հին վարժապետը, որին մի «մըր-
թարա բկլավ»¹ -ին պահում, թողել, հեռացել էր: Իսկ գյուղատնտեսական
գործերի այդ հուուն շրջանում աշխատող ձեռքի զբաղեցնելը մեծ վնաս
էր բնականից համար: Իսկ այդ հարցում վարժապետն ու ծնողները միշտ
կոնֆլիկտի մեջ էին:

— Քանի՞ օր մնաց գյուղում:

— Աբրահամը, որ Սամվելի միջնեկ որդին էր, երեք օր ման է ածում
գյուղի շրջակա հնավայրերում:

— Քանի՞ տարեկան էր Աբրահամը:

— 1856 թվի ծնունդ էր, ուրեմն՝ 23 տարեկան: Ամուսնացած էլ
չէր: Էլ էրգյան հողը, Արզարին ծոթը, Ախաշը, Պիծի կյումերը... լոխ
վետան տակ քն տամ: Աբրահամը պատմում ար, թա քարին կյրերը
պլաղհեցիս Բաֆֆին հուեց ար վարժ կարթում:

— Իսկ աղբյուրի պատմությունը:

— Աբրահամի հետ նստում են այդ քո այցելած, բայց չտեսած աղբ-
յուրի մոտ, մի քարի վրա բացում են կապոցը, հաց ուտում: Ջուրը խմե-
լով Բաֆֆին ասում է, որ այդպիսի համով ջուր ոչ մի տեղ չի խմել ին-
քը: «Ի՞նչ ջուր է սա», — հարցնում է Բաֆֆին: «Ջուր է էլի, անուն չու-
նի», — ասում է Աբրահամը: «Էս աղբյուրը, Աբրահամ, կաարես, կարգի
կրերես, էս խաշքարն էլ կուղղես, կարգին կկանգնեցնես: Դա իմ պատ-
գամն է քեզ», — պատվիրում է Բաֆֆին: Ձեռքին հոռե՞ փայտ է լինում,
անկում է աղբյուրի հունի մեջ ու Աբրահամի հետ շարունակում ճանա-
պարհը: Այդ ուռենու ճյուղը բռնում է, մեծանում, մեծ ծառ դառնում:
Անունը «Բաֆֆու ծառ» էր մնացել: 1945 թվականին փոթորիկը շրջել
է ծառը: Այդ ծառի փայտից նով են պատրաստել, դրել աղբյուրին:

¹ պղնձե թաս

² ուսեցի:

— Բայց ես աղբյուրի տեղում ուռնիներ տեսա,— ասացի ես:
— Հա, շրջված ծառի արմատները շիվեր են տվել, այնպես, որ Բաֆֆոն հիշատակը ապրում է, կենդանի է:

— Իսկ լսել եմ, որ մի տեղ ընկած խաչքարը բարձրացնում են, որ գրեթե կարգա Բաֆֆին, տակը շատ հին պղնձե դրամներ են գտնում:

— Քարի մասին գիտեմ, իսկ դրամի՝ ոչ:

— Բաֆֆին գրամահավաք էր, հին դրամների մեծ սիրահար, ու լավ հավաքածու ուներ, իսկ այդ դրամները, որոնք ոչ մի արժեք չէին կարող ունենալ շուկայում, գյուղացիք Բաֆֆոն են գիշել,— ասում եմ ես:

Նրա հավաքածուն բավականին թանկարժեք էր, շնայած ինքը ծայր աղքատության մեջ մահացավ: Կինը՝ Աննան, սկզբում այդ եզակի հավաքածուն՝ հին հայկական, պարսկական, արաբական, հունական ու հռոմեական շուրջ երեք հազար դրամ, առաջարկում է Պետերբուրգի թանգարանին, բայց այստեղ խորհուրդ են տալիս Լոնդոնի դրամագետներին դիմել, որոնք կարող էին հասկանալ ու գնահատել: Սակայն Լոնդոնում զողանում են դրամի մի մասը: Հետագայում դրանք տեսնում են թանգարանի ցուցափեղկերում:

— Ուրեմն մեր գյուղում գտած հին փողերը Լոնդոն են հասել, հա՞,— ասաց նզսա մայրիկն ու զրնգուն ծիծաղեց:

— Հետո ո՞ր է գնացել Բաֆֆին:

— Աբրահամը պատմում էր, որ շորին հերթով նստելով Սեյդիշեն են գնացել, որտեղ Ղազարոս Աղայանենց տունն էր գտնվում: Պապը՝ Ջոանց Վերդին, համաճարակի ժամանակ ընտանիքով Վրաստան՝ Բուխիս-Խաչեն էր գաղթել, հետո՝ վերադարձել: Իսկ Աղայանը այդ ժամանակ Շուշիում գպրոցի տեսուչ էր աշխատում: Ճանապարհին Բաֆֆին անընդհատ դիմում էր Աբրահամին՝ «Մի՛ վախեցիր, Աբրահամ, քո վարձը կտամ՝ շնայած հերթով եմք նստում»:

— Հետո վարձը տվե՞ց, թե ոչ:

— Բայց Սեյդիշենում բաժանվելիս Բաֆֆին, որը գոհ էր Աբրահամից, խնդրում, թախանձում էր մնալ իր հետ: Բաֆֆին գրական կամ Սալմաստի բարբառով էր խոսում, որը գյուղացիք չէին հասկանում, իսկ ինքն էլ Ղարաբաղի բարբառն էր զժվար ընկալում: Աբրահամը բողոքում է՝ 4 օր է՝ ման եմ ածում, հերիք չի՞, տանը տասը շունչ կա սոված, ծարավ, պետք է գնամ աշխատեմ, մեղք են, չէ՞:

— Ովքե՞ր էին 10 հոգին,— հարցրի ես:

— Աբրահամի պապն ու տատը, հայրն ու մայրը, երկու եղբայրներն ու քույրը, պառաված մորաքույրը: Ավագ եղբայրը՝ Չահանգիրը, ֆիզիկապես տկար էր ու ոչինչ չէր կարող անել, ստիպված գյուղատնտես-

ություն, անասնապահության հոգսը ինքն էր անում: Իսկ այս ամենի մասին ավելի մանրամասն ամուսինս՝ Հակոբն է գրել, նրա տետրը նրուանում է, որդուս՝ Աբելի տանը:

ԻԹ. ՎԱՐԱՆԴԱ

«Երկու օր մեացի Չանախչի կամ Ավետարանոց բերգում, ուր բնավում էին Մելիք-Շահնազարյանները: Այստեղ ամեն մի ծեռուի դեռես չէր մոռացել, թե ինչեր են կատարվել այդ բերգում, գիտե՞ր այդ բերդի իշխողներից յուրաքանչյուրի կառարած գործը: Առհասարակ, ժողովուրդը սաստիկ վախենում է գրչից: Հենց օր նրա աչի առչև մի բան ես գրում, նա սարսափում է: «Աղա, գրանից հո մեզ վնաս չի՞ լինի...»

«Հազիվ կարողացա ազատվել մի մեծ սկանդալից...»

Բաֆֆին քահանայի տանը հարցուփորձ էր անում գյուղից ժերունիներին մելիքների անցյալից ու «հարկավոր համարած տեղեկությունները նշանակում գրույկի մեջ»: «Հանկարծ հայհոյանեցե՞ր մի խումբ մարդիկ են ներս թափվում ու պատմողներին ծեծելով դուրս էլում սենյակից: Այդ մարդիկ Մելիք-Շահնազարյանների տոմից էին օ: Երան էին ցանկանում, որ իրենց դավանան նախնիի մասին գրվե՞ր»:

Ճանապարհին Գուրգեն Գարրիկյանը իր իսկ գրած երգերն էր երգում: Ղարաբաղի հորովելը, Այանի, Արկանքեն, Կալուն, Խնեցուն երգերը, որոնք բարբառով էին, երկրամասի հողի, լեռների, ձորերի բույրն էին պարունակում:

Ավետարանոցից հարավ սկսվում են Քիրսի լեռները: Գյուղի ծայրում ժայռաբլուրը հին ժամանակներում բնական ապաստարան էր թշնամիներից պաշտպանվելու համար: Հենց այդ հանգամանքն էլ օգտագործել էին Վարանդայի տերերը ու այն իրենց բերդը դարձրել: Գյուղը շատ ու շատ պատմական իրադարձությունների է ականատես եղել: Ավետարանոց անունը ավանդույթյամբ կապվում է Վաչե թագավորի անվան հետ, որը նեղվելով պարսից Պեհրոզ թագավորից, առանձնանում է այս գյուղում և որպես ճգնաժամ անցկացնում իր օրերը: Այստեղ է գտնվում նաև Համամ թագավորի շիրիմը: Գյուղի պատմությունից ամենահիշարժանը 1733 թվականին տեղի ունեցած դեպքերն են: Օսմանական զորաբանակը Սարի Մուստաֆա փաշայի գլխավորությամբ որոշել էր ձմեռը Ղարաբաղում անցկացնել, իսկ զարնանը շարունակել արշավանքը: Հսկա զորաբանակը ողջ Ղարաբաղով մեկ ցրվել էր հայերի բնակարաններում: Ղարաբաղի մելիքների գահերեց մելիք Ավանի կազմակերպած գավազրույթյամբ մի գիշերվա ընթացքում հայերը կոտորեցին ողջ օսմանա-

կան գործը: Այս իրադարձությունը մանրամասնորեն է նկարագրում Բաֆ-
ֆին: Այստեղ է, որ փայլում է հայ կնոջ հերոսությունն ու հայրենասի-
րությունը: Այս անգամ հերոսուհին Վարանդայի մելիքի դուստրն էր՝
գեղեցկուհի Գայանեն: Քուրբ զորապետ Սուլեյման բեգը, որը փափա-
գում էր տիրանալ գեղեցկուհուն, առաջարկում էր ամուսնանալ նրա հետ:
Մնողները միշտ հետաձգում են՝ պատճառ բերելով կրոնական մեծերը,
մինչև հասնում է նշանակված բարեկենդանի վերջին գիշերը: Ավետար-
անոց բերդավանում թուրքերի շարքը պիսավորում էր մելիքի կինը՝ Աննա
խաթունը: Ինքնակոշ փեսացուն իր կյանքը ազատելու նպատակով փախ-
չում է գեպի մելիքական ապարանքը: Գայանեն տեսնելով ատելի «փե-
սացուին» ներս մտնելիս, դաշույնը խրում է նրա կուրծքը: Այդ սպանու-
թյունից հետո Գայանեն իր անձը նվիրեց կուսակրոնությունը և մտավ
բերդի տարածքում գտնվող կուսանաց անապատը: Այն թաղածածկ շենք
է՝ կառուցված անտաշ բարերով: Փոքրիկ գավիթում իրար կողքի էին
շարված 4 տապանաքարեր, որոնք առանձնանում են պատկերաբանդակ-
ների առատությամբ: Մի տապանաքարի վրա կնոջ դեմք է պատկերված:
Հենց դա էլ Գայանեի շիրիմն է: Հայ ազգային-ազատագրական շարժման
պարագույններից մեկի՝ մելիք Հուսեինի շիրմաքարը աչքի է ընկնում
պատկերաբանդակների առավել արտահայտչականությամբ: Սազ նվա-
գողների առջև երեք պարողներ են պատկերված, դիմացը՝ պնակներ,
մեկի ձեռքին՝ զավ և բլիթ: Մյուս երեսին երեք հեծյալներ են պատկեր-
ված և մի թամբած առանց հեծյալի ձի, որի վրա է իջնում սուրբ-հոգին
թուռնի պատկերով: Տասլանագիրը պատմում է, որ մելիք Հուսեինը
տերն էր Վարանդայի երկրի, «սա էր հացով, սեղանով լի, ողորմեր ամեն
ազգի, կերպարանօքն էր գովելի, թագ պարծանք հայոց ազգի, յոյժ կո-
ղորեաց ազգեն Դաչկի, պատերազմեաց յես ոսմանցի, սա ոչ ետ հարկ
թագավորի, ամուր պարխալ էր աշխարհի»:

Վարանդայի իշխանները, թեկուզ և հայրենասիրական մեծ գործեր
են կատարել ու նշանավոր դեմքեր էին ազգային-ազատագրական շարժ-
ման մեջ, բայց ահա գրանց արանքում հայտնվեց մեկը, որը իր դավա-
ճանությամբ անշնչելի ստվեր գցեց ողջ տոհմի ու իշխանության վրա:
Դա մելիք Շահնազար Բ. ն էր, որը դավադրաբար սպանեց մելիքու-
թյան օրինական ժառանգ եղբորն ու սրի քաշեց նրա ողջ ընտանիքը,
տիրացավ իշխանական գահին: Նա տեսնում էր տիրանալ ամբողջ նամ-
սայի մելիքություններին: Շուշիի բերդը գիշելով Փահաճ Ալիին, պատ-
ճառ դարձավ նամսայի երբեմնի հզոր միության կործանմանը: Սակայն
դրա կողքին Ավետարանոց գյուղի հետ է կապվում մեկ այլ նշանավոր
անուն ևս: Դա մելիք Շահնազարի ջորեպանի՝ Մեհրաբենց Կյուրբիի որդի

Ռոստոմն էր, որը 14 տարեկան 4ասակում փախել է Աստրախան, որտեղ
ուսական արքունիքին պատգամախոսության մեկնող մելիքների շքախմբ-
րին միանալով, հայտնվել է Պետերբուրգում: Մելիք Ջումշուդը՝ այն հերո-
սը, որը հետագայում սպանում է Շուշիի Իբրահիմ խանին, պատանի Ռոս-
տոմին աջնվականության թուղթ է տալիս: Ղարաբաղցի պատանին ծառա-
յության մտնելով ուսական բանակում, դառնում է Հայրենական պա-
տերազմի հռչակավոր հերոսներից մեկը՝ գեներալ-լեյտենանտ Մադաթո-
վը, որի մասին այնքան գովեստի խոսքեր է գրել մեծ Տոլստոյը: Իշխան
Մադաթովը 1816 թվականին նշանակվելով Անդրկովկասի առանձին զո-
րաբաժնի հրամանատար, կրկին փայլեց զորավարի իր արտակարգ տա-
ղանդով: Նա պարսիկների դեմ մի շարք փայլուն հաղթանակներ տարավ:
Սակայն այս հաղթանակները Ղարաբաղը ամենևին էլ չազատեց մահ-
մեդական խաների տիրապետությունից: Մեհթի խանից որպես ընծա
ստանալով Վարանդայի 15 գյուղերը, Մադաթովը աստիճանաբար առան-
ձին հարցներում զիջեց նրա կամայականությունների առաջ:

Լ. ՂԱՐԱԲԱՂԻ ՀՈՐՈՎԵԼԸ

Չանխաչի գյուղխորհրդի նախագահը ցույց տվեց մելիքական թա-
ղածածկ մի զարագամ, որը այժմ գինու պահեստի էր վերածված: Հե-
տաքերի կառույց էր ս. Աստվածածին եկեղեցին (1651 թ.): Այն փաս-
տորեն բազիլիկ տաճարի ու հայկական քաղաքացիական ճարտարապե-
տության մի եղակի համադրություն էր: Յուրաքանչյուր 4 սյունների արան-
քում թաղածածկ տանիքը ավարտվում էր երգիկով: Եկեղեցին երեք եր-
գիկ ուներ, որոնցից լույս էր թափանցում: Պակաս տպավորիչ չէր նաև
դպրոցի թանգարանը: Ուշագրավ էր գրամների հարուստ հավաքածուն:
Այն հպարտությամբ ցույց տվեց Խորհրդային Միության մոզովրդական
ուսուցիչ Իվան Աթաջանը: Ապա նա ցույց է տալիս 1958 թվականին իր
ստեղծած աշակերտական արտագրական բրիգադի Սեֆյատենց տափում
հիմնած 28 հեկտարանոց այգին: Մառերը ծանրացել էին բերքի տակ:
Գպրոցականները արդեն 110 տոննա տանձ և խնձոր էին հանձնել պե-
տությանը:

- Ասա՝ 1958-ին ես սկսել ռեֆորմը էլի, — ասաց Գ. Գաբրիելյանը:
- Կյանքումս ծառ կտրած չկամ, — ասաց Ի. Աթաջանը, — տատիցս
մի հիշատակ մնաց ինձ, որը դաս եղավ իմ ողջ կյանքում: Մի անգամ
անտառում մի շյուղ կտրեցի, տատս ասաց՝ տեսա՞ր, մի կյանք խա-
վարեցիր:

Հետո խոսեցինք հարսանիքների, հին ծեսերի մասին: Ի. Աթայանը Կոլխոզաշենում ներկա էր եղել մի հարսանիքի, որտեղ ջաճը հինգ մետրանոց ձողի ծալքին պահած, աչ ու ձախ են շարժում, իսկ մրցող տղաները ցանկանում են մի կրակոցով հանգցնել այն: Հաղթողը դարբին վազզենն էր: Ասում են, նա իր հարսանիքի ժամանակ ևս այդպես հանգցնում է ջաճը, որն ընկնում է իրենց տան կտրի վրա: Լավ էր, առատ ձյուն էր նստել կտուրին, կրակը իսկույն ծածկում են ձյունով ու հանգցնում:

— Բա շուշեցի պղնձագործ Միմոն Բալայանի մասին լսե՞լ եք,— հարցրեց Հ. Բեղարյանը,— հայտնի վարպետ էր, համբարության անգամ: 1920 թվականին նա թուրքական թնդանոթների արկի պարկուճից թասեր է պատրաստել, դրանով իսկ ծաղրելով մարդասպաններին:

— Կոլխոզաշեն ասացիր՝ Բաֆֆու հետ պատահած մի դեպք հիշեցի,— ասաց Գ. Գաբրիելյանը,— դա նախկին Բրիտիս գյուղն է, որի մասին Առաքել Դավրիժեցին է գրել: Ուրեմն, կոլխոզաշենցի Օհան ամին ու Մաթոսը գյուղի հանդում իրենց տավարը պահելիս են լինում, երբ տեսնում են՝ երկու ձիավորներ եկան, իջան ձիուց, մտան գերեզմանատուն, հետո սկսեցին բարերը զննել: Մեկը Մամնայի քահանան էր, մյուսը՝ Բաֆֆին: Հետո նրանք մի բարի վրա բաց արեցին կապոցը, հաց կերան, իրենց էլ հյուրասիրեցին: Դա ինձ Օհան ամին էր պատմել: Հետո իրենք հաց ուտելիս Պրլլպուղու մասին են պատմում: Նրանց աչքի առաջ այդ տխուր դեմքը բացվում է, լցվում աշխուժով: Բաֆֆին լիաթոք ծիծաղում է, ինքն էլ սկսում արևմտահայերի, սալմաստցիների մասին ծիծաղաշարժ դեպքեր պատմել:

— Հետաքրքիր է,— ասացի ևս, հիշելով Շիրվանզադեի նկարագրությունները,— երևի դա նրա միակ լիաթոք ծիծաղն էր այդ ճանապարհորդության ընթացքում: «Ինչպես կամավոր ճգնավոր, խույս էր տալիս հասարակական զվարճատեղերից, վարում շափավոր և սուղ կյանք»,— գրում էր Շիրվանզադեն: Հավանաբար, նրա բնականից ոչ զվարճասեր բնավորության վրա իր կնիքն էր թողել նաև մշտական մեկությունը (նա հնարավորություն չէր ունեցել Փայաջուկից Թիֆլիս տեղափոխելու իր ընտանիքը):

— Ուտելիքի հարցում ևս նա խիստ շափավոր էր,— ասաց Հ. Բեղարյանը,— «Իմ սնունդն էր մեծ մասամբ մի կտուր հաց, մի քիչ պանիր, ծխախոտ և թեյ»— Բաֆֆին պատմում էր Շիրվանզադեին:

— Հիմա կենդանի՞ է այդ Օհան ամին,— Գ. Գաբրիելյանին դիմեցի ևս:

— Չէ, 1970-ին է մահացել, մոտ 105 տարեկան հասակում:

— Բաֆֆու կյանքից մի դեպք էլ ևս պատմեմ,— ասացի ևս,—

Բաֆֆին խանութպանից «նիսյա» հաց է խնդրում, իսկ խանութպանը, որ չէր ճանաչում նրան, ամոթանք է տալիս ու մերժում: Դա 1888 թվականին էր, մահից մեկ շաբաթ առաջ: Բաֆֆին հիվանդ էր: Դիտիկոր հետ է վերադառնում:

— Պահ, տնաշեն, Բաֆֆին հաց ուղի՞ շտան,— գլուխն օրորելով ասում է մի ընկեր:

— Դե այսօրվա պես չէր, որ մի տասը անգամ հեռուտատեսութայմբ ելույթ ունեցած լիներ, լուսանկարները թերթերում, ամսագրերում տպագրած լինեին: Իսկ խանութպանը ամենամուլի ընթերցողներից էր, Բաֆֆու երկրպագուն, բայց դեմքով չէր ճանաչում նրան: Մեկ շաբաթ հետո մահանում է մեծ գրողը: Թիֆլիսը նման թաղում չէր տեսել: Մեծահարուստները ամենաթանկարժեք արծաթյա պսակներն էին պատվիրել: Քաղաքը չէր կարողանում տեղավորել ամեն կողմից եկած հուղարկավորներին:

— Խանութպանը տես՞վ Բաֆֆուն:

— Իրոք, խանութպանը ցնցվում է՝ տեսնելով նրան դազաղում: Մի քանի օր հետո գալիս է Բաֆֆու կնոջ՝ Աննայի մոտ ու հայտնում, թե ինքը Բաֆֆուն մի խոշոր գումար է պարտք: Աննան գիտեր, որ իր ամուսինը այդքան գումար չէր կարող ունենալ, ուր մնաց թե պարտք տար որևէ մեկին, ու հրաժարվում է ընդունել այդ խոշոր գումարը: Խանութպանը մի քանի տարի նրանց ձրի հաց էր տալիս՝ այդպես ձգտելով քավել իր մեղքերը:— Քիչ լուելուց հետո շարունակեցի,— վերջերս Պարսկաստանի հայկական հուշարձաններն ուսումնասիրող Արմեն Հախնազարյանին հանդիպեցի: Նա պատմում էր, որ 1932 թ. երկրաշարժից Բաֆֆու հոր տունը փլվում է հիմնովին: Հիմա տան տեղը պատնեշապատվել է ու մեծ գրողի կիսանդրին կանգնեցվել: Արմենը խոստացել է Փայաջուկից տեսարաններ ուղարկել: Ասում է՝ Խոյ-Սալմաստում հայեր չեն մնացել: Միայն թուրքեր են բնակվում այնտեղ:

— Իսկ 1881 թվին Խանքենդի (Ստեփանակերտ) մոտ Կժվժան տեղամասում հերկելիս մի կարաս են գտնում՝ մեզը լիքը հին ուլունքներ, գործիքներ: Բաֆֆուն են ցույց տալիս: Մեծ վիպասանը դալիս է, մի գեղեզման բացել տալիս, զննում ու ասում, որ հին դամբարանադաշտ է այդ տեղը: Դաշտը մինչև հիմա «Բաֆֆուն դյուներ» է կոչվում: Հետագայում Հյուսիսն անունով մի գերմանացի հնագետ եկավ ու սկսեց պեղումները:

Կրկին լեռները լցվեցին Գ. Գաբրիելյանի հորովելով: Երգը այս լեռների, ձորերի ծնունդ է, ու նրա շուրթերից փոխվում է լանջն ի վեր, սահելով հավում Քիրսի ճակատին, լեռներն ու ձորերը լցնում անհուն կարոտով:

Իրիքնակը տուս ա եկա՛ւ,
Տանքս յըրա յյուս ա եկա՛ւ,
Սօր մի կորե վեր վար անի՛նքս,
Գլիդա՛ սրտես հույս ա եկա՛ւ:
Հո ըրա, հո՛...

Հեղինակի շուրթերում այս երգը միշտ մի նոր ելևէջ, նոր հմայք է ստանում: Երգը երբեք չի կրկնվում, ինչպես սարերը, անդնդախոր ձորերը, դաշտերը:

Հիշեցի Ավետարանոցում մելիքների ժառանգների ու Բաֆֆու միջև ծագած միջադեպի մասին: Տեսեսության տնօրեն Գեորգի Պետրոսյանն ու Իվան Աթալյանը մոռացվեցին:

— Ես քո փոխարեն,— ասաց Հ. Բեգլարյանը,— այդ հարցի մասին չեմ էլ գրի: Գյուղի մարդկանց մի էլ մեղադրիր դավաճան մելիքի համար: Նույնիսկ Բաֆֆու հարցում կարելի է արդարացնել մելիքի հետևորդներին: Նրանք էլ են անհարմար զգում իրենց նախնու դավաճանության համար:

— Գեորգի ջան,— տնտեսության տնօրենին դիմեց Գ. Գաբրիելյանը,— բերդի մուտքի կամարներից երկուսը փլված են, քե մատաղ, սարքեր էլի, ի՞նչ կլինի:

— Հա, պարոն Գաբրիելյան,— պատասխանեց Գ. Պետրոսյանը,— կսարքենք:

— Քմմատաղ, բերդի եկեղեցին էլ շիֆրով, մի բանով ծածկիր, փուլ է գալիս,— շարունակեց բանաստեղծը:

— Դարդ մի արա, Գարո ապա, կանի,— տնօրենի փոխարեն պատասխանեց Հ. Բեգլարյանը:

Վերադարձին Դաշրուլախ գյուղը մտանք: Գ. Գաբրիելյանը իր ազգակիցներից մեկին էր փնտրում: Աղբյուրի մոտ հայ և բուրդ աղջիկները ջուր էին վերցնում կուժերով:

— Աղբյուրի անունն ի՞նչ է,— հարցրի ես:

— Քարաղբյուր:

— Գյուղի անունը՝ Ղաշրուլա՞խ:

— Այո,— ասաց մի գյուղացի,— թարգմանել են ու բարտեղում «Դաշրուլախ» գրել:

ԼԱ. ՆՈՐ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հաղորդի շրջան (հնում՝ Մյուս Հարանդ, ուշ միջնադարում՝ Գիզակ, դիզել բառից) տանող ճանապարհին մեր մեքենան սկսեց փոթկացնել, ու վարորդը այն դուրս հանեց ճանապարհից:

Շուտով մթնեց: Գիշերը դաշտի եզրին պետք է անցկացնենք: Ճանապարհի մի կողմում ցորենի արտն էր, մյուս կողմում՝ խաղողի անծայրածիր այգիները: Ուղեկիցներս մթության մեջ ցախ հավաքեցին ու փոքրիկ խարույկ վառեցին: Կծկված պանակեցի խարույկի մոտ: Մեկ մեջքըս էի ուղղում դեպի կրակը, մեկ՝ դեմքս: Անհնար էր նման հաճելի տաքության աղբյուրի՝ խարույկի մոտ դիմադրել երազների հոսքին, տեսիլներիին:

Ձեռնափայտը ստեպ-ստեպ գետին դոփելով, անշտապ քայլերով դեպի մեջ է գալիս եմբուպական գլխարկը ճակատին իջեցրած, ցածրահասակ մի մարդ: Նրա հետևից գալիս էր ձիու սանձը բռնած քղանին: Ձիու մեջքին նրա իրերն են՝ ծանր պայուսակը, լցված Արցախ-Ղարաբաղի մասին նյութեր պարունակող Մովսես Կաղանկատվացու, Կիրակոս Գանձակեցու, Եսայի Հասան-Ջալալյանի, Սարգիս Ջալալյանցի գրքերով, Շուշիում ձեռք բերած ձեռագրերով ու փաստաթղթերով, գրողի ուղեգրական տետրերով: Ինձ է նայում լուսանկարներից շատ ծանոթ ու հարազատ Բաֆֆին՝ «հայ ազգի վշտերի ու դառնությունների թարգմանը»: Մի ժպիտ շուրջ թախծոտ դեմքին: Հուզմունքից կտրվում էր շունչս: Ո՞վ կարող էր երազել այսպես հանդիպել Բաֆֆուն: Քույրնին անհուսկանալի ինչ-որ բան քրթմնջաց: Երևի ստուգում է իմ ուլ լինելը:

— Հա՞յ եք,— հարցրեց գրողը: Շփոթմունքը խանգարեց ինձ արագ պատասխանելու:

— Այո,— պատկանանքով մրմնջացին շուրթերս:

— Ճամփորդ եմ, Շուշի եմ գնում,— ասաց նա:

— Շուշի՞,— զարմացած հարցրի ես, ապա լռեցի: Մի՞թե Բաֆֆին չգիտե, թե ինչ է պատահել «հայոց փոքրիկ Փարիզի» հետ: Մա երևի միակ հնարավորությունն է մեծ գրողին հայտնելու հետագա իրադարձությունների, հայ ժողովրդին վիճակված դառը ճակատագրի մասին: Գուցե պատմեմ, թե ինչպես 1920 թ. մարտի 3-ին թուրք սակարներն ու մուսավաթականները հանկարծակի հարձակումով թալանեցին ու հրկիզեցին հայկական թաղամասը, կոտորեցին հայ բնակչությանը:

— Մտորումների մեջ ես, որդիս, ինչ-որ բան կա մտքումդ:

Գուցե և իզուր չէ, որ ճակատագիրը մեզ հենց Ղարաբաղում է հանդիպեցրել իրար: Նա զգո՞ւմ է, որ իր հետքերով եմ ճանապարհորդում:

Չէ, ստույգ ոչինչ չպետք է իմանա ապագայի մասին, այլապես ամեն ինչ թեկուզ հենց ժամանակի նորմալ ընթացքն ու պատմական իրադարձությունների հերթականութեամբ կխախտվեն, և մեծ խառնաշփոթ կըստեղծվի:

— Ես էլ եմ ճամփորդ ու դեպի Տոզ, Ամարաս եմ գնում,— ասացի ես,— մի հին ճամփորդի հնաքերով:

— Ա՛, իհարկե, Սարգիս Զարայանցն է դա: Նրա երկու հատորներն էլ ունեմ ու օգտվում եմ նրա խորհուրդներին: Ուրեմն՝ Ղարաբաղի ճակատագիրը ձեզ էլ է հուզում: Ի՞նչ կլինի հայության հետ: Մարդկությունը կզլի՞ մեզ, թե վերջապես, կհասկանանք, որ սեփական ձեռքերով պետք է կռնեք մեր ճակատագիրը: Է՛հ, եթե հայերի մոտ անհատական քաջությունը բնկերական լիներ, ապա կարող էին աշխարհի երեսին ամենազորեղ ազգերից մեկը լինել:

Իհարկե, ոչինչ էլ չի կոստում, որ Ղարաբաղի հայությունը իր այցելությունից 100 տարի հետո էլ պահպանելու է իր հիշատակը:

— Քայլում եմ Ղարաբաղի մելիքների ճամփաներով ու մտորում կիսատ մնացած «Դավիթ-բեկ», գրվելիք «Սամվել», «Հարեմ», «Սալբի» վեպերի մասին: Պետք է հասցնեմ գրել ու հրատարակել դրանք: Անհամբերությունից սիրտս պոկ է գալիս: Ամեն ինչ այնպես է կուտակվել ներսումս, որ կարող եմ մի պայթյունով դուրս հորդել: Բայց արցախական աշխարհի մասին էլ է պետք գրել: Կարծում եմ, որ ես կկարողանամ ապացուցել, թե կա Ղարաբաղի մելիքների պատմությունը: Ես առաջինը վեր կհանեմ այդ պատմությունը, իսկ հետագա ուսումնասիրողները թող գան ու ավելի խորանան, ճշտեն:

— Բայց չէ՞ որ վտանգավոր է այս խառը, անորոշ ժամանակաշրջանում ճանապարհորդել Ղարաբաղում:

— Իրոք, մի սոխի համար մարդու գլուխը կկտրեն ավազակները: Աֆրիկայում ճանապարհորդը իրեն ավելի ապահով է գգում, քան այստեղ: Չէ, շտապել է պետք, ինձ շատ ժամանակ չի մնացել:

— Դուք 46 տարեկան եք: Տղամարդու և գրողի համար մի ծաղկուն շրջան: Առնվազն մի 30 տարի ևս ունեք ձեր առաջ:

Լոնցի, Ինչո՞ւ եմ ստում: Չէ՞ որ ես գիտեմ, որ ընդամենը 7 տարի հետո ծայրահեղ աղքատության մեջ կմահանա բազմաթիվ վեպերի, պատմվածքների, հրապարակախոսությունների, ճանապարհորդական նոթերի ու բանաստեղծությունների հեղինակը:

— Ձեզ հայտնի է իմ տարիքը,— մտազբաղ ասաց Բաֆֆին,— ուրեմն և գիտեք ով եմ ես: Մի քանի օր առաջ, կարծեմ Դահրավ գյուղում էր դա, երազումս հանդիպել եմ ինձնից 100 տարի հետո իմ անձով

հետաքրքրող մարդուն, զրուցել հետը, պատգամներ տվել: Երազումս լույս կար: Պայծառ, պայծառ էր: Հայրենիքիս աստղն էր: Մենք աստղ ունենք: Կանք և կլինենք: Մենք աշխարհին դեռ շատ բան ունենք տալու է՛հ, տկարությունս հաղթահարում է ինձ: Այս ճամփաները դաժան փորձություն են առողջության համար:

Քոլանին սանձեց ձին: Բաֆֆին նստեց նրա վրա, ու շարունակեցին ճանապարհը:

Խրոխտ ապառաժներին սեպված բերդերն ու անդնդախոր վիհերի ծերպերին թառած հինավուրց վանքերը արցախյան մելիքների հետ անընդհատ հոսում են իմ առաջ: Քաղաք է հայտնվում: Բարձր դմբեթից ու սրագագաթ վեղարից կոստում եմ, որ Շուշիի Ղազանչեցոց եկեղեցին է:

Հանկարծ երազս լցվեց ոչխարների մայուններով, կովերի բառաչներով, հովիվների կանչերով ու շների հաչոցներով: Անհայտ հոսանքի մեջ եմ հայտնվել: Գուցե վարարած Տրտուականն է ինձ թշում: Ո՞րն է երազ ու ս՞րը՝ իրականություն: Իրավիճակը պարզելու համար բացեցի աչքերս: Որտե՞ղ եմ: Ոչխարի հոտ էր անցնում ճանապարհով, շսկա գամփռը ոստոսաց, հոտոտեց ինձ, անսպասելիորեն, բամբ ձայնով հաչաց ականջիս մոտ ու դժգոհ հեռացավ: Երկինքը պայծառ աստղաչքերը բացած անթարթ ինձ էին նայում:

Ուղեկիցներս հոհում էին ինձ վրա:

Առավոտյան մեքենան պատրաստ էր: Կրկին ուղղություն վերցրինք դեպի Հաբանդ-Իիզակ-Հաղրութ:

ԼԲ. ՀԱԴԻՈՒԹԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԸ

Ստեփանակերտից Հաղրութ տանող ճանապարհը մի պահ դուրս էր գալիս ԼՂԻՄ-ի սահմաններից: Ֆիզուլու շրջանի Ղարաբաղար գյուղում բլրի գագաթին սրբատաշ քարերով շարված հետաքրքիր կառույց նկատեցի: Հորդ անձրև էր գալիս, ուստի կառույցը գնեցիլը հետագային թողեցի: Արտաքինից այն ուշ միջնադարի եկեղեցական բազիլիկ կառույցի էր նման: Սակայն բլրի ստորոտում մեկ այլ կառույց ցնցեց ինձ: Եռակամար մուտքը հինավուրց իջևանատան բակ էր տանում:

— Ի՞նչ կառույց է սա,— հարցրի բարձրահասակ մարդուն:
— Շահ-Աբասի դարադամն է,— անձրևից պատսպարվելու համար գլուխը ավտոմեքենայի մեջ խոթելով պատասխանեց տարեց ազրբեջանցին:

— Շահն ի՞նչ գործ ունի այստեղ:
 — Ասում են՝ մի բանի օր այստեղ էր մնացել:
 Այն փաստորեն Պարսկաստանից Ղարաբաղ, Գանձակ կամ Թիֆլիս տանող առևտրական ճանապարհին առաջին իջևանատունն էր:
 — Իսկ բլրի գագաթին ի՞նչ կառույց է, — հարցրի ես:
 — Մեջիթ է:
 — Նման մեջիթ ողջ Արևելքում չես գտնի, — ասաց ուղեկիցս:
 — Գե՛, ես իմ, — ասաց դարդաբազարցին, — ասում են՝ աղվանների եկեղեցին է:
 — Աղվաններն ովքե՞ր են, կա՞ն այդպիսիք ձեր գյուղում:
 — Մեր գյուղո՞ւմ, չէ մի, ի՞նչ աղվան: Առաջ հայերի գյուղ էր, հիմա մերն է:
 — Իսկ այս կառույցը:
 — Չգիտեմ, բնկեր ջան, մեկ ասում են՝ մեջիթ է, մեկ՝ եկեղեցի:
 Իջևանատունը տիպիկ հայկական ճարտարապետության նմուշ է: Մրահներից մեկում կամարի սյան վրա մի արձանագրություն գտա. «Ես Զլի Վարդս եկի թվին ՌՃԼ (1681)»: Զլի Վարդը վաճառակա՞ն է, թե պարզապես 1681 թվականին էր գնել կամ ժառանգել քարավանատունը: Համալիրն, իրոք, ուսումնասիրման, շափազրման կարիք ունի: Իսկ եկեղեցին, ըստ Ս. Բարխուդարյանի, հիմնվել է 1742 թվականին:

Հաղրութը կառուցապատման տեսանկյունից ՂՂՄ-ի մյուս շրջկենտրոններին զգալիորեն զիջում է: Սակայն Հաղրութի ձորակը շատ հարուստ է միջնադարյան հուշարձաններով: Քանի որ Բաֆֆին այս ձորակը չէր այցելել, ուստի ինձ հետաքրքրում էր միայն շրջանի պատմա-երկրագիտական թանգարանը, որտեղ հույս ունեի Բաֆֆու Տոզ կամ Գուշավանք այցելություն մասին կամ այդ ժամանակաշրջանի հետ կապված նյութեր գտնել: Սակայն այն դեռ չէր էլ հասցրել բացվել, չնայած իր նյութերով, ցուցանմուշներով վաղուց էր պատրաստ: Թանգարանի բարդ ճակատագրով հետաքրքրվելիս պատահականորեն իմացա թանգարանի վերաբերյալ Ադր. ԽՄՀ ԳԱ պատմության ինստիտուտի այն եզրակացություն մասին, որն ուղղված էր թանգարանի կազմակերպչներին: Դժգոհություն հայտնելով թանգարանի նյութերը հավաքողներից, այնտեղ գրված էր, որ որպես հեղինակություն չեն ճանաչում ո՛չ Մ. Խորենացուն և ո՛չ էլ Մ. Կաղանկատվացուն: Մինևույն ժամանակ նշվում է, որ Սպիտակ խաչվանքը, Գուշավանքն ու շրջանի մյուս հուշարձանները ոչ թե հայկական են, այլ աղվանական: Ըստ այդ գրություն, թանգարանում պետք է

տեղ գտնեին ոչ թե հայոց գրերը, այլ աղվանական այբուբենը, որը ևս ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը:

Իրոք, ուսումնասիրելով հայոց պատմահայր Մ. Խորենացու անմահ գործը, համոզվում ենք, որ նա ամենևին էլ չի «կանխազգացել» հազար հինգ հարյուր տարի հետո տեղի ունենալիք իրադարձություններն ու որոշ վայ-գիտնականների ցանկությունները: Ե-րդ դարի պատմիչ Մ. Կաղանկատվացին ևս կրկնել է նույն «սխալը»: Նրանք իրենց երկերում գրելով հայ ժողովրդի պատմությունը, «հանդգնելով» Քուռ-Արաքսի միջագետքը պատկերել որպես Մեծ Հայքի անբաժանելի հատվածը, ամենևին էլ չեն «կարողացել» նախատեսել, որ դա կարող է վիրավորել այսօրվա քարտեզներով ու Թուրքիայի պանիսլամիստ գիտնականների անմիջական ազդեցությամբ գործող մի շարք «գիտնականներին» նենգ նպատակները: Ծանոթանալով այդ «պատմաբանների» աշխատանքներին, համոզվում ենք, որ Խորենացու և հայոց արևելյան կողմանց պատմագիր Կաղանկատվացու գրած երկերը ամենևին էլ չեն համապատասխանում նրանց այսօրվա ծրագրերին ու գիտավորություններին: Այդ «գիտնականները» ամեն կերպ ձգտում են Ալբանիա-Աղվանք տեղանունը հարմարեցնել այսօրվա ողջ Ադր. ԽՄՀ սահմաններին, նույնիսկ տարածում Սյունիքի ու Վայոց Ձորի վրա, իսկ հայ ժողովրդի փոխարեն փորձում գոյություն չունեցող ու մտացածին միավոր տեղագրել:

Թե՛ Բաֆֆին և թե՛ մյուս հայ ու օտար ուսումնասիրողները Արցախ-Ուտիքի տարածքում ամեն քայլափոխի մեսրոպատառ հայերեն արձանագրություն կրող մի քարի, հուշարձանի են հանդիպում, որոնք լույս են սփռում մեր նախնիների պատմության վրա: Իսկ ահա Հաղրութի թանգարանին հայերենի փոխարեն այբանական (աղվանական) գրեր են հրամցում: Ի՞նչ լեզու է դա: Այս տարածքում ի՞նչ է ստեղծվել այդ գրերով: Կա՞ մի քար, մի թուղթ, որը վկայեր այդ լեզվի, այդ մշակույթի մասին: Եթե չեն եղել, ապա այդ գրերը չէին կարող որևէ նշանակություն ունենալ նույնիսկ այն ժողովրդի համար, որի համար ստեղծվել էին գրանք: Այո, Մեսրոպ Մաշտոցը փորձել է անդրկուրյան երկրի՝ Ալբանիայի տարածքում ապրող տարբեր լեզուներով խոսող 26 ցեղերի համար համընդհանուր գրեր ստեղծել, որը պետք է միավորեր, համընդհանուր մշակույթ ստեղծեր այդ երկրում: Այս ձեռնարկը, սակայն, հաջողություն չունեցավ: Նույն Մաշտոցը Քոփ աշափնյակում, այսինքն՝ Արցախում և Ուտիքում, նոր գրեր չէր կարող առաջարկել, որովհետև այդտեղ միայն հայեր էին բնակվում: Մեսրոպն այստեղ դպրոցներ էր հիմնում ու տարածում իր իսկ ստեղծած հայոց գրերը: Իր ժամանակի այդ խոշորագույն գիտնականը վրաստանում չէր կարող տարածել իր

ստեղծած հայ գրերը, որովհետև այդպեղ արդեն այլ վաղուց արդեն ձեւ-վորված էթնիկական միավոր էր բնակվում՝ իր յուրահատուկ լեզվով, մշակույթով:

19. ՄԱՆԳԻ

Հազրութից Տող հասնելու փոխարեն հայտնվեցի Մամեղածոր գյուղում: Տողի տնտեսութունը յոթ գյուղ էր ընդգրկում, որոնց մեջ էին նաև լեռան փեշին իրար կողքի շարված Զրահուսը (Ճարակոյս), Մամեղածորը (Մարիամածոր) և Սկուռեն (Սակուռին): Ես պետք է հանդիպեի տնտեսության կուսակազմակերպության քարտուղար Հենրիկ Միրզոյանին, որը լավ գիտեր հնավայրերը: Սակուռեցի մի մարդ փորձեց ձորի մյուս կողմում թեթության վրա շարված տների արանքում ցույց տալ կուսքարտուղարի տունը:

— Հե՛նա, էն կանաչ դարպասը իրենցն է: Տես, բացվեց: Իսկ կինը բիդոններով բեռնված էջը առաջն արած չրի է գնում: Դպրոցում գրականության և լեզվի ուսուցչուհի է, նա էլ կարող է շատ բան պատմել հնությունների մասին: Հենրիկը պետք է սպասի կինը վերադառնա աղբյուրից, իջեցնի ծանր բիդոնները, հետո գա:

Գյուղում 120 տուն կային, որոնցից 60-ն արդեն դատարկ էին: 20 տարի առաջ գյուղի 8-ամյա միջնակարգ դպրոցում 110 աշակերտ կար: Այժմ ընդամենը 40 աշակերտ են հաճախում դպրոց, այսինքն, յուրաքանչյուր դասարանում՝ 5 աշակերտ:

Գյուղից վերև լեռան դապաթին, կարծես դարերի պահանջով շրջապատի անդորրն է հսկում Վնեսա զալան (Ավանի բերդը): Միայն այս բերդից է հնարավոր տեսնել Արաքսն ու Իրանի սահմանները: Դիզակի տեր մելիք Ավանը (Եգանը) հիմնել է այս բերդ-գիտակայանը, որպեսզի շուտ կանխվի պարսից կամ այլ զորքի հարձակումը:

Հենրիկ Միրզոյանի հետ այցելեցինք Սակուռի գյուղում գտնվող եկեղեցին: Շքամուտքը առանձնանում է զարդապատկերների ներդաշնակ խաղով ու ինքնատիպ ճոխությամբ: Շքամուտքի ընդարձակ արձանագրությունը հայտնում է, որ եռանավ բազիլիկ կառույցը հիմնվել է 1682 թվականին: Պատուհաններից մեկի կամարին ներսակողմից օձի բարձրաքանդակ էր տեղադրված: Պատկերը շատ դինամիկ էր, բնական: Ավանդությունը պատմում է, որ կառուցող վարպետի աշակերտն է քանդակել այն: Վարպետը անիծում է աշակերտին քանդակի համար: Նույն պատուհանից ներս մտած օձը խայթում է աշակերտին:

Հենրիկն ու իր ուսուցչուհի կինը պատմում են մուշկապացի 90-ամյա Մանգի (Մանգյունց Հեղինեի) մասին: Գեռես երիտս սարգ հասակում՝ ուսանողական տարիներին Շուշում ծանոթանալով Մարքսի ու Լենինի գաղափարներին, նա կապվում է հեղափոխականների հետ ու հարկ եղած դեպքում օգնում նրանց: Մի անգամ հետապնդումից փախչող երկու հոգի Մուշկապատում են հայտնվում: Հեղինեն նրանց ցորենի կույտի մեջ է թաքցնում, իսկ թուփոցիկները խցկում ճախարակի անիվն ու սկսում թել մանել: Ոստիկաններին ոչ մի կերպ չի հաջողվում գտնել հեղափոխականներին: Պատմում են, որ Հեղինեին փոքր հասակում մայրը ամեն օր 30 կմ ճանապարհ կտրելով տարել էր Շուշիի առաջական դպրոցն ու հետ բերել: Երբ գյուղացիք հանդիմանել են, թե ինչու է իզուր նման շարշարանք կրում, մայրը պատասխանել էր՝

— Վեչինը, թող իմ վեները շրջոտեն, մենակ թա խուխես կլլոխը մին պեն մննե:

Ղարաբաղում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Մանգյունց Հեղինեն երկար տարիներ գյուղխորհրդի նախագահ էր աշխատել: Շրջանում առանց նրա մասնակցության Բաֆֆուն կամ մյուս ականավոր հայ դրողներին նվիրված երեկո չէր կազմակերպվում: Ցավոք, ինձ վիճակված չէր հանդիպելու այդ կենդանի պատմությանը: Հայտնեցին, որ մեկ ամիս առաջ էր մահացել:

Բաֆֆին իր ճանապարհորդության ժամանակ կոչ էր անում ուսուցիչներին Շուշիի հոգևոր դպրոցի վարժապետ Խոջամիրջանցի օրինակով հավաքել, արտագրել հին հիշատակարանները, գրի առնել «բերանացի ավանդությունները, որոնք ժողովրդի մեջ պահպանված են զանազան ավերակների, ժայռերի, բլուրների և այլ վայրերի մասին»: Այսօր ևս այս հարցը չի սպառել իր կարևորությունը: Մանգյունց Հեղինեն գրի էր առել մի քանի ավանդություններ, որոնց մեջ ինձ հետաքրքրեց հենց իրենց տոհմի մի ճյուղի ճակատագրի հետ կապված պատմությունը: Ես լրիվ արտագրեցի այդ պատմությունը:

«Ամեն ամառ Շուշի քաղաքից թուրքական մի ընտանիք որպես հովեկ էր գալիս մեր տուն: Նրանց հետ իմ ծնողները բարեկամություն էին անում: Հիշողությանս մեջ մնացել են Նաջաֆի ու Զիլֆուլայարի անունները, որոնց հետ ամեն օր Ետին հանդ թուփ ուտելու էինք գնում: Երբ մի օր հարցրի մորս, թե ինչու ենք հենց այդ թուրքական ընտանիքի հետ բարեկամություն անում, նա պատմեց մեր տոհմի հետ պատահած մի հին դեպք:

— Քո հոր պապը, բալիկս,— պատմում էր մայրս,— յոթ տղա է ունեցել: Տնտեսության հետ կապված աշխատանքները բաժանված էին 8»

նրանց միջև: Միջնակը՝ Առուստամը, անասուններն էր հանդում արածացնում: Մի օր նա հանդում գյուղի մեծահարուստ Առոնի երեք տղաներին է հանդիպում: Զարածճի Առուստամը նրանց ստիպում է իր հարձար մի սալ պատրաստել: Տղաները լուս ու հնազանդ կատարում են նրա պատվերը, քանի որ գիտեին նրա ուժի ու խենթութեան մասին: Առուստամը նրանց ստիպում է լծվել իրենց իսկ պատրաստած սալին ու լրեն ման ածեն հանդում: Հավանաբար, Առուստամը ցանկանում էր ուղղակի վրեժ լուծել մեծահարուստ Առոնից՝ ազբանների ու դրանց լճում և իր հորը ճնշելու համար: Երեկոյան նա իր արարքի մասին հպարտութեամբ պատմում է հորը: Վերջինս զգալով Առոնից սպասվող վերահաս վտանգը, հանդիմանում է որդուն: Այս դեպքի մասին իրենց հորը պատմում են նաև երեք եղբայրները: Իսկ Առոնն իր մտքում արգեն մի հարմար պատիժ էր նախապատրաստում Առուստամի համար: Հաջորդ օրը նա գալիս է շարածճի տղայի հոր մոտ և առանց խոսք անգամ ակնարկելու անցյալ օրվա զեպքի մասին, պահանջում է, որ տղաներից մեկին իր հանդում աշխատելու ուղարկի: Հայրը առաջարկում է վեց տղաների անունները, սակայն Առոնը Առուստամին է ընտրում: Հայրը հարահասակ դիչում է: Առուստամը երեք օր վաղ տառվածից միջև ուղ երեկս Առոնի աչքում հոր էր փորում: Ավելի խորանայով, նա սկսեց դաշակել վրեժխնդիր հոր մտադրությունն ու հորի պատերին աննկատելի սկսեց փոսորակներ փորել: Չորրորդ օրը երեկոյան Առոնը կտանալով խոր հորի վրա, պարանի փոխարեն հսկա գլուխն է ցույց տալիս:

— Ինքդ փորեցիր, ինքդ էլ վայելիր..., դա քո պատիժն է, — ասում է նա ու ճեղանում:

Ուղ երեկոյան անհանգստացած հայրը Առոնի մաս սրդուն փնտրելու է գնում: Մեծահարուստը պատասխանում է, որ Առուստամին վաղուց է սուն ուղարկել: Սակայն Առուստամը իր պատրաստած փոսորակների օգնությամբ մի կերպ դուրս է գալիս հորից ու միայն հաջորդ օրը դուրս գալով թարստոցից հանդիպում է հորը: Վերջինս վտխենալով Առոնի սիրից, դիչերը որդու հետ ճեղանում է գյուղից: Խոստովելով հայ իշխաններին դիմել, որդուն Շուշի խանի մոտ ժառանգության է տալիս: Առուստամը մի քանի տարի ձիապահ էր աշխատում: Մի օր Իբրահիմ խանը մեծ հանդես է կազմակերպում: Տարբեր երկրներից իշխաններ, խաներ են հյուր գալիս, իրենց հետ բերելով ընտիր փահլևաններին: Մրցման ժամանակ Իբրահիմ խանի փահլևանը պարտվում է պարսիկ փահլևանին: Խանը զայրանում է և դիմում հանդեսը դիտելու եկած ժողովրդին:

— Ո՞վ կարող է ասպարեզ դուրս գալ և փրկել իմ պատիվը: Առուստամը, որը փափագում էր մարտի բռնվել այդ փահլևանների

հետ ու ցույց տալ իր ուժն ու ճարպկությունը, իսկույն առաջ է գալիս ու ինքնավստահ ասում.

— Ես կարող եմ հաղթել նրան: Զարմացած խանը բարձրաձայն հայտարարում է.

— Գլավուր, եթե պարտվես, հենց տեղում կտրել կտամ գլուխդ: Առուստամը կոխ է բռնվում պարսիկ փահլևանի հետ: Մի պահ ամբոխը լարվում է: Պարսիկ մարզիկը ցուցադրական արհամարհանքով պարտվում է քրիստոնյա Առուստամի շուրջն ու փորձում ծաղրական հնարքով գետնել նրան: Սակայն մի քանի վայրկյան շանցած հսկա պարսիկին ժողովուրդը գետնից փոխած է տեսնում: Խանն ու ժողովուրդը ցնծում են: Խանը դիմում է Առուստամին՝ ուզիր, ինչ կամքդ է: Առուստամը խնդրում է, որ թույլ տա գնալ իրենց գյուղն ու խանի անունից հարկ վերցնի Առոնից: Խանը համաձայնում է: Անճանաչելիորեն փոխված Առուստամը Առոնից ստանալով իր ուզածը, չի հանգստանում: Նա շիկացած մեղադրով դաջում է Առոնի մարմինը:

— Առոն, — դիմում է Առուստամը Առոնին, — կսպիանա, կանցնի քո վերքը, մի՛ վճատվիր, բայց իմ սրտին հասցրած վերքը միշտ կմնա: Հիշիր, ես այն Առուստամն եմ, որին խոր հորում ես թողել: Քո անասման ռիսի պատճառով ղրկվել եմ հորական տնից, հայրենի գյուղից ու թեզանից թաքնվելու: Ես պատակով ուրացել կրոնը և ազգը:

— Այժմ, — պատմում է մայրս, — սիրելի Հեղինե, այդ թուրք մարդիկ մեր Առուստամի թոռներն են:

ԼԴ. ՏՈՂ (ԴՈՂ)

«Անցա Գիգակի գավառը: Գնացի Տոլ բերդը: Մելի՛մ Ավանչանեերն էին իշխում: Տեսա մեղի՛մ Եզանի կիսավեր պալատը, որի մեջ բնակվում էր մի մահմեդական բեգ, որը այդ տոհմի կրոնախոյս եղած ժառանգներից մեկն է»:

Տոլ գյուղը ծածկված էր անթափանց, թանձր մառախուղով: Անհնար էր տեսնել այն մելիքանիստ գյուղը, որը Զարաբաղի գահերեց իշխան եզանի գլխավորությամբ հերոսական էջեր էր գրել հայ ազգային-ազատագրական պայքարում: Առանձին տները կամ փողոցների հատվածները համարյա ոչինչ չէին ասում գյուղի դիրքի, շրջապատի, շենքերի գասափորություն մասին: Ինձ նախապես հայտնել էին, որ տողեցի Սերգի Ավետիսյանը Բաֆֆու հետ կապված հետաքրքիր ավանդություն է պատմել, ըստ որի մեծ գրողը երկու օր երեխաների հետ պարապել էր Գուշավանքի դպրոցում: Նրանց տունը գյուղի ծայրում էր: Մեծ գարպաք

ներսից փակ էր: Պատավ կինը ճանաչելով ուղեկցիս՝ վարորդ Վալերիին, հետ քաշեց սոնին ու ծանր ճոնչոնով բացեց դարպասը: Փոքրամարմին ծերունին ծանր կացնով փայտ էր շարդում: Քիչ անց վառարանի մոտ նստելով, 80-ամյա Սերգին սկսեց հին պատմություններ պատմել:

— Ուրեմն՝ երեք եղբայր են լինում, Ավագը՝ Օհանը, խնջույքների մեջ էր անցկացնում իր օրերը: Մի օր եղբայրները ձին Օհանին են տալիս ու պատվիրում, որ գնա Արջին Գյուլենն կոչվող իրենց հանգն ու հնձի արտը: Օհանը տեղ է հասնում: Ճի խորթնը՝ հնձում, սակայն անմիջապես էլ ձանձրանում է աշխատանքից, հնձածը դնում ձիու առաջ ու պառկում: Հանկարծ անտառից երեք ավանակներ են երևում՝ բեռնված տակառներով: Հայտնվում են նաև ավանակի տերերը, որոնք գինի էին տանում Շուշիում վաճառելու:

— Օհան, — զարմացած դիմում են նրանք, — ի՞նչ ես անում այստեղ:

— Հունձի եմ եկել:

— Օհանը՝ հոնձի՞, — զարմանում են համադյուղացիները: Նրանք ուտելիք և գինի են հյուրասիրում Օհանին, հետո կուժը լցնում գինով ու շարունակում իրենց ճանապարհը: Երեկոյան անհանգստացած եղբայրները գալիս են ուշացող Օհանի հետևից ու տեսնում են քնած, կուլան լցված գինով, իսկ սոված ձին խուրձը ուտելուց հետո սկսել էր թփերը կրծոտել:

— Արի, Օհան եղբայր, — ասում են նրանք, — որ քեզ այստեղ էլ են գինի հյուրասիրել, հալալ է, գնա քեֆ արա: Գործը մեզ, քեֆը՝ քեզ:

Հետո Սերգին պատմում է գյուղի տերտերների մասին:

— Երեք եղբայր են լինում, երկուսը տերտերներ էին, մյուսին՝ Մարգարին, չնայած գրագետ լինելուն, քթում խոսելու համար նույնիսկ տիրացու չէին ընդունում: Ավագ եղբայրը՝ Մելիքսեթը, երգեցիկ բարձր ձայնը հնչեցնում էր հանդեսներում ու ծեսերի ժամանակ և իր ստանալիքը անում: Երբ դիմում են հոգեհանգստի կամ հարսանիքի առիթով, նախ տեղեկանում է, թե մեռնողը կամ հարսանքատերը ինչ ունեցվածքի տեր է, ապա որոշում իր պատասխանը: Երբ աղքատ է պատվիրատուն, ասում է՝ հողին հանձնեք, ես աղոթքը եկեղեցում կկարդամ, իսկ երբ հարուստ է, գնում է, ստանում իր նվիրատվությունը: Կրթված, սաղմոսները անգիր իմացող Մարգարը, լսելով ձայնից Մելիքսեթին, կշտամբում է՝

— Հերիք կրճատեք, աղավաղեք սաղմոսները:

— Բարձր մի ասա, այ մարդ աստժո, մեր հացը մի կտրիր, — ասում են եղբայրները, — միևնույն է, ոչ ոք չի հասկանում...

Սերունին պատմում է գյուղի դպրոցի մասին: Երբ գյուղում 1903 թվականին դպրոց է հիմնվում, վանքի դպրոցը, որը հեռու էր գյուղից, ինքնին վերանում է: Ինքը 4 տարի ծխական դպրոցում սովորելուց հետո պետք է հատուկ վիճակահանությամբ ուսական դպրոց ընդունվեր: Առաջին տարում վիճակը իրեն չի ընկնում, բայց երկրորդ տարում ընդունվում է:

— 5-րդ դասարանում սովորելիս հեղափոխություն սկսվեց, և մեր ուսուցիչ Մերկուլովին զորակոչեցին: Այդպես ուսումս կիսատ մնաց ու ընդմիջտ զրկվեցի վաղեմի փափագս իրականացնելուց՝ Շուշիի սեւալական դպրոցում սովորելու հնարավորությունից:

— Իսկ Բաֆֆու մասին ի՞նչ գիտեք, — հարցրի ես:

— Բաֆֆու, — մտածկոտ հարցրեց ծերունին, — չէ՛, Բաֆֆի չեմ կարդացել: Մուրացան, Աղայան կարդացել եմ, Բաֆֆի՞ ոչ:

— Ես կարդալու մասին չեմ հարցնում: Ձեր ուսուցիչները Գուշավանքում Առաքել Կոստանյանցի մո՞տ են սովորել:

— Այո, այն ժամանակ գյուղում դպրոց չկար, ստիպված վանքում են սովորել:

— Իսկ նրանք Բաֆֆու այցելության մասին ոչինչ չե՞ն ասել:

— Չէ, ես Բաֆֆի չեմ կարդացել, ոչինչ չգիտեմ նրա մասին:

— Սերգի հայրիկ, — համբերությամբ ասացի ես, — Բաֆֆին վանքի դպրոցում դաս է պարապել աշակերտների հետ: Այդ մասին ձեզ ձեր ուսուցիչն է պատմել, դուք էլ՝ ուրիշներին:

— Ձեմ հիշում: Ես Բաֆֆու գրքերը չեմ կարդացել...

— Բայց դուք շատերին եք պատմել չէ՞ Բաֆֆու մասին:

— Ձեմ հիշում, քե մատաղ, ինչ ասեմ...

Ս. Հովհաննես և ս. Ստեփաննոս եկեղեցիները զննելուց հետո կրկին գյուղ իջանք: Առաջարկեցին անասնապահական ֆերմայի բրիգադավար Պետրոս Ղահրիյանին հանդիպել, որը շատ պատմություններ գիտե գյուղի անցյալից: Ֆերմայի կարմիր անկյունում մի թիկնեղ մարդ գիմավորեց մեզ:

— Պետրոսն է, — ասաց ուղեկիցս, — մեր գյուղի կենդանի պատմագիրը:

— Ի՞նչ է քեզ հետաքրքրում, — հարցրեց Պետրոսը:

— Հին գրույցներ, ավանդություններ գյուղի անցյալից, — ասացի ես:

— Երգիչ Օհանի պատմությունը ասե՛մ, — հարցրեց նա, ապա ըստ պատելով պատասխանիս, շարունակեց, — գյուղի տանուտեր Առաքելի

¹ խորձ.

տանը թուղթ էին խաղում: Օհանն էլ էր խաղում: Որոշում են կանանց վրա խաղալ: Տանուտերը խաղը տանուլ է տալիս Օհանին ու որոշում խաղընկերոջը սպանելով փակել հարցը: Կրակում են: Վիրավոր Օհանի ծնկները թուլանում են, շոքում է, ձեռքը սեղմում վերքին ու երգում: Ուզում էր երգելով մեռնել: Տանուտերի համախոհներից մեկը դաշույնը խրում է Օհանի սիրտը: Երգչի գեղեցկուհի կինը, որի վրա վաղուց աչք ունի տանուտերը, սկեսրոջ հետ Տողից հերանց տուն՝ Մակուռ է փախչում: Տարիներ են անցնում այդ օրից: Տողի տանուտեր Առաքելը, արդեն մոռացած այս դեպքի մասին, մի օր Մակուռ է գնում տեղի խանութում առևտուր անելու: Խանութպանը տեսնում է՝ գինված մարդիկ են գալիս զեպի խանութը, ու հասկանալով ամեն ինչ, փորձում է հետին մուտքով փախցնել Առաքելին: Բայց խանութն արդեն շրջապատված էր վրիժառու մարդկանցով: Առաքելը վիրավորվում է: Օհանի այրին թուրք խրում է Առաքելի որովայնը, դուրս հանում ու տանում տնկում ամուսնու գեղեզմանին:

— Քանի որ մառախուղ է,— ասացի ես,— գյուղը շեմ կարող կարգին տեսնել:

— Իհարկե, նայելու բան շատ կա,— ասաց Պետրոսը,— մեյիք Եգանի բերդն է հետաքրքիրը: Բերդից մի անցք է բացվում, որը հասնում է մինչև ներքևի աղբյուրը: Գյուղում մի տեղ քանդելիս հանկարծ բացվել էր այդ թունելը: Այն գետնի երեսին էին փորել, հսկա քարե սալերով ծածկել գետնուղու տանիքը: Հետաքրքիր կառույց էր: Այն պաշարման ժամանակ զբոսի հետ կապի, ջուր բերելու ճանապարհ էր: Այն մեծ սոսնձիկով միշտ շփոթություն մեջ էր պցում ցանկացած թշնամուն:

— Իսկ Կոստանյանցիներ կա՞ն գյուղում: Ինձ վարդապետ Առաքել Կոստանյանցն է հետաքրքրում, որը իր գրած երկու պատմական գրքերը Բաֆֆուն էր տվել:

— Մինչ պատերազմը մի մարդ կար Կոստանյանց ազգանունով: Պատերազմից չվերադարձավ: Ընդհանրապես, մեր գյուղացիք շատ շուտ են կապվել քաղաքների հետ: Շատերը Մամարղանդ, Տաշքենդ են տեղափոխվել: Ինձ թվում է, որ Առաքել վարդապետի հետնորդներն էլ են Միջին Ասիա տեղափոխվել: Բայց ասում են, որ հարևան Վեդեր (հողեր) գյուղում էլ Կոստանյանցիներ շատ-շատ են եղել: Մինչ 50-ական թվականները մեծ գյուղ էր այն: Զույգ դասարաններով հայկական դպրոց ուներ: Այն ժամանակ գյուղում աղբրեջանական շորս ընտանիք կար միայն:

— Իսկ հիմա՞:

— Հայկական շորս ընտանիք է մնացել գյուղում:

— Դատա՞րկ է գյուղը:

— Չէ՛, ինչո՞ւ է դատարկ: Մեծ գյուղ է: Մեր գյուղում աղբրեջանացիների հետ բարեկամությունը հին արմատներ ունի: Դաշնակները քանի-քանի անգամ եկել էին կոտորելու նրանց, մեր գյուղացիք կյանքի գնով փրկել էին: Մեյիք Եգանի ժառանգների մի մասը Օուշիի Իբրահիմ խանի կողմից բռնի կերպով մահմեդականացվել են, հետագայում հառնվել, ձուլվել աղբրեջանցիներին: Նրանք այսօր էլ Եգանով են զրվում: Մահմեդականություն չընդունած մասը Եգանյաններ են մնացել:

Վարորդ Վալերին հայտնեց, որ իր բազը փորելիս յոթ խաչքար է գտել, որոնք ուզում է ցույց տալ ինձ: Նրանք տունը երկհարկանի բարձր կառույց էր: Նման տներ այստեղ անցյալ դարում էին կառուցում: Վալերին նկուղից յոթ խաչքար դուրս հանեց ու շարեց պատշգամբում: Կրաքարե 40×50 չափի խաչքարերի վրա բացակայում էր թվագրությունը: Բակը հնում ուխտատեղի էր եղել, որտեղ էլ գտնվում էին այս քարերը: Բույրն էլ տարրեր ոճավորում ու զարդամոտիվներ ունեին: Մակար Բարխուդարյանցը սրանց հանգրիպել է տողաբերդի կիսավեր եկեղեցում: Խաչքարերի վրա կարդացի «Խաչս Շահումին», «Խաչս Ղազարայ», «Խաչս Եղուայ», «Խաչս Նազարին» և «Խաչս Մրհապետին» արձանագրությունները: Տան նախկին տիրոջ եղբայրը, որը հարևան տանտերն էր, իր տունը վաճառել էր մի աղբրեջանցու Վալերին պատմում է, որ նա նոր տուն կառուցելու նպատակով քանդել է հին տունը ու հիմքում մի սափոր ոսկի ու ոսկե պատյանով դաշույն գտել:

— Հետո նա այդտեղ իսկական պալատներ կառուցեց, գյուղում աղջիկների ու տղաների համար էլ տներ կառուցեց, մեքենա գնեց, շի աշխատում, ի՞նչ է անում աշխատանքը, երբ ամեն ինչ ունի:— Վալերին լռեց, ապա հանկարծ ասաց,— ուզում եմ տունս քանդել:

— Այս հսկա հին տո՞ւնը,— զարմացած ասացի ես,— գծվե՞լ ես, ինչ է, ափսոս չէ՞: Ա՛հ, պարզ է: Դեհ, բուրդ էլ սկսեք ձեր տները քանդել, դուցե խաչքարերի փոխարեն այս անգամ էլ ոսկի գտնեք:

— Ես համոզված եմ, որ այստեղ ոսկի կա:

— Ինչո՞ւ:

— Այս տան տերը շատ ավելի հարուստ էր իր եղբորից:

— Նրա տան հիմքում այս հարուստի ոսկիներն էին:

— Ի՞նչ գիտես:

— Աղքատ եղբոր տանը ոչ ոք ոսկի չէր փնտրի: Սա այնտեղ էլ թաքցնում է իր հարստությունը:

— Միևնույն է, այստեղ ոսկի կա: Ես զգում եմ դա:

- Գուցե Գուշավանքի հիմքում էլ կա,— ասացի ես:
- Ասում են՝ կա:
- Պայթեցնենք ու քանդե՞նք:
- Ես իմ..., բա ոսկին մնա անտե՞ր:

Հաջորդ օրը մառախլապատ եղանակի հետքն էլ չէր մնացել: Պարզ, արևոտ օր էր: Թվում է, թե այս ավանը հնուց ի վեր հուշարձաններ, ճարտարապետական ուշագրավ կառույցներ կերտելով, մի ներքին մըրցակցություն է սկսել Վարանդայի Ավետարանոց և Մոսկվի թիկունքին ապաստանած Գյուլիստանի հետ:

Ետապում էի տեսնել Ղարաբաղի գահերեց իշխանի՝ մելիք Եգանի ապարանքը: Փողոցի կողմից դեռևս պահպանվել են բրգավոր շրջապարսպի հետքերը: Նեղ փողոցի աջ կողմի մուտքից ներս մտա ու հայտնվեցի բարձրածակ հսկա բակում: Հենց առաջին հայացքից զգացվում է իշխանական տան մթնոլորտը: Բակի մի կողմում շատ բարձր պատն է, երեք կողմերում՝ երկհարկանի բնակելի ու օժանդակ շինությունները: Սենյակներից մեկի դռան վերևում գրված էր՝ «այս տունը պատկանում է մելիք Եկանյանին»: Վիճազրույթյունը 1904 թվականի է: Տունը մելիքի ժառանգները 1941 թվականին վաճառել են Իսրաֆիլ Ռզակին, որը իր բազմանդամ գերդաստանով մինչև օրս բնակվում է այնտեղ: Փողոցի ձախ կողմում մելիքների պալատական համալիրն է: Առաջին հարկի մուտքի շուրջը ամբողջությամբ լցված է տան առաջին տիրոջ՝ Դիգակի մելիքություն հիմնադիր Եգանի ընդարձակ վիճագիր արձանագրությունը, որը կարևոր տեղեկություններ է հաղորդում Ղարաբաղի իշխանությունների և անկախության համար նրանց անհաշտ պայքարի մասին: Ուշագրավ է «Ես թողեցի ոչ Հայաստանս հսիք զնալու» արտահայտությունը: Ժամանակավորապես հաշտություն կորզելով թուրքերից, մելիքը կարողացել է կանխել բնակչության գերեվարումը: Արձանագրությունում ասվում է, որ Եգանը պարսից շահից ստացել է բեկլարբեկ և խան կոչումները: Դա արդեն Պարսկաստանի կողմից Հայոց արևելից կողմանց տարածքում 18-րդ դարի առաջին կեսերին հայկական ինքնավար իշխանության ճանաչման վկայությունն է: Տունն այժմ պատկանում է մի ազրբեջանցու, որը մելիքի ժառանգներից գնել է 1942 թվականին:

Գյուղի նշանավոր հուշարձաններից է սբ. Ստեփանոս Նահատակ թղակապ եկեղեցին: Ըստ Մակար Բարխուդարյանի, այն հիմնվել է 13-րդ դարում: Բարավորի արձանագրությունը հայտնում է, որ այն վերանորոգել է մելիք Եգանը: Միջնադարի քարգործ վարպետների ստեղծած հետաքրքիր հուշարձաններից են եկեղեցու ներսում գտնվող քանդակազարդ զույգ հուշակոթողները: Սպիտակ կրաքարը լրիվ պահպանել

է վարպետների կտրիչի ուժն ու հմայքը: Եկեղեցու բակում թաղված են Դիգակի մելիքները: Մելիք Եգանի տապանաքարը առանձնանում է շքեղությամբ ու պատկերաքանդակների նորը արվեստով: Զափածո տապանազիրը հայտնում է՝

Տիրապետեաց սայ ի երկրին

Ի Աղուանից ի նահանգին

Յոյժ պատվեցավ պարսից ազգին,

Քան զիշխանս Հայոց երկրին:

Այժմ Տողում ազրբեջաններն խոսքը ավելի հաճախ է լսվում: Բնակիչների 40 %-ը ազրբեջանցիներ են, որոնք Տող են տեղափոխվել 40-ական թվականներին: Եթե 15 տարի առաջ գյուղի դպրոցի շրջանավարտներից 30-ը հայեր էին, 10-ը՝ ազրբեջանցիներ, ապա այժմ պատկերը հակառակն է:

ԼԵ. ԳՏԻԶ

Գյուղի հնությունները դիտելուց հետո, վախենալով, որ մառախուղը կրկին կբողարկի ամեն ինչ իմ հայացքից, շտապեցի դեպի Տողասար, որի վրա էին հռչակավոր Գուշավանքն ու Գուշաբերդը:

«Այստեղ ինձ հաջողվեցավ ձեռք բերել երկու բավական հաստ հատուկների մեջ ամփոփված գաեազան պատմական գրվածքներ: Այդ աշխատությունների հեղինակն է Գոթիչ վանքի վանահայր Առաքել վարդապետ Կոստանյանը: Եթե մեր բոլոր վանքերի ծույլ, հացկատակ վարդապետները նետեին Առաքել վարդապետի օրինակին և իրենց շրջապատող ժողովուրդի ու պատմական տեղերի ավանդությունները հավաքելով գրեին, զրանով ավելի մեծ ծառայություն արած կլինեին մեր գրականությանը, քան թե իրենց աղոթներով»:

Տողասարի արևմտյան հարթ լանջին մուժ անտառի ֆոնին շեղից նշմարվում է վանքի զլանածև գմբեթն ու կիսաքանդ հովհարածև ոչ բարձր վեղարը: Գմբեթը ծածկված էր թանձր յուղաներկ խոշոր գրերով: Դա արդեն մեր ժամանակակիցների հետքերն են: Այս ուղևորության ընթացքում տեսել եմ արցախական աշխարհի համարյա բոլոր պատմաճարտարապետական հուշարձանները, բայց դրանցից և ոչ մեկը այս խղճուկ և ստորացուցիչ վիճակում չի եղել: Տաճարն ու գավիթը թե՛ ներսից և թե՛ դրսից, նույնիսկ առաստաղին խիտ ցանցով հայտատո և ուսեսերեն գրեր են: Յուրաքանչյուր այցելու իր հետ բերել է որոշակի գույնի թանձր ներկ և որևէ ազատ տեղում անարգել գրել իր անունն ու թվա-

կանը: Յուզաների գրեթով ծածկվել են տաճարի պատերի բոլոր արձանագրությունները: Քանձր կարմիրով ներկված է տաճարի ներսում պատի մեջ ազդեցված հսկա գեղաքանդակ խաչքարը: Այն կարող էր մրցակցել Գաղիվանքի Գողոս Վարդաի ստեղծած հուշակալոր զույգ խաչքարերի հետ: Գաղիթն ու տաճարը անասնազոմի են վերածված, շարդված են խաչարարներն ու տապանաքարերը, փորված է Առաքել վարդապետ Կոստանյանցի գերեզմանը: Ինչքան կվշտանար Բաֆֆին, հիթ ինչ-որ հրաշքով հայտնվեր մեր կողքին:

Ըստ վանքի հյուսիսային պատին արված արձանագրության, այն հիմնել են 1241 թվականին Ամարասի վանականներ Սարգիս և Վրթանես եղբայրները: Ընդարձակ արձանագրությունը պատմական տեղեկություն է հաղորդում՝ «... Ի ԳԱՌՆ ԵՎ ՆԵՂ ԺԱՄԱՆԱԿԻ ՅԱԶԳԵՆ ՆԵՏՈՂԱՅ ՈՐ ԶՐԱԶՈՒՄ ԳԱՎԱՌՄ ԱՎԵՐԵԱՅ...»: Հետաքրքրական է, որ հենց այդ պահին ու նեղ ժամանակներում Արդախում հայ ժողովրդի համար ինքնապաշտպանության, գոյատևման լավագույն միջոցներից մեկն է դառնում պաշտամունքային կառույցների շինարարությունը: Գաղթի մոտ կա փլված մեկ այլ եկեղեցի, որն ափելի վաղ շրջանի կառույց է: Վանքի հնության ապացույց է Մ. Կաղանկատվացու հիշատակությունը, ըստ որի Աղվեի սահմանադրական ժողովի մասնակիցների թվում նշվում է նաև «Գտալ վանուց տանուտերը»: Այդ ժողովը, ըստ պատմաբանասիրական գիտությունների դոկտոր Բ. Ուլուբաբյանի, տեղի է ունեցել 6-րդ դարի սկզբներին: Ինչ խոսք, որ Բաֆֆու այցելությունն ժամանակ միջնադարյան բարձրարժեք այս հուշարձանը ավելի լավ վիճակում էր գտնվում:

Գծվարին և կտրուկ վերելքը մեզ չէր հոգնեցնում, որովհետև մեծ էր բերդը տեսնելու փափագը: Լեռան կատարին հսկա ապառաժ էր սեպված, որի հարթակում էլ անառիկ բերդն էր: Չորակի մեջ քարակույտները կտրուկ թեքությունը ձգվում են մինչև բերդի պատերը:

— Հավանաբար, սրանք այն քարերն են, որոնք հայ իշխան Նսայու ղինվորները արար Բուդայի վրտ են նետել, — ասացի ես:

— Հա, — արձագանքեց ուղեկիցս, որը կատակելու առիթը երբեք բաց չէր թողնում, — էս մի քարի վրա էլ չորացած արյան հետքեր կան: Ուրախ ծիծաղը գարկվեց ապառններին:

Քթիչ բերդը պատմությանը առավել հայտնի է 9-րդ դարի դեպքերով: Արարական աշխարհակալ Խալիֆաթի Բուղա ոստիկանի բազմահազարանոց զորքը պաշարել է բերդը:

Մովսես Նսայի (արաբական աղբյուրներում՝ Իսա Իբն Յուսուֆ Աբու Մուսե) հայոց հզոր իշխանը, որը իր զորքով ամրացել էր բերդում, մեկ

տարվա ընթացքում հետ էր մղել արաբների 28 զորհները, մեծ կորուստներ պատճառելով նրանց: Հուսահատված Բուղան հաշտություն է առաջարկել: Այն հայերին հաղթանակ էր թվում: Բայց խորամանկ Բուղան կալանավորում է բանակցելու եկած հայ իշխանին և ուղարկում Բաղդադ:

Շրջում ենք բերդի տարածքում, ու թվում է՝ անմիջականորեն շրփվում ենք հին պատմության, հայոց քաջ և ազնիվ իշխանի ժամանակների հետ: Մի հսկա արժիվ լայն տարածած թևերը, սավառնում էր Գրաշավանքի շուրջը: Հակադիր լեռների փեշերին երևում են Տումի և Մեծ Թաղլար գյուղերը: Բերդի տարածքում դեռևս կանգուն է անտաշ քարով շարված Թաղակապ եկեղեցին:

— Գտա՛, — հեռվից կանչեց առդեցի ուսուցիչը: Շտապեցի ձայնի կողմը: Դեռանի մեջ թաղակապ ծածկն է: Անցքը ցույց տալով Վիգենն ասաց.

— Սառնատունն է:

Անցքից ներս մտանք: Կառույցի ներսում կուտակված ջուր կարև Սառը, հիասթափել ջուր էր: Խոր վիժափոր փոսի մեջ աղբյուրի ջուրն էր կուտակվում, որն էլ խմում էին բերդի պաշտպաններն ու բնակիչները: Հետաքրքիր է, Ղարաբաղի բոլոր բերդերում էլ ջրի հարցը նույնատիպ կառույցներով է լուծվել:

12. 1120-ին

Բերդից ցած իջնելով ուղևորվում եմ դեպի Աղոխ գյուղը: Անցյալ դարի վերջերին հնագետ Մակար եպիսկոպոս Բարխուդարյանցը ուսումնասիրում է լեռան փեշին բացված հսկա քարանձավն ու նկարագրում նրա բաղձաթիվ գաղտնաբանները: Այստեղ նա գտնում է նախամարդու գործունեության հետքերն ու արվեստի ստեղծագործությունները: Գիտնականին շատ էր հետաքրքիր այստեղ գտնված կնոջ քարե արձանիկը: «Արձանս կոփված է քարից, կնոջ զգեստի տարազն ու գլխի շինության ձևը ներկայացնում են Արցախի կանանց հագուստների և փաթեկիցներով շինված գլուխների ափսոսելով: Աղոխը գյուղի անունն է և նշանակում է շհասած, թթու խաղող»:

«Այդ ժողովուրդը ապրում էր իր սիրելի լեռների այրերի մեջ, Բարանձավների խորում, ապրում էր գետնի տակ, կեռակրվում էր իր անտառների պտուղներով, իր անասունների բաբիճներով և որպես դաբանամաս մի զագան իր թախաղցի միջից հարձակումներ էր գործում, երբ թշնամին հանդգնում էր վրդովել նրա խաղաղությունը»:

Հավանաբար, Բաֆֆին Աղոխի ու Ղարաբաղյան մյուս քարանձավ-

ները տեսնելուց, կամ նրանց մասին տեղեկություններ հավաքելուց հետո է գրել այս տողերը:

Ազոխ... Իրոք, շատ է խոսվել ու գրվել այս քարանձավի մասին: Այն մինչև օրս չի սպառել իր գաղտնիքներն ու իր վրա է բեռնել աշխարհի շատ գիտնականների ուշադրությունը: Ազոխը մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև որպես բնության անձեռակերտ ստեղծագործություն: Այստեղ գտնված հազարավոր ոսկորներն ու նախամարդուց սկսած բոլոր ժամանակներում ակտիվ կյանքով ապրած քարանձավի բնակիչների աշխատանքի ու կենցաղի առարկաները լայն պատկերացում են տալիս Հայքի այս երկրամասում մարդկային քաղաքակրթության զարգացման, նրան շրջապատող կենդանական ու բուսական աշխարհի մասին, հենց գրանդ էլ այն կոնային Ղարաբաղում հայտնաբերված մյուս հնագույն քարանձավների ու քարայրների հետ հանդիսանում է մարդկային հնագույն քաղաքակրթության օջախի գոյություն անհերքելի վավերագիրը: Մակայն պատմական Արցախում, ինչպես և ողջ հայկական լեռնաշխարհում քարանձավները ծառայել են ոչ միայն նախամարդուն՝ մուստերյան նեանդերթալացուն, քարե, բրոնզե և երկաթե դարերի մարդկանց, այլև կարևոր դեր են կատարել միջնադարում, որպես ապաստան-թաքստոցներ օտար բռնակալներից պաշտպանվելու համար:

ԼԵ. ԱՄԱՐԱՍ

«Ինձ հետ առնելով Առաքել Վարդապետի գրքերը, հետագա Տոլ բերդից, մի օր այնտեղ մնալուց հետո: Այստեղից գնացի Ամառասա վանքը»: Հեռվից երևաց բարձր պարիսպը, որից վեր սպիտակին էր տալիս լուսանկարներից ինձ ծանոթ վեցնիստ թեթև ոտտոնգան:

Ամարաս... Թվաց, թե մեղմանուշ հնչերանգներ լցվեցին օդում, միևնույն ժամանակ մի անուշաբույր խնկահոտ պարուրեց հինավուրց վանքի շրջապատը: Ամեն ինչ այստեղ շնչում է ամենասուրբ անուններով: Զգում եմ դարերի հերը, Գրիգոր լուսավորիչը այստեղից է սկսել քրիստոնեության տարածումը Արցախում և Ուտիքում: Վանքի հիմնադրումը, ըստ մատենագիտական աղբյուրների, կապվում է Գրիգոր լուսավորչի անվան հետ: Եինարարությունը ավարտել է նրա թոռ, Հայոց արևելյան կողմանց առաջին եպիսկոպոս Գրիգորիսը: Հենց այսօրվա տաճարի բեմի տակ էլ պահպանվել է Գրիգորիսի ստորգետնյա դամբարանը, որը վաղ քրիստոնեական շրջանի հայկական հետաքրքիր ճարտարապետական հուշարձաններից է: Եռանավ բազիլիկ հորինվածքով տաճարի մեջ

է գտնվում Գրիգորիսի տապանաքարը, որը, հավանաբար, դամբարանից է վեր հանվել: Ամարասը կապվում է նաև Մեսրոպ Մաշտոցի անվան հետ, որն այստեղ հիմնել է հայոց առաջին դպրոցներից մեկը:

Մեկուկես հազարամյակի անցյալ ունեցող Ամարասը ակնհայտ է եղել պատմական թո՛ւ բո՛հերի, բախտորոշ իրադարձությունների, տարեկ պարսիկների, խազարների, լեզգիների, թուրք-սելջուկների, թաթար-մոնղոլների, թուրքական վայրի ցեղերի ավարները ու կողոպուտները: Վանքը կործանումների արանքում ունեցել է և իր ծաղկման շրջանները, երբ այստեղ են նստել աղվանից կաթողիկոսները:

Ուղղանկյուն պարիսպներով շրջափակված տարածքը հասնում է մեկուկես հեկտարի: Բազմաթիվ բնակիչի և օժանդակ շինությունները ու միջնադարի աշխարհիկ ճարտարապետության նմուշներ են: Մաշտոցի հիմնած դպրոցը մինչև 19-րդ դարի մատուցյանը պահպանել է իր գոյությունը: Այստեղ ստեղծվել են բազմաթիվ հրաշակերտ ձեռագրեր:

ԼԸ. ՀԱՅՈՑ ՄԵԾ ԾԱՌ

Դժվարությամբ գտանք Սխտորաշենը: Երբեմնի մարդաշատ գյուղում ընդամենը 8 տուն է մնացել, որից միայն մեկն է բնակեցված: Այգիներով շրջապատված երկհարկանի տները դատարկ են: Գյուղի միակ բնակիչը՝ Ալյոշա Ներսիսյանը, որը տնամերձ անտեսությունը է զբաղվում, ասաց, որ 20 տարի առաջ գյուղում 300 տուն կար, բայց ա՛հ կրասնի Բազար կոլտնտեսության հետ միանալը՝ անտեսությունը խոշորացնելը քայքայեց հրաշալի ոստանը: Ալյոշան ցույց տվեց հուշակավոր սոսու տեղը: Նման մեծություն ծառ ես չէի պատկերացնում: Հսկա բացատում աճելով, ծառերի թագավորը, ասես բազմած գահին, բարձրից հսկում է անտառը, ունկնդրում ծառերին: Մեղմ գեփյուրը մեղմորեն շոյում է ծառի տերևները: Ասես քամին հետուններից կարևոր լուր է բերել հսկային: Տերևները թեթև շրշում են:

Գուցե զավեշտ կար լուրի մեջ: Հեռու անտառում ծիծաղաշարժ զե՛պք է պատահել: Սոսին ամհհի արմատները փռել է բացատով մեկ: Տասը մետր տրամագծով ծառի բունը մի քանի տեղից ճեղքվել է, կոնաձև մեծ փշակ է գոյացել, որի հիմքի մակերեսը անցնում է 45 քառակուսի մետրից: Ծառի փշակից անընդհատ ոչխարներ էին գուրս գալիս, որոնք այնտեղ պատասպարվել էին տապից: Ուղեկիցս մինչև հարյուր ոչխար հաշվեց: Հսկա տնջրեն (Ղարաբաղում այդպես են անվանում սոսուն) գտնվելով հին առևտրական ճանապարհին, երկու հազար տարիների ընթացքում շատերին է իր հովանու տակ առել: 4-րդ դարի սկզբին Ամա-

բաս տանող ճանապարհին այստեղ դադար է առել Գրիգոր Լուսավորիչը, որը Արցախ էր եկել քրիստոնեական հավատք բերելու հայ ժողովրդի այս հատվածին: Ծառն իր հովանու տակ էր առել Գրիգոր Լուսավորչի թոռանը՝ Հայոց արևելյան կողմանց առաջին եպիսկոպոս Գրիգորիսին, որի մասունքները Վաչագան Բարեպաշտի նախածնունդով մամիոփվել են Ամարասի վանքի բնի տակ գտնվող հինավուրց դամբարանում: ՀԱՅՈՑ ՄԵՍ ԾԱՌԻ ԺՈՒ ԳՈՒՆՎՈՂ ՎՈՂՅՈՒՐԻՑ ԶՈՒՐ ԵՆ ԽՈՒՆ ԸՆ ԵՐԱ ՄԱԿ ՀԱՆԳՍՏԱԿԵՆ ՀՈՂ ԳՐԵՐԸ ՄԱՐԾԵՆԸ ԵՆ ԱՐԿԱՅԻՄ ԵՆՈՐ ԳՎՐՈՅՆԵՐ ՀԻՄՆԵՆԻՈՒ ԵԿԱԾ ՄԵՍՐՈՍ ՄԱՂՏՈՅՐԸ, ԵՐԿՐԱՄԱՍԻ ՎՍՏԱՄԱԿԱՆ ԱՆՅՅԱՂՐ ՈՒՍՈՒՆՈՒՄԻՐԵԼՈՒ ԵՆ ԱՅՂ ԱՄԵՆԸ ԻՐ ՀԱՆՃԱՐԵՂ ԳՐԲՈՒՄ ՂԵՄԵՂԵՆԻ ՀԱՄԱՐ ԱՅՍՏԵՂ ԵԿԱԾ ՄՈՎՍԵԱ ԽՈՐԵՆԱՅԻՆ, ՎԱՇԱԳԱՆ ԲԱՐԵՊԱՇՏ ԹԱԳԱՎՈՐԸ, ՀԱՅՈՑ ԱՐԿԵԼՅԱՆ ԿՈՂՄԱՆԿ (ՀԱՅՈՑ ԱՂՎԱՆՔԻ) ՎՍՏԱՄԱՂԻՐ ՄՈՒՍԵԱ ԿԱՂԱՆԿԱՎՈՒՄԵՆ ԸՆ ՀՈՎՏԱՆՆԵԱ ԿԱՅՏՈՂԻԿՈՍ ԳՐԱՍԽԱՆԱԿԵՐԱՅԻՆ, ՀԱՅՏԵՐՔԻ ԻՂՋԱՆՍՈՅ ԻՂՋԱՆԻ ՏՐԱՎԵՐՈՒՄ ԳԱՂԻ ՎԱՆՔ ՂՍՏԱՅՈՂ ՄԵԾ ԻՐԱՎԱՊԵՏՈՒ, ՍՈՒԿԱԳԻՐ ԵՆ ՎՍՏԱՄԱՂԻՐ ՄԻՍԻՍԱՐ ԳՈՂՐ, ԳԱՆՃԱՍՏԱՐԻ ՎԱՆՔԻ ՕԺՄԱՆԸ ՄԱՍՆԱԿԻՑ ԻՐԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՍԱՆ ԶԱՅԱԼ ՄԵԾ ԻՂՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՎԻՐՎԱԾ ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՃԱԿԵՑԻՆ: ԵՐԵՒ ԺՈՒՐ ՀԻՂՈՒՄ ԷՆ ԱՄԵՆ ԻՆԸ: ՀԻՂՈՒՄ ԷՆ ՇՈՒՂԻ ՄԱՆՈՂ ճԱՆԱՊԱՐՏԻՆ ԱՅՍՏԵՂ ԴԱԴԱՐ ԱՌԱԾ ԲԱՖՖՈՒՆ: ՇՈՒՂԻՑ ԱՄԱՐԱՍ, ԱՎԱ ԳՈՐԻՍ ՄԵԿԻՆՈՂ ԱՎԵՍԻՐ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ...

Գարերի բնթացքում շփվելով մեծ իմաստունների հետ, ծառն էլ է իմաստնացել, միևնույն ժամանակ ազգի մեծերին ու ժողովրդին տվել դարեր ապրելու ուժն ու կորովը:

Թվում է՝ Արցախ-Ղարաբաղն է ամբողջացել ծառի հզոր արմատների մեջ և ասում է՝ եղել եմ, կամ և կլինեմ:

Սակայն տեղերից ոչ հեռու ապառաժին մի թխկի էր կառչել: Մերկ քարի վրա սահելով, արմատը կրկին շուր քարի է դեմ առել, բայց տեսնելով, որ ղզալով, որ ճեղք կամ հող չկա, որ ջուր վերցնի, վեր է բարձրացել, որ տերևներով խոնավություն կլանի, միևնույն ժամանակ նոր արմատներ գցի, սնունդ՝ հող, ջուր հայթայթի ապառաժին կառչած մայր թխկենու համար, բայց արմատները կրկին, արդեն հինգերորդ շրջող ծառ դառնալով, ձգվել, վերջապես, ապառաժից ցած էր իջել, հասել գետնին, ապահորեն խրվել նրա մեջ: Արմատի ձևից էլ ղզացվում է կարոտը, պայքարը, տենչը ու, վերջապես, հաղթանակի բերկրանքը:

— Մենք էլ ենք այդպիսին, մի՛ զարմացիր, — ասաց դարբաղցի՝ ծերունին:

ԼԹ. ՍՅՈՒՆԻՔ

Բաֆֆին հինգ տարի առաջ բացված Շուշի-Գորիս փոստային ճանապարհով 1881 թվականի սեպտեմբերի 24-ին, շաբաթ օրը ուղևորվում է Սյունյաց աշխարհ:

Արցախ աշխարհի իր ուղևորության մասին մտածելիս Բաֆֆին հանգիստ էր: Ամեն ինչ, իրոք, սպասումից էլ ավելին ստացվեց, ու վիպասանը հաստատ գիտեր, որ դրանով կկենդանացնի «Մի վաղուց կուրած և մոռացված պատմություն» և կապացուցի, որ «Հայկական իշխանությունը շարունակվում է մինչև ներկա դարը»:

Հին Շուշի-Գորիս փոստային խճուղու փոխարեն ժամանակակից ասֆալտապատ ճանապարհով դեպի Զանգեզուր սլացող մեքենայի միջից հետադարձ հայացք եմ ձգում: Երևի Բաֆֆին ևս կարոտի հետադարձ հայացք է ձգել դեպի Շուշի, հիացել նրա վրա իշխող Ղազանչեցոց նորակառույց եկեղեցու ճեղքակալությամբ, նրա սրածայր վեղարով, հայոց թաղով, ամեննին էլ չկասկածելով, չկանխատեսելով ապագայի հրդեհը, թալանն ու «հայոց փոքրիկ Փարիզի» դառը ճակատագիրը:

Այժմ Բաֆֆու առաջ Սյունյաց հինավուրց աշխարհն է:

«Մեր պատմությունը համատուտ տեղեկություններ է տալիս միայն Ղափանի մեջ կատարված անցքերի մասին, որոնց պարագային է Գավիթ-Բեկը: Ինձ նպատակ դեռելով ողմանի ձևի մեջ ամփոփել և ժամանակի պատմությունը, շատ պարզ է, որ աշխատությունների և ահագին դժվարությունների պիտի հանդիպեի բայր հարկավոր նյութերը ձեռք բերելու համար: Այս պատճառով ևս բնդիատեցի «Գավիթ-Բեկի» հրատարակության շարունակությունը «Մշակի» մեջ, դիտավորություն ունենալով անձամբ հանապահեցողի Սյունյաց աշխարհում և այդ վեպի մնացած մասերը իր տեղում մշակել»:

Ես մտովի լսում եմ խճուղու վրա փոստային սալի անիվների միալար դիպիկոսները, որոնք մեծ վիպասանին հուշերի միջոցով կրկին տանում են դեպի դարբաղցան իր հանդիպումները, արցախցի այն հերոսները, որոնք արյան, կյանքի գնով պաշտպանել են իրենց սիրելի հայրենիքը, նույն հերոսական ոգին փոխանցելով սերունդներին: Բայց ահա մի կերպար, մի դեմք միշտ մխրճվում է այս հուշերի արանքը ու շեղում վիպասանին: Դա իր վեպի երկրորդ մասի վերջում 400 հայ քաջերի հետ Քիֆլիսից Ղարաբաղով Սյունիք շտապող Գավիթ-բեկի կերպարն էր:

Վիպասանի անհամբերության պատճառը Սյունիքի պատմությունն է, նրա խորը, դարավոր անցյալը և ճակատագիրը, որը անխզելիորեն

կապված է հայոց աշխարհի և ազգի ճակատագրի հետ: Կկարողանա՞ նույն հաջողութեամբ նյութեր քաղել ժողովրդից:

«Ինչ աղբյուրներից կարող է օգուտ հաղել մի հայ վիպասան, եր կամենում է Հին Հայաստանի կյանքից մի ոտման գրել:

Սյունյաց աշխարհը, ուր կատարվել են այնքան եշմանավոր գործեր, ուր մինչև վերջին ժամանակները պահպանվել են հայկական իշխանությունները, ուր ճանապարհորդը ամեն մի քայլում հանդիպում է հոյակապ հնությունների, պատմական վաղեմի արձանների,— արդարև Սյունյաց աշխարհը առանձին ուսումնասիրության կարող է»:

Բաֆֆուն, որը Սյունյաց աշխարհի շեմին էր, մի կարևոր հարց էր մտահոգում. «Մարդիկ հիշո՞ւմ են անցյալ հերոսներին: Երանք ապրո՞ւմ են ժողովրդի մեջ, թե մոռացված են իսպառ»:

Այս մտքերի հետ մի անհանգստություն պատեց ինձ: Մարդիկ հիշո՞ւմ են Բաֆֆուն: Հարյուր տարի է անցել: Ինձ համար դեռևս հանելուկ էր մնում, թե ուղեգրությունների տպագրությունը ինչո՞ւ էր ընդհատվում խաչնչյան հանդիպումներով:

Բայց այն միտքը, որ, ի վերջո, եթե վիպասանը կարողացել է իրենից 150 տարի առաջ ապրած ազգային հերոսի մասին շատ ու շատ նյութեր քաղել ժողովրդից, ապա այդ նույն ժողովուրդը պահպանած կլինի ու կհիշի մեծ գրողի հիշատակը և ինձ կպատմի նրան հանդիպած մարդկանց մասին, ցույց կտա նրա այցելած վայրերը:

Այս մտքերով նախկին փոստային ճանապարհի փոխարեն ասֆալտապատ ճանապարհով անցա Շուշվա հոշակավոր քանդակագործ Իսահակի և Պեխի աղբյուրներն ու Բերդաձորը: Զարուզ: Ստ. Օրբելյանը գրում է, որ 998 թ. Սյունյաց առաջին թագուհի Շահանդուխտը հիմնել է գյուղն ու այն նվիրել Տաթևի վանքին: Իսկ պատմաբան Լեոն, որը Բաֆֆուն ճանապարհորդությունից 6 տարի հետո Գորիսի ճանապարհին գիշերում է Զարուզում, գրում է. «գոնե մի հատ ծառ, մի փոքրիկ թուփ կամ մի կանաչ բույս երևար գյուղի մեջ, մոխիր և մոխիր է ամեն տեղ»:

Զարուզի ձորը 1917—29 թթ. գտնվելով թուրք-մուսավաթական հրոսակների ձեռքին, նպաստեց Ղարաբաղը երկարատև պաշարման մեջ պահելու, խեղդելու նրա ազատագրական մղումները և իրականացնելու թուրքական ծրագրերը:

Բերդաձորն անցնելուց հետո հեռվից երևաց բարեհուն Տեղ գյուղը: Համաձայն գյուղում պահպանված մի ավանդության, մինչ գյուղ մտնելը Բաֆֆին իջնում է փոստային կառքից, հիանում է գյուղի ցորենի ընդարձակ արտերով, գրուցում հնավորների հետ և հայտնում այն միտքը,

որ նրանց գյուղը երբեք չի լքվի և նրանց ոչ ոք երբեք չի կարող բռնել այստեղից, որովհետև նրանց դաշտերում ցուրտի ցաղունը դիմացկուն է և հալա: Գյուղը եթե ձորի խոռոչ-անձամբերով կապվում է պատմական խոր անցյալի հետ, ապա իր ներկան և ապագան տեղափոխել է տափարակ, ուր և կառուցվել է նոր գյուղը:

Տնտեսության տնօրեն Ռ. Առուշանյանը հանձն առավ ինձ Բաֆֆուն հետ կապված վայրերը ցույց տալու գործը:

— Գուցե ինձ ուղեկցելը մեկ ուրիշին հանձնարարեք,— առաջարկեցի ես,— բերբահավաքի ետևն շրջան է, գործեր շատ կունենաք:

— Ինձ թվում է, որ ամենակարևոր գործը մոռացված պատմությունը վերակենդանացնելն ու ժողովրդին վերագործնելն է, իսկ բերբահավաքը ոչնչով չի աուծի:

Իր ժողովրդի, հարազատ գյուղի պատմությանը, անցյալին սիրահարված Ռ. Առուշանյանի նախաձեռնությամբ տնտեսությունը վերականգնել է մելիք Բարխուդարի 18-րդ դարի առաջին կեսից ժառանգություն մնացած ապարանքը: Ընդարձակ տական այս համալիրի հարավային կողմում է գտնվում 4-րդ դարի բազիլիկ միանավ սբ. Գևորգ եկեղեցին, որը կառուցողական արվեստի մի հետաքրքիր նմուշ է: Գյուղացիք պատմում են, որ քրիստոնեություն ընդունած Մելիքի կինը՝ պարսկուհի Քաջում խաթունը հին տաճարին կից կանանց համար մի առանձին մուտքով եկեղեցի է հիմնել: Սակայն արձանագրությունը հայտնում է, որ ՌՃԶԶ թվականին (1737 թ.) մելիքն ու իր կինը միայն նորոգել են այն: Զննելով շրջապատը, ես եկա այն համոզման, որ տաճարի տեղում հեթանոսական նշանավոր մեհյան է եղել: Ուրեմն՝ Սյունյաց թագուհին կարող էր միայն լքված լինելու դեպքում վերաբնակեցնել, վերակենդանացնել գյուղը:

Բաֆֆուն իր երկհարկանի նորակառույց տանը հյուրընկալում է այդ ժամանակ գյուղի ամենազարգացած և ունեոր նանասունց Մարգիսը (Ասաքը), որը հարուստ հողատեր էր, և շրջակա գյուղերը նրանից էին հաց և այլ մթերքներ գնում: Ըստ երևույթին, դեռ գյուղ չժամանած գրողը հնավորների հետ զրուցելիս հենց Ասաքին է հանդիպել, որն էլ առաջարկել է իր օգնությունը: Տան ընդարձակ պատշգամբից տեսարան էր բացվում դեպի ողջ հին գյուղն ու դիմացի լանջերը: Հետագայում 1918 թ. այս տանը 2 ամիս հյուրընկալվել է նաև հայ ազգային-ազատագրական պայքարի հերոս Անդրանիկը: Հավանաբար, նա նպատակ ուներ անցնել մուսավաթականների ձեռքում գտնվող Զարուզն ու օգնության հասնել պաշարման մեջ առնված Ղարաբաղին: Մի քանի ամիս այստեղ Զարուզն անցնելու հնարավորությունն էր սպասում Ղարաբաղի հայությանը խիստ անհրաժեշտ գինամթերքով, թնդանոթներով Թիֆլիսից այստեղ 9*

ժամանած Շուշիի դունդը: Բայց հետագայում գորավարն ու Զանգեզուրի ազգային խորհուրդը, ենթարկվելով անգլիացիների կամքին, հրաժարվում են այդ ծրագրից:

Պատմում են, որ Բաֆֆուն և Անդրանիկին հյուրընկալած տունը Սարգսի որդին՝ Արշակը, 1920 թվականին նվիրել էր խորհրդային իշխանությանը և այն մինչև 1966 թվականը որպես դպրոց էր ծառայել: Գյուղում ոչ ոք չկարողացավ հաստատապես ասել, որ իրոք Ասաքն էր վիպասանին հյուրընկալելու նանասունց տոհմից ոչ ոք չկա գյուղում: Ասաքի տղաները անժառանգ էին մնացել: Գյուղի գերեզմանոցում որոնեցի հարցի պատասխանը: Ըստ մի տապանազրի ավագ որդին՝ Ալեքսանը, ծընվել է 1877 թվականին: Հավանաբար, Ասաքը 1881 թվականին 25 տարեկան էր: Ալեքսանի տապանաքարին գրված էր. «Վաս շի եղել կյանքս վարար, վերջում կյանքից սով մնացի, տանս ջահը մնաց միշտ մարած, ես անզավակ լուռ դնացի...»: Ահա մյուս որդու՝ Արշակի դամբանախոսականը «Հանգչում է ահա այս քարի տակ գովելի, անհիշատակ ու անզավակ, կորուստը խիստ ցավալի»: Քարի մյուս երեսին գրված է. «Նրա ցավով տանջվում է այբի կինը անխնամ, խոցված սիրտը մրմնջում է միակ եղբորը ամեն ժամ»: Գտա Ասաքի հոր՝ Հովսեփի տապանաքարը: Հայրը մահացել է 1864 թվականին: Ուրեմն՝ Բաֆֆուն հյուրընկալողը Ասաքն էր: Նրա մյուս որդին՝ Իվանը, ավարտելով Մոսկվայի համալսարանը, այնուհետև տեղափոխվում է Քեհերան և անցնում դիվանագիտական աշխատանքի: Նա ևս անժառանգ է մահանում: Սարգիս-Ասաքի տապանաքարը չկար: Գերեզմանոցի տապանաքարերը այնքան հարուստ են կենցաղային, աշխատանքային ու զինվորական հարթաքանդակներով, որ հաջողությամբ կարող են մրցակցել Գանձակի կամ Գետաշենի տապանաքարերի արվեստի հետ: Այս արվեստը, ցավոք, չի ուսումնասիրվում: Գիտությունների ակադեմիայի ազգագրության և հնագիտության կամ արվեստի ինստիտուտներում, թանգարաններում, հուշարձանների վերականգնման, պահպանման վարչությունում հարյուրավոր երիտասարդներ են աշխատում, որոնք գերադասելով այլևս աշխատանքները, զլանում են այցելել այս վայրերն ու ուսումնասիրել մեզ ժառանգություն մնացած այս արվեստը: Ամեն ինչ փորձում եմ Բաֆֆու հայացքով դիտել: Մեծ քաղաքացին անպայման կնախատեր այս երիտասարդներին ու իր զրծգոհությունը կհայտներ:

Կրկին շրջում եմ հին գյուղի տարածքով: Եկեղեցին շրջապատող հին պարսպի պատերի մեջ տասնյակ հին խաչքարեր, նախաքրիստոնեական շրջանից հուշարձաններ են դրված: Հին գյուղում շրջելիս 50-ն անց մի բարձրահասակ, թիկնեղ մարդ, առանց իմ խնդրանքի, ուղղակի

կռահելով Տեղ այցելելու նպատակս, սկսեց բացատրություններ տալ, թե որ քարանձավը որ տոհմինն է եղել: Հետո անցավ Տեղի տնտեսության հոգսերին:

Ուղեկցիս հետ դեպի գյուղի հյուսիսարևմտյան կողմն ենք շարժվում, ուր և այցելել էր Բաֆֆին: Յուրյ տվեց Մանի Եղջի տեղում հայտնաբերած հին բնակավայրը: Մի բնակարան նոր էին պեղել հնագիտական արշավախմբի անդամները: Նրա մեջ պահպանվել էր նաև հեթանոսական հավատքի պաշտամունքային մի քար: Դժվարանցանելի ապառաժից ցած իջնելով, փոքրիկ հարթակում եկեղեցի տեսանք: Ոչ մի արձանագրություն չկար: 2,5×6 չափի սրահը շատ քիչ մարդկանց կարող էր ընդունել: Եկեղեցին վաղ քրիստոնեական շինություն էր հիշեցնում: Ապառաժի պոնկին՝ խոր ձորում հսկա խոտոշ էր երևում:

— Քարանձավ է,— հարցրի ես:

— Այո,— ասաց ուղեկցիս,— մի քանի հոգի փորձել են մտնել, բայց երկար չեն կարողացել գնալ: Արագ մարում էին ջահերը: Տարբեր ոսկորներ են թափված հատակին: Չեմ հասկանում, թե ինչու չեն գալիս ուսումնասիրելու դրանք:

— Ձորն անուն ունի՞:

— Գերիաձոր է կոչվում:

Դիմացի լեռնալանջին հին հորիստա գյուղատեղն էր: Հին գյուղը դարեր առաջ թիկնած բարձր ապառաժներին, հողմերից պատսպարված, ազատորեն փռվել էր մինչև ձորը: Մորուս Հասրաթյանը այն միտքն էր հայտնել, որ այս գյուղը պատմահայր Մովսես հորենացու ծննդավայրն էր:

— Ինչ լավ այգիների տեղեր են,— ասացի ես:

— Իրոք լավ այգիներ են եղել այստեղ,— պատասխանեց տնտեսության անօրենը, տնտեսությունը տիրություն շարեց:

— Դեհ, ուրեմն նախաձեռնիր, վերականգնիր, մի՞թե այգին կարող է ձեռնառու չլինել:

— Արտադրելը մի կրակ, վաճառելու հոգսը՝ երկու...

Հսկա ապառաժի մեջ մեծ անցք էր արված: Ըստ ավանդության, այս թունելի միջով անց էին կացնում համր երեխաներին, որոնք ահից աղաղակում էին ու բացվում էին լեզուները: Քարակալ տեղամասում հինավուրց դամբանազաշտն է: Մի քանի օր առաջ երևանցի հնագետներն այստեղ մի դամբարան են պեղել: 5,7×1,3 չափի խոր փոսի պատերի մեջ ոսկորներ են երևում: Հավանաբար, արշավախմբի անդամները հողնել էին ու դորձը կիսատ թողել: Պատմեցին, որ գերեզմանի մեջտեղում տղամարդ և կին էին պառկած՝ դեմքով դեպի արևը, շորս կողմն-

րում՝ նստած դիրքով ստրուկներ: Գտել են այնպիսի եզակի իրեր, ինչպիսիք են ատրուշան, գարդեղեն, ավելի քան 100 խեցեղեն սահորներ, ափսեներ, կենցաղի և այլ իրեր: Նետերի ծայրին սուր կայծքարեր էին հազցված: Ե. Հալալյանը նշում է, որ այստեղից մինչև Զարուզ կայարանը փոքրիկ հողաթմբեր («կուրգաններ») են շարված, «որոնցից մի քանիսը այս տարի (1898) ամառը պեղեց Ռեուլեր գերմանացին»: Գտնվել են բրոնզե մի դանակ, ուլունքներ և կավե ամաններ:

— Գամբարան բառը ինձ թվում է, թումբ-թումբարան բառից է, — ասաց տնտեսության տնօրենը:

Իսկ ես այդ պահին մտածում էի խորխորան բառի մասին: Խորխորանը, հավանաբար, խորել-թաղելու իմաստ ունի (խոր թաղել):

— Պատմահայրը երևի ընտրել է գլուղի անվան երկրորդ մասը, որը նաև քրիստոնեական նշանակություն ունի:

Պեղած դամբարանի հողակույտի մեջ նախ պղնձե ապարանշան գտա, ապա բազմաթիվ ուլունքներ, որոնք ազաթից էին: Թե ինչ միջոցներով են այս ամուր քարի մեջ անցքեր բացել, ինձ համար առեղծված էր մնում:

Բաֆֆին Տեղ գլուղից Գորիս մեկնելու համար ձի ունեցող ուղեկցորդ է գտնում ու նախապես պայմանավորվում հետը: Խոստացած վարձատրությունից դժգոհ ուղեկիցը փորձել էր սակարկել, բայց ապարդյուն: Ուղեկիցը, որի անունը խնամքով թաքցրին Տեղի մարդիկ, ճանապարհին ձիու սանձից բռնած անընդհատ ինչ-որ բան էր քրթմնջում: Հեծյալը՝ Բաֆֆին, որը փորձում էր ծանոթ բառեր որսալ բարբառից, հարցնում է՝ «Ինչ ասացի՞ր...»: Ուղեկցողը պատասխանում է՝ «Նեչ...», բայց մտադրվում է անպայման մի շար խաղ խաղալ ճանապարհորդի գլխին, մանավանդ, որ այլևս Տեղ չի գալու և Ասաթին ու գլուղացիներին գանգատվելու առիթ չի ունենալու: Քարաշենաձորի ջրով անցնելիս գլուղացին իր գլխարկով հանկարծ ծածկում է ձիու աչքերը: Ձին վախից ծառս է լինում ու ջրի մեջ նետում հանկարծակիի եկած Բաֆֆուն: Ոտից դուրս թրջված վիպասանը ջրի մեջ որոնում, դժվարությամբ գտնում է ակնոցներն ու դժգոհ ասում.

— Իրոք, տեղացիների մասին ճիշտ են ասում ողջ դավառի մարդիկ...

Ճանապարհորդի միջոցները բավականին սուղ էին, իսկ առջևում ողջ Զանգեզուրն էր, Տաթևի երկար ամիսները, որտեղ մտադիր էր գրել «Գավիթ-բեկի» մնացած հատվածները և ուղարկել «Մշակին»: Առջևում նաև Նախիջևանն է, Գողթանի գլուղերը, Արևիթը (Մեղրի), հետո պետք է Փայաջուկ գնա, կնոջն ու երեխաներին Թիֆլիս տեղափոխի... Հիշեց որդիներին ու անուշ բառեր մրմնջաց:

— Հինչ ա՞,— հարցրեց ուղեկիցը, որը չգիտես, գո՞հ էր իր վարձուներից, թե խղճի խայթը տանջում էր իրեն:

— Ոչինչ, գործիդ կոց,— խիստ պատասխանեց Բաֆֆին, ու նրանք այլևս ոչ մի խոսք չփոխանակեցին:

Խ. ԽՆՉՈՐԵՍԿ

Շարժվում եմ դեպի հռչակավոր գլուղն ու մտովի վիպասանի հետ զբույցում Մխիթար Սպարապետի, Խնձորեակում կատարված դրամատիկ իրադրությունների, հենց իր՝ վիպասանի ազդեցությամբ Սերո Խանզազյանի գրած «Մխիթար Սպարապետ» պատմավիպի մասին:

Ինչ խոսք, 1881 թ. ճանապարհորդը չէր կարող տեսնել ժամանակակից Խնձորեակը՝ այգիների մեջ ընկղմված լուսավոր երկհարկանի առանձնատներով այս զեղեցիկ բնակավայրը, ինչպես և այսօրվա ուսումնասիրողը չէր կարող տեսնել անցյալ դարի Խնձորեակը, որն այնքան խորը տպավորություն էր թողնում ճանապարհորդների վրա: Սակայն այսօր էլ հայացք ձգելով դեպի հինավուրց ու լքված գյուղը, կարծես տեսնում եմ ողջ Սյունիքի պատմությունը:

Իրմեցի առաջին իսկ պատահած մեծահասակ մարդուն՝ «Ռ՞՞՞վ կարող է պատմել գլուղի հին դեպքերի, պատմական անցքերի, Բաֆֆու այցելությունից մասին»: Առանց վարանելու ասաց. «Վաղարշակ Գալանջյանը, նրա պես պատմություն իմացող չկա»: Խանութի պատի մոտ ծերունիների հավաքատեղին էր: Նրանք էլ տվեցին նույն Վաղարշակի անունը:

Գլուղի «պատմաբանը» տանը չէր:

— Գնացել է ձորում հորթերին զերավ անցնի, հեսա կգա, — ասաց աղջիկը, ապա փոքրիկ բարձունքից դիլ ձայնը տարածելով ձորն ի վար՝ կանչեց՝ հե՛՛՛՛՛՛ Վաղո՞՞... հե՛՛՛՛՛՛ Վաղո՞՞... Ձորի կողմից պատասխան չստանալով, շրջվեց իմ կողմն ու ասաց, — գուցե և փայտի է գնացել:

Քիչ անց դիմացի լանջին հորթեր տեսա, նրանց մոտ մի մարդ, երևի մտքերով տարված, անշարժացել էր:

— Հե՛՛՛ Վաղարշա՞՞կ... հյուր ունես, հյու՞ր, քեզ է հարցնում...

Մարդը շարժվեց, բարձրացավ տեղից, ուղղեց մեջքն ու հանդարտ, առանց ձայնը բարձրացնելու պատասխանեց.

— Հա, կյալխոթ: — Ապա, քաշելով ավանակի սանձից, դեպի տուն բարձրացավ:

Իմ սպասածին հակասակ 75-ամյա ասացողը իր տարիքի համեմատ

բավականին շարժուն էր և աշխույժ: Տեղեկանալով այցելութանս նպատակի մասին, ասաց.

— Բաֆֆին, դե նրա գրվածքները լրիվ կարգացել են, բայց այստեղ լինելու մասին քիչ բան է հայտնի: Սպարապետի գերեզմանը տեսնելուց հետո էս ճանապարհով անցնելիս մի մարդու էլ բարև է ավելի, դա խնձորեսկցի Հայրապետ Գյուլամբարյանն է եղել: Հետևից նայում են՝ ով է, ինչ մարդ է. հետո գլխի են ընկնում, որ Բաֆֆին է եղել: Ասում են՝ մենակ է եղել: Իսկ Բաֆֆին իր գրվածքում ասում է, որ խնձորեսկում կա մի լեզվաձև անապատ, որտեղ Մխիթարն է թաղված:

«Լեզվաձև լանջ» արտահայտությունը ազգագրագետ Երվանդ Լալայանին էր:

— Բաֆֆու մասին քիչ բան է հայտնի, բայց ես այնպիսի պատմություններ գիտեմ, որոնց մասին ոչ մի գրքում չես գտնի: Էս իմ փորձիկ գլխի մեջ պատմություններ շատ կան. — ասաց ու զրնգուն ծիծաղով լքեց վեց խնձորեսկցու սենյակը: Այս սկսվում է իր պատմությունը. «1612 թվին Պարսկաստանի Ալլավերդի անունով խանը գալիս է Նախիջևանի Զահրի գյուղաքաղաքը պաշարում: Այդտեղ էր ապրում մեծահարուստ մեկը Քավարը: Եղբայրը՝ Զահանը, առաջարկում է փախչել: Առավոտյան ժամը 6-ին 9 ընտանիք, շուրջ 300 հոգի դուրս են գալիս Զահրիից ու փախչում: Երբ պարսիկները գրավում են բնակավայրը, խանի ուղադրությունը գրավում է գեղեցիկ ապարանքը:

— Ո՞ւմ է պատկանում այս տունը, — հարցնում է նա:

— Հայ մելիքի տունն է, խան, — պատասխանում են, — 2 ժամ առաջ մեկնեցին:

Աղաբաբա գյուղի մոտ պարսից հեծյալ ջոկատը հասնում է մելիքին:

— Կովենք, կովով մեռնենք, — որոշում է մելիքը...»

Պատերազմներով լեցուն պատմությունը, որը կապվում է խնձորեսկի հետ, ասացողը հասցնում է մինչև 1828 թվականը:

— Այս պատմությունը Սարգիս անունով մի մարդ է գրել, որին Բաքվում Ուսուբօղլի (Հովսեփի տղա) էին կոչում: Ակնոցներով մարդ էր նավթահանքերում էր աշխատում: Երբ մարդիկ գրասենյակ էին մտնում, նա հաշվետար էր, իսկույն տետրը ծածկում էր: Ասում էին. «Սարգիս տխպեր, ինչու՞ ես գաղտնի գրում», պատասխանում էր՝ «Որ մի գաղտնիք երկու հոգի իմանան, այլևս գաղտնիք չի լինի»: Նա 1922 թ. խնձորեսկում մահացավ: Մեր Սուրենը (Ս. Այվազյան) նրա գրվածքներից շատ է օգտվել: Սուրենն էլ նրա գերեզմանին մի տապան շինել ավելցու կանգնեցրեց:

Ծ. Լալայանը 19-րդ դարի վերջին նշել է 613 տուն 4219 բնակիչով,

2944՝ արական, 1875՝ իգական սեռի: «Այստեղ ամենից զգալի է Բաքվի կեղծ լուսավորության ազդեցությունը: Կան 35 դերձակ, կտորեղենի 4 խանութ, 7 մանրածախի խանութ, երեք ներկարարի (բոյաճի) գործարան: Գյուղի բարոյական վիճակը բավական ողբայի է, ինչ որ պակաս է թողնում Բաքվում փռացած երիտասարդությունը՝ այն լրացնում են հինգ տղետ քահանաներ, միմյանց դեմ լարած մեքենայություններով»:

— Քանի՞ ջրաղաց կար գյուղում:

— 25 ջրաղաց: Կրիվ աշխատում էին: 800 տուն կար, բայց 30 թվականին ցրվեցին, փախան: Հիմա փախստականները ամաշում են գյուղ գալ: Միայն Քուրթմենիայի Մարի քաղաքում 600 տուն խնձորեսկցիներ կան:

— Ինչքա՞ն թոշակ ես ստանում:

— Կարող էի 20 կով կթել, բայց ինձ միշտ ուրիշ տեղ էին ուղարկում: Հիմա էլ է այդպես, մինի լավ աշխատանք են տալիս, մյուսին վատ...

— Ինձ հետաքրքրում են այն վայրերը, որտեղ այցելել է Բաֆֆին, — ասացի ես:

— Սկզբում Բաֆֆին ընպատումն է եղել, հետո գյուղի եկեղեցում: Հին խնձորեսկի ոլորաններով ցած ենք իջնում: Առաջին հայացքից թվում է՝ այլ մոլորակում ենք հայտնվել: Զորով մեկ փոված սև խոռոչքարայրները կարծես անհետացած հին քաղաքակրթության վկաները լինեն: Այնինչ այստեղ մի 30 տարի առաջ էին մարդիկ բնակվել: Ցավոք, հարթավայր բարձրանալիս խնձորեսկցիք հիմնովին քանդել, ավերել են իրենց տները, փայտը, քարը նոր գյուղ տեղափոխել: Միայն քարանձավներն են մնացել:

Աբրահամ Կրետացի կաթողիկոսը, Մուղանի դաշտում նաղիր շահի թագադրությանը մասնակցելուց հետո նկարագրելով Սյունիքի իր ճանապարհորդությունը, գրում է, թե խնձորեսկում ջուր կամ փայտ բերելու համար բնակիչները ինչպես են թոկերից կախ ընկնելով իրենց բներից ցած իջնում, հետո էլի թոկերով վեր մագլցում:

Ուղեկիցս արագ քայլերով ցած էր իջնում ու անընդհատ պատմություններ անում, որոնք ես չէի հասցնում գրի առնել:

— Սա էլ Սպիտակ կյումին տոնն ա (Սպիտակ տան դուռ): Մելիք թե քոյովա, այստեղ էին դատ անում (դուռը դատարանի իմաստն ունի): 1918 թվականին այստեղ զենք էին վաճառում: Չալունց Հակոբջանը, հրաժարվելով զենք գնել, ասաց, թե ինքը հրացան ունի: Ասացին՝ բեր ցույց տուր: Հին բերդանկա էր: «Դա մարդ կապանի», — հանդիմանեց առևտրական Իվան Սևիկյանը: Հակոբջանը հրացանը դեմ է անում Իվա-

նին, թե «հիմա քեզ ապացուցիմ՝ իմանա՞ս: Ի վանք լեղապատառ փախչու՞մ է, — ասացողը զրնգուն ծիծաղում է 70 տարի առաջ տեղի ունեցած պատահարի վրա, — հետո մարդ է ուղարկում՝ տեսեք զնացե՞լ է ձակորչանք, թե դեռ այնտեղ է:

Ուղեկիցս մեկ-մեկ ցույց է տալիս գյուղի 12 թաղերն ու պատմում նրանց մասին:

— Սա ներքին թաղն է, մյուսը՝ Երբ Ծորը, հետո՝ Թելունց Սեռը, Եարունց Սեռը, Սպիտակ Կյամին Տոռնը, Աղմահլան, Ակնին թաղը, Սուս-թաղը: Այստեղ էր և Ուսուրողունց տունը, Սուրբ Մինասը, Խաշխաշլու ծորը, Փթոսին թաղը, Գանան (հոթի) թաղը: Էն ժամանակներում մարդիկ մրցակցում էին՝ ո՞վ կարող է ավելի լավ հիշատակ թողնել գյուղի համար: Այս աղբյուրն էլ նման մրցակցության արդյունք է:

Խոշոր տներենքով, փարթամ բույսերի միջից մեր առջև հայտնվեց կամարակապ գեղեցիկ հուշարձան-աղբյուրը, «Հիշատակ է այս աղբյուրը Մալանցին Տեր-Բաղդասարի որդի ուստա Հովհաննիս 1819 թ.» արձանագրությամբ: Գյուղի 16 աղբյուրները հորդառատ առու են առաջացնում, որը գահավիժելով աշխատեցնում էր ջրաղացների համախորը: Անցանք Ակնաչուրն ու զառիվերով վեր մագլցեցինք: Լեղվանման լեռնաբազուկը կախվել էր ձորի վրա: Հարթակում էր տեղավորված կիսավեր հինավուրց Անապատը: Բաֆթու այցելության ժամանակ այն կանգուն էր, որովհետև Ե. Լալայանը գրել էր, որ 1896 թվականին գյուղացիք քանդել են եկեղեցին ու նրա քարերով կրկնապայ դպրոցի շենք կառուցել:

Անապատի տարածքում էր Գավիթ-Բեկի քաղցրահամանատար Մխիթար Սպարապետի գերեզմանը: Գավիթ-Բեկի մահից հետո անմիաբանություն է սկսվում: Մի մասը Մխիթարի կողմն է բռնում, մյուսը՝ Տեր-Ավետիքի, մնացածները՝ այլ: Հակառակորդների մի խումբ Միհրան հարյուրապետի գլխավորությամբ, որը ռթ ուներ Մխիթարի նկատմամբ, հրացանի կրակոցով ինձորեսկի բերդում դավադրաբար սպանում է Սպարապետին, կտրում գլուխն ու նվեր տանում Գավրիժի պարսից Բղեշխին: Ինչպես Չամչյանն է նկարագրում, Բղեշխը պատմել է «զայսպիսի այր զորավարի կորստյան մասնակիցներին և անդեն հրամայեց հատանել զգյուխս նոցա»:

Ջերմուկ առողջարանից այստեղ եկած տուրիստներին վաղարշակ Գլխանչյանը սկսեց ոգևորված պատմել Մխիթար Սպարապետի մասին, ապա վարժ կարգալ տապանաբարի գրեթե. «Այս է տապան ի հանդիստեան իջեալ մարմնով ի գերեզման, սա է Մխիթար մեծ անուն սորա օներ իշխանութիւն սայ բեմուքսա զնաց զիվան որ է Էրկրեն սայ կեանքով էր նահատակվեցաւ թիւ ՌՃՀԶ (1727 թ.):

Տապանաբարի մյուս երեսին երեք հեծյալներ էին պատկերված: Հեծյալներից մեկը, որը մարմնավորում էր Մխիթարին, նիզակը խրել էր վիշապօձի (հավանաբար՝ սուլթանական Քուրքիայի) երախը: Եվս երկու հոգու պատկերներ էին քանդակված, որոնցից մեկի ձեռքին ժաղիկ էր պատկերված, մյուսի ձեռքին՝ կենաց ծառ: Եկեղեցու պատին շատ մոտ մելիք Բարխուդարի և նրա դուստր Գայանեի տապանաբարերն են:

— Ուրեմն ինձ Թելունց Ավանեսն է պատմել, — ասաց ուղեկիցս, սկսելով իր նոր պատմությունը, — մի հայ մարդ էր եկել Պետերբուրգից, ուսերեն էր խոսում, դիմեց գյուղացիներին, թե՛ ինձորեսկում դպրոց պետք է բացենք, փողը պետությունն է տալիս, իսկ դուք պետք է կառուցեք: Գյուղացիք պատասխանեցին, թե՛ շենք ուղում: Այս մարդը առանձին կանչեց Թելունց Ավանեսին, կնքած մի թուղթ տվեց ու հայերեն ասաց. «Այս թուղթը քեզ եմ հանձնում: Գրած է, որ դպրոց պետք է կառուցեք, փողն էլ, կառուցելն էլ՝ ձեռանից»: Ավանեսը հարցնում է, թե որ գլխիք հայերեն, ինչո՞ւ էիր ուսերեն խոսում: Նա պատասխանում է, որ դա մարդկանց վրա տպավորություն թողնելու համար էր, որպեսզի վախենան օրհնքից ու կառուցեն: Իրոք, մարդիկ վախից դպրոցի շենք են կառուցում:

— Եկեղեցին քանդում են, նրա քարերով դպրոց կառուցում, — հիշելով Ե. Լալայանի ակնարկը, ասացի ես:

— Հա, ասում են, որ այդպես էր, — մեղավոր տոնով խոստովանեց Վաղարշակը:

Վերադարձին եկեղեցի մտանք: 17×11 չափի, երկխորան դահլիճով, եռանավ բազիլիկ կառույց էր: Չորս սյուները կտրվածքում խաչաձև էին: Մուտքի բարավորին Վաղարշակի պատմության հերոսներից մեկը՝ Թուրակը, թողել էր հետևյալ արձանագրությունը. «Թիվ ՌՃԺԵ (1665) ՀԻՇԱՍԱԿ Է ՍԲ ՀՈՒՓՍԻՄԵ ԵԿԵՂԵՑԻՍ, ԵՍ ԳԻՉՈՒ ԱՐԳԻ ԹՈՒԹԱԿՍ ՇԻՆՆԻ ՏՈՒԻ ՍԲ ԵԿԵՂԵՑԻՍ Ի ՀԱԼԱԼ ԱՐԳԵԱՆՑ ԻՄՈՑ ՑԻՇԵՑԵՔ ԶԻՍ Ի ՔՍ»:

— Բուլշևիկները որ եկան, — մի նոր պատմություն սկսեց Վաղարշակը, — այս եկեղեցում ժողով արեցին, առաջարկեցին զենքերը հանձնելու Ռուս սպան խոսում էր, Բագրատ Ղարաբյուզյանը թարգմանում: Բողունց Ստեփանը բողոքեց. «Չորքի փոխարեն մեզ համար նավթ բերեիք, մթերք, շաքար բերեիք...», — բուլշևիկ սպան բորբոքված ասաց. «Էս ինչ տեսակ մարդիկ եք դուք, որ ձեր մեջ այսպիսի վատ մարդ եք պահում»: Ստեփանը վախեցած գնում է Եզորի մոտ, թե՛ էսպես, էսպես բաներ եմ ասել, երևի սխալ եմ արել: Բայց հետո ուս սպան դպրոցում հանդիպում է Ստեփանին ու բարեկամաբար ասում. «Այ մարդ, բա մեզ հիմա որտեղի՞ց շաքար, մթերք...»: Երբ գյուղում ծխական ժողովի էին կան-

չում, ոչ ոք չէր մասնակցում, բայց բոլորն էլ պատերի տակ բամբասում էին այդ ժողովի մասին, — եզրափակեց ուղեկիցս:

Մի կիսավեր տան մտտով անցնելիս նա ասաց.

— Այս տանը գյուղի ամենահարուստ մարդը՝ Փելունց Բիլնարն էր ապրում: Մինչ հեղափոխությունը 60 հազար ռուբլի ուներ: Բայց սովից մահացավ: Փողատերը, հարուստը կորավ, իսկ մի իշատերը ապրեց: Այստեղ էլ մելիք Փարամազի տունն էր: Մի օր գյուղացիք դիմեցին նրան, թե՛ մելիքն ապրած կենա, դուրս արի մեր դատը կտրի: Մելիքը կիսամերկ դուրս է գալիս ու բարկացած ասում. «Հալավս լվացալըն, հալա շուրացալ չի, հինչը՞ք զահլա տանըմ»:

Ե. Լալաջանը գրում է, որ մելիք Փարամազի տան դարպասի կամարակալ քարին կարդացել է. «Ի ՎԱՅՆԻՈՒՄՆ ՄԵԼԻՔ ՔԱՍՈՒ ՈՐԳԻ ՄԵԼԻՔ ՓԱՐԱՄԱԶԻՆ ԹՎԻՆ ԲՄՉԵ (1836 թ.)»:

— 1918 թվականին, որ գիշերը նայում էիր, էս ձորում ալավը երկինք էր բարձրանում, իսկ ցերեկը ծուխն էր մխում, — մտածկոտ ասաց ուղեկիցս, հայացքով շրջելով ողջ ձորի երկայնքով: — Անդրանիկը երկու թևանոթ էր թողել այստեղ, որն էլ վճռել է թուրքերի հետ կովի ելքը:

Վաղարշակը նեղ արահետով ճարպկորեն առաջ էր գնում: Մի պահ դարձացած հետ նայեց:

— Ոնց էլ զալիս ես: Չե՞ս հոգնում, — հարցրեց 75-ամյա ուղեկիցս:

— Ոչ, չեմ հոգնում, — թաքցնելով հոգնությունս, ասացի ես:

— Զարմանալի է, չի՞նք՞ թե լինոցի ես:

— Լեռնցի եմ, լինոցի էլ շատ եմ բարձրանում:

— Բա էդպես ասա՛ իմանամ: Ուրեմն, էն կողմում, գյուղից ներքև հող ունենք, մի քերձի վրա բերդ կա, Կապույտ բերդ է կոչվում, «Աղջկա բերդ» ենք ասում: Հին ժամանակներում մի աղջիկ է լինում, անունը՝ Սյունիք: Պարսիկները պաշարում են բերդը, աղջկան գերի տանում, ստիպում, որ հավատափոխ լինի: Երբ չի համաձայնվում, պարսիկների շահի հրամանով շիկացած երկաթով կուրացնում են: Նրա անունով էլ երկիրը Սյունիք են կոչում:

ԽԱ. ԴԵՊԻ ԾԻԾԵՌՆԱՎԱՆՔ

Չղջներ կոչվող վայրում, ճանապարհի աջ և ձախ կողմերում եռուն բերքահավաք էր: Ողջ ենածախը՝ աշակերտ, թե ուսուցիչ, գրասենյակի աշխատող, թե կուլտնտեսական կամ կարի ֆարրիկայի աշխատող կարտոֆիլի դաշտում են: Ուղեկցիս սպասելիս իմ ուշադրությունը գրավեց

վեցանկյուն մի սյուն: Այն Փալատիպ հեթանոսական պաշտամունքային հուշարձան էր, որը, ըստ հավանականության, առնվազն 2-ից 2,5 մետր հողի մեջ էր խրված: Ուղեկիցս առաջարկեց մինչ Միծիռնավանք դնալը անապատի ձորը այցելել: Վերևից տեսնելով բնական հսկա սյունն կոնկրետով լցված կիրճը, գառիվերով սահելով՝ ցած իջանք: Ամեն տեղ սյունիտների մեջ քարայրներ էին փորված: Տեսնելով սյունների այս առատությունը, կրկին մտածեցի Սյունիքի անվան ծագման մասին: Այս երկրամասը, իրոք, ուրիշ երկրամասերից կարելի է հենց բնական սյունների առատությամբ առանձնացնել: Սա, իրոք, սյունների երկիր է, ու ես մտովի սկսեցի ստարկել մեր պատմահայրերին (թող ներեն նրանք ինձ), ուլբեր այս անունը էթնիկական սկզբնաղբյուրն են կապում: Սյուններից շատերի կատարին հսկա քարաբեկորներ են մնացել: Ասես թե, ինչ-որ մեկը հատուկ քանդակել է այս կոնաձև սյունները, հետո գլխարկի փոխարեն ապառաժներ հագցրել: Անապատի ձորը լրիվ ցուցադրում է սյունների առաջացման հանգամանքները: Զանգեզուրին յուրահատուկ է այնպիսի հողածածկույթը, որը հեշտությամբ է էրոզիայի ենթարկվում, հազարամյակների ընթացքում առաջացնելով հսկա կիրճեր: Այն կետերում, որտեղ բարաբեկորներ են եղել, նրանց տակ հողածածկը քարի ծանրության ճնշման պատճառով ավելի ամուր է եղել և չի քայքայվել: Զանգեզուրցիք, տեսնելով, որ այն հեշտ է քանդվում, դրանց ներսում բնակարաններ են փորել: Բարձր ժայռի մեջ օվալաձև անցք կար: Թվում է, որ հուշակավոր ժայռ մազլցողներն էլ կգծվարանային այդ քարեղեն ապաստարանները հասնել: Անցքի հիմքից քիչ բարձր հորիզոնական դիրքով փայտ էր սեպված: Մարդիկ վտանգի դեպքում պարանի ծայրին քար էին կապում, անցքից ներս նետում, պարանը կապվում էր փայտին ու պարանի օգնությամբ էլ հեշտությամբ վեր էին մագլցում: Ըստ երևույթին, օտար նվաճողներից լավագույն փրկությունն էլ հենց այս այրերն էին: Բնակիչներն այս վայրը մի անմատչելի բերդ էին դարձրել: Այստեղ ժայռափոր այնպիսի անցքեր կային, որոնք 50 մ բարձր էին հիմքից: Ինչպե՞ս են այս քարայրը օգտագործել: Հավանական է, դրանք ժամանակին հիմքից այդքան բարձր չեն եղել, գուցե հիմքն է իջել:

— Այս քարակերտ սյունների մեջ առաջ մեղվաբնասանիքներ կային: Տարի կար, որ մեղրը լցված, սյան երկայնքով ցած էր ծորում: Բայց գե հիվանդությունը այս վայրի մեղուներին էլ ոչնչացրեց: — Նա բարձր բլրի վրա մի մատուռ ցույց տալով ասաց՝ «Բահավոր» սրբավայրն է: Մի փոքրիկ երեխա մտնում է շորերի տակ: Հայրը շորերի մեջ շարժում նկատելով, կարծում է՝ օձ է մտել շորերի արանքը, ձեռքի բահով ուժեղ հարվածում է... Ի հիշատակ երեխայի, կառուցում է այս մատուռը:

Հեռվից ձորաբերանին ապառաժների մեջ մեծ խոռոչ էր բացված: Քվում էր, վիշապն էր իր հսկա երախը բացել: Նրա առջևում նախկինում պատնեջ էր եղել: 32 մ. երկարություն, 21 մ. խորություն և 28 մ. բարձրություն ունեցող խոռոչ-բարայրում մի ժամանակ ետում էր համայնքի կյանքը: Նրա ներսում ու շրջակա ապառաժներին տասնյակ արհեստական բարայրներ են բացված, որոնք մարդկանց համար որպես բնական են ծառայել: Քարայրից լեռան միջով թեքությամբ մի միջանցք վեր էր բարձրանում, որի երկարությամբ բազմաթիվ վիմափոր այրեր են բացված: Հսկա խոռոչին կից մեկ այլ 14,2×9,2×13 չափսի բարայր է բացվում, որը արդեն արհեստական է և որպես եկեղեցի է ծառայել: Այն լայն սրահից բացի երկու ավանդատուն ունի: Եկեղեցու ներսում մի 1,5 մ բարձրության նուրբ զարդամոդելներով հսկա խաչքար էր ընկած: Զույգ խաչերը ոչ թե իրար կողքի են դասավորված, որը յուրահատուկ է 9—10-րդ դարերին, այլ ձգված են խաչքարի երկարությամբ: Եկեղեցու պատերին անհամար խաչեր են քանդակված:

Բակում խաչքարեր էին ընկած: Մի քանի խաչեր շարդվել են, տեղահան արվել, փորել են տակը: Հարստություն տենչացողները այստեղ էլ են հասցրել ապականել...

Հինավուրց հնձորեսկը փառահեղորեն տարածվել էր ձորի հարթակին: Նրա շուրջը թեքությունների վրա սանդղավեղները աստիճանաբար իջնում, հասնում էին գլուղին: Հին ժամանակներում ստեղծելով այս դարատափերը, մարդիկ առավելագույն չափով էին օգտագործում թեքություններն ու լեռնալանջերը: Ցավոք, հողի օգտագործման այս կուլտուրան կորցրել են մարդիկ, եսկ փոքրիկ մեխանիզմներով կարելի էր վերակենդանացնել այն: Բլրի պատերին քարայրներ էին փորված, որոնք այժմ որպես խոտի պահեստներ էին ծառայում: Հավանաբար, հին ժամանակներում դրանք թշնամու հարձակման ժամանակ նաև որպես թաքստոց են ծառայել:

Բոլոր բակերում էլ կանայք պճեղներից լոբի էին ընկում: Ըստ ավանդության, Բաֆֆին Միծեռնավանքի ճանապարհին ննածախում զննել է մելիք Հայկազի գերեզմանը, ընթերցել վիմագրությունները: Սակայն այն ընթերցել ինձ չհաջողվեց: Մելիք Հայկազյանների ապարանքն ու տապալակաբարերը գլուղացիք քանդել են, կամուրջ կառուցել: Գլուղից վերև անասնապահական համալիրն էր իր 17 հսկա ղեզերով: Երբ գլուղից դուրս եկանք, ուղեկիցս մի կոնաձև բլուր ցույց տալով ասաց.

— Սա է Դատ-մելիքը: Մելիք Հայկազը հանցապարտներին կողովի մեջ էր խցկում, փակում բերանն ու գլորում բլրի կատարից:

«Հիշյալ երկրներում (Պանգեզուր, Մեղրի, Օղորսագ— Բ. Կ.) կային

հզոր մելիխություններ, որոնք 1722 թվի ապստամբության ժամանակ մասնակցում էին Դավիթ-Քեյկի և Ղարաբաղի մելիքների կռիվներին: Օրինակ, Պանգեզուրի տարածքում հայտնի էին Մելի-Հայկազյանները...

Շան-Աբաս Մեծի մելիք Հայկազին շնորհած մի ֆիրմանի մեջ տալիս է նրան Սանդղեի շինարար, որ նշանակում է թագավորի մոտ առաջին տեղում նստող, գահեցեց»:

— Մինչև այժմ էլ պատմում են այդ մելիքի մասին, որ շատ խոտափրատ և անզուժ մարդ էր ու ամենափոքրիկ հանցանքի համար էլ ամենախիստ պատիժն է տալիս: Նա ինքնակամ էր ու նախիջևանի և Շուշիի խաներին չէր ենթարկվում ու տուրք չէր տալիս: Նրա որդին, որպեսզի ազատվի հոր բռնապետությունից, Քեհրան է գնում, պարսից շահի մոտ, այնտեղ պարսիկներին հաճոյանալու նպատակով մահմեդականություն ընդունում և Ալավերդի կնքվելով պարսից ջոկատի հետ ննածախ է վերադառնում՝ նպատակ ունենալով հորից խլելու մելիքությունը: Սակայն հայրն արդեն մահացել էր: Ուրացողը վերջին Հայկազյան մելիքն էր:

— Հիմա մենք Հայկական հՄՀ-ում ենք, թե Աղբրեջանական, — ուղեկցիս դիմեցի ես:

— Ուղիղ սահմանի վրա ենք: Այս կողմում Աղբրեջանն է, որտեղ և գտնվում է Միծեռնավանքը:

Վանք չհասած մի կիսավեր պատի վրա թառած քարաքոթիվը հանգիստ մեզ էր նայում: Մենք անշտապ մոտեցանք նրան՝ 2 մ հեռավորության վրա: Արծիվը մեզ թշնամի չէր համարում, ուստի և մնաց տեղում: Մենք ուրախ էինք նման վստահության համար:

Աղ-օղլան (Սպիտակ տղա) և ննածախ գետերի միախառնման տեղում հանկարծ մեր առջև հատնեց երկթեք տանիքով հսկա մի կառույց, որը ամենևին էլ նման չէր ավանդական եկեղեցիներին: Վանքի պարսպապատ տարածքը ամրոց էր հիշեցնում: Ուշագրավ էր տաճարի հիմքի կիկլոպյան քարերի շարվածքը, որը, ամենայն հավանականությամբ, նախաքրիստոնեական շրջանի է և վկայում է, որ այստեղ հեթանոսական նշանավոր մեհյան է եղել: Վանքապատկան կառույցները այժմ փարախների են վերածվել: Ներս մտա: Արևի շրացուցիչ լույսը փլված տանիքից ողողել էր տաճարի ներսը: Հատակին կենտրոնական նավի թաղի մի մասի փլուզումից հսկա քարակույտ էր գոյացել, որն էլ խոնավությունից պատվել էր փափուկ մամուռով: 12 սյուններից կազմված սյունաշարերը ձգվում էին մինչև բեմն ու վեհասրանչ ապավորություն թողնում: Կենտրոնական նավը շատ բարձր էր և բեմի վերևում գեղեցիկ սյուներով ու կամարներով զարդարված առանձին սենյակ էր գոյացնում, որն ավարտվում էր ողջ տաճարի հետ համամասնության մեջ շմուռոտ ուստիդայով:

Ըստ մի արձանագրության, այն ավելացվել էր 18-րդ դարի երկրորդ կեսին: Բազիլիկ կառույցի երկարությունը 21,3 մ է, լայնությունը՝ 7,5 մ, բարձրությունը՝ 18,5 մ: Բեմի երկու կողմերում ավանդատներն են, որոնցից մեկի մեջ, ըստ ավանդության, ամփոփված էր Պետրոս առաքյալի ճկույթը (ծիծեռնը): Յավոթ, դեռևս չի պարզվել, թե ով և երբ է կառուցել հռչակավոր վանքը: Ատ. Օրբելյանը այն դասում է Սյունյաց անվանի վանքերի շարքում և հիշատակում «Ստեփաննոս ծիծեռնոյ վանականին» 844 թվականին: Ե. Լալայանը «Ազգագրական հանդեսի» էջերում նկարագրելով վանքը, գրում է տաճարի արևմտյան կողմում գտնվող մի քարի մասին, որը Ազոավախաչ է կոչվում: Մեծ ազգագրագետը պատմում է հետևյալ ավանդությունը.

«Միծեռնավանքը շինելիս ահագին կաթսան տանում են գետը, ջրով լցնում և բերում, կերակուր էփում բանվորների համար: Այդ ժամանակ ջրի հետ մի օձ էլ է ընկնում կաթսան և մնում աննկատելի: Երբ կերակուրը էփվում է և հասնում է ճաշի ժամը՝ մի ազոավ պատվում է կաթսայի վերև և շարունակում կոկոսյ: Բանվորներն ուշադրություն չեն դարձնում և նստում են ճաշելու, երբ ազոավը ահագին կոկոսցով ընկնում է կաթսայի մեջ: Բանվորները կերակուրը պղծված համարելով թափում են, և որքան մեծ է լինում նրանց դեպի ազոավն ունեցած հիացումը, երբ կերակուրի մեջ տեսնում են օձի մարմնի մասերը: Իսկույն հասկանում են, որ ազոավը փրկել է իրենց բոլորի կյանքը, ուտի և պատանքում են նրան և թաղում վանքի արևմտյան պատի մոտ, մի մեծ քարի տակ, իսկ օձի պատկերը նկարում վանքի սյուններից մեկի վրա:

Մինչև այժմ էլ այդ ազոավը պաշտվում է, և երբ երեխաները շուտ չեն սկսում քայլել, չեն «ոտնըվորվում», տանում են այդ քարի մոտ, քարի առաջ մոմ վառում, մի մեխ կամ մի ձու դնում քարի տակ և երեխայի ոտներին ջուր ածում, հավատարով, որ այսպիսով նա շուտով կբարձրի քայլելը»:

Այս ավանդության վերլուծությունը և Ազոավախաչի պաշտամունքը ցույց են տալիս, որ տաճարը հեթանոսական շրջանի է: Իսկ սյուններից մեկի վրա իրոք ցանցկեն հյուսվածքով օձ է պատկերված: Վանքի պատերին խաչերն ու վիմագրությունները հետագա ժամանակներում են արվել: Տաճարի մուտքի մոտ մի փոսի մեջ եղակի ու գեղեցիկ պատկերաքանդակներով տապանաքար է ընկած: Վերևի մասում կախկոպոսական գավազան է պատկերված: Ըստ Օրբելյանի, հնում վանքի շուրջը գլուղ է եղել՝ 10 շափ հարկավ: Բաֆֆու այցելության ժամանակ վանքի գլուղը չկար: Իսկ ահա այժմ այստեղ Քոսալար գյուղն է, որտեղ քրդեր են ապրում:

ԽՔ. ԿՅՈՐԵՍ

Բաֆֆին սեպտեմբերի 7-ին Տեղից Գորիսի ջրաղացներն է հասնում ու տեղացի ուղեկցին տալով պայմանավորված վարձը, հետ ուղարկում: Մուղղուսունց Ղաղարը իր ջրաղացում ընդունում է Բաֆֆուն, որը ներկայանում է որպես Հակոբ Մելիք-Հակոբյան: Ղաղարը, որը Բաֆֆու հասակակիցն էր, հյուրասիրել է գրողին, տարբեր պատմություններ պատմել անցյալ դեպքերից: Հիշեցի Սերո Խանզազյանի պատմությունը Ղաղար ամու մասին: Անգլիացի գեներալ Թոմսոնը, որը 1918-ին զբաղվել էր Բաքուն, իր պատվիրակ Շատելորդի միջոցով ուղտիմատում էր ներկայացրել զանգեզուրցիներին՝ ենթարկվելու Ադրբեջանի մուսավաթիստական կառավարությանը: Գորիսեցիք հավաքվել էին գավառի կենտրոնի հրապարակում և լսել բժիշկ Մինայի թարգմանությամբ անգլիացի պատվիրակի սպառնալիքները: Ղաղար ամին, որը մեծ ազդեցություն ուներ Գորիսում, համարձակորեն պատասխանել էր.

— Այդ ծովի շանն ըսեցիք, որ էս սհաթիս հետ դառնա, թե չէ տղաներին կասեմ կամուրջը քանգեն ու շնքատակ անեն: Համ էլ գրան ըսեցիք, որ մենք մի թագավորություն ենք ճանաչում, դա Ռուսաստանն է: Զրաղացների ձորից Բաֆֆին Գորիս է մտնում:

Ինձ հայտնի էր, որ Բաֆֆին հին Գորիսում հանդիպել էր բրուս Թանգունց Գալուստին: Գտա նրա թոռներից մեկին, Սերգեյ Թանգյանին, որը խորհուրդ տվեց հանդիպել Յողիկ Ղևոնդյանին, որի մոտ Բաֆֆու հետ Թանգունց Գալուստի հետ հանդիպման մասին պատմող ձեռագիր կա: Յողիկը, որը 60 տարեկան կին է, Թանգունց Գալուստի թոռն է և սիրով ինձ է հանձնում մոր՝ Սաթենիկի ձեռագրերը, որտեղ Բաֆֆու հանդիպման մանրամասներից բացի նկարագրված է նաև Պարսկաստանից Թանգունց տոհմի Գորիս տեղափոխվելու պատմությունը:

«Մուղանի դաշտից լրջախճ, հետաքրքիր նայվածքով գեղեցիկ դեմքով մի մարդ հասնում է Գորիսի կամրջի մոտ գտնվող հրապարակն ու դիմում հավաքված մարդկանց.

— Ո՞րն է «սուրբ Մարտիրոս» ուխտատեղի ճանապարհը: Մարդիկ ցույց են տալիս Իրնգանի ձորում (այժմ Թանգունց ձոր) գտնվող բրուտանոցը և ասում.

— Մի ջահել պրուս կա այնտեղ, նա քեզ ցույց կտա: Հայրս՝ Թանգունց Գալուստը (ծնվ. 1855 թ.) դազգահի մոտ կլանված իր աշխատանքով, երբ արգեն ավարտում էր կուծի ձևավորելը, մուտքի մոտ ամառային բաց դույնի հազուստով, ծղոտե լայնեզր զլխարկով, թուխ բեղ ու մորուքով, ինտելիգենտ մի օտարականի տեսավ, որը 10 Բակու Կարապետյան

կանւած իր շարժումներին էր հետևում: Օտարականը լայն ժպտաց, հանեց գլխարկն ու բարևեց: Այդ պահին Գալուստը արդեն թրծման համար պատրաստ կուժը հանում էր դազգահից:

— Վարպետ,— բրուտին դիմեց անծանոթը,— մի կուժ էլ իմ ներկայութեամբ սարքի տեսնեմ:

Նա հետևում էր կժի ձեռագոյացման բոլոր մանրամասներին ու կարծես զբանք գրանցում էր հիշողութեան ծալքերում: Երբ բրուտը վերջացրեց, անծանոթը բացականչեց.

— Ապրես, վարպետ, հոյակապ է, միայն ափսոս, որ թրծած չէ, թե չէ որպէս հիշատակ այս լավ արհեստի՝ կվերցնեի հետս:

Անծանոթը երկար զննեց բրուտանոցը:

— Ազա,— դիմեց բրուտը,— որտեղի՞ց եք և ո՞ւր եք գնում:

Անծանոթը, շղագարեւով բրուտանոցի զննումը, պատմեց, որ ինքը ճանապարհորդ է, հնութիւններ է ուսումնասիրում, լսել է, որ այս կողմերում քարերի վրա հին գրութիւններ կան, որոնք իրեն շատ են հետաքրքրում:

— Ես կտանեմ քեզ ցույց կտամ այդ ամենը,— ասում է Գալուստը:

— Նախ՝ սուրբ Մարտիրոսն է հետաքրքրում ինձ:

— Հետո չէ այստեղից, ես քեզ կուղեկցեմ:

— Իսկական վարպետ ես դու,— զննելով արհեստանոցը, ասաց Բաֆֆին:

— Ես ինչ վարպետ,— պատասխանեց երիտասարդ բրուտը,— իսկական վարպետը դու ես, թե չէ՝ իմն ի՞նչ է՝ հասարակ կուժ:

— Դե լավ,— հաշտվող տոնով պատասխանեց գրողը,— ես իմ գործի վարպետն եմ, դու՛ թո գործի:

Երկուսն էլ՝ բրուտն ու գրողը, ժպտում են: Բրուտը հանում է գոգնոցը, լվացվում ու գուրս գալով բրուտանոցից, ձորն ի վեր քայլելով հասնում սուրբ Մարտիրոս խաչը, որտեղ ուխտավորները մոմեր են վառում, զոհեր մատուցում: Գալուստը ցույց է տալիս ժայռերի, խաչքարերի վրա հին գրութիւնները:

— Տասներորդ դարի քարեր են սրանք,— զննելով գրերը, ասում է գրողը:

— Սա էլ «Ճգնավորի» մատունն է,— ասում է Գալուստը՝ ցույց տալով կոնաձև սյունը, որի վրա բարձրում երևում է փոքրիկ նեղ մուտքը:

Մագլցել էր պետք: Գալուստը բրուտի ուժեղ ձեռքերը հննելով ապառաժին, աստիճաններ է ստեղծում, որոնց վրա զննելով ոտքերը, գրողը վեր է մագլցում, ձեռքերով ձգվելով հասնում վիմափոր մատուռի մուտքին:

քին: Ներսը զննելուց հետո գրողը Յ մետր բարձրութիւնից ցած է նայում ու տազնապած ասում.

— Գալուստ, զնա գյուղ, մարդ բեր, որ օգնեն ինձ ցած իջնելու, թե չէ՝ ցած կգլորվեմ ու կջախջախվեմ:

— Զէ՛, իջիր,— պնդում է բրուտը,— ոչ մի մարդ էլ պետք չէ, ոնց որ բարձրացել ես, այնպես էլ ցած կիջնես:

Գրողը կախվելով մուտքից, հենվում է բրուտի ուսին, աստիճան դարձած ձեռքերին ու ցած իջնում: Սուրբ Մարտիրոսի վիմափոր մատուռը զննելուց հետո իջնում են Խաչին աղբյուրը: Գրողը արտագրում է երկու հսկա ծառերի հովանու տակ գտնվող աղբյուրի ճակատին կամարակապ բարի գրերը. որտեղ նշված է «ԹՎ. ՇԽ» (1091), ապա խմելով ջուրը, գտնում աղբյուրը: Ոչ հետո մի փոս է լինում:

— Մեծ քար կա փոսի մեջ, բայց շես կարող իջնել,— ասում է Գալուստը:

— Կարող եմ,— ինքնավստահ ասում է ճանապարհորդը, որը հեռութիւնն ուսումնասիրելու համար ոչ մի արգելքի առջև կանգ չէր առնի: Նա մտնում է փոսի մեջ, և զննում խոնավութիւնից մամուռով ծածկված քարը: Գալուստը փոխնազ կոչվող բույսի լայն տերևներով մաքրում է քարը մամուռից: Քարը կանաչով է ներկվում ու պարզ երևում են տառերը:

Հայրս պատմում էր, որ շատ էր ուզում իմանալ, թե վերջապէս, ո՞վ է այս հմաստուն մարդը, բայց չհարցրեց:

— Շատ շնորհակալ եմ քեզանից, Գալուստ, որ գործից կարվելով այսքան ժամանակ հատկացրիր և օգնեցիր ինձ,— հետդարձի ճանապարհին դիմում է ճանապարհորդը:

Երբ մտնենում են գյուղին, Գալուստը դիմում է ուղևորին.

— Ազա, արդեն ոչ է, մեր տուն զնանք, կգիշերեք, առավոտյան կճանապարհեմ:

Ճանապարհորդը հրաժարվում է ու ասում.

— Դու այդքան օգնեցիր ինձ, ինչո՞ւ ոչ մի անգամ չհարցրիր, թե ով եմ ես:

— Գուցե հարմար չէ ձեզ համար,— ժպտալով պատասխանում է բրուտը,— եթե պետք լիներ՝ ինքներդ կասեիր:

Գրողը հավանելով բրուտի խոսքերը, ասում է.

— Որ այդպէս է՝ ասեմ. ես գրող Բաֆֆին եմ, բայց այդ մասին ոչ ոքի չհայտնես:

Գրողն ու բրուտը բաժանվում են:

Երբ Թանգունց Գալուստը 1888 թվականին լսում է Բաֆֆու մահվան

մասին, ակասանք է հայտնում, որ բաց է թողել մեծ գրողին հյուրասիրելու առիթը:

— Մայրս պատմում էր, որ Բաֆֆին եղել է միջինասիական Կականդե և Կուշկա քաղաքներում, — համոզիչ տոնով ասաց Յողիկ Ղևոնդյանը, — այցելել Քուրքմենիայի ծայր հարավում բնակվող իր ազգականին: Այդ ազգականը փորձել էր Բաֆֆուն համոզել, որ մնա Միջին Ասիայում: Բայց մեծ գրողը պատասխանել էր՝ «Չէ, չեմ կարող, ես իմ ժողովրդի հետ պետք է լինեմ»:

Գուցե երիտասարդ տարիներին հոր անևարական գործերով Պարսկաստանի տարբեր անկյուններ ճանապարհորդելիս Միջին Ասիայում էլ է եղել Բաֆֆին: Բայց գրողն այդ մասին ոչինչ չի գրել, ուստի ես Յողիկի մոր պատմածը երևակայության արդյունք համարեցի: Յողիկն ասաց, որ Քանգունց Գալուստը հետագայում շատ զանգեղությունների օրինակով, իր բախտն էր փորձել Միջին Ասիայում, սակայն մի քանի տարի հետո վերադարձել էր ու վերսկսել բրուտի իր գործը: Յողիկի մոր պատմության մեջ ես կարգացի զանգեղություն ցանկությունը իրենց ծնողների, պապերի ճակատագրի հետ կապելու մեծ վիպասանին ու դրանով իսկ փորձելու արդարացնել օտարության մեջ բանվոր վարձվելու մեկնած իրենց պապերին կամ այսօր սիրերներում, խամ ու խոպան հողերում իրենց բախար փորձող որդիներին:

Այցելում եմ հին Գորիսում Բաֆֆու հետ կապված վայրերը: Գորիսի կենտրոնում ինձ ցույց տվեցին Մանուշար բեգի երկհարկանի տունը, ուր հյուրընկալվել էր վիպասանը: Մանուշարը համարվում է նոր Գորիսի հիմնադիրներից մեկը: 14 տարի հետո այս նույն տանն էր իջևանել Խրիմյան Հայրիկը: 1918 թվականին, երբ թուրքական ջոկատները գրավում են Սև սարը, հայտարարում են, թե վաղը Մանուշար բեգի պաշտպանություն թեյ կսմենք... Իսկ Անդրանիկը իջևանել էր հարևան Ղազար Մալինջյանի տունը: Ինձ զարմանք է պատճառում, որ հայաց մեծերի այցելության վայրերը չեն հիշատակվում ցուցատախտակներով: Իսկ նոր Գորիսի հիմնադրի անունով անհրամեշտ է փողոց անվանակալել: Այնուհետև Գորիսին սիրահարված իմ ուղեկիցները ցույց տվեցին Քանգունց բրուտանոցը, որը փաստորեն հսկա սյուն-ապառածի մեջ 10 մ խորություն ունեցող ու մուտքից սկսած լայնացող վիճափոր սրահ էր: Այն հետեի մասում անցքով կապվում էր առանձին մուտք ունեցող 2 մ տրամագծով գլանաձև ու բրուտանոցի համեմատ խորը տեղադրված սենյակի հետ: Դա բրուտանոցի հնոցն էր: Սրահի պատերին բազմաթիվ պահարաններ էին փորված: Երկկամար լայն մուտքը նախկինում այնքան խորն էր, որ հսկա կողովներով ու խեցեղենով բեռնված ջորիները

ազատ ներս ու դուրս էին անում: Սրահի տարածքը կազմված էր աստիճաններով բարձրացող երեք հարթակներից: Բրուտանոցը մեծ հուշակունքն ուղջ Զանգեղուրում, և Քանգունց բրուտանոցը իրենց բազմաթիվ գործակալների հետ կապված էին երկրամասի բնակավայրերի հետ ու հաջողությամբ իրացնում էին արտադրանքը:

Եթե Բաֆֆին առիթ էր ունեցել տեսնել տոհմիկ բրուտաների արճևտն ու իր հիացմունքը հայտնել, ապա շուրջ հարյուր տարի անց ես հիանալու քիչ բան ունեի: Քանգունց բրուտանոցը 1935 թվականին դադարեցրել էր իր աշխատանքը: Իսկ ինչ՞ու՞ լվերականգնել հինավուրց բրուտանոցը, մանավանդ, որ Գորիսում երկու բարձրարվեստ բրուտ-խեցեղորդներ կան: Նրան քիչ հմայք չէր հաղորդի և Բաֆֆու այցելության մասին պատմող հուշատախտակը: Թվում է, որ իրենց քաղաքի ճարտարապետության տեսքին ու գեղեցկությանը այսքան հետևող գորիսեցիները անպայման կիրականացնեն այս կարևոր գործը ես: Ես արդեն մտովի տեսնում էի կոտպերատիվ հիմունքներով գործող վերականգնանացած հազարամյա բրուտանոցը, որը կարող էր նաև տուրիստներին հետաքրքրող վայր դառնալ, նրանց առաջարկել իր արտադրանքը:

Ոչ հեռվում Սակերի ձոր վայրում հսկա սյունների մոտ ֆիլմ էին նկարահանում, շոգի արտադրող մեքենայի միջոցով ձգելով ամպարուլաների ու մշուշի պատրանք ստեղծել: Պայծառ, արևոտ օրեր էին Գորիսում, որն էլ հիասթափեցրել էր կինոռեժիսոր, արձակագիր Աղասի Այվազյանին ու ստիպել արճեստական միջոցների օգնությանը դիմել:

Ուղեկիցներս ինձ առաջնորդում են դեպի Ղաթրին ձորը, որտեղ գտնվում էր Խաչին աղբյուրը: Հին քարերը չեն պահպանվել: Սերո Խանգաղյանը ինձ պատմել էր, որ և՛ 1091 թ. արձանագրություն ունեցող աղբյուրի քարերը, և՛ Բաֆֆու այցելության հետ կապված տապանաքարը նոր ցեմենտապատ ճանապարհի տակ են թաղված: Հինավուրց աղբյուրը իր տեղը զիջել է նոր ճանապարհին ու 10 մ դեպի ներքև տեղափոխվել: Ցավալի է, որ ոչ զարբարողյան Դահրավի և ոչ էլ Գորիսի աղբյուրներում չեն հավերժացվել մեծ գրողի հիշատակը:

Ես հետաքրքրությամբ եմ դիտում նոր Գորիսը: Նրա երկար ու ձիգ փողոցները, առաջին տների կամարների ձևերը, ժամանակակից ինդուստրիալ պայմաններում զարմանալի համառությունը պահպանած երկհարկանի, գեղեցկատես տները, պողով ծանրաբեռնված այգիները: Նոր Գորիսը 1870 թ. հիմնել են զավառապետ Ստարացկին ու Մելիք-Հուսեինյան Մանուշար բեգը: Ես փորձում եմ պատկերացնել 20—25 տուն ունեցող գորիսյան այն միջավայրը, ուր հայտնվել էր մեծ վիպասանը և այն մարդկանց, որոնց հանդիպել է նա և որոնց օժանդակությամբ այցելել

է գործսյան հնավայրերը, գրի առել հին ավանդութիւններն ու Դավիթ-
Քեկի գործեսցի զինվորները մասին զրույցները:

Ռ. Պետրոսյանը պատմում է Արծվանիկից Տաթև հարս եկած իր
մոր՝ Կատին Անդրեասի Անդրեասյանի հուշերը Բաֆֆու մասին: Կատինը
նաև պատմել էր, որ Բաֆֆին Տաթևի մեծ տաճարի մուտքի ձախ կող-
մում սվաղած պատին սև ներկով գրված մի քառատող էր թողել, որը
կար մինչև վերջերս: Յավոք, Ռ. Պետրոսյանը գրի չէր առել այն: Ես ար-
դեն շտապում էի շարունակել ճամփորդութիւնս և օր առաջ Տաթև հաս-
նել ու դտնել Բաֆֆու քառատողը: Ռ. Պետրոսյանն ասաց, որ իր մայրը
անգիր գիտեր Բաֆֆու բանաստեղծութիւնները և հաճախ էր արտասա-
նում «Ձայն տուր, ով ծովակ» բանաստեղծութիւնից այս մի հատվածը.

Մրքեցե՛ք քեզի լաբեր ծանգոտ,
Ելե՛ք, Հայաստան երգով եռանցոտ,
Քարթեցրե՛ք հայաց աշխույժը մեռած,
Լցվեցա՛վ կամէր, հասա՛վ ժամանակ,
Օրը կրաց՛վի, անա՛՜ Առաջակ
Ձեզ հայտնի եղան, ասում է աստված:

ԽԳ. ԲԱՐԱՀՈՒՆԶ

Գորիս-Ղափան մայրուղուց ճանապարհը թեքվում է դեպի աջ, և
անմիջապես երևում է Քարահունջ գյուղը:

Մեծ գրողին Գորիսից Քարահունջ էր ուղեկցել կովկասյան դպրոց-
ների Սրեանի թեմի տեսուչ, քարահունջեցի Հովհաննես Գևորգեկյանը
(ծնվ. 1854), որը, հավանաբար, անձամբ գիտեր Բաֆֆուն: Գյուղ մտնող
հին ճանապարհը վերին հանգրից կողմից էր, և մինչև գյուղ մտնելը վի-
պասանը հիացել էր Քարահունջի Շոռան կողմող ջրվեժով, որը 15 մ
բարձրութիւն ունեցող ապառաժի վրայից ցած էր թափվում ու խելա-
ցնոր աղմուկով լցնում շրջապատը: Այստեղից գեղեցիկ տեսարան էր
բացվում դեպի գյուղը, նրա հուշակավոր թթենիների ու Մուսկաթի տերե-
ների արանքում երևացող կարմիր կղմինդրե տանիքները:

Հայոց լեզվի և գրականութիւնի ուսուցիչ Անդրանիկ Բաղդասարյանի
տան բակը մտնելուն պես ինձ գերում է ծանոթ ու շատ հաճելի բույրը:
Գա հուշակավոր Մուսկաթի անուշավետ բույրն էր:

— Այս տանը 1939—40 թվականներին հյուրընկալվել է Արամ հա-
չատրյանը, որը ժողովրդական երգեր էր հավաքում զանգեղուրյան գյու-
ղերում, — հպարտութեամբ ասաց վաստակաշատ ուսուցիչը, ապա ջա-
բունակեց, — գյուղի պահեստում հիացմունքով մի աղջկա երգ էր լսել

ու անմիջապես էլ գրի առել այն, Իսկ 1935 թվականին Ֆրանսիացի մի
բանաստեղծուհու հետ մեր տուն էր այցելել ակադեմիկոս Արտաշես Կա-
րինյանը:

Ես էլ հիշելով Սերո Խանզադյանի մի պատմութիւնը, հարցրի,
արդո՞ք, 1940 թվականին Գորիսում ինքը չէ՞ր Խանզադյանի «Վահրամ
Որոտնեցի» ներկայացման առաջին բեմադրողը:

— Այո, այն լավ ընդունելութիւն գտավ Զանգեղուրում, — ասաց
Ա. Բաղդասարյանը, — է՛հ, երանի թե նորից գային այդ օրերը:

Ա. Բաղդասարյանը հին ավանդութիւններով, զրույցներով հավա-
քել է գյուղի պատմութիւնը: Նա ձեռագիր տետրերը դնում է իմ առջև,
զուգահեռաբար շարունակում գյուղի անցյալից զրույցները: «Պատմու-
թիւնում» Ա. Բաղդասարյանը նշում է, որ Բաֆֆուն ընդունել է գյուղի
տիրացուն՝ Սահակ Գևորգյանը, որը տեսուչի հորեղբայրն էր: Ես ցան-
կութիւն եմ հայտնում անմիջապես այցելել ամբողջութեամբ պահպան-
ված երկհարկանի տունը: Ճոռացող փայտե աստիճաններով դանդաղ
վեր եմ բարձրանում, ու թվում է, քիչ հետո կտեսնեմ վիպասանին տեր
Սահակի կամ գյուղի ծերունիների հետ զրուցելիս: 100-ամյա պահարա-
նը, հին կահ-կարասին ինձ օգնում են մտովի տեղափոխվել անցյալ դա-
րի վերջերը: Պատշգամբի բազրիքը նույնն է մնացել: Ընդարձակ սենյա-
կը, որը հյուրընկալել էր գրողին, համեստ կահավորում ունի: Ինչպես
100 տարի առաջ, պատշգամբից տեսարան էր բացվում դեպի Վարարակի
գեղատեսիլ ձորը, հեռվում դեպի Տաթևի կողմերը ձգվող լեռնապարր:
Այս ամենի օգնութեամբ փորձում եմ զգալ վիպասանին այստեղ շրջ-
ապատած մթնոլորտը, նրան համակած դրացումը:

Ա. Բաղդասարյանը հայտնում է, որ Հ. Գևորգեկյանը դասավանդել
է Շուշիում, Քարահունջում և այլ վայրերում, թվաբանութիւն գիրք է
հրատարակել դպրոցների համար: Նա Թիֆլիսից խնձորենու նոր տեսակ-
ներ էր բերել Քարահունջ և այստեղից տարածել ողջ Զանգեղուրում: Իր
«Պատմութիւնում» Ա. Բաղդասարյանը զետեղել է Շուշիի թեմական
դպրոցի շրջանավարտ, Քարահունջի երկրասյա դպրոցի ուսուցիչ, հետա-
գայում ՀեՄՀ վաստակավոր ուսուցիչ, Լենինի շքանշանակիր Գերասիմ
Աղասյանի հուշերը: Նա Քարահունջում հայոց լեզու և երգեցողութիւն
էր դասավանդել: Մի անգամ Հովհաննես ամին (գյուղում այդպես էին կո-
չում Հ. Գևորգեկյանին) լսում է Շուշիից նոր ուսուցիչ նշանակված Գ.
Աղասյանի երգեցողութիւն դասը (այն ժամանակ դա կարևորագույն
դասերից մեկն էր համարվում), ընդհատում է և ինքը շարունակում այն,
իր երգեցիկ թավ ձայնով երգում, երիտասարդ ուսուցչին ցույց տալիս

երգը մատուցելու ձևերը: Գ. Աղասյանը հետագայում՝ 1916—17 թվականներին շարունակում է ուսումը էջմիածնի ճեմարանում:

2. Գեորգրեկյանը խոր ծերության հասակում, 1945 թվականի գարնանը, մահից առաջ գյուղի երիտասարդությանը կտակում է, որ հազարանակի օրը գան իր գերեզմանի մոտ ու ասեն՝ Հաղթել ենք Ֆաշիստներին: Մեծ լուսավորիչն ու հայրենասերը մահացա՛վ՝ շահանելով հաղթանակը, որին հավատում էր և սպասում:

Քարահունչեցի էր և Բարձի մեծահարուստ նավթարդյունաբերող Առաքել Մատուրովը: Հենց նրա և Հայրապետյանի միջոցներով է 1893 թ. կառուցվել Քարահունչի երկգասյա երկսեռ ծխական դպրոցը: Պատմում են, որ 1850-ական թվականներին շատ զանգեզուրցիների նման նա ևս լախտ որոնելու նպատակով Բաքու է մեկնել, կուժը շալակն առած նովթ վաճառել Բարձի թաղամասերում: Այսպես որոշ դումար է հավաքում, սեփական սալով է նավթը վաճառում, հետո նավթաբեր հողամաս է գնում, ու սկսում արգյունահանել իր նավթը: Իսկ որոշ ժամանակ անց նա արգեն Բարձի խոշոր կապիտալիստներից մեկն էր:

1900 թվականին, երբ Նիկոլայ թագավորը թագուհու հետ Բաքու է ժամանում, Առաքել Մատուրովը թագուհուն օգնում է վագոնից իջնելիս Թագավորին դուր չի գալիս Ա. Մատուրովի այս վարմունքը և որպես պատիժ նրան Երկաթե խաչ է նվիրում, որը նման հարուստ և զիրք ունեցող մարդու համար խիստ վիրավորական էր: Այլևս անկարող լինելով տանելու այս խայտառակությունը, քարահունչեցի մեծահարուստը Ախտայի իր կավածքում ինքնասպան է լինում: Գյուղի գերեզմանոցում տապանաքարի վրա կարգում են. «Առաքել ապեր Մատուրյան՝ 1830—1904 թթ.»:

Ա. Բաղդասարյանը պատմում է գյուղում 1795 թվականին տեղի ունեցած մի դեպքի մասին, որի նկարագրությունը ծանոթ էի Ե. Կալասյանի «Ազգագրական հանգեսի», «Ձանգեզուր» ուսումնասիրությունից: Նախիջևանի խանը հարձակվում է Քարաշեն և Քարահունչ գյուղերի վրա: Քարաշենը անձնատուր է լինում: Ասպատակիչները այն թալանում են ու երիտասարդներին գերի տանում: Իսկ Քարահունչը պաշտպանվում է: Գյուղացիները տանուտեր Օհանջանի ղեկավարությամբ մտնում են Հոփի-սյմեի և կեղեցիին և սեղանի վեմ քարով ծածկում մուտքը: Ավարառու զինվորները տեսնելով, որ չեն կարողանում ներս մտնել, եկեղեցու բակ են բերում տանուտերի Սիսակ ու Գեղամ որդիներին, խարույկի վրա կապկպում և առաջարկում հորը բացել եկեղեցու դուռը: Որդիները պահանջում են չբացել այն: Թուրքերը խարույկի վրա այրում են եղբայրներին: Շուտով Գորիսից մեկիք Հուսեիսը (Հովսեփը) օգնություն է գա-

լիս քարահունչեցիներին և գյուղից քշում թուրքերին: Տանուտեր Օհանջանը տեսնում է որդիների ծխացող մարմիններն ու տեղնուտեղը մահանում է:

Շրջում են գյուղում: Գյուղի վերին մասում մի այգու մեջ 8×6,5 չափի հսկա ապառաժ ցույց տալով, ասում է՝

— Սա է «Օխտը օրորոցը»:

Քարի վրա հեծյալների, կենդանիների պատկերներ, խաչեր, այլ գազափարանշաններ ու արևի ժամացույց են փորագրված: Հին ավանդությունը պատմում է, որ երկրաշարժի ժամանակ ապառաժը պոկվել է ճաք-քար տեղից ու իր տակ տրորել յոթ եղբայրների տունը, որտեղ 40 հոգանոց գերդաստան էր ապրում: Ապառաժի տակից դարձողականները ամանեղեն են գտել, որոնք այժմ զարդարում են դպրոցի թանգարանը: Պատկերաքանդակները տարբոր ժամանակաշրջաններ են ներկայացնում: Եթե որսի տեսարանը քարանձավային մարդու ձեռքի գործ է, ապա խաչից վաղ քրիստոնեական շրջանում ձգնավորի հավատքի գաղափարանշանն է: Ծաք-քար տեղում մնացել են հին մարդու բնակավայր հանդիսացած բազմաթիվ քարանձավներ, որոնք այժմ ձմռանը խոտի պահպանման լավ պահեստներ են:

Ըստ ավանդության, Բաֆֆին այցելել է ձորում վարարակ գետի վրա Կործող ջրաղացները, հիացել այստեղ գանվող աղբյուր-հանքային ջրով, մանրամասն զննել գյուղից 6 կմ դեպի հարավ ձորի աջ կողմում բաժնր ապտոածի վրա գտնվող հինավուրց անմատչելի ամրոցը, որին պարտիկները գյավուր-դալա (անհավատների բերդ) են կոչել: Բաֆֆուն քիչ զարմանք չեն պատճառել Քարահունչի թթենու այգիները:

Ա. Բաղդասարյանը գրում է, որ թթենին Ազուլիսից առաջին անգամ Քարահունչ է բերել Ավագ քեռին: Այստեղից էլ այն տարածվել է հարևան գյուղերում: Բաֆֆու այցելություն ժամանակ Քարահունչում 105 տուն կար մոտ հազար բնակիչներով: Այժմ այստեղ 264 տուն կա 1150 բնակիչներով:

— Սա մեր ակումբն է,— ասաց ուղեկիցս,— այստեղ մի հսկա, 2,5 մ շոռավղով ծառ կար, որը ըստ ավանդության հին սրբավայր էր. 1932 թվականին կտրեցին այն ու տեղում այս ակումբը կառուցեցին:

— Իսկ այս ծառը,— մի մատղաշ ծառ ցույց տալով հարցրի ես:

— Հա, նոր ենք դրել, որպես հնի հիշատակ:

Գյուղի պատմիչը նկարագրում է 1906 թ. տեղի ունեցած մի իրադարձություն, որը կարևոր տեղ ունի գյուղի ավանդությունների շարքում: Իրեն «բեզ» հորջորջող նանլար անունով մի հանցազործ, որը Երզնկիով շատ հայեր սպանել, Գորիսի բանտից ազատվելով, անմիջապես ընդ-

Հարվում է քարահունջեցի Հայրապետի ու Սահակի հետ ու սպանվում: Գորիսի ռուս զավառապետը հրանոթներ է դնում գյուղի մոտ բարձունքի վրա և պահանջում հանլարին: Մի քանի օր տեւած պաշարումից հետո գյուղում սով է բռնկվում: Գյուղը վտանգի առաջ էր կանգնել: Ելքը գտնում է ռուսական բանակից նոր զորացրված Սրապիոն Սարգսյանը: Նա ներկայանում է զավառապետին ու հայտնում, թե գյուղում խոչերա է բռնկվել: Գավառապետը անմիջապես բեկանում է «էքզեկացիան» ու հեռանում գյուղի տարածքից:

Ա. Բաղդասարյանը այնուհետև իր պատմության մեջ տալիս է գյուղի անվան բացատրության տարբերակները: Առաջինը՝ երկու վանականներ, որոնք Տաթև էին գնում, լսելով ջրվեժի ձայնը, խորհուրդ են տալիս գյուղի անունը Քարեհունջ (քարե հնչյուն) դնել: Երկրորդ տարբերակը՝ քարքունջ (անկյուն) — քարաքունջ-քարահունջ ձևն է, իսկ երրորդը՝ գրաբարյան «ունջ» բառն է, որը «տակ» իմաստն ունի: Քարի տակ-Քարանունը:

Հաջորդ օրը վաղ առավոտյան Բաֆֆին Քարահունջից ուղևորվում է Բարգուշատի ձորը:

ԽԳ. ԲԱՐԳՈՒՇԱՏԻ ՉՈՐ

«Սյունեցի հայը ոչ մի բանով իրավունք չունի գանգաավելու ասածուն, թե ինչու ինձը թշվառ է և օտարի ծառա: Երբ ասաված մի ժողովրդի տալիս է այսպիսի երկիր, որ իր բնական ամբուրյուններով ամեն հարմարություններ ունի պաշտպանելու նրան թշնամու հարձակումներից, այդ ժողովուրդը ինձն է մեղավոր, որ չէ կարողանում օգուտ կաղելու ասածո շնորհած պարգևից:

Եվ իրավ, վայրենի բնությունը հիացնելու շարժումներ էր: Դեպի ամեն կողմ, անկախ կերպով, տարածվում էին լեռնային ցանցառեսակ շրթաներ, որոնք խիստ կերպով գեանդված են մինը մյուսի մոտ՝ ջրղեղով իրենց միջավայրում նեղ և խորին ձորեր: Այդ շրթաների վրա, օղոցի առամների նման, բարձրաճում էին սարերի սուե գագաթները, որ կորչում էին ամպերի մեջ: Կուսական անտառը, որպես մի կանաչագարգ վերաբերում, ծածկում էր լեռների մեկուրյունը և նրանց ավելի անմատչելի էր դարձնում»:

Քարեկարգ, ուզիլ փողոցներով, երկհարկանի մեծ առանձնատներով ու այգիներով նոր Շինուհայրը ինձ քիչ էր հետաքրքրում: Սարգիս Զալլան հպիսկոպոսը իր ճանապարհորդության ժամանակ այն միտքն էր

հայտնել, թե հին Շինուհայր վերևի սարահարթում էր եղել: Այս իմաստով, ուրեմն, այնքան էլ անսպասելի չէր գյուղի ձորից սարահարթ տեղափոխվելը: Իմ հետաքրքրության կենտրոնում Որոտանի աղմուկը միշտ ականջին, զոգավորության մեջ նիրհող, կործանվողի, լքվողի զգացումը իր ներսում թաքցրած հին Շինուհայրն է, նրա Կուսանաց անապատը, որի անմատչելի դիրքը յուրօրինակ միջնաբերդի էր վերածել Գավիթ-Բեկը:

100 տարի առաջ գյուղի քոթավան, տեսնելով գյուղացիների համատարած գաղթը դեպի Բաքվի նավթահանքերը, դառը արտասուքով ասել էր՝ «Եթե գյուղում մի 50 տնտեսություն տեսնեմ, հանգիստ, անհոգ կմեռնեմ»: 1964 թ. հիմնված նոր գյուղում 500 տնտեսություն կա:

Վաստակաշատ մանկավարժ Գուրգեն Մարտիրոսյանը սիրով հանձն առավ ինձ հին Շինուհայր ուղեկցելու գործը:

— Պատմում են, որ Բաֆֆին Յաջի գյուղում էլ է եղել, — ասաց նախկին ուսուցիչը:

— Յաջին Աիշանի նկարագրած Հարժիքը չէ՞, — հարցրի ես:

— Այո, այժմ այն Հարջիս է վերանվանվել, — ասաց Գ. Մարտիրոսյանը:

— Գուցե հենց հիմա Հարժիք դնանք, — առաջարկեցի ես:

— Գնանք, — համաձայնեց ուսուցիչը:

«Սյունյաց աշխարհի Ախիան գավառի Ուշ-թեփե (Նոարլուր) կոչված դաշտավայրի վրա երևում էին մի քանի սպիտակ վրաններ: Վրանները կազմված էին դաշտավայրի լեռնային կողմում, մի ձորի մեջ, որ երեք կողմից պատած էր բարձր սարերով, իսկ մի կողմից փապարով բացվում էր դեպի բնդարձակ, ամայի անապատը, որ ծածկված էր նոխ խտարույտերով»:

Նոարլուրը շրջանցելուց հետո մեր առջև հայտնվեց ժամանակակից Հարջիսը: Բաֆֆու ժամանակ գյուղը, ինչպես և մյուս բնակավայրերը, խոր ձորում էր՝ պատասպարված Սիսիանի խստաշունջ քամիներից ու օտարների հայացքից: Բաֆֆին, զննելով Նոարլուրի շրջակայքը, իր վերջում նկարագրել էր գիշերային այն փոքրիկ ճակատամարտը, որն էլ դարձել էր Գավիթ-Բեկի հզոր հաղթարշավի ու հայ ժողովրդի նոր գարթոնքի և ազատագրական պայքարի սկիզբը:

«Արեգակը մայր մտնելու վրա էր: Սարերի գագաթները լուսավորված էին վերջին հուռուզայթներով, բայց խուլ ձորի մեջ, որտեղ կազմված էին վրանները, արդեն տիրում էր երկնայան մոայրք»:

Այստեղ էր, որ գիշերը Գավիթ-Բեկը 40 զինվորներով հարձակվեց կարաշուրունների վրա, որոնք սարսափի մեջ էին պահում ողջ գավառը, և շախչախեց նրանց:

Այս փոքրիկ գյուղը, որը անցել է հազարամյակների միջով ու հասել մեր օրերը, բաժանված է զարգացման և անհաջողության միջև: 10-րդ դարի սկզբներին Սյունյաց թագավորական տունը այն նվիրում է Տաթևի վանքին: 12-րդ դարում այն ավերվում է սելջուկների կողմից: 17-րդ դարի սկզբներին Ռոստանի ձորում կտրտում են անտառն ու տեղափոխվում: Բաֆֆուն այցելության ժամանակ այստեղ 58 ծուխ կար՝ շուրջ 420 բնակիչներով: Սակայն 1931 թվականի ավերիչ երկրաշարժից հետո բնակավայրը կրկին չաշտավայր է տեղափոխվում:

Ձորում, ապառաժների տակ հին գյուղն էր՝ փարթամ կանաչի մեջ ծածկված ավերակներով: Կանգուն էին մնացել միայն սբ. Մինաս եկեղեցու թաղածածկ շինությունները, որոնց տանիքները նույնպես ծածկվել էին փարթամ կանաչով: Ավերակների մոտ տեղավորված տնտեսության մեղմանցը ձգում էր կենդանության շունչ սալ հին գյուղին:

Վաստակաշատ ուսուցիչ Կևորդ Վարդանյանը ձորի պոստին կանգնած նկարադրում է 1931 թվականի երկրաշարժը:

— Ապառաժներից ամենի բարեբը գրդղունով թափվում էին ցած ու ահի մեջ պցում մարդկանց սրտերը: Առաջին ցնցումից երկհարկանի դպրոցի շենքը փլվեց ու ծածկեց Աղաշանենց կալը:

Ուսուցիչը ձորի մյուս կողմում ապառաժի վրա մի սև անցք ցույց տվեց ու ասաց.

— Գղզնաձակ է կոչվում այն: Տաթևի վանքի տակի մի անցքից կատուն պցում են՝ այստեղից դուրս է գալիս: Պաշարման ժամանակ այն վանքի համար արտաքին աշխարհի հետ կապի միակ միջոցն էր:

Խոր ձորում անտառով շրջապատված ջրային հայելի էր փայլվում:

— Ձորում լին կա՞,— հարցրի ես:

— Այո, նոր է գոչացել,— սրտասխանեց ուսուցիչը,— Տաթևգետի թունելի ստորգետնյա ջրերից սպարները սահել են, փակել գետի հունավարհը:

— Իսկ Բաֆֆուն մասին գյուղի մեծերը ի՞նչ են պատմել,— անհամբերությամբ հարցրի ես:

— Բաֆֆո՞ւ,— արտաբերեց ուսուցիչը,— նրան մեր գյուղացի կաշունց Ասրին է հանդիպել: Ասում են՝ էս ձորով եկել անցել է Սիսիանի կողմերը:

Ներքևում Ռոստանի ձախ ափին հարթ տեղում կիսավեր կառույց էր երևում: Այն Սյունյաց իշխանների համար միջնադարում որպես ամրոտանոց էր ծառայել: Հենց այստեղ էլ Բաֆֆին հանդիպել է կաշունց Ասրուն:

Հիշելով մարտահերոսի 100-ամյա Ասրուն, հարսիբյի Ասրու նկատմամբ իմ հետաքրքրությունը անկարող էի զսպել:

— Ասրին ծառանգներ լունի՞,— հարցրի ես:

85-ամյա սպիտակամորուս, մեղքից կորացած Համո Պետրոսյանը Բաֆֆուն հանգիպած Ասրու տղան է:

— Գրող է,— ինձ ցույց տալով ասաց Գ. Վարդանյանը,— հին բաներով է հետաքրքրվում:

— Համեցեք, գնանք տուն, էսպես բակում գրուցել անհարմար է:

— Չէ, հայրիկ,— մերժեցի ես,— մտածելով, որ տանը ժամանակ շատ կխի, իսկ ես մտադիր էի հասցնել ձորը իջնել, ապա հետ՝ Շինուհայր գնալ ու հին գյուղը տեսնել:

— Հին դեպքերից ո՞րը պատմեմ,— նստելով պատի մոտ տեղադրված նստարանին, ասաց ծերունին,— ուզո՞ւմ եք, թուրքերի հարձակման մասին պատմեմ: Էս մեր Յուրբրի հակառակ կարծես գրված է՝ միշտ թե՛ կռիվների վայր դառնալ: 20 թվականին գյուղը դաշնակների ու բոլշևիկների կովախնձորն էր դարձել: Երբ կոմունարը եկավ, հայրս աղ ու հացով դիմավորեց նրանց, համեցեք արավ: Հիշում եմ, 15 հոգու տուն բերեց, լավ սեղան պցեց:

— Հայրիկ,— դիմեցի ես,— Բաֆֆուն մասին պատմիր: Եղե՞լ է ձեր գյուղում:

— Գյուղում՝ չէ, Բաֆֆին գյուղ չի մտել,— ասաց ծերունին,— հայրս նրան Ալան թագավորի գերեզմանոցում է հանդիպել: Բաֆֆին հորս խնդրել է, որ հին վայրերը ցույց տա: Կարգում է գերեզմանի բարերի կրեքը, լաց լինում Ալան թագավորի գերեզմանին, հետո դիմում է մի բրդի, թե՛ ո՞վ է վարել հանգստարանի տարածքը, քուրդը, թե՛ ես: Բաֆֆին խիստ ջղայնանում է, թե՛ ի՞նչ իրավունքով ես սղծում անցյալների հիշատակը, քուրդը վախենալով ասում է՝ դալաթ եմ արել, էլ չեմ վարի: Գյուղի տակով անցնելիս հայրս խնդրում է, որ տուն մանի, գիշերի մեր տանը, բայց Բաֆֆին մերժում է, ասելով, որ ուշ է, ինքն էլ շատ է շտապում: Հայրս միշտ էսպես խփում էր ծնկանն ու ասում. «Եղզը չլսեց ինձ, չընդունեց իմ հրավերը ու Գարբասում ծեծեցին: Իմանալի, գոռով տուն կբերեի...»

— Բաֆֆո՞ւն,— տարակուսած հարցրի ես,— ո՞վ, ինչո՞ւ է ծեծել:

— Արդեն գիշեր է լինում, դարբասեցիք շեն ընդունում, ստիպված մի գոմ է մտնում, որ գիշերն անցկացնի, առավոտյան կանաչք կարծում են՝ գող է, հարձակվում են, թիկրով ծեծում:— Մերունին լոնց, ապա աչքերիս նայեց ու տխուր ասաց,— ահա դու էլ մի գրող ես, ես էլ Բաֆֆուն հանդիպած Ասրու տղան եմ, ասում եմ՝ տուն արի, Բաֆֆուն նման

մերժում էս,— մի պահ ծերունու դեմքին մի խորամանկ ժպիտ փայլեց,— դու էլ կգնաս, մի տեղ կծեծեն քեզ, փոշման կմնանք...

— Շնորհակալություն, Համո ապեր,— առաջի էս,— իմ այս ուղեւ կիցնորի հետ ինձ ոչ ոք չի ձեռնի: Ինձ պատմիր հորդ՝ նաշուց Ասրու մա սին: Ո՞ր թվի ծնված էր, ինչո՞վ էր զբաղվում:

— Հայրս ունշպար մարդ էր, ազատ ժամանակ առևտրով էր զբաղվում, Գորիսից, Շուշուց ապրանք էր բերում, առևտուր անում: Բաֆֆին ո՞ր թվին է եկել:

— 1881 թվականին,— իմ փոխարեն պատասխանեց Ա. Մարտիրոսյանը:

— Հա՞,— ծերունին մտքում հաշվեց,— հայրս 21 տարեկան էր այդ ժամանակ: Բարձրահասակ, գրագետ մարդ էր: Մինչև 1960 թվերը կենդանի էր: 100 տարեկան էր, պառավ կնոջ հետ գալիս էր իմ տունը, թոռներին շատ էր սիրում: Մի գեպը էլ պատմեմ. մեր պուզը Հասան անունով զլեշի թուրքի էին ծախել: Երբ մի օր հայրս իր արտը հնձելիս է լինում, կատարածու Օհանը գալիս է, թե՛ Ասրի, քեզ կանչում են գյուղում: Հայրս գնում, տեսնում է՝ Թունիկեց կալում ժողովրդին հավաքած, մեկ-մեկ կալմեջ են անում թուրքերը ու ձեռնելով տուրք պահանջում: Հայրս մտանքում է ու դիմում թուրքին. «Հասան աղա, էս ժողովրդին որ տանջում, ձեռնում էս, արտը ո՞վ է հնձելու»: «Ասելից ի՞նչ է»,— հարցնում է թուրքը: «Ասում եմ՝ երեք հոգի 75-ական ուրլի տանք,— առաջարկում է հայրս,— ազատ թող այս ժողովրդին»: Հարությունից ու Ազրուց 75-ական ուրլի է ուղում հայրս, ինքն էլ ավելացնում, տալիս թուրք կալվածատիրոջը: Աշնանը գյուղացիք վերադարձնում են իրենց պարտքը:

Որոտանի հովտում լայն հարթակում Քյուրդլար գյուղի մոտ էր գտնվում «Կոտրած քարվանսարա» կիսավեր կառույցը: Եթե Ե. Լալայանը այն եկեղեցի է համարում, ապա վիմագրագետ Ս. Բարխուդարյանը իջևանատուն է անվանում: Իրոք, այս հովտով էր անցնում Զանգեզուրը Պարսկաստանի, Արցախը Արարատյան դաշտի հետ կապող առևտրական ուղին: Հին ճանապարհը հոսանքն ի վեր գնալով հասնում է Անգեղակոթ, ապա թեքվում Միջնաակի (Այժմ՝ Բիշանազ), լեռնանցքով հասնում նախ-իջևան ու Գողթն: Ս. Բարխուդարյանը ճակատքարին կարդացել էր. «ԹՎ. 94Ը (1311) ԻՇԽԱՆ ՕՐՊԵԼ» գրությունը: Հին գյուղատեղի գերեզմանոցում գտնում եմ Բաֆֆու տեսած տապանաքարը, որի վրա գրված էր. «ԶԳԵՂԵՅԱՏԻՊ ԵՎ ԶՄԱԳՎԱՓԹԻՓ ՔԱՋ ԶԱԻՐԱԿԱՆ ԱՋԱՏԱՍԻՆ ԴԵՌԱՐՈՅԱ ՄԱՆՈՒԿԵ ԱՆ ԿԻՍԱԼԻՆԱ ՓՈԽԵԱԼ ԶԱՇԽԱՐՉԵ ԹՈՂԵԱԼ ՍՈՒԳ ԱՆՄԵԻ ԹԱՐ ԱՆՁԱՎԱԿ ՄԵՈՂԱՅՆ ՉԱՂԱՐԻՆ ԵՒ ԲԱՐԱԿԱՑՈՒՆԻՆ, ՅԻՇԵՅԵԻ Ի ՔՍ ԹՎ. 92Ե (1326)»:

Մի խաշարի վրա նշված է ՆՂԲ (1043) թվականը, իսկ կամարի վրա կարդացվում է. «ՅԱՇՈՒՆ ԱԺ ՈՒ ԱՐՔԱՈՒՆ ԱՍՊԱՏԱՅ ՈՒ ՏԱՐՍԱՅԻՃԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՐ... ՎԵՐԱՊԱՏՐՈՆՈՒԹԵԱՄԲ...» բառերը:

ԽԵ. ՏԱԹԵՎ

Այդ շրջապայությունից հետո, ես որոշեցի նախ Տաթև մեկնել ու այնտեղ գտնել Բաֆֆու թողած քառատողը, նոր միայն մտածել հին Շենուհայր և Դարբաս այցելելու մասին:

Ըստ Կատին Պետրոսյանի պատմածի, Բաֆֆին Շենուհայրից ուղեփորվել էր Հալիձոր, որտեղ հանդիպել էր Տաթևի վանահայր Գրիգոր Տեր-Պետրոսյանին ու Սիմոն Օրբելյանին: Նրանց հետ Տաթևի ճանապարհին այցելել էր Հարսնաքար կոչվող վայրը, լսել հնից ավանդություն մնացած պատմություններ: Այստեղ Բաֆֆին տեսել էր կարմիր քարից կառուցած մատուռը, ուր շրջակա գյուղերից կիրակի օրերին դարեր շարունակ նորահարսներ էին ուխտի գալիս: Ըստ ավանդության, սրբավայրը երեխաներին դերձ է պահում «ծաղիկ» կոչվող հիվանդությունից:

Ավանդությունը պատմում է, որ Արցախի մեծ իշխան Վարազ Տըր-գոտի դուստրը՝ Շահանդուխտը հեծյալների ուղեկցությամբ թորգոմեան տուն հարս գնալիս, հենց այս ապառածի վրա, որը Բաղաց սահմանն էր, գարնամուտ անօրեմները հարձակվել են, նպատակ ունենալով փախցնել գեղեցկուհուն: Շահանդուխտը, չկամենալով օտարների ձեռքն ընկնել, իրեն հետապնդողներից փախելով ձիու հետ թուել է ժայռի կատարից ու անվնաս Որոտանի ափին իջել: Հրաշքով փրկվելուց հետո ես այլևս չէր կամեցել հարս դառնալ, իրեն նվիրել էր կուսակրոնությանը, ապառածի յանջին 931 թվականին մատուռ էր կառուցել և ճգնել այնտեղ:

Ես հիացմունքով լսում էի այս գեղեցիկ ավանդությունը և մտածում, որ հարյուրավոր լեգեոններ այսպես ապրում են ժողովրդի մեջ, բայց յավոք այդպես էլ չեն արժանանում գրողների, աղագրագետների կամ այլ մասնագետների ուշադրությանը:

Սատանայի կամրջի երկաթբետոնե աստիճաններով գնում եմ դեպի «Թթու ջուր» աղբյուրը, որի ջրով հիացել էր մեծ վիպասանը, հենց այստեղ էլ դադար առել հոգնեցուցիչ ճանապարհից հետո: Նման մի հրաշք-կամուրջ ես տեսել եմ Տաշկիստանի լիոնեբում՝ Գիսսարում, ուր կատարի Զարեվչանը ամենհի քարակույտի տակով էր հոսում: Գիսսարի հրաշքը դեռևս տուրխտական վայր չի դարձել և ոչ ոք չի ցեմենտապատել, իսկ ահա Որոտանի անձեռակերտ հրաշքի վրա ցեմենտապատ աստիճանները միանգամայն վատ տպավորություն են թողնում: Եվ ոչ միայն այն պատ-

ճառով, որ ինձ խանգարում էին մտովի տեղափոխվելու Բաֆֆու այցելու-
թյան ժամանակը: Թվում է՝ բնության վրա բնություն է գործադրվել:

«Կուսակառն անտար, որպես կանաչագարսի վերաբերյալ, ծածկում էր
լեռների մերկությունը և նրանց ավելի անմատչելի դարձնում»:

Բաֆֆին եկեղեցականներից տեղեկանալով, որ Տաթևի հռչակավոր
Մեծ անապատում միաբանություն կա, Սատանայի կամրջից գետի հոսան-
քով դեպի արևելք գնալով, ուր անդնդախոր կիրճը լայնանում է, այցե-
լում է 17-րդ դարում հիմնված հռչակավոր այս մենաստանը: Անապատ
պարիսպները բողբոջված են ընկուզենու և թթենու հսկա ծառերով: Գրու-
ղը հիանում է կառույցներով՝ ետանալ ս. Աստվածածին եկեղեցով, նրա
զավթով, սեղանատան աշխարհիկ ճարտարապետությամբ ու խստակրթ
մենակյացիների կացարաններով: Տաթևի Մեծ անապատը հիմնվել է երկ-
րաշարժից ավերված Հալիձորի Հարանց անապատի փոխարեն: Եկե-
ղեցու գավթից, ըստ պահպանված արձանագրության, 1743 թվականին
կառուցել է Գրիգորի մեկիք Եգանը. «ՅԻՇԱՍԱԿ Է ՄԵԼԻՔ ԵԿԱՆԻՆ, ՈՐ ԵՆ
ԹՈՒՄԱՆ ՏՈՒԱԼ ԳԱԼԻԹՆ ՇԻՆԵԼՈՅՆ ՈՐ ԳԼՈՒԽՆ ՍՐՔԱՍԱՆ ՔԱՐԱՆՅ ՇԻ-
ՆԵՅԻՆՔ»:

Բաֆֆին այցելում է և մենաստանին հարևան լեռնալանջին գտնվող
Աղաշանյանների հնձանը, որը հնում «Սևիթ» հնձան էր կոչվում: Այս-
տեղ Բաֆֆու այցելությունն պահին տաթևցիք վայրի խաղողից գինի էին
պատրաստում և նրան թուտով անուշահամ մածուս են հյուրասիրում:
Այժմ այն Տաթևի անտեսության մեղվաբուծական ֆերման է:

Թողնելով այս կուսական վայրերը, ես Տաթև եմ շտապում: Թվում
է, թե վանք կհասնեմ ու այնտեղ կգտնեմ մեծ ճանապարհորդի ոտնա-
հետքերը:

«Տաթևի վանքը թե իր շինվածիների ընդարձակությամբ և թե իր ամ-
բարություններով ամեն հարմարություններ ունեւ բերդի տեղ ծառայելու:
Այս պատճառով Գավիթ-Բեկը ընտրեց նրան որպես կենտրոն իր գործա-
դրությունների»:

Վանքը շինված էր լեռնային դժվար մատչելի բաժնավանդակի վա-
չրջապատված աշտարակներով և ամուս պարիսպներով, որոնք դեպի
նրան ավելի մի անտիկ բերդի նմանություն էին տալիս: Նրա առջևից
ընկած էին անդունդի նման խոր, մթին ձորեր, որոնց միջով գոսայտ
անցնում էր Որոտան գետը»:

Անապատայիններն իմ առաջ հայտնվում է վերակառուցված բարձր
պարիսպը՝ անկյուններում բարձր հզոր աշտարակներով: Եթե ես փոր-
ձում եմ տեսնել, պատկերացնել գրողին, սբ. Պողոս-Պետրոս տաճար
ներսում պատին իր անհայտ քառասուղը դրելիս, ապա, ըստ հավանակա

նության ինքը՝ վիպասանը, տաճար մտնելով, պատկերացրել է ու գրի է
տռել Գավիթ-Բեկի, նրա մերձավորների՝ սյունյաց իշխանների, զորա-
պետների ներկայությամբ 1721 թվականին այստեղ տեղի ունեցած Ավա-
րայրի գաղտնի նահատակներին նվիրված հոգեհանգիստը: Ապա հայ ազ-
գային-ազատագրական պայքարի զեկավար Գավիթ-Բեկը, իշխաններն
ու զորապետները հանդիսավոր երգվում են հավատարիմ լինել և անմա-
ցորդ նվիրվել հայրենիքն ազատագրելու վեհ գործին:

Բաֆֆու այցելության ժամանակ Գրիգոր վանականի նախաձեռնու-
թյամբ ցանկալատուներ դեռևս կառուցման ընթացքում էր գտնվում: 1931
թվականի երկրաշարժից ավերված այս հրաշագեղ կոթողը հենց տաթևցի
վարպետների ձեռքով վերակառուցվել է, ստացել իր նախնական տեսքը:

Մեծ էր իմ հիասթափությունը, երբ տաճարի ներսի պատերը մեր-
կացած տեսաւ: Վերակառուցման նպատակով բանդել են սվաղը, դրա
հետ էլ՝ Բաֆֆու քոտաօսողը:

Որոշեցի գիմել դյուղի մարդկանց օգնությամբ: Գուցե նրանցից որեւէ
մեկը գրի առած լինի Բաֆֆու քառասուղը: Գնում եմ դեպի գյուղն ու
մտածում վանքի մասին: Ղևոնդ Ալիշանը գրում է, որ դեռևս նախաքրիս-
տոնեական շրջանում Տաթևի տեղում ես հեթանոսական մեհյան է եղել,
որը Գրիգոր լուսավորչի կողմից եկեղեցու է փոխարկվել: Ավանդությունն
ասում է, որ վանքը իր անունը ստացել է ս. Թադևոս առաքյալի Եվստա-
թե կամ Ստաթե անունով աշակերտի անունից, որը Սյունիք էր եկել
քրիստոնեություն տարածելու նպատակով: Բայց Ալիշանը գրում է, որ
Տաթև անունը գոյություն է ունեցել քրիստոնեությունից առաջ, որովհետև
ներսեսի գահամակի մեջ բարձականների շարքում հիշատակվում են
և Տաթևանը, որը, հավանորեն, իշխող տոհմ է եղել այս կողմերում:
Մտովի տեղափոխվում եմ հայկական վերածնունդի 9-րդ դարը, 839
թվականը, կրթ Մետրոպոլիտ Գավթիք Սյունյաց եպիսկոպոսական աթո-
ղը այստեղ տեղափոխեց: Նույն դարի վերջերին էլ հիմնադրվեց հրաշա-
կերտ տաճարը: Իսկ ինչքան ձեռագիր կոթողներ են ստեղծվել Տաթևի
համալսարանում, Հայաստանի տարբեր վայրերից քանի-քանի շնորհալի
պատանիներ են բերվել այստեղ հաղորդվելու հայոց հրաշակերտ գրե-
րին, մեծ պատմիչներին, գիտություններին:

Ցավոք, գյուղում ոչ ոք տեղյակ չէր տաճարի ներսում Բաֆֆու քա-
ռասուղի մասին: Բաֆֆին Տաթևում ընդամենը մեկ օր էր մնացել: Ես
արդեն զգում եմ, թե վիպասանը որքան էր շտապում օր առաջ լինել
Ղևոնդի կողմերում, տեսնելու Կապանի հռչակավոր բերդերը, իր վեպի
հերոսի՝ Գավթի-Բեկի ազատագրական պայքարի հետ առնչվող վայրերը՝

Արժանիքը, Հալիժորը, Եղվարդը, Զեվուն, Կապանը, բաղաբերդը, Բեխը, Վահանավանքը...

Տաթևի վանահայր Գրիգոր Տեր-Պետրոսյանը ձի է վարձում, վաղ առավոտյան Միկունց տոհմից մի երիտասարդի զնում է հետը, պատվիրելով՝

— Միկունց աղա, հայտնի մեծ մարդ է, զգուշ եղի՛ր և առոք-փառոք տեղ հասցրու մեր պատվելի հյուրին:

ԽՁ. ՀԻՆ ՇԻՆՈՒՏԱՅՐ

Վաստակաշատ մանկավարժ Խորեն Մարտիրոսյանի հետ, վերջապես, բարբարոտ ուղորաններով հին Նինուհայր եմ իջնում: Ստ. Օրբելյանը, իր «Պատմությունում» նշելով գյուղի 24 հարկալափ, ըստ որի, այն ամենամեծ գյուղն էր շրջակայքում, հիշատակում է գյուղի անվան Շինոյ Հերբ և Շեների Հայր տարբերակները:

Անհարմար ու խիստ թերություն ունեցող ճանապարհով կապվել ժամանակակից աշխարհի հետ, ինչ խոսք, որ անհնար էր եղել հիշ: գյուղի համար Գյուղացիների առջև երևե ճանապարհ կար. թողնել և ընդմիշտ հեռանալ, կտուցել ճանապարհը և փրկել հին գյուղը, գյուղը սարահարթ տեղափոխել: Ի վերջո ձորերից սարահարթ տեղափոխվելու շնորհիվ փրկվեցին Սյունյաց գյուղերը: Բայց ինչպե՞ս արդարացնել հին գյուղի, հազարամյակներում ձևավորված համակեցության հինավուրց ավանդական կուլտուրայի, սովորությունների, պատմության ոչնչացումը ընդամենը մեկ տարվա ընթացքում:

— Ահա և խաչեր կոչվող գերեզմանոցը, — ասաց ուղեկիցս:

Կենտրոնում 3 մ բարձրություն և 45 սմ լայնություն ունեցող օվալաձև անսովոր խաչարձանն էր: Խաչի տակ պահպանվել է «Ի ԹՎԱԿԱՆ ԶԺ (1261) ԵՄ ՎԱՍԻԼ ՈՐԴԻ ՊԱՔՈՐՏԱՅ ԿԱՆԳՆՅԻ ԶԽԱԶՍ ՀԱՅՐ ԵՎ ՄԱՅՐ ԻՄՈ ԵՆ ԱՅԼՈՑ ՀԱՐԱԶԱՍԱՅ ՅԱՂԱԼԹՍ ՅԻՇԻ» արձանագրությունը: Ավերված տների արանքում գեղեցիկ խաչքարերը կարճես դիտավորյալ հպարտ կեցվածք ընդունելով ասում էր. «Քանի ես կամ, ամեն ինչ չէ, որ կորած է»: Եվ իրոք, գերեզմանոցի հարևանությունը ավերակների արանքում մի կանգուն տուն նկատեցի:

— Նոր եմ վերադարձել Բաքվից, — ասաց պապենտական օջախը վերականգնող Սերգեյ Դանիելյանը, — ու անմիջապես ձեռնարկել եմ այս գործը: Պապերիս, ծնողներիս տապանաքարերը այստեղ են, ուրեմն՝ այս օջախը պահպանել է պետք:

— Ինչպես երևում է, լուսավորության հարցում զվարություններ

կունենանք, — զննելով շրջապատը և էլեկտրական դժեր շտանկելով, ասացի ես:

— Իրոք, զժվար կլինի, — համաձայնեց նա, — բայց հույս ունեմ, որ տնտեսությունը հաշվի կառնի այս հարցի կարևորությունը և կօգնի:

— Արտաշ Խաչատրյանն էլ է վերականգնել հայկական տունը, — ասաց Խորեն Մարտիրոսյանը: — Ընդհանրապես, շատերն են մտադիր վերականգնել պապենտական օջախը: Այստեղի միրգը, լոբին, բանջարեղենը, աղբյուրի ջուրը ուրիշ ոչ մի տեղ չես գտնի...

«Խաչեր» գերեզմանոցից հետաքրքիր տեսարան էր բացվում դեպի հարևան Խոտ գյուղը: Այն ես սարահարթ էր տեղափոխվել, բայց, ի տարբերություն Շենուհայրի, չէր քանդվել, լրիվ պահպանվել էր: Հենց այս հինավուրց գյուղի համակեցությունների օրինակը ցույց է տալիս, որ իրոք տարբեր են նրանց բնավորությունները, աշխարհընկալումը, խառնվածքը, կազմալուծման պրոցեսին դիմակայելու ընդունակությունը, պատմությունը, անցյալը պահպանելու ընկալումը:

Նկատելով իմ հայացքը դեպի հարևան գյուղը, ուղեկիցս ասաց.

— Խոտն է: ԲաֆՖուն այնտեղ վարժապետ Հակոբ Վարդանյանն էր հյուրընկալի:

— Հիմա անապու՞տ դնանք, — տապանաքարերն ու խաչքարերը զննելուց հետո ասացի ես:

— Գնանք:

— Այս տանը առևտուր էին անում, — մի ավերակ տուն ցույց տալով ասաց ուղեկիցս, — Խոչա Աթոյանի խանութն էր: Շուշիից, այլ վայրերից ապրանք էր բերում, վաճառում, ժողովրդին ազատում այլ վայրեր գնումների համար ժամանակ ծախսելուց: Ամեն նորություն էլ կար խանութում: Բայց ահա 1937 թվականին նրան էլ են կալանավորում, թե՛ նիկոլայի ժամանակ վաճառական ես եղել: Ախր նա բուրբին էլ օգնել է, փող ուներ, պետք եղած ժամանակ պարտք էր տալիս:

Փարթամորեն աճած վայրի բույսերի ու փլատակների արանքով անցնող արահետը, թվում է, վերջ չուներ:

Վերջապես, սբ. Աստվածածին կուսանոց անապատ հասանք: Պահպանված բարձր պարսպի մեջ փլված փայտե դուռը հետ հրեցիսք ու հայտնվեցինք վայրի բույսերով ծածկված ընդարձակ բակում:

Ուշ միջնադարում երկրի մշակութային կյանքում կարևոր դեր էին կատարում անապատները: Դրանք վանքերից տարբերվում էին ոչ թե մարդկային բնակությունից հեռու գտնվելու համար, ինչպես փորձել են բացատրել որոշ բառարանագետներ, այլ նոր շարժում էր եկեղեցու մեջ: Անապատները վանքերից տարբերվում էին իրենց խստակրոն կանոնա-

դրութեամբ, որտեղ մերժվում է աշխարհիկ կյանքը: Անապատականը, հակառակ վանականի, զուրկ էր անձնական սեփականություն ունենալու իրավունքից: Այստեղ, ինչպես նշում էր Առաքել Գավրիթեցին, ամեն ինչ հասարակական էր: Եթե վանականները ծխակատարություններից հետո ազատ էին, ապա անապատականները ողջ ժամանակը անց էին կացնում աղոթքների և ընթերցանության մեջ: Նրանք պարտավոր էին միշտ կրել իրենց ճգնավորական զգեստը, որը գործած էր այժի մաղից և հագնում էին մերկ մարմնի վերա: Այս ճգնավորական կազմակերպության խոշոր նվաճումն այն էր, որ կրոնական գործունեության հետ մեկտեղ այստեղ պարտադիր էր գրքերի ընթերցանությունը, վաղուց մոտացություն մատնված ձեռագրերի ուսումնասիրությունը: Սա էլ հենց 17-րդ դարից սկիզբ առած Հայաստանի մշակութային կյանքում նոր զարթոնքի հիմքն էր: Անապատներում պատրաստում էին գրասեղ, բարեխիղճ գործիչներ, որոնք ցրվում էին երկրով մեկ և նորանոր անապատներ հիմնում, տարածում գրագիտություն, որը, ինչ խոսք, ազգային ինքնագիտակցության կարևոր գործոններից մեկն էր: Հենց այս տեսանկյունից էլ անապատները շատ են հետաքրքրել վիպասան Բաֆֆուն:

Անապատի տարածքից մի հրաշալի համայնապատկեր է բացվում զեպի Որոտանի գեղատեսիլ կիրճը: Այս կողմից անապատի տարածքը, հակառակ եկեղեցական մյուս կառույցների, լրիվ բաց է և անմիջականորեն հաղորդակցվում է բնության հետ: Ցավոք, երեք կողմից կառուցված պարիսպների հետ չեն պահպանվել և, կալայանի նկարագրած երեք աշտարակները, բաղնիքն ու 40 խցերը:

Բակի աջ կողմում պարսպին կից եկեղեցական-ծխական դպրոցի շենքն էր, որը հիմնվել էր 1884 թվականին:

— Վերջին կրոնավորը Ստեփան Տեր-Բալչանն էր, — ասաց ուղեկիցս, ապա շարունակեց, — Ղարաբաղում մի մեծահարուստի որդուն ոչ մի եկեղեցական չէր պսակում, ասելով, թե աղջիկը հասունացած չէ: Նրանց խորհուրդ են տալիս դիմել Շենուհայրի տեղ Ստեփանին: Սա, առանց խղճի խայթի, հռչակավոր այս երբեմնի խոտակրոն անապատում խախտում է եկեղեցական օրենքը և կատարում պսակը: Հետագայում նա Շուշիում մեծ նվիրատվություն է ստանում զարաբաղի մեծահարուստից ու, որոշ հանգանակությունն էլ գումարելով, անապատի տարածքում հիմնում է այս դպրոցը: Ցավոք, 1931 թվականի երկրաշարժից փլվել է շինության տանիքը:

Ողջ համալիրը կառուցված է ազատ հատակագծման սկզբունքով՝ ելնելով տեղանքի առանձնահատկություններից: Կառուցապատումն այստեղ հարմարեցված է տեղանքի ռելիեֆին:

Ար. Աստվածածին եկեղեցու բազիլիկ կառույցը, ըստ արձանագրության հիմնել է ազուլիսցի Մահտեսի Ազարիան 1676 թվականին: Մեկ այլ արձանագրություն մեզ տեղեկացնում է Վասպուրականից եկած ճարտարապետի՝ ուստա Մուրատի մասին: Մեկ այլ արձանագրություն տեղեկացնում է 1720 թ. եկեղեցու նորոգողների՝ զուլթնեցի Մահտեսի Բենիամինի և նրա որդի Ազարիայի մասին, որոնք, ըստ երևույթին՝ տաճարը հիմնուղի որդին ու թոռն են: Հետաքրքիր է, որ այս նույն Մահտեսի Ազարիա անվանը իմ ճանապարհորդության ընթացքում հանդիպել եմ Ղարաբաղի Գետաշին գյուղի խաչքարին:

Տաճարից ներքև տեղադրված է թաղակապ սեղանատունը, որի դռան կամարակալ բարի վրա արձանագրությունը տեղեկացնում է, որ այն ՌՃԿԹ (1820) թվականին կառուցել են Գուլթնի Յղնա գյուղից Գալանի որդի Հովհաննեսն ու նրա որդի Մատուրը:

Տաճարի պատի մեջ ազուցված խաչքարին կարդում ենք՝ «Ես ՀՈԳԻ-Գեղ ԿԱՆԳՆԵՅՐԻ ԶԽԱԶՍ ՀԱԽԻ ԻՄ ԽՈՅԱԳԵՂԱ, ՅԻՇԵՅՅԹ Ի ՔՍ ԶԼ (1281)»: Սա ապացուցում է, որ անապատը հիմնվել է ավելի հին եկեղեցու տեղում: Ժողովրդի մեջ մինչև օրս մնացած ավանդությունը այս խաչի մասին պատմում է, թե այն բուժում է օձից խայթվածներին, մի պայմանով, եթե նրանք խայթող օձից առաջ հասցնում են գալ և համբուրել խաչը:

Անապատի տարածքից երևացող ապառամների հետևում են բազմաթիվ քարանձավներ ու զժվարամատչելի այրեր, որոնք, հիրավի, լավ ապաստան են ծառայել ոչ միայն նախնադարյան, այլև միջնադարի մարդկանց համար: Բաֆֆու այցելության ժամանակ անապատը լրիվ բարձիթող վիճակում էր:

Դուրս գալով Կուսանաց անապատից, նոր արահետով շարժվեցի զեպի սբ. Ստեփաննոս եկեղեցին: Ուղեկիցս ցույց ավեց Արտաշի վերականգնած բնակարանը:

— Նա հիմա տեղ Ստեփանի այգիներն է մշակում: Այժմ կոշիկի գործարանին է պատկանում:

— Հին, լրված գյուղում այգի վերականգնելը, իրոք, կարևոր գործ է, — ասացի ես:

— Դժվար է, բայց դա կարող է հետագայում գյուղը վերակենդանացնելու ազդակ լինել:

Ցավոք, եկեղեցին գյուղի տների նման ավերված վիճակում էր: Նրա պատերի մեջ դավապանի բարձրաբանդակով տապանաքարեր էին ազուցված:

Եկեղեցին 20-ական թվականներին շինուհայրցիք են քանդել, քարերը կոլտնտեսության դրասենյակի կառուցում օգտագործելու համար:

Մեկ անգամ էլ հատկով Որոտանը, ոչորապտույտ ճանապարհով պլանում եմ վեր: Անտառի մեջ հեազհետե գերակշռում էր գեղին գույնը, ու թվում էր, թե գետն եմ դեպի աշունը: Ծվ ահա լեռան կատարին հայտնվեց համատարած ոսկին: Կանաչ ու սրածայր եղևինների արանքում Գավիթբեկ գյուղն էր: Երանի թե Բաֆֆին մի հրաշքով հայտնվեք այստեղ և տեսներ իր սիրելի հերոսի անունով բնակավայրը: Գեղեցիկ տները հայրամուտի շնորհիվ դեղինով էին ողողվել: Տեսակները կարծես գեղեցկուհիներ լինեն, որոնք հին ծածկոցները դեն նետելով, դարեւ շարունակ ծածկած թովիչ, հրաշագեղ գեմքերը բացել են ու ուղիղ աչքերիդ են նայում: Ես կանգ առա, քիչ էլ վայելելու այս շնաշխարհիկ տեսարանը, չնայած շտապում էի օր առաջ հասնելու Արծվանիկ ու այնտեղ փնտրելու Բաֆֆու հետքերը:

«Այդ ավանը գոյություն ունի մինչև այսօր, գտնվում է մի լեռնային բարձրավանդակի արևմտյան կողմի ապառաժի վրա: Այստեղից երևում են Քարգյուլատ անտառապատ լեռնադաշտերը, որոնք սխալելի տեսարաններով տարածվում են մինչև Երասխի հովիտը»:

Տեղ հասանք: Արծվանիկի միջնակարգ դպրոցի դիրեկտոր էրվարդ Մանուչարյանը երկարավուն նիհար դեմքով, բարձրահասակ, 60-ին մոտ մարդ էր: Բանջարանոցն էր մշակում:

է. Մանուչարյանը ես նախաձեռնել էր գյուղի պատմությունը գրելու շնորհակալ գործը: «Պատմության» մեջ հիմնական տեղը դպրոցին էր հատկացված: Նա խնամքով կազմել էր դպրոցի հիմնադրման օրվանից՝ 1880 թվականից մինչև հիմա բոլոր ուսումնական տարիներին աշխատած ուսուցիչների ցուցակները: Մինչ ծխական դպրոցի հիմնադրումը մասնավոր դասեր էին տրվում Խոջա-Արզուման Արզումանյանի տանը: Վերջապես, Մանուչարյանի ձեռագրում գտա Բաֆֆուն վերաբերվող հատվածը:

«Գյուղի ավագների պատմելով միպասան Բաֆֆին գալով գյուղ, սկզբում իջևանել էր դպրոցի բակում: Շուրջ երկու ժամ լուռ նստել էր սանդուղքի աստիճաններին: Իրավ, որ ձիով երկար հողմեցուցիչ ճանապարհից հետո հանգստանալու կարիք էր ունեցել գրողը, հետո նա դիմել էր դպրոցի բակում խաղացող երեխաներին, թե՛ որտե՞ղ է գյուղի քահանայի՝ Մեսրոպ Տեր-Հարությունյանի տունը»:

— Կունու Ադին տո՞նը, — հարցրել էր երեխաներից մեկը և օտարականին մինչև քահանայի տուն ուղեկցել: Վիպասանը այստեղ ես խոսափելով ավելորդ շքեղ ընդունելություններից, ներկայանում է հին պատ-

մությունն ուսումնասիրող Հակոբ Մելիք-Հակոբյան անուն ազգանունով: է. Մանուչարյանի ձեռագրում առանձին տեղ ունի քահանայի որդու՝ Հայկ Տեր-Հարությունյանի հուշագրությունը իր հոր մասին: Տեր Մեսրոպը, որը Բաֆֆու այցելության ժամանակ 27 տարեկան էր, Քիֆիսի ներսիսյան դպրոցի առաջին շրջանավարտներից էր: Հանձնիս քահանայի և գյուղի ծխական դպրոցի առաջին վարժապետի՝ գրողը շատ հետաքրքիր գրուցակցի էր հանդիպել: Տեր Մեսրոպը, կամ ինչպես գյուղում են նրան կարճ հասակ ունենալու պատճառով ասում, Կունու Ադին, առաջադեմ հայացքների տեր մարդ էր:

«1920 թվականի սեպտեմբերի 30-ին 11 տարի բացակայելուց հետո հայրենի գյուղ հասա, — իր հուշագրում պատմում է Հայկ Տեր-Հարությունյանը, — դպրոցը ավերված էր: Գյուղը թողել էի երգի, բանաստեղծության մեջ, գտա այն ողբի մեջ: Նուրի փաշան իր զորքով ավերել էր գյուղը, ապա որոշել էր հաջորդ օրը գրավել Ղափանը, երեկոյան կողմ սրբնթաց գրոհով վերցնել Գորիսը: Եղվարդի մոտ ոտքի էր ելել Զանգեզուրի հայությունը: Քաջի մահով ընկավ եղբայրս՝ Գրիգորը: Հայրս՝ տեր Մեսրոպը, գրկել էր դիակն ու վշտացած սսել:

— Մեռավ որդիս... նա երկու սիրտ ուներ՝ վեհ գթության ու անվախ քաջի: Գնա, բայա, շուտով ես էլ եմ գալու...»

Տեր Մեսրոպը մահացել է 1924 թվականին 70 տարեկան հասակում: Երկրորդ ուսուցիչ էր գալիս գանձակցի Բախշին: Հաջորդ ուսուցիչը 1890 թվականին Շուշիից ուղարկված Եփրեմ Մելիք-Շահնազարյանն էր՝ պճնամուլ, գեղեցկադեմ մի երիտասարդ: Սա ավելի շատ սեր ուներ դեպի որսորդությունը, խնջույքներն ու վայելքները, որը, ըստ հավանականության, ժառանգել էր Վարանդայի տեր իր մելիք պապերից:

— Եթե դպրոցի առաջին ուսումնական տարում միայն հայր Մեսրոպն էր դասավանդում, — հպարտությամբ ասաց է. Մանուչարյանը, — ապա այժմ 23 ուսուցիչ կա: — Հետո դառնությամբ շարունակեց, — այս տարի 51 շրջանավարտ ենք տվել, իսկ առաջին դասարան ընդամենը 5 աշակերտ ընդունել:

Լեռնային գյուղերի նույն ցավն է, կազմալուծման վտանգը: Թվում էր դպրոցը ու նրա հետ էլ՝ գյուղը, վտանգի տակ են:

«Մի նեղ հաճապաբե տանում էր դեպի նեղեցյալների հանգստարանը: Այդ հաճապաբեի մի կողմում, մեկավար կաղնու հովանիի տակ, կա մի առանձնացած գեբեզման, օրի վրա ձգած է մի հասարակ բար, առանց խաչի և արձանագրության: Ինչո՞ւ է նա առանձնացած, ինչո՞ւ է նա բացակա հասարակաց գեբեզմանատնից, որ հեռու է երանից մի հարյուր քայլով միայն»:

Գերեզմանը կրաքարի բեկոր է՝ բնկած բաց սեղում: Մենավոր կադ- նին չկա: Նրա աեղում մի սև կոճղ է մնացել:

— Կայծակն է հրդեհել ծառը, — ասաց ուղեկիցս, ապա ավելաց- րեց, — ասում են, իբր Բաֆֆու պատվերով են սարքել այս գերեզմանը:

«Այդ գերեզմանը, քեև արհամարհված է մարդերից, բայց նրանցից մոռացված չէ: Հաստակաց գերեզմանատունը տեղ չափեց նրան իր հա- սարակության մեջ:

Այն օրից, որ այդ գերեզմանը գոյություն ունի, անցել է մեկուկես դար, բայց ժողովուրդը դեռ չէ ներել նրան: Ժողովուրդը միշտ անիծում է նրան: Հարցրու պատահած մառդից, ո՞ւմն է պատկանում այդ նզովչալ գերեզմանը: Նա քեզ կպատասխանե. — Դա Մելիք-Ֆրանգյուլ զավանակի գերեզմանն է: Սպանեցին նրան և հենց այստեղ էլ քաղեցին»:

Կարծես թե տեսնում եմ Բաֆֆուն. մտախոհ կանգնել էր դավաճա- նի գերեզմանի մոտ ու մտքերով հասել հին դարերը...

Հայ Աբշակունիների կողմից իրենց ազգից թագավոր կարգված Սա- նատրուկը քանի-քանի անգամ է հարձակվել իր հայրենիքի վրա՝ նպա- տակ ունենալով Շապուհի օգնությամբ Խոսրով Բ-ից խլել հայոց թագը: Նա բռնում է քրիստոնեություն տարածելու նպատակով Աղ- վանից երկիր գնացած Գրիգորիսին (Գրիգոր լուսավորչի թոռանը), ձիու պոչից կապելով քաշ տալիս և այգակն սպանում նրան:

Դավաճան Վեստ-Սարգիս իշխանը 1045 թվականին Պետրոս կաթո- ղիկոսի հետ Անի քաղաքի բանալիները հանձնեց բյուզանդացի նենգ կայսր Կոնստանտին Մոնոմախին, որը և շնչեց Բագրատունիների 158 տարի տևած թագավորությունը:

Իսկ Վասակը, Մերուժանը, Վասակ Սյունին... Ուրացող Դավիթը, որի գլուխը կտրել է տալիս Դավիթ-Բեկը ու Սատանի կամրջից ցած նե- տում, մելիք Շահնազար Երկրորդը, որը նեցուկ կանգնելով թուրք Փա- նահին, Վարաբաղի իշխանության կործանման առիթ դարձավ, աղու- լիսցի մելիք Մուսին, որը դավադրաբար սպանեց Դավիթ-Բեկի քաջ զո- րապետներից մեկին՝ մելիք Փարսազանին...

Այո, պատմությունը կրկնվում է, կրկնվում է և՛ մեծ գործը, և՛ հայ- բնազավթյունը: Դրանք այն օղակներն են, որոնցով հյուսվում է պատ- մության շղթան:

— Ժողովուրդը ճիշտ է, — ասել է Բաֆֆին, — թող մնա հայրենագա- վի գերեզմանը, գուցե դա էլ օգնի, որ մեր ազգից իսպառ վերանան վա- սակները, մերումանները, վեստ-սարգիսները, մելիք շահնազարներն ու Ֆրանգյուլները:

Դավաճանի գերեզմանից ոչ հեռու փոքրիկ թաղակապ եկեղեցի կար,

որի շուրջն էլ հին գերեզմանոցն էր: Եկեղեցու պատի մեջ աղուցված քարին կարդում ենք. «ՔՎ. ՆՁԴ (1045), Ի ՅԱՂԱՎԹՍ ՅԻՇԵՅԵՔ ՍՏԵՓԱ- ՆՈՍ ՔԱՀԱՆԱ, ԵԿԵՂԵՑՈՅՍ ՊԱՇՏԱԿԱՆԵՍ, ՈՐԴԻ ՅՈՒՍԻԿ ԵՐԻՅՈ»:

— Սա նոր գերեզմանոցն է, — ասաց ուղեկիցս, — Տես ինչ շքեղ քա- րեր են: Արարատ Տեր-Հարությունյանի որդին՝ Հրաչյան, պատերազմի ժամանակ գերի էր ընկել, պատերազմից հետո մեկնել Ամերիկա, Դեա- րոյա: Վերջերս ամերիկոսի կնոջ հետ տուրիստ էր եկել, հայրենի գյուղ այցելել: Եվ ես նրան անցյալների գերեզման էի ուղեկցել. նայում էր այս նոր խաչքարերը ու շվարած ասում. — սա նման է քարի թանգա- րանի:

Մեր զիմաց թերակղզու նման մի հարթակ ձգվել, կախվել էր ան- զրնդախոր ձորի վրա:

— Այո, հենց դա էլ Ֆրանգյուլին բերդ է ծառայել, — կանխելով հարցն ասաց ուղեկիցս:

«Արձվանիկի ստորոտում միևնչև այսօր Երևում են մի հին ամրոցի ավերակների հետքեր, երևում են խոբին այրե», մթին փառանավներ, որ գտնվում են այդ ամրոցի մոտ, որոնք առաջ ծառայում էին որպես պատասպարաններ, որպես քախտոցի տեղեր»:

Հարթակը նեղահալով միանում է ձորափին: Հենց այստեղ էլ տե- ղադրելով հզոր պարիսպն ու դարպասը, Ֆրանգյուլը այս հարթակը անա- ուրիկ ամրոցի էր վերածել ու իր հայրենակիցներին պաշտպանվելու նպա- տակով փակվել այնտեղ:

Մելիք Ֆրանգյուլը սեբարեցի էր: Այրիացած մայրը ամուսնանալով, երկու երեխաների հետ Արձվանիկ է տեղափոխվում:

Շրջում եմ 100 տարի առաջ Բաֆֆու այցելած վայրերն ու թվում է, արդեն կոհում եմ վեպի տողերի ծնունդը, գրողի մտքերի ընթացքը: Իսկ վիպասանի մտքերն արդեն երիցվանքում են:

Առավոտյան նա հյուրասեր քահանային խնդրում է, որ իրեն Երից- վանք ուղեկցեն: Վիպասանին հինավուրց մենաստան է ուղեկցել Մանիա- փունջ Մատին (Աստվածատուր Մանուչարյանը), որը գյուղի գրունանաչ երիտասարդներից էր:

«Սարի կալածիկն կլլած է զեղեցկատես ավանը, իսկ սարի վրա, հո- վանավորված անագին կաղնի ծառերով՝ կանգնած է «Կարմիր վանքը», որ կառուցվել է հույն լեռան կարմրագույն փայտից, սուրբ Նախավկայի անունով»: Վանքի ճանապարհին Բաֆֆուն գյուղից վերև տեր Մեսրոպենց այգին ցույց տալով Մատուրն ասել է. «Դերանց այգու ծայրում գտնվող այն մեծ քարի վրա աճած սգնու քուրից են փայտ կտրել ու դրանով էլ սպանել շուն փոանդուլին»:

Քեզուց յամբ վանք բարձրանալիս մի քարարժիվ թեկորը լայն բացած եկավ կտրեց մեր ճանապարհն ու թևի փետուրները քսվեցին ավտոմեքենայի ապակուն։ Չգիտեմ, այստեղ արժիվեն՞րն են համարձակ, թե ուղղակի մարդկանց ու մեքենաների մեջ ոչ մի վտանգ չեն տեսնում։ Բոլոր դեպքերում ես ուրախ էի վայրենի բնության և ժամանակակից մարդու միջև այս համատեղելիության նոր փաստի համար։ Ճանապարհի երկու կողմերում հողակտորները մեզ դիմավորում են մի աննկարագրելի կապույտ հրացուրքով։ Աշնանային շուշանը պատել էր աշնանացանի կանաչ արտերը։

— Բլրի հետևում կաղնուտ (հնում Մողես) գյուղն է,— ասաց ուղեկիցս։

Ճանապարհին փորձում եմ պատկերացնել Բաֆֆու նկարագրած վանքն ու մտածում, որ արյունարբու Յաթալի խանը այնտեղ պղծել է ամեն ինչ։ Զէ՞ որ ես դավաճան Յրանդյուլի կամքով վանքի շինությունները իր համար ամառանոցի էր վերածել։

Բայց ահա հինավուրց աշխարհից մեզ հասած մասունքին մոտենալիս մոռանում ես օտար բռնակալի անունը, որը այս հրաշքի հետ ոչ մի ընդհանուր բան չէր կարող ունենալ։ Այստեղ ամեն ինչ՝ գյուղի վրա կախված կարմիր ապառաժները, նրա մեջ բազմաթիվ խորշերն ու անձավները, տաճարի մոտ կիսաբանդ փոքրիկ եկեղեցին, շրջապատի տապանաքարերը, խցերը, հսկա ծառերով շրջապատված վեհաշուք տաճարը լցված են մեր նախնիների շնչով ու կարծես նրանց անունից զրուցում են մեզ հետ, անվերջորեն պատմում, պատմում, պատմում...

Չննելով շրջակայքը, արդեն կարծես թե վերապրում եմ վիպասանի զգացումները։ Ահա Բաֆֆին. այստեղ տեսնում է խանի ու հայրենազավ մելիքի գաղտնի հանդիպումը, գուշակում նրանց նենգ մտքերը, ապա մտքով տեսնում խանի կանանոցը, ներքինի Ահմեդին ու Մարիամին։

Բաֆֆին Մատուրից հարցնում է Հակոբ Ճգնավորի մատուռի տեղը ու խնդրում ցույց տալ այն։ Ահա տեսնում է քուրձ հագած ճգնավորին, որը կամքի ուժով պոկվում է սրբերի հետ անմիջական, առանց միջնորդի անվերջանալի զրույցներից ու կապվում աշխարհիկ կյանքին, փորձում զգուշացնել իշխան Քորոսին դավադրության մասին։

Տաճարի արտաքին շարվածքը անսովոր էր ու տարբերվում էր ավանդական շարվածքներից։ Սուր-սուր քարերը ատամների պես դուրս էին ցցված ու բրազավորի մեջք էին հիշեցնում։ Ներսախողմը ևս տարբերվում էր ավանդական բազիլիկ կառույցներից ու թվում էր, ոչ թե քրիստոնեական, այլ հեթանոսական մեհյանում են հայտնվել։ Իսկ թե ինչու

էր այս հինավուրց հուշարձանը դուրս մնացել ուսումնասիրողների ուշադրությունից, անհասկանալի էր ինձ։

Ստեփանոս Օրբելյանը գրում է Երիցուկ Ճգնավորի մասին, որը 6-րդ դարում սուրբ Տեր-Գյուտի օժանդակությամբ ու հրամանով 12 կրոնավորներով և պարզեւած մեծ ունեցվածքով գալիս է Բաղք և կառուցում նոր-Երուսաղեմ կոչվող եկեղեցին։ Միջնադարի պատմիչը հայտնում է մինչ այդ Երիցակի Երուսաղեմում լինելու մասին։ Հավանաբար, իր ժամանակի զարգացած մարդկանցից մեկը՝ Երիցակը, հենց Երուսաղեմի տաճարների օրինակով էլ կառուցած լինի բազմաթիվ կամարակապ մուտքերով բազիլիկ միանավ տաճարը։ Ըստ հավանականության, հաշվի առնելով Երուսաղեմի արևադարձային կլիմային չհամապատասխանող զանգեղության ձմեռը, հետագայում դրսի կողմից փակվել են այդ մուտքերը։

Այնուհետև պատմիչը գրում է, որ վանքի տարածքում կային 40 խցիկներ՝ քուրձ հագնող լուսկյաց ճգնավորներով, որոնք «ինչպես մշտավառ ու անշեշ կանթեղներ՝ յուրաքանչյուրն իր հյուղի մեջ, անընդհատ աքնությամբ վառվում էին հոգու շնորհների բոցով»։ Ստ. Օրբելյանը նկարագրում է, թե ինչպես Մուշե կաթողիկոսը, «հեծած ոսկեզօծ թամբով սպիտակ ջորի՝ եպիսկոպոսներով, բազմախումբ սպասավորներով, առջևում բռնած աստվածընկալ ոսկեփայլ, արևակերպ ցուլքերով խաչը, սաղմոսներով ու քաղցրաձայն երգերով» Դվին մայրաքաղաքից ուղևորվում է Սյունիք և ժողովրդի ընտրությամբ «սուրբ վանահայր, մեծ տնտեսվար, (չգտնոմս) խարազանազգեստ ու խստակրոն ճգնավոր Երիցակին» հարկադրելով Սյունիքի մետրոպոլիտ ձեռնադրում։ Եպիսկոպոսական աթոռանիստը հաջորդ դարում այստեղից Հովանավանք է տեղափոխվում, 10-րդ դարում՝ Տաթև։

Այս մասին Բաֆֆուն Տաթևում պատմել է Հովակիմ վարդապետ Չամչյանը։ Տաճարի հիմնադրման հետ կապված մի վարկած ինձ հանգրիստ չէր տալիս։ Իսկ եթե այն նախաքրիստոնեական շրջանի պաշտամունքային հարց է եղել, որը Երիցակը, ընդունված սովորության համաձայն, ոչ թե քանդել է ու տեղում նորը հիմնել, այլ պարզապես քրիստոնեական վանքի է վերածել։ Մի՞թե այդ շին հաստատում թեկուզ տաճարի ներսում քրիստոնեական դադափարանշանների, ասենք՝ պատերին խաչերի բացակայությունը, իսկ Ստ. Օրբելյանը, ինքը լինելով եկեղեցական առաջնորդ, իր պատմությունում քողարկել է այս երևույթը, որովհետև այդ դեպքում վանքը կարող էր պիղծ անվանվել։

Ավանդությունը պատմում է, որ Փաթալի խանը այստեղից մեկնելուց առաջ որոշում է ավերել տաճարը, շղթայով գոմեշներ է կապկպում

սյուններից ու փորձում կործանել այն, սակայն շղթաները կտրվում են, իսկ գոմեշները ձորն են գլորվում:

Տաճարից ոչ հեռու մի կառույց գրավեց իմ ուշադրությունը: Դա փոքր շափի սովորական եկեղեցի էր, որի պատերի սրբատաշ քարերը լրիվ հանված էին: Ուշադրավն այստեղ հիմքի կիկլոպյան քարերն էին: Սա հաստատում է, որ այստեղ իրոք հեթանոսական մեհյանն ու սրբավայր է եղել: Հսկա ապառաժների շարքի առջև հարթ տարածք կար, որով առաջ ընթանալով, ուղեկցիս հետ գննում եմ ժայռերը: Ապառաժների մեջ բազմաթիվ խոռոչները եթե հնում մարդկանց համար որպես բնակարաններ են ծառայել, ապա Հայրենական պատերազմի տարիներին խոտ պահելու նպատակին են ծառայել: Մի մեծ ապառաժի վրա շաղախի հետքեր նկատեցի: Այդ մասում ժայռի վրա խաչեր են քանդակված: Ուրեմն՝ այստեղ հնում եկեղեցի էր եղել, որի կեսը լեռան մեջ էր խորանում: Այստեղից հետաքրքիր տեսարան էր բացվում գեպի շրջակա լեռնապարտ:

«... Աչքերի առջև բացվում էր մի սփռելի տեսարան. մանրշակագույն հորիզոնի վրա նկարված էին Քարգյուղատի և Ջավնդուրի գեղեցիկ, անառապատ լեռները, որոնց միջից իր մերկ գագաթով վեր էր բարձրացել նսկա Խուստուփը»:

— Դիմացի լեռան վրա Հալիժորի բերդն է, իսկ Փայլասարից այն կողմ Եղվարդն է,— ասաց է. Մանուշարյանը:— Այդ բոլորը հետաքրքրում են քեզ:

— Անշուշտ,— հուզմունքով արտաբերեցի ես,— հույս ունեմ այնտեղ ես գտնել Բաֆֆու հետքերը:

Հիշեցի է. Մանուշարյանի «Պատմությունում» հիշատակած Սատուրի նկարագրությունը. «Ցածրահասակ, լայն թիկունքով, հաստ բեղերով, շխուղված, արագաշարժ և կատակախոս, բայց ես պարզամիտ մարդ էր Բաֆֆին»:

— Բաֆֆու ուղեկցի մասին ի՞նչ գիտես,— գիմեցի ուղեկցիս:

— Նրա որդին՝ Միքայել Մանուշարյանը Ստեփան Շահումյանի մերձավոր ընկերներից էր, 1906 թվականից կուսակցության անդամ: Երբեմն գյուղ էր գալիս եվրոպական կոստյումով: Պատմել էր, որ իրեն Շահումյանն է փողկապ կապել սովորեցրել: Մի անգամ Նժդեհը մեր գյուղ է գալիս ու գիմում հեղափոխականի հորը՝ Սատուրին:

- Սատուր ս՛ւր է որդիդ:
- Զգիտեմ,— պատասխանում է հայրը:
- Եթե շհայտնի տեղը, կզնդակահարեք,— կարգադրում է Նժդեհը:

— Պարոն Նժդեհ,— գիմում է Սատուրը,— քո հայրը գիտե՞, որ դու Արծվանիկում ես և պատրաստվում ես գնդակահարել ինձ:

— Այ,— տարակուսած պատասխանում է Նժդեհը:

— Իսկ ես ի՞նչ իմանամ, թե հիմա ուր է իմ որդին:

— Լա՛վ, լա՛վ, տղաներ,— ասում է Նժդեհը,— հանգիստ թողեք, գործ չունենք այս խելացի մարդու հետ:

Քիչ անց հայտնվում եմ գյուղի եկեղեցու բակում: Եկեղեցին պահեստի էր վերածվել: Մի տան սրահում խաչարձաններ, քարակերտ խոյ, այլ հուշարձաններ են շարված:

Հարցական հայացքս ուղեկցիս եմ ուղղում: Թեթև ժպիտ է հայտնվում դեմքին:

— Սա էլ մեր գյուղի թանգարանն է,— ասում է նա:

Թանգարանը հիմնվել է ուղեկցիս՝ է. Մանուշարյանի ջանքերով, որն էլ 20 տարիների ընթացքում հավաքել, խնամքով պահպանել է հարգար հարյուր հետաքրքիր նմուշներ: Դիտելով այն, համոզված կարող եմ ասել, որ շատ ու շատ գավառագիտական թանգարաններ կերպագին այսպիսի հավաքածու ունենալ: Այստեղ էլ հին լուսանկարների մեջ տեսնում եմ 1911 թվականի լուսանկարը, որտեղ պատկերված է Մեսրոպ Տեր-Հարությունյանը: Առանձնակի հետաքրքրություն էր ներկայացնում սրահում ցուցադրված 67 սմ բարձրություն, 46 սմ լայնություն ունեցող խաչքարը, որը գյուղից ներքև գտնվող եկեղեցուց էր բերվել: Այս հուշարձանի արժեքը նրա հետևի ծածկագիր արձանագրությունն է, որտեղ վեց տարբեր բանալիներով գաղտնագրեր են օգտագործված, որը եզակի երևույթ է: Գաղտնագրերը վերծանել են պրոֆ. Ա. Աբրահամյանն ու Ա. Շահինյանը: Թանգարանում ես տեղեկանում եմ, որ Արծվանիկում 1823 թվականին կար 11 ծուխ և 143 բնակիչ, 1914 թվականին՝ 100 ծուխ և 1319 բնակիչ, 1979 թվականին՝ 130 ծուխ և 640 բնակիչ:

Հաջորդ օրը առավոտյան Բաֆֆին Եղվարդ է ուղևորվում: Իսկ, ընդհանրապես, Արծվանիկում մնում է 7 օր, այստեղից ուղևորվելով Դավիթ-Բեկի գործունեության հետ կապված Ղափանի տարբեր ուղղություններով:

ԽԱՆ. ԵՂՎԱՐԴ

Ասում են, որ Բաֆֆուն Եղվարդ է ուղեկցել տեր Մեսրոպը: Բայց ահա Եղվարդցի Ավետիս Սատուրյանի հուշագրությունում միայն ինքն է Բաֆֆուն ուղեկցողը: «... Վիպասանը պատրաստվեց մեկնելու Հագավ իր թեթև վերարկուն, լայնեզր գլխարկը, երկարավիզ ճամփորդական կոշիկները, ապա խորին շնորհակալություն հայտնեց տանտիրոջը, գյուղի

Հասարակութեանը ու նստեց ձին: Ես էլ նստեցի իմ ձին ու ճամփա ընկանք դեպի Եղվարդ: Նրա թեթև ու վարժ ձի բարձրանալը և մեր դժվարանց ճանապարհներով այնպես հաշող ձիավարելը ինձ զարմացրեց»:

«Ճանապարհն անցնում էր անտառի միջով: Բաֆֆին անընդհատ դիտում էր շուրջը, հարցնում պատահած սարավայրի ու գաշտավայրի անվանումը ու նշումներ անում ծոցատեղերում: Միտքը շարունակ որոնումների մեջ էր»: Ղափանում ինձ խորհուրդ տվեցին Եղվարդում դիմել Արտեմ Հարությունյանի օգնութեանը, որը հին պատմութիւնների նկատմամբ մի առանձին սեր ունի:

75-ամյա Արտեմը պաղով ծանրաբեռնված հսկա խնձորենու տակ նստած, թոռներով էր զբաղված:

— Էս ծառը Դավիթ-Քեկի ժամանակներից է,— տեղեկանալով այցելութեանս նպատակի մասին, ասաց նա: Մտքի հաստ բունը փտած էր: Երկու և կես դար տարիք ունեցող խնձորենու ես առաջին անգամ էի հանդիպում: Մտքը իր կենդանութեամբ միանգամից իրար էր կապում Դավիթ-Քեկի, Բաֆֆու և մեր ժամանակները: Բայց շուտով ես համոզվեցի, որ երեք ժամանակները կապող միակ օղակի դերը միայն ծառին չի պատկանում: Բակից երևում էր ներքևում փռված դաշտը, որտեղ տեղի էր ունեցել Թորոս իշխանի և Ֆաթալի խանի զորքերի միջև ճակատամարտը: «Եղվարդի մոտ գտնվում է մի նեղ դաշտ, որ մինչև այսօր կոչվում է Նարգիզու-գամի (շուշանների առա)»:

Մեծ հայրենականի հաշմանգամ Ա. Հարությունյանը ցույց տալով ներքևի բլրաշարը, սկսեց պատմել հայտնի ճակատամարտի մանրամասները: Իսկ ես փորձում եմ հետ տանելով 100-ամյա քողը, պատկերացնել ճակատամարտի ընթացքը:

«Արժանի է այս դաշտում մի հոյակապ հուշարձան կանգնեցնել: Ավաղ, դեռ համար մեր ունեւորների ձեռքերը շատ կարճ են, իսկ շինականը թեև լայնասիրտ, բայց այժմ է ու անուժ»:

— Ավետիսի հետ Բաֆֆին Նարգիզու-գամի վայրը գնալիս Հարթիս տեղում Հարություն պապիս են հանդիպում ու խնդրում, որ ճակատամարտի մանրամասները ցույց տա:

«Միջահասակ, վաթսուների մոտ մարդ էր, երիտասարդական դեմքով, և քայլում էր այնպես արագ, որ մեր ձիերը չէին հասնում նրան»:

— Քայլելիս հողը կարծես դրոգում էր նրա ոտքերի տակ: Գյուղի լավագույն որսորդն էր ու ամենաբաշ մարդը: Դաշտում որսի մտով հյուրասիրել է գրողին:

Բաֆֆին դառնալով որսկանին, ասաց.

— Եղբայր Հարութ, շատ շնորհակալ եմ: Ես բացառիկ ախորժակով ճաշեցի, առանձնապես շատ համեղ էր միսը: Դա ի՞նչ թռչուն էր:

— Միբհավ: Շատ գեղեցիկ թռչուն է, շատ զգուշ թռչուն է ու դժվար է որսվում: Բայց ձեռքիցս քիչ է դուրս պրծնում:

— Հարութը իրոք որ հայտնի որսորդ է,— ասեցի ես (Ավետիս Մատուրյանը— Բ. Կ.),— նա տափաստանում շեյրա՞՞ է որսում, դրա համար էլ կոչում են «Ջեյրան Հարութ»:

— Պատմում են, որ մի անգամ Իրիցանց Սաքին եզները քարքարոս թեթությունով (Դաշլայտխուր) գյուղ բերելիս, ի միջի այլոց, հենց այդտեղ են պարսիկները սպանել Թորոս իշխանին, դաշտը քրդերը բռնում են Սաքին, խլում հրացանը, իրեն կապում ծառից ու եզները տանում: Նման դեպքերում գյուղացիք Հարությունի օգնութեանն են դիմում: Պապս սվազակների հետքերով քրդերի Սկանդարբազու գյուղ է հասնում, գրոնում ավազակներին ու գոչում:

— Հրացանը բերեք:

— Մենք մեղավոր չենք,— տեսնելով քաշ որսկանին, խեղճացած ասում է քուրդ ավազակապետը.— անզգուշ մարդ էր, մենք էլ պատժեցինք:— Հարությունը վերցնում է հրացանը, եզները առաջն անում ու գյուղ բերում: Մի դեպ էլ Հարությունի եղորդից՝ Հայրու՛մից պատմեմ, որը շնայած հանգիստ ու ծանրաշարժ էր, բայց ուժով ու քաջութեամբ ավազ եղբորը չէր զիջում: Հայրու՛մը փարախի մուտքի մոտ պառկում է, որպեսզի լիողնի քրդերին ու խարը գողանալու: Վաղ առավոտյան որսու՛ Դավթի հետ կորեկի դաշտը հունձի է գնում: Հեռովից մի ձայն է լսում:

— Վա՛, — հանգիստ առում է Հայրու՛մը,— ազին ձեննա, հինչ ա՛ պտահած:

Երևում է մայրը՝ փեշերը վեր քաշած, որպեսզի արագ քայլերին լիանգարի:

— Թաղեմ քեզ, ա տափը նիմննես տու,— Հայրու՛մին է դիմում մայրը,— բշերը տեսար վո՞ւշ, վար դոշը տարան:

— Վա՛, ա մեր, հինչա՛ պտահալ, տարալն տարալ լի, վեշինչ, թող խոխան կյա՛ թվանքը պիրի, տու տոն քըննա:

Երբ Դավիթը բերում է հրացանը, Հայրու՛մը հանգիստ ասում է.

— Տավիթ, տու հնձի արտը, ես քըննամ վեշխարը պիրիմ:

— Չէ, պապ, լըսելըմ կյամ,— խնդրում է Դավիթը:

— Կխանգարես ինձ, տու հոնձտ ըրա:

Հայրու՛մը Սկանդարբազու է հասնում, տեսնում է գյուղի ծայրում մի տնից ծուխ է բարձրանում: Գյուղի մնացած տները դատարկ էին, որովհետև վաղ զարնանից բուրն էլ սարերն էին բարձրացել ու դեռս

չէին վերադարձել: Նկատում է, որ մարդիկ դուրս են գալիս այդ տնից ու գնում դեպի արտը: Հայրումը մտնում է տուն, տեսնում խոշը մաշկած, սյունից կախած: Մի կեսը կտրում է, գցում ուսապարկը, ապա դուրս գալիս, կանգնում կտրին ու կանչում.

— Ա քրդեր, ոչխարս ինչո՞ւ եք գողացել:

— Դե ինչ եղել, եղել է,— ասում է գողութեան մեջ բռնված քրդը.— Հայրսմ րարս, դու գնա, մենք հունձից հետո հախը կբերենք:

Աշնանը, հունձից հետո նրանք երկու ջվալ ցորեն են բերում:

«Ընթրիքից հետո մեզ մոտ հավաքվեցին գյուղի ծերերը,— իր հուշագրութունում պատմում է վիպասանի ուղեկիցը,— նրանք մեկ առ մեկ պատմում էին դարերի խորքից եկող գրույցներն ու ավանգութունները: Պողոս պապը, որ քաջատեղյակ էր ժողովրդի ասմունքին, շատ հետաքրքիր անցքեր նկարագրեց Դավիթ-Բեկի ժամանակներից:— Դավիթ-Բեկի մահվանից հետո,— ասում էր նա,— պարսիկները մեր գյուղը ավերեցին, իսկ բնակիչներին, որպես ապստամբ ժողովրդի, բռնեցին Իրանի Ղարադաղ կոչվող լեռները: Չէ՞ որ եղվարդցիք Քորոս իշխանի քաջամարտիկ զինվորներն էին: Ապա ավելացրեց, որ ինքը դեռ երիտասարդ է եղել, երբ եղվարդցիք ռուսի տիրապետութեան սկզբում վերադարձան Իրանի Վինա գյուղից և վերաշինեցին հայրենի գյուղը, որ արդեն ավերակների էր վերածվել ու ծածկվել վայրենի ծառերով, և միայն եկեղեցին էր մնացել կանգուն: Զրույցները տևեցին երկար, և երբ արագաղի առաջին կանչը լսվեց, ծերունիները, բարի գիշեր մաղթելով, ցրվեցին»:

— Ո՞վ էր Պողոս ապերը,— Արտեմին դիմեցի ես:

— Պուղին զրուցասեր մարդ էր: Երբ գյուղում որևէ մեկը շատ է խոսում, ասում են՝ «Ի՞նչ ես Պուղի գառել գլխիս»: Մի անգամ գոմերի առջևով մի թուրք անցնելիս Պուղուն է հանդիպում ու գրույցի բռնվում: Վերջապես, թուրքը տեսնում է, որ օրն անցնում է, զգուշորեն հարցնում է.

— Պուղի քերվա, օր կա՞, Ղափան կհասնե՞մ:

— Հա, օր շատ կա,— պատասխանում է Պուղին,— Երևան էլ կհասնես:

Երբ վերջապես նա ազատված զրուցասերի արջաններից գնում է, Պուղին ասում է՝

— Հիմարի մեկը, օր որտեղի՞ց, միևնույն մոշուտն էլ չես հասնի:

— Եղվարդը նարգիզու դաշտի ճակատամարտից մոտ 100 տարի հետո նորից ճակատամարտի վայր է դառնում: Այս անգամ 1918 թվականի հուլիսին, Բաքվից թուրքի վերադարձող Քյազիմ փաշայի ջոկատն է Ղափանի վրա գրոհելուց առաջ գյուղը գրավելու փորձ կատարում:

րում: Քեռիս՝ Բախշին, մի քերվա է ունենում Չաթալա գյուղից, երեկոյան գալիս է հայ հնձվորների մոտ, կանչում Բախշուն ու հայտնում, որ Քյազիմը վաղ առավոտյան գյուղի վրա է հարձակվելու կանանց, ծերունիներին ու երեխաներին եկեղեցու մեջ են հավաքում, իբր եկեղեցին պետք է փրկի նրանց կոտորածից, սղամարդիկ դիրքեր են բռնում: Գյուղի պաշտպանութունը Շամիր Գալստյանն էր ղեկավարում: Դիրք բռնած եղվարդցիք, տեսնելով, որ քոչի թվով թուրքեր են լցվել Եղվարդ բերդ լանջերը, հեռ են քաշվում գյուղի մեջ և անստառում դարան մտնում: Ասկյարները գյուղ են մտնում, ում տեսնում, անխնա սպանում են: Մի կին երեխայի հետ փախչելիս կրակում են, երկուսին էլ սպանում: Հիշում եմ, գնդակը մի մարդու ծնոտին էր կպել, ու կախվել էր ծնոտը: Թուրք զորապետներից մեկը տեսնում է բախի մի անկյունում մի մարդ հրացանը գրկած, լուռ և անաարբեր ամեն ինչին՝ նստել է քարին:

— Հանձնվիր,— հրամայում է ասկյարը:

— Հանձնվում եմ, բա ի՞նչ եմ անում,— ասում է Առուստամ Հովհաննիսյանն ու հրացանը մեկնում ասկյարին: Վերջինս բռնում է հրացանի փողից, որ վերցնի այն, այդ պահին էլ Առուստամը քաշում է ձգանը, ու ասկյարը գետին է փռվում: Քաջ Առուստամի եղբայրը՝ Հարությունը, կրակում է ու սպանում մյուս ասկյարներին: Դա էլ նշան է լինում, որ հայերը անսպասելիորեն հարձակվեն ու հանկարծակիի բերեն թուրքերին: Այդ ժամանակ անտառում Սերգեյ Գալստյանը երկու նոնակ է նետում ու տեսնելով, որ թշնամին խուճապահար հետ է նահանջում, իր փոքրիկ ջոկատով ստոա գոտալով հարձակվում է ու կոտորում թշնամուն: Ծս Տ տարեկան երեխա էի, լսելով կրակոցները, մորս ձեռքից դուրս եմ պրծնում ու փողոց դուրս գալով սկսում դատարկ փամփուշտներ հավաքել: Գնդակներ էին սուրում կողքովս: Ինձ բռնում են ու նորից եկեղեցու ներսը տանում: Եղվարդցիներին օգնութեան են հասնում Արծվանիկում Նժդեհի թողած ջոկատն ու ազարակցիները: Թուրքերից խլած գնդացրով Արզարը մի կողմից է ոչնչացնում, ողևորված եղվարդցիները մյուս կողմից ու թշնամուն ծանր կորստի մատնելով հետ շարժում:

Ահա ես կրկին մտովի տեսնում եմ հայ մեծ վիպասանին Եղվարդի շրջակայքում հնութուններ փնտրելիս ու փորձում եմ պատմել գյուղին վիճակված այս նոր փորձութեան մասին, որից իրօք հերոսաբար է դուրս եկել: Եթե եղվարդցիների նման հայոց մեր մյուս բնակավայրերի մարդիկ ևս դիմակայեին արյունարբու թշնամուն, ապա 1915 թվականը հազիվ թե հիշելու առիթ ունենայինք:

Եկեղեցու մոտ տապանաբարերը վննելիս մի ծերունի մոտեցավ ինձ ու ասաց.

— Թորոս իշխանի քարն է:
— Ո՞ր թվի ծնված եք,— հարցրի ես:
— 1903: Արամ Այվազյան: Մի երեք տարի է, որ Բաքվից հայրենի գյուղ եմ վերադարձել:
— 1918 թվականին 15 տարեկան էիք,— ասացի ես:
— Այո, այսօրվա պես հիշում եմ, ջուր էի տանում դիրքերը, կրո-վոդներին բաժանում: 1914 թվականն էլ եմ հիշում: Երաշտ տարի էր: Զա-բարիայի 90 կովերը սատկեցին սովից: Կանչում էին գյուղի աղքատներին, թե՛ եկեք միս տարեք: Իշխան Թորոսի տապանաքարի մի երեսին ձի է քանդակված, որի թամբին հեծյալի փոխարեն անորոշ բնու էր պատկեր-ված, որը, հավանաբար, իշխանի գիական էր խորհրդանշում: Իշխանի թիկ-նապահը մի ձեռքով նսույզի սանձից բռնած, մյուսով՝ իշխանի թուրը, ռազմի գաշտից տուն էր դառնում: Մի կին, թոռի մոտ ծնկաչոք, մի ձեռ-քով տափ էր բռնել, ասես պատրաստվում էր հաց թխել, մյուս ձեռքով՝ գինու սափորը: Տապանաքարի մյուս երեսին կենդանիներ են պատկեր-ված: «Մի աղվես բաց երախի մեջ է առել ահուեղի առյուծին: Խորաման-կությունը խաղթել է Լաջուրյանը»: Աղվեսը մեղիք Ֆռանգյուզն է, որը խա-բելով ազնիվ ու դյուրահավատ Թորոսին, պարսիկների դեմ ճակատա-մարտի է քաշում ու զավազրաբար թիկունքից հարվածում և պարտու-թյան մատնում նրան:

ԽԹ. ԿԱՊԱՆ—ՂԱՓԱՆ

«Կապան— այդ փոխաբերական բառի մեջ ամփոփվում է նրա սառ-սափելի նշանակությունը: Կապան, նշանակում է՝ կապված, փակված անցք: Կապան, զա անդեղախառ խախտմների մի ցանց է. զա մի նեղա-վոր ձուղակ է, որի մեջ Սյունյաց աշխարհի իշխաններ կաշկանդում էին բշեամու լեզեռները»:

Ղափանի երկրագիտական թանգարանի աշխատակցի հետ փնտրում էի Բաֆֆու այցելության հետ առնչվող հինավուրց բերդերը, վանքերն ու գյուղերը: Բաղաց կամ Կապանի թագավորությունը ստեղծվելով 987 թվականին, գոյատևել է 183 տարի: Նրա հարստության և հզորության ապրջուրն էին կազմում 43 բերդերը, 48 վանքերն ու 1008 գյուղերը:

Վերջապես, «հայտնաբերեցինք» Բեխ գյուղը, որը փաստորեն այս-օրվա Ղափան քաղաքի արվարձանի է վերածվել: Մտ. Օրբելյանը իր պատմությունում նշում է. «Մի սիսական իշխան՝ Զևանչեր անունով, Սյունյաց տեր Սահակի որդին, գալիս է Սողոմոնի մոտ և նրանից խընդ-

րում Կովսական գավառի Բեխ գյուղը, որը հին ժամանակներից սուրբ Խաչի ու հայսևոպոսների սեփական կալվածքն էր»: 871 թվականին կնքված պայմանագրում, որով Բեխը փոխանակվում է Բաղք գավառի Արուքս գյուղի հետ, ասվում է՝ «Եթե մահմեդական մեծավոր լինի և հափշտակել ջանա, իր Մահմեդից մերժված լինի օրենքով, հազար-հազար նալլաթ (նզովթ) ստանա և հավատուրաց ու սեներես լինի իր աստծու առաջ»:

Գուցե հենց այս նզովթն է պահպանել գյուղը օտար բռնակալների ավերմունքից:

Հայտնի է, որ ուշ միջնադարում այս գյուղի հետ է կապվում Դավիթ-Բեկի քաջ զորապետ Մելիք-Փարսաղանի անունը, որով էլ ոչն արժանու-ցել է մեծ վիպասանի ուշադրությանն ու դարձել նրա ուսումնասիրու-թյան առարկան: Եկեղեցուն կից գերեզմանոցում մի տապանաքարի վրա կարդում եմ. «ԱՅՍ է ՏԱՊԱՆ ՄԵԼԻՔ ՓԱՐՍԱԴԱՆԻ ՈՐԴԻ ՄԵԼԻՔ ԲԱԼՈՒՆ ԶՕՐԱՊԵՏԻՆ ՆՈՐՈՔԵՅԱԻ ԺԱՌԱՆԿԱՆ ԱՅ ՄԻՄԷՈՆ ԲԷԿՆ ԹՎ ՌՄԽ (1791)»:
Բալին, որը Դավիթ-Բեկի քաջ զինվորներից էր ու Զեվու բերդի հերոս-ներից, հազիվ էի տպրած լինի մինչև իր դարի վերջը: 1791-ը, ըստ Երևույթին, նոր տապանաքարի տեղադրման թվականն է:

Գյուղի կենտրոնում գտնվող սառնորակ հինավուրց աղբյուրի մոտ մեծահասակ մարդիկ նստած դրուցում էին, տարբեր հարցերի շուրջ մտքեր փոխանակում:

— Բափո՞ն,— հարցրիս հարցով պատասխանեց 95-ամյա Սուրեն Մելիք-Փարսաղանյանը,— մեր Աղասամին Բափու բոլոր գրքերն ունելու Հիմա ոչ մեկը չի: Երկու պարկ գրքերը այրել ենք...

— Սուրեն պապ,— դիմեցի ես,— 1170 թվին սելջուկները Բաղա-բերդում 10 հազար ձեռուգիր մատյան են այրել:

— Ինչ անենք, բալա ջան,— հասկանալով ակնարկս անօգնական ասաց ծերունին,— երկուսն էլ վատ ժամանակներ էին...

— Բաֆֆին Դավիթ-Բեկի և նրա զինակիցների մասին տեղեկու-թյուններ էր հավաքում ձեր գյուղում...— ասացի ես:

— Մխիթար Սպարապետը վանքում հավաքած իրերը լրիվ բաժա-նել է ժողովրդին,— պատասխանեց ծերունին:

— Իսկ Բաֆֆուն ո՞վ է ընդունել:

— Մեր Կեերք պապը: Կրթված մարդ էր, Տաթևում, հետո Շուշվա դումն է սովորել:

Մինչ ես զրուցում էի Սուրեն պապի հետ, մեր շրջապատը լցվեց աշխույժով: Աղբյուրի մոտ հավաքված մարդիկ ու ջրի եկած կանայք

չրշապատել էին այստեղ հայտնված շրջանի ջրային տնտեսութեան աշխատակցին: Մի մեծահասակ մարդ բորբոքված դիմեց նրան.

— Ինչո՞ւ հող չեք հատկացնում, որ մեր տղաները տուն կառուցեն Գնում են, հեռանում են, առաջն առնել չի լինում:

— Ինչո՞ւ ջրի հարցը չեք լուծում,— պատասխանի շտապելով դիմեց սուր ձայնով մի կին,— լորի ենք ցանել, բայց սերմացու էլ չենք ստացել, շոր տարի է, մի կաթիլ ջուր չկա:

Ջրային տնտեսութեան աշխատողը ամեն ինչ խոստանալով մի կերպ գլուխն ազատեց ու գնաց: Հետաքրքրվեցի գյուղի ճակատագրով: Բեխում 80 ծուխ կա՝ 100 բնակիչ:

— Ամռանը բնակիչների թիվը 300-ի է հասնում:

— Ինչպե՞ս,— հարցրի ես:

— Հանգստանալու են գալիս: Լավ ամառանոց է:

— Գյուղի 8-ամյա միջնակարգ դպրոցը ընդամենը 8 աշակերտ ունի և 6 ուսուցիչ: Առաջին և երկրորդ գոտարանները փակվել են: Իսկ 5 տարի առաջ այն 50 աշակերտ ունեւր:

— Ի՞նչն է պատճառը:

— Քաղաքը,— ցույց տվեց Ղափանի կողմը,— կերավ, մաշեց մեր գյուղերը...

Ուղեկցողիս հետ գնացինք Վահանավանք: Կարծես լսում եմ վանքի զանգերի երբեմնի ղողանջը, մեղմ պատարագը:

Կիսավեր տաճարները լուր, ասես ահից շունչները փորը գցած, համբերությամբ սպասում են: Մյուսյաց Ձագիկ իշխանի կրտսեր որդին՝ Վահանը, որը դիվանագրության պատճառով կրոնական հանդերձը գերադասեց իշխանական զենք ու զրահից, 911 թվականին հիմնելով վանքը, հարազատ մնալով իշխանական փառասիրությանը, այն իր անունով կոչեց: Վահանավանքի հսկա քարերը ասես սպասում են, որ վերջապես մարդիկ իրենց նախկին տեղերում բնակվեն, և զբնգուն սրահները կրկին կլցվեն մեղմանուշ երգերով ու աղոթքներով:

«Սա շատ փնտրեցի Դավիթ-Քեկի գերեզմանը, բայց ցավոք ինձ չհաչողվեց այդ սրբազան դամբարանը տեսնել: Վահանավանքում շատ մանեկա, տեսա Մյունյաց իշխանների, հոգևոր հայրերի շիրիմները, բայց փնտրածս չկա ու չկա: Մտածեցի, թե այստեղ մի անողմված կա, այդպիսի կարծիք հայտնեցին և Քեկի ծեռուները, թե տապաճաճաբ թափցված է կամ շրջված՝ գրեթե թափցնելու հպատակով:

Առանց մարգարեության համոզված եմ, որ մեզանից հետո էլ մեր հայրենասեր սերունդը կհայտնագործե այդ մեծ սրբությունը»:

Չամչյանը իր «Պատմությունում» գրում է. «Եվ ինքն դարձ արարելայի Հալիձոր՝ ես Աւուրց ինչ հիվանդացաւ, և մեռավ ի տուն իրում՝ խաղաղութեամբ, յամի 1728 ՌՃՀԷ. կացեալ յիշխանուե ամս. Զու հազարութչամբ մահվան վարկածի հետ Բաֆֆին համաժայն չէր, բայց և չկարողացավ ստանալ իրեն աբղեն հայտնի հարցի պատասխանը: Նա համոզված էր, որ եթե Դավիթ-Քեկը ապրեր, ապա անպայման ավելի կհզորացներ իր ստեղծած բովանդակ իշխանութչունը և այն հիմք կդառնար հայոց անկախ պետականութչան վերականգնմանը:

Ուսանողների մի խումբ ազմկոտ մագնիտաֆոններով ու իրենց հատուկ աշխույժով հայտնվեց հինավուրց քարերի վրա, սկսեց շիրիմից շիրիմ թուղթտել ու տարբեր դիրքեր բնդունելով նկարահանվել:

Հիշեցի սփյուռքահայ մի մտավորականի հայտնած այն կարծիքը, թե միայն Արցախում ու Զանգեզուրում է պահպանվել բուն հայկականը, իսկ մնացած վայրերում այն կուլ է գնացել ժամանակակից կյանքի հոսքին:

Ուսանողները, ինչպես հայտնվել էին, նույն կերպ էլ անսպասելիորեն շքացան, ու ոչ հեռվում, անտառի խորքում, լավեցին կենացների, բարի մաղթանքների, ծափերի ու զուռնա-դհուլի ձայները:

— Սա զափանցիների խնջույքների, խրախճանքների ամենստիբլի վայրն է,— ասաց ուղեկիցս:

Վաչագան գյուղը հեռու չէր Ղափանից: Աշնանը գյուղը գեռ շնչում է, սակայն ձմռանը այն դատարկվում է: Ղափանցի գեղանկարիչ Ռուբերտ Կամոյանը ինձ ցույց է տալիս դպրոցի հին շենքը, որը փակվելուց հետո զրկվելով խնամքից, դանդաղ փչանում է:

— Ինչպե՞ս փրկեմ շենքը,— ասում է Ռ. Կամոյանը,— 120 տարվա շինություն է, ափսոս է: Կցանկանայի նորոգել ու նկարիչների համար արվեստանոցների վերածել: Ո՞ւմ դիմեմ, որ լուծի այս հարցը:

Ապա գեղանկարիչը պատմեց Վաչագանում տեսած հինավուրց ծեսերի, սովորությունների մասին, որոնցից առավել հետաքրքիր էր խըղաացավից (նյարգային շոկի մեջ հայտնված ամուսնացած աղջիկ) նորահարսին բուժելու հինավուրց ծեսի մասին:

— Ամուսնանալուց հետո մանկամարդ աղջիկները նյարգային շոկի մեջ էին ընկնում ու հաճախ, չբուժվելու դեպքում, հագեկան հիվանդ դառնում: Տասը տարեկան էի, երբ տեսա բուժումը: Երեք խումբ նվագողներ են կանչում, նստեցնում կտուրիին ու հերթով նվագել տալիս, աչնպես, որ օր ու գիշեր զգազարի նվագը: Հավաքվում են դյուղի տղաներն ու աղջիկները, կանչում են հարսի ծնողներին: Հարսը իրենց կտրիկն անընդմեջ պարում է, աղջիկ-տղաները շրջան են մտնում, իրար փոխարինելով պա-

բում հարսի հետ, օր ու գիշեր, մինչև հարսը հոգնում է և ուժասպառ ցած
ընկնում: Հետո հարսին տանում են, պառկեցնում անկողնում: Աղջիկը
արթնանում է խոր քնից առողջ վիճակում:

Զրուցելով անցնում էինք Վաչագան գյուղի ճամփաներով, երբ մի
65-ամյա մարդու հանդիպելով, Ռ. Կամոյանն ասաց.

— Մխիթար քեռի, Բաֆֆու մասին ի՞նչ գրույցներ են պատմել գյու-
ղի մեծերը:

— Բաֆֆին չգիտեմ,— ասաց նա,— բայց դաշաղ Նարու մասին շատ
եմ լսել: Նա մի անգամ պրիստավի շորեր հագած մեր Աղու՝ տեր Կա-
րապետի մոտ է դալիս, թե՛ պրիստավ շեմ է, տեր Կարապետ, քո հին
բարեկամ Նարին եմ, եկել եմ, որ գուշակես բախտս, տեսնեմ ոնց եմ
լինելու: «Նարի,— պատասխանել էր տեր Կարապետը,— քեզ պետական
գնդակ չի առնելու, դու ընկերոջ գնդակով ես գնալու»: Ու այդպես էլ
եղել է:

Վերջապես հասա Բաղաբերդի մատույցները:

«Բաղակա ֆար, խիստ հեշտ արտասանելի բառեր են: Բայց եւ բնու-
թյան հրեշավոր սահղծագործություններից մեկն է. մի ամենի, սեպա-
ցած, միապաղաղ ֆար ձորի խորքից վեր է բարձրացել դեպի երկինք
և իր հպարտ գլխի վրա, որպես մի գեղեցիկ պսակ, դրել է Բաղակ իշ-
խանի ահռելի ամրոցը՝ զարդարած բարձր աշտարակներով և անփա-
տելի պարիսպներով: Այդ սասկալի բերդի ապառաժներին զարկվելով՝
փշրվեցան պարսից տհազին զունդերը»:

Սյունյաց Անդոկ իշխանը քանի-քանի անգամ այստեղ կոտորել է
պարսից Շապուհ արքայի զորքերը, հետ շարտել բերդի մատույցներից:
Բաղաբերդը «Գա բաղաց թագավորների մայրաֆաղաֆն էր: ... Բայց
ի՞նչ էր մնացել այնտեղ: Փագավորների, իշխանների խորտակված պա-
լատները, հոյակապ եկեղեցիները, ամրոցների կիսավեր աշտարակները,
բոլորը, ինչ որ նիշեցնում էր հին փառք և մեծությունը, ծածկված էին
խալ, մթին անտառի տակ:

Քառեղեն օսւնդուլը, որի մեջ անմատչելի կերպով պահվում էին
Բաղակի հուշակավոր ֆաղաֆը, այժմ ներկայացնում էր մի տխուր, ֆառե-
ղեն դազազ, որի մեջ վաղուց արդեն թաղված էր Սյունյաց աշխարհի
մեռած մայրաֆաղաֆը...»

— Բաղաբերդի տարածքում պանսիոնատ են կառուցել,— ասաց
ուղեկիցս:

«Մենք,— ասում էին այդ ավերակները,— շատ անգամ պահեցինք
ձեզ, շատ անգամ պահպանեցինք թշնամու հարվածներից, իսկ դու՛
այնքան թույլ գտնվեցիք, որ մեզ պահել չկարողացաք...»

«Հիշյալ բերդերի ավերակները մինչև այսօր սարսափ են գցում հա-
նապարհուրդի վրա. նրանց լիակատար նկարագրությունը լույս կտեսնի
մեր՝ Սյունյաց աշխարհի ուղեգրությունների մեջ»:

Յավոք, Բաֆֆին դբաղված լինելով վեպեր գրելով ու նրանց հրա-
տարակության ծանր գործերով, այդպես էլ ժամանակ չի գտել կարգի
գցելու Արցախում, Սյունիքում և Նախիջևանում կատարած դրառումնե-
րը և չի հասցրել կատարել «Դավիթ-Բեկ» պատմավեպում իր նշած այս
խոստումը:

Ծ. ՁԵՎՈՒ ԲԵՐԴԸ

«Կապանի յոթ բերդերից, որոնք յոթն կողակների նման դրած էին
գանազան անցների վրա, շեն էր մնացել մեկը միայն՝ Գեղվա բերդը կամ
Ջեվուն, այն եւ՝ մի բուրֆի ձեռնում»:

Քանի որ շրջակա հայաշատ գյուղերի բնակիչները տարբեր պատ-
ճառներով ու առիթներով վերջնականորեն լքել են իրենց հայրենի գյու-
ղերը, իսկ նրանց փոխարեն ազրբեջանցիներ են եկել, ուստի անիմաստ
էր Բաֆֆու այցելությունից մնացած հիշողություն որոնելը: Հակառակ
կողմից բարձրացա լեռն ու հայտնվեցի բերդի տարածքում: Շրջում եմ
բերդի տարածքում ու մտովի կարդում Բաֆֆու մտքերը:

Ժողովուրդը պահպանել էր վիպասանի գալուց 150 տարի առաջ տե-
ղի ունեցած իրադարձությունների պատմությունը, ավանդություններն ու
զրույցները հերոսների անցյալների ու ազգի մեծերի մասին: Հեշտ էր
Բաֆֆուն: Ես էլ քիչ նյութեր չեմ քաղում մարդկանց զրույցներից, ավան-
դություններից: Իսկ իր անցյալը հիշող ժողովրդին անհնար է հաղթել:

Ահա բերդի այս մի մասում վիպասանը տեղագրում է հայոց թաղը,
որի մի անկյունում գտնվող քարաշեն տանը բնակեցնում է Սառա անու-
նով այրուն: Նա իր տանը դադանաբար ընդունելով Դավիթ-Բեկի մեր-
ձավորներին՝ Խորեն Տեր-Ավետիքին, իշխան Ստեփանոս Շահումյանին,
Մելիք-Փարսազանի որդի Բալիին, քիչ բանով չնպաստեց բերդի գրավ-
մանը:

Օխյի գետի կողմից Բաֆֆին տեղագրում է Մխիթար Սպարապետի
չոկատը, բերդի ներքին կողմից՝ Դավիթ-Բեկի գործը: Ահա ամրոցում
հրդեհ է բռնկվել, որի հեղինակները հայ հետախույզներն են: Այս կող-
մում Մուլլայի առաջնորդությամբ մահմեդականները հարձակվում են
հայոց թաղի վրա: Բաֆֆին մեկ անգամ ես միջնաբերդ է բարձրանում,
ամեն ինչ նորից շափում, նկարագրելու համար բերդի գրավման ման-
րամասները:

«Ձաների յայսր նառագայթում էր խանի սպանված, գունաթափ դեմ-
քի վրա: Ես մի կողմ փառվեցալ, որ շնանաչվի, քաճկեցալ մի մուք
անկյունում:

Յերդը բոլորած էր ամուր, բարձր շրջապարիսպով, բացի դանից,
նա ուներ բնական ամրություններ էս: Մի կողմում խոր անդունդի նման
ձգվում էր մի վիհ, որի միջով անցնում էր Հալիձառի գետը. մյուս կողմում
բարձրանում էին սրածայր լեռներ: Շրջապարիսպը, յուրաքանչյուր 20
հալլ հետավորության վրա ուներ աշտաբակներ, որոնց վերևի մասը վեր-
ջանում էր ժանիկների նման ատամնավոր բարձրություններով:

Այդ բոլորը առաջ պատկանում էր Ղափանի հայոց իշխաններին,
իսկ այժմ (Պալիթ-Քեկի ժամանակ — Ք. Կ.) նրան գրավել էր Ապամագ-
կուսի անունով մի թուրք բռնապետ, որ ահի և սարսափի մեջ էր պահել
բոլոր շրջակայքը»:

Քերդի պարիսպներից թիչ բան էր մնացել: Կանգուն էին միայն միջ-
նաբերդի պատերը: Չննում եմ ամրոցի մանրամասները, մեկ հայտնվում
եմ 18-րդ դարի առաջին կեսում, փորձում տեսնել բերդի պաշարումը,
մեկ հայտնվում 19-րդ դարի վերջերում, կռահում Բաֆֆու մտքերը, ապա
խորասուզվում եմ դարերի խորքը, չէ՞ որ մեկ անգամ չէ, որ այս բերդը
պատվար է կանգնել օտար նվաճողների դեմ: Կրկին հայտնվում եմ 19-րդ
դարում և ունկնդրում Բաֆֆուն:

«Փանդված եկեղեցին ցույց է ապիս, որ մի ժամանակ բերդի այս
կողմում կար հայոց մի ամրոցը քաղ: Ո՞ր ժամանակ և ի՞նչ հանգա-
մաններից ստիպված՝ նրանք թողեցին իրենց բնակաբնակները, հայտ-
նի չէ»:

Դիմացի լեռան լանջին հանդացող ծանր մեքենաներն ու քարհատ
հասարակները, ապա պայթյունների խուլ որոտը ինձ կրկին 20-րդ դար
են բերում, ու ես տեսնում եմ երբեմնի հզոր բերդի փլատակները, հա-
րևան գյուղի բնակիչների «պեղումներին» հետքերը: Միջնաբերդից ոչ հե-
ռու Քաջարանի լեռնամետալուրգիական կոմբինատի արտադրական թա-
փոնները պոմպակայանն էր, որը մածուցիկ հեղուկը պոչամբար էր մղում:

Հայացքս կրկին ձգվում է դեպի միջնաբերդի պատերը: Թվում է՝ ինչ-
որ բան եմ մոռացել այնտեղ: Իմ առջև հայտնվում է պարտված խանի վե-
զիրը: Ահա Բաֆֆին ներսես արքեպիսկոպոսի շուրթերով պատասխանում
է իր ժողովրդի համար գթություն խնդրող վեզիրին.

— Դուք մի մոռացե՛ք, որ մի գաղթական հյուր եմ մեր երկրում,
այն անշնորհակալ հյուրերից մեկը, որ տանտիրոջը սպանում է, իսկ
ի՞նքը սկսում է տաճանալ նրա օջախի կրակովը: Այստեղ մենք ունեինք
մեր քաղաքացիները, մեր իշխանաւորները: Բոլորը ոչնչացրիք դուք:

Մեր հայրենիքում մի փառ չէ մնացել, որ դուք շնեկեցիք մեր պապերի
արյունով, մեր հայրենիքում մի տաճար չի մնացել, որ դուք հարշու-
անգամ ֆանդած շիճեցիք: Որքան կամեցա՞ք կոտորեցիք, որքան կամե-
ցա՞ք ոչնչացրիք: Դուք Չիզգիգ-խանի, Մանգու-խանի, Լեհկ-Քեմուրի ու
այլ տեսակ հեռշների մեզ մոտ բերած գազանների կոշտություններն ե՛ք...

Բաֆֆին գրեցի՞ր այս խոսքերը, կարծես տեսնում էր և Համիդին,
էնվերին, Քալեաթին...

— Բայց որդին ինչո՞վ է մեղավոր, որ տուժե իր պապերի հանցաճճ-
ների համար, — հարցնում է թուրքը:

Ուզում եմ միջամտել այս զրույցին ու գոռալ.

— Իսկ դո՞ւ, դո՞ւ, ինչքանո՞վ ես մեղավոր, որ թո որդիները՝ Հա-
միդը, Քալեաթը, մյուս ձեռք բոլոր որդիները եղևոնագործ են:

— Ուղի՛ն մեղավոր չէր լինի, եթե ինձ էլ միևնույժ կերպով չգոր-
ծե՛ր, եթե ինձ էլ չչարունակե՛ր իր պապերի բարբարոսությունը, — օր-
տախտանում է սյունյաց արհեսպիսկոպոսը:

ՇԱ. ԿՐԿԻՆ ՏԱԹԵՎ

Արծվանիկցի է. Մանուշարյանի «Պատմությունում» նշվում էր, որ
Բաֆֆուն մինչև Տաթև են ուղեկցել Մեսրոպ Տեր-Հարությունյանի հա-
րազաններից Գարրիել Մանուշարյանն ու Արծվանիկի տանուտեր Գրի-
գոր Օհանջանյանը: Իմ հաշվարկով վիպասանը Տաթև է հասել հոկտեմ-
բերի 12-ին, ապա իր ուղեկիցներին պատվիրել՝ «Մեսրոպ Լահանայի՞ն
կհայտնե՛ք, որ նրա հյուրը գրող Բաֆֆին է»:

Ըստ երևույթին, վիպասանը թաքցնում էր իր գրական անունը, որն
արգեն մեծ հռչակ ուներ Ձանգեղուրում, որպեսզի խուսափեր սյունեցի-
ների հյուրասիրության զոհը դառնալուց և ժամանակը ավելի նպատա-
կասույց օգտագործելու: Այս առումով զգափանցի Արտաշես Մատուրյանը
Բաֆֆուն հանդիպած իր հոր հուշագրությունները մշակելիս հաշվի չի
ստել այս հանգամանքը, և տեղիք է տվել մի շարք թյուրիմացությունների:

Ըստ նախնական ծրագրի, վիպասանը պետք է ճանապարհորդու-
թյունից հետո առանձնանար Տաթևի վանքում և այնտեղից «Մշակին»
ուղարկեր «Դավիթ-Քեկի» շարունակությունը, միևնույժ ժամանակ նյու-
թեր հավաքեր «Նամասյի մելիթություններ» աշխատության համար:

Ինձ ես ձգում էր Տաթևը: Տաճարի պատին Բաֆֆու քառասողի պատ-
մությունը ինձ հպնգիստ չէր տալիս: Երազումս տեսնում եմ տողերը,
բայց ոչ մի կերպ չեմ կարողանում ընթերցել այն: Քառասողի տակ
պարզ երևում է ձեռագիր «Բաֆֆի» ստորագրությունը: Իսկ Դարբասի

դեպքը, հետագա ճամփորդությունը: Շտապում եմ որ առաջ հասնել Տաթև:

Քափի լեռնանցքում ես հիանում եմ ոսկե աշունով: Այս մի քանի օրերին տերևները լրիվ դեղինով են ներկվել: Նրանք գլխե՞ն, որ մեռնում են:

Ընդամենը 30 առեւ ունեցող Տանձատափը, որտեղ հիմնականում մեծահասակներ են ապրում, հաղիվ է պահպանում իր գոյությունը: Մեկ ուսուցիչով դպրոցը 5 աշակերտ ունի: Սու. Սրբելյանը գյուղի անունը հիշատակում է 9-րդ դարի մի մագաղաթի վրա հայտնաբերած ընծայագրի առիթով, որտեղ հայտնվում է, որ Սյունյաց դահերեց իշխան Աշոտը մի շարք գյուղերի հետ սուրբ եկեղեցուն է ընծայում նաև Տանձատափը: Գարեր շարունակ Տանձատափը հռչակված էր իր բրուտանոցներով: Այստեղ էին ապրում Սյունիքի լավագույն բրուտները, որոնց գործերը վարդարում էին եկեղեցականների ու իշխանների տները: Վերջին բրուտները Սոդոմոն Քանդյանն ու Գևորգ Հակոբյանն էին, որոնք աշխատեցին մինչև 1960-ական թվականները: Նրանց որդիները արհամարհեցին արգեն գեահատում շանեցող հինավուրց արհեստը:

Գյուղի թանգարանի վարիչ Նիկոլայ Գևորգյանը հիշեց տաճարի պատահանի տակ ծեփին թողնված քառատողը: Բայց որ այն Բաֆֆուն էր պատկանում, առաջին անգամ էր լսում:

— Իմանալի, ծեփի այդ մասը կպահեսի, չէի թողնի որ քանդեն, — ափսոսանքով ասաց նա:

— Բայց քառատողի տակ անունը կար, չէ՞:

— Այո, բայց ինչ իմանամ, որ հենց վիպասան Բաֆֆուն է պատկանում այն:

— Կարո՞ղ ես հիշել, — անհամբերությամբ հարցրի ես:

— Ժամանակ տուր՝ հիշեմ: — Թանգարանի վարիչը մտորումների մեջ ընկավ: Ախր միշտ արտասանում էի, գիտեի անգիր... ոչինչ, կհիշեմ:

«Ասում եմ՝ մարդուն մտքի շուրջ է հարկավոր,

Կամ ծագումով ազնիվ ծնող է հարկավոր,

Այդ բոլորը ոչինչ,

Լոկ գիտություն է հարկավոր»:

Քե ինչու Բաֆֆին ըստ նախնական ծրագրի չի մնացել Տաթևում, մեզ մնում էր միայն գուշակություններ անել: Նախ՝ հունիսի 25-ից սկսած վիպասանը ճանապարհորդել էր Արցախյան և Սյունյաց աշխարհներում ու ծրագրածից շատ ժամանակ ծախսել: Տաթևում մնալու դեպքում պետք է ձմեռն այստեղ անցկացներ, որն իմաստ չէր կարող ունե-

նալ, որովհետև վեպի նյութերը մմանք Տաթևից անհար կլիներ պարբերաբար և ժամանակին Քիֆլիս հասցնել: Մյուս հանգամանքը, հավանաբար, Ֆինանսական սուղ վիճակն էր: Տաթևից սկսած Բաֆֆին խոսափում էր ձի կամ ուղևոր վարձել: Բացի այդ, Սյունիքը առանց նախընտանի, Գողթան ու Արևիք գալատների անհնար էր պատկերացնել, իսկ որ Գավիթ-Բեկի գործունեությունը շատ անգամ էր անընթաց այս գավառների հետ, պատմական փաստ էր: Ուրեմն, Բաֆֆին պետք է շարունակեր ուղևորությունը: Մյուս կողմից էլ ընտանիքի՝ կնոջ ու որդիների նկատմամբ կարոտն էր և նրանց իր հետ Քիֆլիս տանելու վաղեմի բողձանքը: Այնպես որ ես Տաթևից շտապում եմ հասնելու Գարբաս: Թվում է, թե Բաֆֆին այնտեղ է ու ես ուր որ է կհասնեմ նրան:

ԾԲ. ՀԵԹԱՆՈՄՆԵՐ

Եթե Բաֆֆին Որոտանի կիրճով անցնող կարճ ճանապարհով Հարժիքից Գարբաս է հասնում, ապա ես ստիպված էի ժամանակակից առֆալտապատ ճանապարհներով մի հսկա պտույտ գործել:

Մեր դադիկը հանկարծ փոխեց ձայնը, փրփփրեց ու կանգ առավ: Մինչ վարորդը մեքենայի անսարքություն էր զրարված, ես որոշեցի մոտակա բարձունքի կատարից դիտել շրջապատը: Ապառաժները շրջանցելով բլրի մյուս կողմում հայտնվեցին ու փչել հեռվում խոտերի հեռեկից եկող շշուկներ լսեցի: Մածուկ մոտեցա ու թիփերի հեռեկից նայեցի: Զորս հոգի կանայք, որոնցից երկուսը մեծահասակ էին, երկուսը՝ 25-ից 30 տարեկան, մի մեծ, փայլվուն ու ծայրը կլոր քարի մոտ ուղում էին ուժով հանել շահել ու գեղեցկատես աղբյակ շորերը: Վերջինս դիմադրում էր ու լացակումած ասում.

— Դե թողե՛ք, թողե՛ք, ի՛նքս կհանեմ:

Բայց կանայք անզորվելի էին: Փաշտելով, արտա մերկացրին աղջկան, հսկա աղջիկ և աղա տիկնիկներին տվեցին գրկին ու փորի վրա պառկեցրին քարի վրա: Ուղում էի դուրս գալ թաքստոցից ու խանգարել նրանց, բայց մի պահ հասկացա, թե ինչ էր կատարվում: Ես ականատես եմ դարձել պորտաքարին շեր հարսի այցելության հինավուրց հեթանոսական ծեսին: Կանանց մոտ հրացան կար: Աղգային տարագով՝ խլիզով մեծահասակ կինը, որը վարում էր ծեսը, երբեմն կանգ էր առնում, սեռուն հայացքով վննում շուրջն ու նորից շարունակում: Նրանք շահել հարսին կուպտորեն հետ ու առաջ էին սահեցնում քարի վրա:

Հետո թողեցին հարսին, մեծ, համարյա 80 սմ բարձրության տիկ-

ներկները պառկեցրին քարին, սկսեցին վառած մոմեր պատել նրանց շուրջն ու մրմնջալ։

— Տղա բերես, աղջիկ բերես, տասը բերես...

Տղա տիկնիկը նստեցրին ավանակին, աղջիկ տիկնիկի ձեռքին ասեղ զրեցին ու նրա ձեռքով սղալին կարեցին ավանակի փալանին։ Կրկին քարի վրա էին պառկեցնում հարսին և աջ ու ձախ, վեր-վար, հետ ու առաջ շարժում, անընդհատ պտտվում, անեծքներ մրմնջում։ Խղաժոր կինը կարմիր խնձոր բերեց, զրեց պորտաքարի ծայրին։

— Տը՛մ-տը՛մ, տը՛մ-տը՛մ, տը՛մ-տը՛մ, տը՛մ-տը՛մ... — անընդհատ էրկնում էին նրանք ու հարսին վեր ու վար անելով հարվածում քարին։ Հարսը համբերում էր, թեթևակի տնքտնջում։

— Մնվի՛, թող ծնվի՛, քեզանից տղա՛ ծնվի,— արագությամբ արտաբերում էր պառավ կինը։ Զահել կինը գոտկատեղին կապած փաշտով հարվածում էր պորտաքարին ու ինձ համար շլաժող անեծքներ մրմնջում։ Գողեցին հարսին որ ուղբի գա, ապա բուրբն էլ իրար ձևոթից բռնած շուրջպար բռնեցին պորտաքարի շուրջը։ Դանդաղ, մեղմ և կարծես զգուշ քայլերով պտտվում էին սև փայլ ստացած ողորկ քարի շուրջն ու անվիբը մրմնջում։ Մեծահասակ կինը անեծք էր արտասանում, մնացածները միաձայն երգեցիկ կրկնում էին նրա խոսքերը։ Ավարտեցին ծիսակատարությունը, ավանակի վրայից ցած բերեցին զանգեզուրյան նախաշաղարիով խուրչինը, նրա միջից ուտելիք հանելով դասավորեցին գետնին փռած գլխաշորի վրա, բուրբն էլ հոգնած նստեցին շուրջն ու սկսեցին հաց ուտել։

Ես դանդաղ և զգուշ հետ քաշվեցի ու ցած իջա բարձուներից, հետևից սողասելով կրակոցի կամ հերթական անեծքների հեղեղի։ Վարորդը վազուց վերջացրել էր նորեզումն ու համբերությունմբ ինձ էր սպասում։

ԾԳ. ԸՂՈՒՆՐԾ

Հինավուրց Միսականն ինձ համար մի արտասովոր երկիր էր, որը թևակոխել էր քրիստոնեությունն ու ինչ-որ հրաշքով իր հեթանոսական ծեսերի հետ 20-րդ դարում հայտնվել։ Անցնելով Միսիանը, կրկին անգամ լսում եմ Որոտանի խուլ որոտը։ Ահա և կրկին կապվում եմ Դավիթ-Բեկի ժամանակների հետ։ Հինավուրց բերդի երեք կողմերը զահավեժ ժայռեր են։ Չոր ու ամալի լեռան գազաթին պահպանվել են ահարկու և տպավորիչ միջնաբերդի պատերը։ Վերհիշում եմ Դավիթ-Բեկի ջոկատի կողմից բերդի պաշարման Չամչյանի նկարագրությունը. «Իմեալ ի յաջորդ ամի ՚ի վր. որոտնայ՝ պաշարեցին զայն. և ՚ի շորորդ սուր պա-

շարմանն՝ որ էր տոնին ծաղկագարդին, մինչդեռ պատերազմէին՝ տեղաց յորդ անձրև և զի ի կողմն պարսպին խախտեալ էր, յանձրևոյ անտի տամկացեալ կործանեցավ. յայնժամ մտեալ հայոց ՚ի ներքս՝ սրախողխող կոտորին զամենայն բնակիչս քղբին՝ բայց ՚ի քրիստոնեիցս»։

Ցավոք, բերդի գրավման նկարագրությունը տեղ չի գտել Բաֆֆու վեպում։ Ե. Լալայանը իր ճանապարհորդության ժամանակ, բերդի տարածքում տեղահան արված տապանաքար էր տեսել. «ԱՅՍ է ՀԱՆԻՒՍ ԲԱՐԵՊԱՇՏ ԻՇԽԱՆԻՆ ԱՐՔԱՅԱԶՈՒՆ ՍՄԱՍՍԱՅ՝ ՈՐ Ի ԿԷՍ ԱՎՐԵԱՅ Ի ՔՍ ՓՈՒՆՅԱՎ ՅԻՇԵՅԵՔ Ի ՔՐԻՍՏՈՍ ԹՎ ՊԶԹ (1430)» արձանագրությունմբ։

Վազուդի (հնում Վաղատի) գլուզի մուտքի մոտ, ճանապարհի աջ կողմում հռչակավոր Որոտնավանքն է։ 1931 թվականի երկրաշարժից ավերված վանական համալիրի փլատակները ներկա տեսքով ես շարունակում եմ տպավորիչ մնալ։ «Երանելի թագուհի Շահանգուխտը... աստվածային մի հիշեցումից մղված,— գրում է Ստ. Օրբելյանը,— շինում է Վաղատնի գեղեցիկակերտ ու վայելչաձև վանքը (1000 թ), որը դեռ վաղուց ուխտագիր մարդկանց վայր էր, որովհետև այնտեղ վաղ ժամանակներից մի եկեղեցի կար սուրբ Գրիգոր Լուսավորչի անունով, որը կարծես նրա կողմից էլ հիմնադրված էր, հետո վերաշինված Ստեփանոս հոր և սուրբ ճգնավորի կողմից։ Այն բուժում էր թունավոր օձերից խայթվածներին...»

Զգիտեմ, հինավուրց ծեսի տպավորությունից, թև ալլ պատճառով միմադրության յուրաքանչյուր խոսքի հետևում թաքնված հեթանոսական սովորություն, ծես, անեծք կամ օրհնանք էի տեսնում։ Օձի խայթվումից բուժումը ես, հավանաբար, հեթանոսական հին սրբավայրից էր մնացել, որը յուրացնելու փորձ էին արել քրիստոնյա հայրերը։

1007 թվականին Շահանգուխտի որդին՝ Սևադան, վանքի համալիրին ավելացնում է ս. Կարապետ կենտրոնագմբեթ տաճարն ու գավիթը, որտեղ և գտնվում են մոր և որդու տապանաքարերը։ Վանքի հետ է կապվում Գրիգոր Տաթևացու անունը, որն այստեղ 1386 թ. լատիներենից թարգմանել է Պետրոս Արագոնացու «Իրք առաքինությունները» և նվիրել այն իր ուսուցչապետին։ Վաղատնում է ծնվել միջնադարի խոշորագույն մտավորականներից մեկը՝ Հովհաննես Որոտնեցին։

Որոտանի Լորաձոր վտակի հոսանքն ի վեր շարունակելիս մեր առջև բաց հովտում մի նորաշեն գլուզ է հայտնվել։ Դա հնում Շվիտեր, այժմ Դուրբաս գլուզն է։ Հեշտությունմբ գտա 90-ամյա Մովսես Անդրեասյանի տունը։ Տան շեմին մի ամրակազմ, 60-ին մոտ մարդու հանդիպելով, խնդրեցի, որ Մովսես հայրիկին ցույց տա։

— Պա յիս ըմ լի... — ասաց նա:

— Դո՞ւք... անցյալ դարի ծնունդ... — տարակուսած արտաբերեցիք ես: Դեմքը լցվեց լայն ժպիտով: — Ես մեր մեծ վիպասան Բաֆֆիով եմ հետաքրքրվում, ասում են, որ նրա հետ անախորժ դեպք է պատահել ձեր գյուղում:

— Ձէ, Բաֆֆու հետ ոչ մի բան էլ չի պատահել, — կտրուկ պատասխանեց նա, — այդ մասին ես ոչինչ չեմ լսել: Նա մեր գյուղում չի եղել:

Զգացի, որ սխալ տեղից եմ սկսել ու գյուղի հին ավանդություններից, նրա գերզաստանից հարցրի: Մովսես Անդրեասյանի նախնիները Ղարաբաղից են գաղթել: Հարեան գյուղերում գեոնս կենդանի են դարբասցիների մասին տարբեր դրույցներ ու ավանդույթներ, որոնցից մեկը գրի էր առել Ս. Լալայանը. «Տեղական առասպելն ասում է, թե մի անգամ, երբ Մովսես Մարգարեն գնում է աստծո մոտ, արջը դիմում է նրան, որ Աստծուն խնդրի իրեն մարդ դարձնել: Վերագարձին Մովսես Մարգարեն հայտնեց արջին, թե խնդրը հարգված է, միայն դարբասցի պիտի դառնայ:

— Դեհ, որ դարբասցի պիտի դառնամ, — պատասխանում է արջը, — էլ ինչի եմ մարդ դառնում»:

Զրույցը մտերմիկ բնույթ կրեց, ու ես հանկարծ հարցրի.

— Մովսես ապիւր, ասում են, շատ շուտ, դեռ դու ծնված չէիր, ձեր գյուղում մի օտարական են ծեծել: Ի՞նչ է եղել դա:

— Դե, դա հին գյուղում էր, հիմա մենք տեղափոխել ենք գյուղը: Գյուղի ծայրին Աբղարենց խաչու տունն էր, էս օտարականը գիշերը գյուղ է հասնում ու գիշերելու նպատակով էլ տնեցիներին չի դիմում, ուղիղ նրանց գոմն է մտնում: Առավոտյան ծեղին էս խաչու կինը, որ կովերը կթելու էր եկել, տեսնում է ակնոցավոր, բեղ ու մորուքով տարօրինակ օտարականին, կարծում է՝ գող է, որը անասունները տանելու նպատակով է գոմը մտել, ձենը գլուխն է գցում, ծվծվում:

— Գողը, գողը, եկե՛ք, հասե՛ք...

Կանայք, տղամարդիկ թիերը ձեռքներին հասնում են ու սկսում ծեծել էս մարդուն: Նա էլ ասում էր.

— Ճամփորդ եմ, այ մարդիկ, ինձեից ի՞նչ գող, ձեզ չեմ ուզեցել եկղուրյուն տալ, գոմում եմ գիշերել...

— Բաֆֆին է եղել այդ օտարականը, — ասացի ես:

— Հա, ասում են՝ Բաֆֆին էր, — մեղավոր տոնով ասաց Մովսեսն ու գլուխը կախեց:

Միսիանում վաղ միջնադարի ամենանշանավոր ճարտարապետական կոթողներից մեկը՝ Մկրտիչ եկեղեցին զննելուց հետո ծանոթացա բա-

րագործ Աշոտ Միմոնյանին, որը վանքից ոչ հեռու թեթուխյան վրա իր որդու համար արտասովոր գեղեցիկ տուն էր կառուցում:

— Հոխիսիմեատիպ այս հին կոթողի կողքին այլ կերպ չի էլ կարելի կառուցել, — ասաց նա, և իր տուն առաջնորդեց: Տանը յուզաների կտավների էին կախված՝ բնապատկերներ, դիմանկարներ, առասպելական տեսարաններ, որոնց հեղինակը ինքն էր:

— Դե որ Բաֆֆիով ես հետաքրքրվում, հենց նրա հետ առնչվող մի առասպել պատմեմ, որի ստեղծողը Միսիանի ժողովուրդն է, — ասաց վարպետը, — Դարբաս գյուղում Բաֆֆին ուր գնում, ում դիմում է՝ չե՞ն ընդունում: Գյուղից դուրս է գալիս ու պատահում արջին: Բարև է տալիս ու հարցնում:

— Որտեղի՞ց ես գալիս:

— Լծեն գյուղից, — պատասխանում է արջը:

— Ինչո՞ւ չես այնտեղ ապրում, — հարցնում է Բաֆֆին:

— Այնտեղ չի լինի ապրել, — դժգոհ ասում է արջը:

— Ավելի լավ է հետ դառնաս, գնաս Լծեն, քան թե Դարբասում բնակվես, — խորհուրդ է տալիս Բաֆֆին:

Պարզվում է, որ Աշոտ Միմոնյանի հետաքրքրությունները գեղանկարչությանը ու շինարարությանը չեն ավարտվում:

— Ես հաճախ եմ հեռուստատեսությանը «Մեր լեզուն, մեր խոսքը» հաղորդումը նայում ու որոշ դիտողություններ ունեմ, — ասում է նա, — օրինակ, «գարմայր» բառը այնտեղ գեղեցիկ, զարմանալի այր են բացատրում, իսկ իրականում «գարմով այրն է»: «Հրակնատ» բառի մեջ «ատ» մասնիկը հատվածն է, ակը՝ խոտը, աչքը: «Գարշապար» բառը գարշելի մասն է պատկերում, մարմնի հոտ արձակող մասը, Արարատը՝ արար-աշխարհից կտրված լինելն է պատկերում, իսկ Երևանը՝ էրի ավանն է: — Հավանաբար, դիտնականները անմիջապես ժխտեն՝ թե գիտական չէ, բայց սրանք ինձ հետաքրքիր թվացին հենց միայն գյուղացու կերպարը լրացնելու իմաստով:

— Գրեցե՞ք հաղորդաշարի հեղինակին, — ասացի ես, — գուցե նա կհրապարակի ձեր բացատրությունները:

մինչև 1926 թվականին սայլով Քավրիզ գնացինք, այնտեղից էլ Հաստան եկանք: Մեր ընտանիքից միայն ես փրկվեցի: Այժմ վաստակավոր ուսուցիչ եմ, ընտանիք, թոռներ ունեմ:

93-ամյա Արտո Բալյանը, հակառակ իր դարբասցի հասակակցի, շրջապատված չէր թոռ ու ծոռներով, այլ խոր ծերությունը միայնակ էր ապրում:

Նա փորձում էր պատին մեխով նկար ամրացնել, որը նրան ոչ մի կերպ չէր հաջողվում: Գլուխը շատ էր մոտեցրել պատին, իսկ այդպես մուրճի հարվածին հսկելը անհնար էր: Մուրճը վերցրի ձեռքից:

— Ո՞ւմ նկարն ես կախում պատից, հայրիկ,— հարցրի ես, թեպետ գիտեի, որ հազիվ թե գտնվեր մի հայ, որը այս լուսանկարի մեջ չճանաչեր մեր ազգային ամենասիրելի հերոսներից մեկին՝ զորավար Անդրանիկին:

— Իմ հրամանատարի,— պատասխանեց ծերունին:

Մյուս պատին երիտասարդ զինվորականի լուսանկար էր կախված:

— Սա էլ Պողոս Տեր-Դավթյանն է: Ստեփան Շահումյանն է նրան Բաքվից մեր կողմերն ուղարկել:

— Գյուղում ամենամեծը դո՞ւ ես, Արտո հայրիկ,— հարցրի ես:

— Հա, ես եմ մեծը, մեկ էլ Մաթոսանց Կոստանդր: Նա ինձնից 4 տարով մեծ է,— ասաց Արտո Բալյանը և առանց իմ նոր հարցին սպասելու շարունակեց,— երբ Անդրանիկը եկավ մեր կողմերը, ես Անգեղակոթում գիրք էի պահում: Զորավարը հավաքեց մեզ, թե՛ «Մխիթանի ժողովուրդ, հանձնվո՞ւմ եք Սուլթանովին», պատասխանեցինք՝ «Ո՞չ, կըռվելու ենք»:

— Դա Շուշիի եղեռնը կազմակերպած նույն քալբաջարցի քուրդը չե՞՞:

— Հա, նույնն է, իր ավազակ եղբոր հետ տասնյակ հայկական գյուղեր ավերեց: Անդրանիկն ասաց, թե՛ «Պայմանագիր կա, ըստ որի զուրպետը է 100 հեծյալ տաք, որ Շահումյանին օգնության հասնեմ»: Եվ ասաց. «Ես գնացի, զուր ղոշող կացեք»: Անդրանիկը երեք թնդանոթ էր բերել Մխիթան և Սերս գյուղից թոփշի Միմոնին: Քաշալ սարի կողմից 35 հազար թուրքեր էին եկել, բռնել Մխիթանը: Տեր-Դավթյանն էր ղեկավարում պաշտպանությունը: Գիշերը լճակի մոտ ես մի մարդ բռնեցի: Ասում եմ՝ «Ո՞վ ես, ո՞ւր ես գնում», թե՛ «Քուրդ եմ»: Հրամանատարի մոտ եմ տանում: Պարզվում է, որ թշնամու սուրհանդակն է, Նախիջևան է

գնում, որ նրանց զորքն էլ մեր դեմ բերի: Մենք Բրուսի ձորում էինք դիրք բռնել: Երբ մեր թոփը խփեց, թուրքերի մեջ խուճապ ընկավ: Մեր հրամանատարը ձեռքից վիրավորվեց: Թուրքերն ուզում էին մեզ կոտորեն, հետո խորհրդային իշխանության վրա գնան, բայց դեմն առնաքի՛ թ գնդացիք խլեցինք: Դրանք թուրքի «գիկի դիվիզիան» էր խլել ուսաներից: Շամխորի մոտ հանկարծակի հարձակվել էին Ղարսից, Սարիղամիշից վերադարձող ուս զինվորների վրա, բոլորին կոտորել ու վերցրել զենքը: Հետո Հաջի Խալիլի կարգադրությամբ Նախիջևանից մի ջոկատ եկավ, դրանց էլ բռնեցինք: Այդ կովում Տեր-Դավթյանը վիրավորվեց: Շատ ճարպիկ, գիտակից մարդ էր, իսկական հեղափոխական:

— Արտո հայրիկ, իսկ Բաֆֆու մասին ի՞նչ գիտես: Մեծ մարդիկ պատմած կլինեն:

— Հա՛, լսել եմ: Ուրեմն մեր կեկոնցու մոտ գյուղացիների հետ գրուցում է, հնությունից հարցնում: Խաչի Աղաջանը կասկածելով, ասում է՝ «էս մարդը հենց ա Բաֆֆին լինի...»: Բաֆֆին լսում է, ժպտում, թե՛ «Զէ՛, չէ՛, ես Բաֆֆին չեմ, ես Մելիք-Հակոբյանն եմ»: Հնավայրերը տեսնելուց, գյուղի մեծերի հետ զրուցելուց հետո Բաֆֆին Խաչու տանն է հյուրընկալվում: Քուրսու ժամանակ է լինում: Մոթալի պանիր, ձու, թոնիրի ճաշ են հյուրասիրում: Առավոտյան ճանապարհվում է: Սալվարդ տանող ճանապարհին Մեծ աղբյուրի մոտ Բոնակոթ գնացող մի մարդ է հանդիպում, նստում են, հաց ուտում: Բաժանվելիս Բաֆֆին պատվիրում է, թե՛ «Կզնաս, կգտնես բռնակոթցի Խաչանին, կասես՝ «Լավ էիր բռնել Բաֆֆուն, բայց ձեռքիցդ բաց ընկավ»: Էս մեր Խաչին հենց լսում է, խկույն Սալվարդ է մեկնում, այնտեղ էլ հանդիպում իր սիրելի գրողին ու նեղացած ասում. «Ինչո՞ւ ինձ շասացիր, որ Բաֆֆին ես»: Գրկախառնվում են: Խաչին ասում է. «Քո գրքերը կարդալիս քեզ այլ կերպ էի պատկերացնում, դրա համար էլ չճանաչեցի, չնայած խոսքերդ գրածիդ շատ էին նման»: Բաֆֆին Սալվարդ գյուղում երկու օր մնում է, հետո Բիշնապ (հնում՝ Միջնակ) լեռնանցքով դեպի Նախիջևան գնում:

Լեռց ծերունին, զուլխը թեքեց, մտածմունքի մեջ ընկավ, ապա ասաց.

— Էսքանը, էլ ուրիշ բան չեմ լսել:

— Հայրիկ,— ասացի ես,— հարազատներ շունե՞ս:

— Ունեմ,— ուշացումով, առանց ինձ նայելու պատասխանեց նա, տխուր ու թախծոտ հայացքը ինձ հռոնց,— ունեմ, դասախոս է Երևանի մանկավարժականում...— Հա, մի բան էլ հիշեցի,— աշխույժով ասաց ծերունին,— պատմում էին, որ Խաչին ճանապարհել է մինչև Միջնակ լեռան դեպի Նախիջևան թեքվող երեսին գտնվող հին աղբյուրը, որի վրա խաչքար է դրված եղել: Զուր են խմել աղբյուրից ու բաժանվել:

Ս. Բարխուդարյանը հիշատակում է աղբյուրի վրա կանգնեցրած Խաչքարի արձանագրությունը. «ՇԼԳ, (1084 թ.) ԿԱՆԳՆԱՔ Ի ՅԻՇԱՏԱԿ ԱՎԱԿԱՅ ԵՎ ՄԱՐԵՄԱՅ»: Հինավուրց աղբյուրը այժմ քանդված է, խաչքարը՝ ցարդված: Ոչ հեռվում կառուցած խորտկարանը վերացրել է հնություն հետքերը:

ՇԵ. ԵՐՆՁԱԿ

Նախիջևանի և Զուլֆայի միջև, ճանապարհի հյուսիսային կողմում մի հսկա լեռ նկատեցի: Սուր, ատամնաձև սեպերով հսկա ապառաժ էր: Հիշեցի Սաքսոնական Շվեյցարիայում հսկա ապառաժը, որը լեռնադնացների համար ուխտավայրի էր վերածվել: Գերմանացի ընկերներս ցույց տվեցին գիրքը, որտեղ նկարագրված էր քարն ու այն բարձրանալու ուղիները ու հաղթահարելու տեխնիկական ձևերը: Դրված էր նաև, թե որ կողմից, երբ և ով է առաջինը հաղթահարել այն: Ընկերներին ընտրած ուղին 150 տարի առաջ ոմն էդերման էր հաղթահարել: Իսկ այս ապառաժը ինչո՞վ է պահպան Սաքսոնական Շվեյցարիայի քարից, որ նրա վրա ոչ մի մարդիկ չի մագլցում, ոչ որ նրա մասին գիրք չի գրում, հեշտ ու դժվար մագլցելու ուղիները նկարագրում: Սաքսոնական ապառաժի վրա հազարավոր օդակներ կան սեպված: Իսկ այստեղ արծիվներն են տիրություն անում: Իրար միջև բաժանել են ապառաժները ու ամեն մեկը իր դիրքից ներքևի դաշտն է հսկում:

Մարդիկ էլ են լեռները բաժանում:

— Սա մերն է, — ամբողջ հողով մրմնջում էր վախվորած անցորդը, — իմ պապիքինը:

— Սա արդեն իմն է, — ուրախությամբ ճշում է մեկ ուրիշը, — ու հիմա էլ կասեմ ի լուր աշխարհի, որ միշտ էլ իմն էր, և ոչ թե այս պատերազմներինը:

Ասորին, հելլենը, հուսեացին, արաբը, սելջուկը, մոնղոլը, պարսիկն ու թուրքը եկել են, նայել, հպարտությամբ գոռացել:

— Իմն է...

Բայց լեռների կրծքում ապրող մարդիկ, որոնք հավերժ այս լեռան հետ են եղել ու այլ կերպ չեն էլ պատկերացրել, երբեք կարիք չեն ունեցել գոռալու, համոզելու, որ իրենցն է: Այս լեռը իրենց հետ է ծնվել:

Անգլիացի ճանապարհորդ Ջոն Նիուբերին 1578 թվականին այստեղով անցնելիս գրել է. «5-րդ օրը Զուլֆայից մեկնեցինք և միևնույն օրը իրանեցիներ մի լավ քաղաք՝ կոչված Նախիջևան, որ մեծ քանակությամբ

կենսամթերք ունի և, մասնավորապես, խաղող, և նույնպես ունի մետաքս: Եվ Զուլֆայի ու այս քաղաքի միջև կա մի շատ բարձր կլոր ժայռ, շատ նման մի ամբողջի»:

Այդ բարձր ապառաժը հայոց հռչակավոր Երնջակ բերդն է, որն այժմ աղավաղված ձևով Ալինջա-կայա են կոչում: Բերդի մասին մանրամասն տեղեկություն է տալիս Ստ. Օրբելյանը. «Իսկ նույն (Սիսակի սերնդի) նահապետների կանանցից մեկը՝ Երնջիկ անունով, շինում է խիստ անմատչելի Երնջակ ամրոցը, և իր անունով դավառն ու բերդը կոչվում են Երնջակ: Բերդում տեղադրում են նաև նահանգի գանձերի և հարկերի տունը»: Ըստ երևույթին, սա պարզապես շատ հին ավանդություն է, որ գրի է առել պատմիչը: Դժվար չէ Երնջակ անվան մեջ տեսնել «Երինջ» բառը «ակ» փոքրացնող ու փաղաքշական վերջածանցով: Հավանաբար, շրջանի ու բերդի անունը էթնիկական ծագում ունի և կապվում է 3—4 հազար տարի առաջ ապրած հայոց նախնիների հետ: Բերդը հազար ու մի ձևի, տեսքի ասպատակիչներ, պաշարողներ է տեսել: Պարզվում է, որ բերդը իր անմատչելի տեղերից մագլցողներ էլ է ունեցել: Օրբելյանը նկարագրելով 913 թվականին արաբ էմիր Յուսուֆի կողմից Երնջակի պաշարումը, գրում է, որ բերդը գրավում է դիշերը «Երկաթե ճանկերի հարմարեցումով անմատչելի ժայռերը մագլցող անձավամուտ և քարազնաց մարդկանց միջոցով»:

Երնջակին տիրել է նաև Դավիթ-Բեկը:

Ճանապարհի ճախ կողմում Հին Զուլան է: Ըստ Լեոյի Զուլան 12 հազար բնակիչ ուներ և 7 հեկտեցի: Զուլայի բնակիչները անեցիներ էին, որոնք այստեղ էին տեղափոխվել հայոց մեծ մայրաքաղաքի անկումից հետո, իրենց հետ բերելով Անիի կուլտուրան, արվեստը, մշակույթը, ստեղծագործական հանճարը: Անցնում եմ Զուլայի մոտով ու վերհիշում Առաքել Դավրիժեցու նկարագրած Շահ-Աբասին 1604 թվականի շքեղ դիմավորումն ու հյուրասիրությունը: Պարսիկ Շահ-Աբասը, ընդամենը Զուլայի հայությունն ստեղծագործ ուժով և անկողնով, մտադրվում է այս ամենը իր երկիրը տեղափոխել: Հենց այդ ընդունելությունն էլ, հակառակ սպասածի, տոթի եղավ Իրանի տիրող սոսկալի վճռին՝ Զուլայի, Արարատյան դաշտի և Ղարաբաղի հայության մի մասի բռնի գաղթը Պարսկաստան: «Հին, պատմյալ Իրանը, հաղիվ մի փոքր կենդանության ուժ հավաքելով իր թևերի մեջ, իր վերջին ահեղ հարվածն էր տալիս Հայաստանին...»

Ստեփանոս վարդապետը՝ այս իրադարձության ականատեսը, գրում է՝

Աչքս կուրանար, շինքս կտարուեր,
Ինզն Հայաստան, թեղ լսպես լեռաներ,

Քե մեռած էի, ինձ երանի էր,
Քան թե կենդանի այքս բան տեսներ:

Ջուղայեցիների արվեստը շմեռավ: Դրա վառ ապացույցն էր թեկուզ 1660 թվականին Սպահանի հայ առևտրական ընկերության ներկայացուցիչ, հայտնի վաճառական Խոջա Զաքար Սահրադյանի կողմից Ալեքսեյ Միխայլովիչ Յարին նվիրած ադամանդակուռ բազկաթողը ի նշան հայերի և ռուսների «Ք քրիստոս եղբայրութեան և ռուս միապետների կողմից քրիստոնեա ժողովուրդներին ցուցաբերվող հովանավորութեան»: Բազկաթոռն այժմ պահվում է Կրեմլի գինապալատում: Խեղճ հայեր, թագավոր չունեին, որ նրա համար էլ նման մի գահաթոռ պատրաստեին:

Սակայն, ինչպես Բաֆֆին է ասում՝ պատմությունը կրկնվում է: 300 տարի հետո այն կրկնվեց, այս անգամ արգեն օսմանյան Թուրքիայի ձեռքով:

— Ջուղան այս կողմում է,— դիմեցի հետևի նստարանին նստած տարեց կնոջը:

— Հա՛, տղա ջան,— պատասխանեց նա,— ինքս Ջուղայից եմ: Քեզ ի՞նչն է հետաքրքրում:

— Ամեն ինչ: Հին գերեզմանոցը:

— Է՛, գերեզմանոցը... մարդս մեռավ՝ չթողեցին մեր գերեզմանոցում թաղենք:

— Ինչո՞ւ:

— Ասում են՝ վերևի հայոց գյուղերը տար, ուր ուզում ես՝ տար, այստեղ չենք թողնում:

Գե ինչ, Գ. Ախունդովի, աղբբեջանական մյուս գիտնականների ձեռնարկած գործը իրականանում է: Որոշ ժամանակ անց կասեն՝ տեսեք, հայերից ոչ ոք այստեղ գերեզման չունի, որովհետև հին Ջուղան այրահական է, ուրեմն և՛ աղբբեջանական: Ախունդովի, Բունիաթովի, Գեյուշևի և մյուսների նման գիտնականների համար Կովկասյան Ալբանիայի Քուռ գետի երկայնքով ձգվող սահմանները արդեն այնքան «առածգական» են դարձրել, որ ձգելով կարելի է ոչ միայն մեծ Հայքի ողջ տարածքը իրենց մեջ առնել, այլև մինչև Բեյրութ, Կահիրե, Լոս Անջելես էլ հասցնել:

Քիչ հետո երևում է Ջուլֆա քաղաքը: 1603 թվականին ճանապարհորդ Ջոն Փարթրայը լինելով Ջուլֆայում, գրում է, որ այն առևտրական կենտրոն էր և 10 հազար հայ բնակիչ ուներ: Նշում էր քարաշեն և գեղեցիկ տները: Ազուլխի երկսես ղարոցի ուսուցիչ նշանակված Բաֆֆին 1877 թվականի հոկտեմբերին Ջուլֆա է գալիս, որպեսզի դիմավորի Քավրիցից այստեղ եկող իր ընտանիքի անդամներին: Սակայն բռնկված

ժախտախտի պատճառով Ջուլֆան մեկուսացվում է, և Բաֆֆին ստիպված 15 օր մնում է Ջուլֆայում: Այդ օրերին քաղաքը լցված էր Արևմտահայաստանից եկած հայ փախստականներով, որոնց հետ զրուցելով, վիպասանը գրի էր առել Աղբբեջի ու Ջալալեդդինի ավազակաբարո ցեղակիցների արշավանքների մանրամասները: Այստեղ էլ ծնունդ առավ «Ջալալեդդին» վեպը:

«Եվ թող անխճյալ լինեն երանք, որ սովորեցրին մեզ բարի լինել, Բեազանդ լինել, Բամբերոդ լինել...»

Բաֆֆին լսում էր փախստականներին, մտովի ճանապարհորդում հայոց այրվող, թալանվող բնակավայրերով: Ձեռքի գրիչը սուր էր գառնում Սահրատի ձեռքին, փորձում ազատագրել Հայաստանը:

ԾՁ. ԱՁԱ

Ավտորուսի մեջ տեղս խիստ անհարմար էր շրջալստը զննելու համար, ու չնկատեցի դեպի գյուղը թեքվող ճանապարհի ցուցանակը: Հույսս կապել էի բարակ-երկար վզով ու զարմանալիորեն փոքր գլուխ ունեցող մարդու հետ, որը դեռևս ավտոկայանում խոստացավ նախապես զգուշացնել Աղա հասնելու մասին: Կասկածելով, որ անցել ենք, հարցրի հարևանիս: Փոքրիկ գլուխը ափսոսանքով թափահարեց, որը ներդռոթյան պես մի բան էր արտահայտում: Խորհուրդ տվեց Օրդուբադ հասնել ու այնտեղից ավտորուսով հետ գալ: Բայց ես ցած իջա: Քայլելն ու մտածելը ավելի լավ է: Յ կմ ճանապարհը առողջարար է, մանավանդ, որ քայլելու կարելի էմ զգում: Երկու կողմում չոր ու ամառի բլուրներ են: Ավտոմեքենաները սրբնթաց անցնում էին: Նայում էի կտրտված, մաշված լեռներին: Հողմը, անձրևը անընդհատ փոփոխում են նրանց տեսքը, պլաստիկական նոր ձևեր տալիս:

Վերևից արևը այրում էր ամեն ինչ: Ազուլխի ճանապարհը Բաֆֆին ևս այս տափաստանով էր անցել ու տեսել այս ամենը: Դա սփոփիչ հանգամանք էր: Տարբերությունն այն էր, որ անձրևոտ օր էր, իսկ աֆալտի փոխարեն՝ փշոտ ճանապարհ:

«Երիտասարդը (իշխան Շահումյանը) էլում էր իր ձի՞ն ետեքին Օրդուբադ տանող ճանապարհով և այնքան զբաղված էր իր մտքերով, որ կարծես չէր նկատում անձրևի տաքափը, որ մանր, փոշիանման կարիկներով մաղվում էր երա վրա»:

Թեքվեցի գյուղ տանող ճանապարհով: Պողատու ծառեր հայտնվեցին: Մարալս մարելու համար շուր փնտրեցի: Հագիվ մի շուր գտա, որը վեց տեղից կտցահարված էր: Ուշ գարնան անապատից ցրտահարու-

Յունը այստեղ ևս արել էր իր սև գործը: Թռչունների համար ևս աղետաբեր տարի էր սպասվում: Գիւան (Գողթն) գետի վրա հնգադամար հինավուրց կամուրջը Ազա գյուղը կապում է Գերի (տերտեր) հետ: Կամուրջ բառն այստեղ իրոք արդարացվում էր գեղեցիկ կամարաշարով: Բարձունքի վրա երևում էր պաշտամունքային շինութիւն հետք: Բարձունքը պատած էր վարդագույն հսկա սալաքարերով: Գյուղի տները հիմնականում հում աղյուսից էին կառուցված: Երբեմն քարաշին տներ էին հանդիպում: Աղբրեջանցի երեխաներից վարորդ Սպարտակի տան տեղը հարցրի: Մի երիտասարդ կնոջ ցույց տալով ասացին, որ վարորդի կինն է: Կատյան տուն առաջնորդեց: Աղյուսաշին տուն էր, որին խողովակասյունաշարերով սրահ էր ավելացվել: Սպարտակի մայրը՝ 75-ամյա Վարսենիկը նրատած թախտին թոռներով էր զբաղված: Նա պատմեց, որ ավագ որդին ու աղջիկները հեռացել են գյուղից և Երևանում են բնակվում, իսկ կրտսերը՝ Սպարտակը գյուղում է մնացել:

— Գյուղը դատարկվեց, — գառնութիւյամբ ասաց նա, — բոլորը Գերթով վաճառեցին տներն ու Երևան գնացին: Թի այնտեղ ինչ են գտնում, չեմ հասկանում: Մի անգամ որդուս տուն գնացի, քիչ էր մնում շունչս կտրվեր. 5-րդ հարկում ապրել կլինի՞: Էս մի տղայիս աչքն էլ Երևանի վրա է: Հազիվ ենք պահում: Մեր դպրոցի դիրեկտոր Արտավազը Սուխանյանը, որը 30 տարի հայկական դպրոց էր պահել, փայփայել, հանկարծ իր տները վաճառեց Սալեհին ու Երևան մեկնեց: Գյուղի ամենաշքեղ տունն էր՝ բաղնիքով, խոհանոցով, նկուղով, մեծ այգիով: Տան նոր տեքը ճանապարհելիս ասաց, թե՝ «Եթե փոշմանես, կգաս, կեսը կդիջեմ ու հարևան-հարևան կապրենք, քո տունն է, չէ՞»: Մի տարի շանցած Արտավազը հետ եկավ: Սալեհի կինը դարպասից ներս շրջեց: Թե՛ չեմ ճանաչում քեզ: Արտավազը կրկնակի փող առաջարկեց: Տան նոր տեքը ծաղրեց, թե՛ «Այս տանը որ միլիոն էլ տաս՝ չեմ դիջի, սա գին շունի»: Ենդ՛ մարդը մի տարի էլ չապրեց, կարոտից մեռավ: Իմ հասակակիցներից ով գնացել է, չի դիմացել, մահացել է: Ես առանց մեր գյուղի մի ամիս էլ չեմ մնա: Գերեցի Արտո Հակոբյանը իր տունը ծախեց ու գնաց: Կամրջի մոտ էր տունը: Երկու ամիս հետո վերադարձել էր, կամրջի բազրիքին նստել ու իր տանն էր նայում: Կարոտից գծվեց խեղճ մարդը: Գիշեր-ցերեկ աչքը չէր կտրում իր տնից: Կամրջի վրա էլ հանկարծամահ էր եղել: Վերին գյուղերում աղբրեջանցիները հիմա հայերի տները շին էլ գնում: Ասում են՝ ինչո՞ւ գնենք: Երբ միևնույն է, թողնելու եք, հեռանաք: Զրի կվերցնենք: Եստեքը առանց կոպեկ անգամ ծախսելու տան տեք են գառնում:

Մերենյան հոնգաց ու արգելակեց տան մոտ:

— Սպարտակը եկավ, — ասաց Կատյան:

Ցրիվ մազերով, ամրակազմ 40-ամյա տղամարդ էր: Արագ մեր զրույցի մեջ մտավ:

— Էհ, մի երեք տարի հետո էլ ես եմ գնալու գյուղից: Սա կյանք չէ: Կիրակի օրն էլ եմ աշխատում: Հանգիստ չկա: Գաշտից ցորեն տեղափոխելը պրծանք, շունչ չթաշած՝ տուկավորման են ուղարկել: Հիմա ծզոտ եմ տեղափոխում:

— Բայց ծնողներդ չեն ուզում, — ասացի ես:

— Դե, նրանց պատճառով եմ մնացել:

Սպարտակը երեք տարի ժամանակ է տվել ծնողներին:

— Տունը չեմ կառուցում, — ասաց նա, — ո՞ւմ համար կառուցեմ: Վաճառելու՞ համար: Ոչինչ չեմ անի: — Գարձավ կնոջը, — մի նիհար, բարակ տղա շեկավ, պետք է տախտակ բերեր...

— Մեր դպրոցում այս տարի առաջին դասարան է բացվելու, — ասաց Կատյան, — յոթ տարեկան մի 4—5 երեխա կա գյուղում: Բիստի, Փարակայի, Ցղնայի դպրոցները երեք տարի առաջ են փակվել:

Կատյան ինձ պատմութիւն ուսուցիչ Սահակ Մնացականյանի տուն առաջնորդեց:

— Տնտեսութիւնում հաշվապահ էի աշխատում, — ճանապարհին ասաց նա, — մեր զեկավարները շատ փող էին կերել և ուզում էին ամեն ինչ ինձ վրա բարդել: Թողեցի ու դուրս եկա: Հիմա դպրոցում եմ աշխատում:

Ս. Մնացականյանը 60-ին մոտ, ամրակազմ մարդ էր, որը իր տարիքից շատ ավելի երիտասարդ էր երևում: Կինը՝ ուսուցչուհի Սիրանուշ Մուրադյանը գոմեշի մածուն դրեց սեղանին: Զրուցում եմ ու մածուն ճաշակում: Թվում է՝ մածուն ու մածուցիկ բառերը գոմեշի մածնից են գոյացել:

— Ի՞նչն է պատճառը, — հարցրի ես, — ինչո՞ւ նախիջևանցի, գողթների հայերը լքեցին իրենց պապենական երկիրը:

— Ինչքան դատում եմ, — ասաց Սահակը, — պատճառը գյուղերի նկատմամբ սխալ քաղաքականութիւնն էր: Գյուղացուն յիարժեք աշխատելու և եկամուտ ունենալու հնարավորութիւն չեն տալիս:

— Իսկ հիմա՞:

Մեր տնտեսութիւնում մարդիկ կան, որոնք պայմանագրով հող են վերցրել, տարեկան 5—6 հազար ռուբլի եկամուտ ունեն: Տղաներիս տուն եմ՝ թողնեք ամեն ինչ ու գյուղ եկեք. հող վերցնենք ու մշակենք: Թողը գնացողներն էլ Երևանում բանվորութիւն են անում: Տո, ասում եմ՝ ի՞նչ տարբերութիւն, արի, քո հայրենի գյուղում այդ բանվորութիւնն արա: Համ հայրենիքդ կպահես, համ էլ առողջութիւնդ տեղը կլինի:

— 1967 թվականին մեր դպրոցի առաջին դասարանում ինձ հետ 25 հոգի էին սովորում,— ասաց Կարենը՝ Սահակի կրտսեր որդին, որն ինժեներ էր երևանյան գործարաններից մեկում և այժմ արձակուրդի մեջ էր,— իսկ 1977 թվականին տասներորդը 4 հոգով ավարտեցինք:

— 15 տարի առաջ մեր դպրոցում 30 աշակերտից պակաս դասարան չկար, իսկ հիմա ամեն դասարանին երկու աշակերտ է հասնում,— Կարենին լրացրեց հայրը,— երբեմնի հայաշատ գյուղում հայկական 40 տուն է մնացել, աղբբեղանական 1000 տան դիմաց:

Սահակի հետ դուրս եկա գյուղում գրոսնելու:

— Ահա գետի ջուրը հոսում է անօգուտ,— կամբջով անցնելիս ասաց ուղեկիցս,— զոնն ջրամբար կառուցեին, որ ջուր ունենանք, տանջվում ենք, ոչ ոք չի հոգում: Ամռանը ողջ 2 ամիս ջուր չի լինում:

Պատմական Հայաստանի առևտրական ճանապարհին կարևոր դեր խաղացած այս հրաշագեղ կամուրջը ինժեներական ու ճարտարապետական ուշադրով կոթող է: Կառուցման թվականը հայտնի չէ, բայց վերակառուցվել է 17-րդ դարում, ապա, ինչպես Ղ. Ալիշանն է վկայում, 19-րդ դարում վերանորոգել է ազուլիսցի Ավետ Տեր-Մկրտչյանը:

— Կամուրջը ազուլիսցի Ավետիս աղան էր 1848 թվականին կառուցել տվել: Վարպետը մեր գյուղացի Արմենակն էր: Աբրահամ պապն էլ էր մասնակցել կառույցին: Նա 114 տարի ապրեց: Ողջ շաղխը ձվով էին պատրաստում: Ավետիք աղան հատուկ օղակ էր պատրաստել, ու եթե ձուն անցնում էր օղակով, այն չէին գնում:

— Իսկ Անդրանիկը եղե՞լ է ձեր գյուղում:

— Ինչպես չէ,— աշխուժացավ ուղեկիցս,— տեր Փաղևոսի տանն էր մնացել: Մայրս՝ Հայկանուշը, որը 1981 թվականին 90 տարեկան հասակում մահացավ, պատմում էր, որ Անդրանիկի Մյունիք գնալուց հետո Զուլֆալից թուրքերը Դերի վրա հարձակվեցին: Հարևան գյուղից մեկը եկավ, նախօրոք զգուշացրեց այդ մասին: Ժողովրդի մի մասը Կապուտջուղով Զանգեզուր փախավ: Այնքան բարձր էր տեղը, որ ինքնանուր չէր ետում: Շատերը շղիմացան օդի նոսրությանը: Մյուսները Յղևա, Փարակա փախան: Ասում էին՝ հունձի ժամանակ էր: Դերը հրդեհի մատնեցին, ավերեցին ամեն ինչ: Երբ մարդիկ հետ եկան, տեսան 114-ամյա Աբրահամին էլ են սպանել: Վեց ամիս ազացիները դիմադրեցին թշնամուն: Թուրքերը Դարդանել էին ասում Ազալին, որին ոչ մի կերպ չէին կարողանում հաղթել:

Անցանք կամուրջն ու քայլեցինք Դեր գյուղի փողոցներով: Ուղեկիցս այնուհետև պատմեց, որ դերեցիք ամենևին էլ համաձայն չեն Արամ Խաչատրյանի կենսագիրների հետ, որոնք մեծ կոմպոզիտորի ծննդավայրը

համառորեն Վրաստանի մայրաքաղաք են տեղափոխում: Երա հարազատները պնդում են, որ Արամը այս գյուղում է ծնվել, 5 տարեկան դառնալուց հետո նոր միայն ընտանիքը Քրիլիսի է տեղափոխվել:

Երբ հետ՝ Ազա եկանք, զստամյալ մի մարդ, կորացած, փորձում էր մեծ կապոցը տան մուտքից ներս մտցնել, որը նրան ոչ մի կերպ չէր հաջողվում: Այդ պահին նա իրենից շատ անգամ մեծ բեռ կրող մրջյունի էր նման, որը փորձում էր փոքրիկ անցքով ներս տանել այն: Օգնեցի ծերունուն: Նայեցի աչքերին. տխրության, մենության ծով էր...

— Մամիկոն հայրիկը 90 տարեկան է, մեն-մենակ է մնացել: Ասենք, մի արտաոց բան չկա դրանում,— ասաց Սահակը:

ԾԷ. ԱԳՈՒԼԻՍ

Մերկ, ապառաժոտ ու անշունչ լեռների արանքում հանկարծ օազիսներ են հայտնվում: Ես արդեն փորձում եմ պատկերացնել Ազուլիսը, ուր 1877 թ. հոկտեմբերից մինչև 1879 թ. կեսերը Բաֆֆին որպես մանկավարժ աշխատել է տեղի դպրոցում: Մտապատկերիս մեջ արդեն դարակազմի լուսանկարներ են: Քվաց՝ շփոթում եմ նկարները: Այս մեկը Ազուլիսը չէ: Երևի Շուշին է՝ մինչև հրկիզվելը: Ինչո՞ւ եմ շփոթում: Ա՛խ, ճակատագիրը... Նույն հրդեհն ու ավարը, եղեանն ու թալանը...

Մյունաշարերով պայտաները կա՞ն: Սրագմբեթ վանքերը կա՞ն:

«Ես չկամեցա Քիֆիլիսում մնալ, երբ Ազուլիսի հոգեբարձությունից հրավեր ստացա: Ինձ միշտ սիրելի էր հեռու մնալ քաղաքի աղմկալի կյանքից և գյուղական պարզ ու խաղաղ մի անկյունի մեջ ապրել: Ազուլիսը իմ այս ցանկությանը համապատասխանում էր: Այստեղ կարող եմ փոք-ինչ շունչ փաշել և հանգստանալ անցյալ հոգեաժուրյունից»:

Ազուլիսը այգիների մեջ թաղված սովորական գյուղ է: Տեղ-տեղ՝ հում աղյուսից, տեղ-տեղ՝ թերթաքարերից միահարկ տներ: Զախ կողմում բարձր հարթության վրա աղյուսաշեն եկեղեցական համալիր երևաց, Պարիսպը շքեղված աղյուսից էր, ինքը՝ համալիրը՝ թրծած բաց շագանակազույն աղյուսից:

Մեքենան կանգ առավ: Ճանապարհը փակ էր: Ես դեպի եկեղեցին քայլեցի: Շուրջը հսկա ընկուզենիներ էին: Ոչ հեռվում թեթության վրա Ազուլիսի երբեմնի վեհաթյան փլատակներն էին, որ 1919 թվականից մնացել են մինչև հիմա: Ողջ համալիրը քրմիական պարարտանյութերի պահեստի էր վերածված: Կիսաքանդ պատի վրա բարձրանալով, տանիքին հայտնվեցի: Եկեղեցին 6 հզոր սյուների վրա հենված եռանավ բազիլիկ էր, որն ավարտվում էր 8-անիստ գեղեցիկ գմբեթով: Ամառային

կամ սբ. Նշան եկեղեցին կից էր հիմնական եկեղեցուն, գավթի դեր ունեւր այստեղ և հավանաբար, ժողովների, մեծ հանդիսութունների համար էր ծառայում: Ամառային եկեղեցին փաստորեն, բոլոր կողմերից բաց հզոր սյունների վրա հենված բազիլիկ կառույց էր:

Փրեզնոյում (ԱՄՆ) պահվող մի ձեռագրի հիշատակարանում գրված է Մահտեսի Ազարիայի մասին, որը ձեռք է բերել հին գրչագիրը և նվիրել Ազուլիսի Գաշտ գյուղի սբ. Սրբորդութուն և սբ. Նշան եկեղեցիներին: Հիշենք, որ այս Մահտեսի Ազարիային հանդիպել ենք Շենուհայրի կուսանաց անապատի վիճազրութուններում:

Մի քանի ադրբեջանցի վայ գիտնականներ ջանք ու եռանդ չեն խնայում եղծելու պատմութունն ու նախնական երկրամասի հայկական պաշտամունքային և աշխարհիկ հուշարձանները վերագրելու աղվաններին, որոնց միջոցով էլ՝ ադրբեջանցիներին: Ես կգրեմ ճշմարտութունը, ու կեզծիքը ջրի երես կհայտնվի: Իսկ եթե տեղի ադրբեջանցի բնակչութունը կուրորեն հավատում է այդ կեղծ գիտնականներին, որ Զուլայի խաչքարերը իր նախնիներն են կերտել, որ ազուլիսյան հրաշակերտ վանքերի կառուցողները ադրբեջանցիներն են, կամ անդրկուրյան աղվանական ցեղերը, ապա այս համեստ աշխատութունը նոր լույս կսփռի ճշմարտութունը վեր հանելու և ամեն փաստ իր տեղը դնելու համար:

Վարորդին խնդրեցի շրջանցող ճանապարհով Վերին Ազուլիս գնալ: Իրար հետևից իմ առջև հայտնվեցին Ազուլիսի շքեղ եկեղեցիներն ու վանական համալիրները: Սկզբում թեքության վրա երևում են սբ. Աստվածածին վանական համալիրի փլատակները: Վանքը 4-րդ դարում կառուցվել է հեթանոսական տաճարի տեղում: Ապա հայտնվում են սբ. Հակոբ-Հայրապետի, Սահփաննոսի, Հովհաննես-Մկրտիչի, Շմավոնի, Քրիստափորի տաճարները, որոնք գեղեցկությամբ ու ճարտարապետական հորինվածքի տաղանդով ասես մրցակցելով իրար հետ, մեզ փորձում են տեղափոխել դեպի անցյալը, Ազուլիսի երբեմնի ծաղկունքը: Ահա և Գողթնի գեղեցկության թաղը՝ սուրբ Թովմայի վանքը:

Վանքի առջև Ազուլիսի մեծահարուստ խոշաների ապարանքներն էին ու հասարակական այլ շինութուններ: Եկեղեցու դիմաց գետի մյուս ափին Ազուլիսի հուշակավոր մեծ շուկան էր արևելյան ու եվրոպական ապրանքների ճոխությամբ: Առավոտները առևտրականների ու արհեստավորների հպարտ աղջիկներն ու տղաները շտապում էին եկեղեցուն կից դպրոցը: Նրանք գիտեին՝ արդյոք, որ իրենց հայ մեծ վիպասանի աշակերտները լինելու երջանիկ բախտն է վիճակված:

«Ես կհեռավ եմ Թումա առաքելը հոյակապ վանքում. երեք սենյակ ունեմ բոլոր պատրաստի պարագաներով հանդերձ, կացարանիս լուսա-

մուտները երկու կողմից ևս նայում են ծառագարդ պարանգների վերա: Վանքի գավթումն է նաև տղայոց դպրոցը. այստեղ է կենում և վանահայրը,— հայր Սուրենյան վարդապետը, որը միանգամայն թե փոխառյուն է, թե տեղվույս երկսեռ դպրոցների տեսուչն է, այլև դասեր ունի աշխարհագրությունից և ընդհանուր պատմությունից: Հայր Սուրենյանը մի երիտասարդ կրոնավոր է, որ վարդապետական վեղարի ներքո պանպանել է ուսանողի և գիտնականի մաքուր բնավորությունը, շատ եռանդոտ և ազնիվ մարդ է:

Ես ընդունել եմ տղայոց և օրիորդաց դպրոցների բարձր դասարանաց հայոց լեզվի և հայոց պատմության դասերը, շարքաական 24 դաս ունեմ»:

Բաֆֆին Ազուլիսում ձեռնարկում է «Գողթնեցոյ լուսավորական ընկերության» հիմնադրումը, նպատակ ունենալով ժողովրդի շքավոր դասից ուսուցիչներ պատրաստել և գրքեր տպագրել ու ձրի բաժանել շքավորներին: Դա Ազուլիսում Բաֆֆու գլխավոր նպատակներից մեկն էր, որը երևի հանգանակութուններ հավաքելու գործում զժամարտութունների պատճառով շիրականացավ:

Եկեղեցին, ըստ ավանդության, առաջին դարում հիմնել է Քաղնու առաքյալը: Հին եկեղեցու տեղում ազուլիսցիք 1671—75 թվականներին նորն էին կառուցել, որը, անշուշտ, կարևոր տեղ ունեւր հայկական կառուցողական արվեստի մեջ: Նաղաշի որմնանկարները իրենց հերթին հայկական միջնադարյան մոնումենտալ զարդարվեստի մեջ նոր խոսք են: Թմբուկի զարդամոտիվների մեջ առանձնանում են վեցթևանի քերովրհները:

Բաֆֆին շատ անգամ է հիացել ուլ միջնադարի հայ մեծ վարպետի հանճարով: Ամեն առավոտ գրողը տաճար էր մտնում ու այնքան աղթելու կամ ազուլիսցիներին ցույց տալու իր հավատը (նա հետո էր այդ մտքից), այլ կրկին ու կրկին զգալու ներդաշնակութունը, հաղորդակցվելու պայծառի հետ ու միշտ լավատես լինելու: Այդ տրամադրությամբ էլ մեծ գրողը մտնում էր կից քարավանատունը, որը տրամադրվել էր վարժարանին:

«Եվ այսպես, ես ամեն օր կեսօրից հետո ազատ ժամեր ունեմ իմ առանձին գրավոր աշխատություններով զբաղվելու, որոնց մեջ գտնում եմ իմ գլխավոր միխթարությունը: Տեղվոյս հասարակությունը բավականին համակրական է, շնայելով, որ գյուղում են ապրում, բայց բալորովին կրթյալ քաղաքացու կյանք են վարում. նրանց ընկերությունը ոչ սակավ զվարճություն է պատճառում ինձ: Գլխավորն այն է, որ բավականին խաղաղասեր և ազնիվ մարդիկ են»:

Վանքի տարածքում փնտրում եմ Դավիթ-Բեկի հավատարիմ զինակիցներից մեկի՝ Մելիք-Փարսադանի տապանաքարը, որին դավաճանաբար սպանել էր Ազուլխսի քաղաքապետի ու Գողթանի տեր Մելիք Մուսան: Մ. Չամչյանը իր «Հայոց պատմության» մեջ նկարագրելով ճակատամարտից Դավիթ-Բեկի հաղթանակով վերադառնալը Ազուլխ, նշում է, որ այնտեղ կային «տասն հազար տունի հայոց»: Դավիթին, որը իր թիկնապահներով մնացել էր սբ. Թովմայի վանքում, Ազուլխի քաղաքապետը շրջապատում է, պաշարում վանքը:

Վանքի տարածքում բոլոր գերեզմանաքարերը տեղահան են արված ու փորված:

1879 թվականի սկզբներին ազուլխցիների կենսական շահերը պաշտպանելու նպատակով Բաֆֆին պայքարի մեջ է մտնում տեղի վաշխառուական խավերի և դպրոցի «բարերար» ու «հիմնադիր» համարվող աղաների հետ: Նրանց հակամարտությունից էլ ծնվում է նրա «Ես ֆելիետոնիստ չեմ» երգիծական գործը, որտեղ սուր ծաղրի է ենթարկում ազուլխցիներին: Ըստ հավանականության, այն գրվել է Բաֆֆու զայրացած պահին, որը հատուկ էր գրողի խառնվածքին:

«Ես ներում եմ և աշխատում եմ մոռանալ այն բոլոր անիրավությունները, որով վարվեցան ինձ հետ իմ թշնամիքը և Բեխտոնեական անիրաշարությամբ ցանկանում եմ, որ աստված նեռու պանեք այդ ողորմելիներին իրենց մոլորություններից...»

Բաֆֆու այս տողերը գրվել են թավրիզցիների հասցեին: Բայց դրանք կարող են վերաբերվել և ազուլխցիներին:

է՛հ, եթե նա կանխատեսեր Ազուլխի ճակատագիրը...

1919 թվականի ամռանը օսմանցիները տեղի մուսավաթականների հետ ազուլխցիներին հավաքում են դպրոցի մեջ, զեղեցիկ կանանց ու աղջիկներին իրենց հարձ կամ կին ընտրում, մնացածներին փակում և հրգեհում դպրոցը, թալանում, ավերում ողջ Ազուլխսը:

Թվում է, լսում եմ ողջակեզ լինող մարդկանց կանչերը, օգնություն աղերսող աղաղակները:

Եթե Բաֆֆին կանխատեսեր այս ամենը, երկի կողբար, որովհետև սիրել էր Ազուլխը իր շքեզ պալատներով, եկեղեցիներով, «սառն և մաֆուր աղբյուրներով», որոնց անուշ զոողանջը թնվալով զարկվում էր մերկ ապառաժներին, սահում վեր, ապա ցրվում քաղաքով մեկ, թափանցում մարդկանց հոգիները, երջանկացնում ողջ Ազուլխսը: Կուզենայի, թեկուզ երազում, հանդիպել գրողին ու հայտնել Ազուլխի ճակատագիրը, ասել, որ անունն էլ չկա, ոչինչ չկա՛, չկա՛, չկա՛...:

Ասում են, այժմ Ազուլխում 70-ամյա միայնակ մի կին է ապրում, որը միակ հայն է գլուզում: Նա հայերի հանդիպելիս անիծում է, նախատինքներ թափում, որ չեն պահպանել «հայոց փոքրիկ Փարիզը», Գողթնի ազամանդը:

Հսկա սոսիների տակ աշխցիները թեյ էին խմում:

Ես մտազդր էի այստեղից Բիստ գնալ:

— Չէ՛, ճանապարհ չկա,— ասաց ուղեկիցս:

Մենք հետ, դեպի Ազա շարժվեցինք:

— Ի՞նչ եք կարծում, ս՛ամն են այս շինությունները,— դեպի վանքերը ցույց տալով հարցրեց ազրբեջանցի մի ընկեր:

— Հայկական են,— հանգիստ ասացի ես,— բայց այժմ ում էլ պատկանեն, համաշխարհային արժեք ունեն և պետք է պահպանվեն:

— Դա ճիշտ է,— ասաց ազրբեջաներենի ուսուցիչը,— բայց հայերը չեն կառուցել:

Ուղեկիցս նկատի ունի Գ. Ախունդովի այն կարծիքը, ըստ որի Արցախ-Ղարաբաղի, Սյունիքի ու Նախիջևան-Գողթնի բոլոր պատմաճարտարապետական հուշարձանները աղվանական են, տեղի բնակիչները՝ հայացած աղվաններ: Պանթուրքիստ գիտնականների ազդեցության տակ գտնվող Գ. Ախունդովին թվում է, թե կեղծելու, հայկական կուլտուրան ազրբեջանականին վերագրելու, յուրացնելու հեշտ ու հիմնավոր միջոց է գտել, այն է, ամեն ինչ սկզբում աղվանական համարել, ուստիսի պես ձգել պատմական Աղվանքի սահմանը, հասցնել՝ ուր որ իրենց պետք է:

ԵՐ. ՅՂԱՄ ՑԵՂ ԱՆԻՐՅ

Հսկա ընկուզենիների միջից հանկարծ հայտնվեց Յղնան: Լեռնային գետակը քարերին խփվելով, նույն թափով ցած էր սահում: Հեռվում երևում էր ամպերի մեջ գլուխը կորցրած Ուլուսասարը:

Ուսուցիչ Արամ Դավթյանը ինձ իրենց տուն առաջնորդեց:

— 150 տարի առաջ են պապերս կառուցել,— բացատրեց նա, ցույց տալով հին թաղածածի նկուղները: Այստեղ ամեն ինչ շնչում էր 18-րդ դարով՝ 2 մետրանոց հսկա տաշտը, բարակ ճիպոտներով նրբահյուս արկըն ու թթոցները, աշխատանքային ու կենցաղային իրերը: Չեղնահարկի սենյակներից մեկում երկու մեծադիր նկարներ էին կախված: Առաջնում պապն էր՝ Եվրոպական փողկապով ու կոստյումով՝ ազգային տարազով կնոջ հետ, երկրորդում՝ հայրը՝ գեղջիական հագուստով: Առաջինը վերաբերում էր անցյալ դարի վերջերին, իսկ երկրորդը 1930 թվի

լուսանկար էր: Ահաշին տպագրութիւնն այն էր, որ Յղնան բազաբա-
կրթութիւնն անկում էր ապրել:

— Բաճճու մասին ոչինչ չե՞ն պատմել գլուղի մեծերը, — հարցրի
ես, գետակի երկայնքով քայլելիս:

— Զէ՛, ոչինչ չեն պատմել, — մտածկոտ ասաց առանց դարձրի
մնացած ուսուցիչը, — բայց ճանապարհորդութիւն սիրող վիպասանը
հազիվ թե մեր գլուղը այցելած չլիներ, մանավանդ, որ Ագուլիսը հե-
ռու չէ:

Գլուղի հրապարակում թթենու ճյուղից հին մեծ զանգ էր կախված:
— Ամեն երեկո մաքրում էին հրապարակը, հաճաքվում ու դիտում
խոյրերի մենամարտը, — ասաց մաթեմատիկայի նախկին ուսուցիչը, —
մեկի պոզերը կարմիր էին ներկում, մյուսինը՝ կապույտ: Իսկ երեկոյան
50—60 հոգի ժորայենց տանն էին հավաքվում, լսոտ խաղում, ապա մեծ
սեղան պցում և ընթրում միասին:

Խուսափելով քարակերտ ջրատարի մեջ ընկնելուց, սալահատակած
փողոցով թեքութիւնը դեպի վեր եմ քայլում: Բարձր պարիսպները ընդ-
հատվում են նախշազարդ բռնակներ ու գամեր ունեցող դարպասներով:
Զգացվում էր Յղնայի դարբինների երթմնի մեծ վարպետութունը, ու
նաև սերը դեպի հայրենի գլուղը, շրջապատը գեղեցկացնելու ձգտումը:
Հանկարծ ավարտվեց փողոցն ու կանաչազարդ տարածքում տուֆակերտ
մի հսկա կառույց հայտնվեց: Հին գլուղի կյանքը քայլ առ քայլ բացում
էր իր մանրամասները:

Բազիլիկ կառույցի գմբեթի վեղարի մի մասը փլվել էր: Տաճարին
առանձին շքեղութիւն էր հաղորդում հովհարածէ վեղարով ու բազում
կամարներով եռահարկ գեղեցիկ դանդակատունը: Հարափային մուտքի
շուրջը երևում էին նույնանման մեկ այլ դանդակատան հետքերը: Մի բեռ-
նատար ավտոմեքինս եկավ ու կանգնեց սլաքների արանքում: Բացեցին
դուռը: Տաճարը պահեստի էր վերածվել: Բակում խաղացող երեխաները
թափով ներս մտան ու սկսեցին հատակին ինչ-որ բան փնտրել: Ազդե-
շանցի պահեստապետը գուրս քշեց նրանց: Երեխաների ձեռքերին ձվեր
ու թռչի ձագեր էին: Հարյուրավոր աղավնիներ էին լուսամուտից լու-
սամուտ թռչում ու ծվծվոցներով լցնում տաճարը: Հատակին 10 սմ հաս-
տութիւնը ծերտ էր կուտակվել: Երեկ ողջ 50 տարի այստեղ ոչ ոք չի
մաքրել: Հատակին, պատերին, ամեն տեղ աղավնիների բույներ էին՝
ճտերով կամ փոքրիկ ձվերով լցված:

Մը. Աստվածածին եկեղեցու մոտ հին գերեզմանոցն էր, որտեղ իմ
ուշադրութիւնը գրավեցին դամբարանագրերը:

«ԱՄԵՆԱՐՉ ՄՏԱՅ ԳԱՌՆ ՕՐՎԱ ՀԱՄԱՐ, ԾԱՂԻԿ ԲԱՅՎԵՑԱՎ ՍԵՎ ՀՈ-

ՂԻ ՀԱՄԱՐ, ԿԵԱՆՔԻ ՔԱՂՅՐ ՕՐԵՐՄ ԳԱՌՆՈՒԹՅՈՒՆ ԳՏԱՅ, ՅԱՎԻ ՅԱՆ-
ԶԱՆՔԸ ՄՐՏՈՒՄՄ ՄՏԱՍ, ՀԱՆԵՑ ՈՒ ՄԱՇԵՑ ՄԻՆԶԵՎ ԳԵՐԵԶՄԱՆ, ԹՈՂ-
ՆԵՆՈՎ ԱՄՈՒՄԻՆՍ ՈՒ ՈՐԳԻՐՄ,

ԱՅՅԵՔ ԾՆՈՂՔ, ԱՅՅԵՔ ՍԻՐԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱԿԱՆ,

Է՛Լ ՉԵՔ ՏԵՄՆԷԼ ԻՆՁ ՄԻՆԶԵՎ ՀԱՎԻՏՅԱՆ»:

Մեկ այլ տապանաքարի կարգում եմ՝

«ԵՐԳՈՒ ԹՈՒՄԲ ԱՀԱ ԱՆՄԵՂ ԵՐԻՏԱՍԱՐԳՆԵՐ, ԱՀԱ ՄԱՐԴԿԱՆՅ
ՋՈՂԵՐ, ՈՎ ԱՅՍՏԵՂԻՑ ԱՆՅ ԿԵՆԱ, ՅԻՇԻ ՄԱՐՏԻՐՈՍ ԵՎ ՄԿՐՏՈՒՄ:

ԳՆԴԱԿԱՀԱՐ ՋՈՒՅԳ ՆԱՀԱՏԱԿԻ ԱՆՊԱՐՏ ԱՐԻՆԸ ԼՃԱՅԱՍ ԱՅՍՏԵՂ
ԲՈՂՈՔՈՒՄ Է ՍՈՍԿԱԼԻ ԵՂԵՆԷՆ ԾՆՈՒՆԻ ՏՎՈՂ ՄՈՒՆԳԵԱՍ ՉԱՐԱԳՈՐ-
ՄԻ ՔԱՐԱՅԱՍ ԵՂՃԻ ԴԵՄ:

ԸՆԴ ԱՐՁԱՆ ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ ԱՆՄԵԻԹԱՐ ՄԱՐՏԻՐՈՍԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ
ՍԱՀԱԿԵԱՆՅ ՎԱԽՃ. 1909 թ. 23 ՍԵՊՏ. 28 ԱՄՈՑ ՀԱՍԱԿԻ

ԸՆԴ ԱՐՁԱՆ ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ ԱՆՄԵԻԹԱՐ ՄԿՐՏՈՒՄԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ
ՂՈՎՏԵԱՆՅ ՎԱԽՃ. 1909 թ. 23 ՍԵՊՏ. 43-ԱՄՅԱ ՀԱՍԱԿԻ»:

— Ովքեր են զույգ նահատակները, — հարցրի նավասարդ Հովհան-
նիսյանին, որը եկեղեցու հարևանութիւնը էր ապրում:

Նավասարդը, կարծես մի կերպ պոկվելով մտքի հոսքից, անշտապ
սկսեց խոսել:

— Հայրս՝ Ստեփան Հովհաննիսյանը պատմել էր այդ մասին: Յղ-
նայի փոստը նախկինում Ագուլիսից էին ստանում: Եւրաթիվա մեջ 2
անգամ գնում էին, ձիով գլուղ հասցնում: Մարտիրոսն ու Մկրտումը,
որոնք նոր էին եկել օտարութիւնից ու երեկ այնտեղից ուղարկած ծան-
րոցների էին սպասում, ստանձնեցին նամակների, ծանրոցների՝ և 500
ոտրլի Յղնա բերելու գործը: Հետ վերադառնալիս հանկարծ դիմակավոր
մարդիկ են կտրում նրանց ճանապարհն ու հրացանների փողերը դիմ
անելով՝ պահանջում 500 ոտրլին: Մկրտումը ճանաչում է Փառակա գյու-
ղում ապրող իր մորաքրոջ որդու ձայնը: Մարտիրոսն էլ մյուսներին է
ճանաչում ու կանչում՝ «Դեռոգ, Արամ, Սարգիս, խելքներդ կորցրե՛՛լ եք,
ինչ էջ: Այդ պահին էլ պայթում են հրացանները: Հետո են իմանում, որ
փառակեցի աղաները, որոնք հեղափոխական շարժման մեջ էին ընդ-
գրկված, նպատակ էին դրել այդ փողերով կաշառել նախընտանի բան-
տապետին ու ազատել կալանավոր մի հեղափոխականի:

— Իսկ Բաճճու Յղնա գալու մասին հայրդ ոչինչ չե՞ պատմել, —
հարցրի ես:

— Բաճճու՛, — նավասարդը մտածմունքի մեջ ընկավ, — ապա ասաց, —
չէ, չի պատմել: Բայց ավելի լավ է քեզ տամ հորս տեսքերը: — Անդա-

նին գրեց հաստափոր 9 տետրեր:— 1980-ին մահացավ 94 տարեկան հասակում: Կյանքի մինչև վերջին ժամը գրում էր:

Անհամբերությամբ թերթում եմ տետրերը, շտապում նյութեր քաղել գյուղի անցյալից: Նավասարդի հայրը գրում է, որ անցյալ դարում 700 տուն կար գյուղում, իսկ Հայրենական պատերազմի նախօրյակին այդ թիվը 170-ի էր հասել՝ 900 բնակիչներով:

— Հիմա ինչքա՞ն բնակիչ կա գյուղում,— հարցրի ես:

— Հայե՞րը,— հարցրեց նավասարդը,— մի 40 տուն է մնացել, մի-այն տարեց մարդիկ են:

— Բայց գյուղը մեծ է երևում:

— Հա, բա ի՞նչ, արդեն աղբեղանական գյուղ է, անունն էլ են փոխել:

— Ինչպե՞ս, Յդնա չի կոչվո՞ւմ:

— Ո՛չ, Չաննաբ է հիմա...

Ծանր լուսթյուն տիրեց: Երևի նավասարդը մեկ-մեկ մտաբերում է հայրենի գյուղը լքելու մանրամասները, մտովի խոսում, բացատրություն պահանջում, ի վերջո, արդարացյալ խոսքեր գտնում:

— Ինչո՞ւ գնացին:

— Եսիմ,— ասաց նավասարդը,— 50-ական թվականներին հանկարծ սկսեցին քոչել: Մի ժամանակ խոսակցություն կար գյուղի անունը Կոմիտաս դնել, կիսանդրին էլ կանգնեցնել, բայց ոչինչ չստացվեց:

— Կոմիտասը կապ ունի՞ գյուղի հետ:

— Բա ո՞նց: Նրա ծնողները Յդնեցի էին ու այստեղից էին Քուրթաչի Քյոթապիա քաղաքը գաղթել: Նրանց տան պատերը հիմա էլ կան, Սողոմոնենց Գևորգի տուն են ասում:

Շարունակում եմ թերթիկ Ստեփան պապի տետրերը:

«1895 թվականի հուլիսի վարդիօր լույս երկուշաբթի սաստիկ անձրև եկավ: Գիշերը զորոց, սելավ էր լցվել ձորը, ամեն ինչ ջարդում, առաջն արած քշում էր: Տերթիկենց Գասպարի խանութը, որ շուկայում էր, տարավ: Մի թուրքի, որը այդ գիշեր ավանակին նստած Ուստուպ էր գնում, քշել էր, կորցրել: Հաջորդ օրերին շամփուրներով ցեխաջրի մեջ մեր գյուղացիք նրան էին փնտրում: Սելավը ջրազացներն ու կամուրջները քանդել, լցրել էր ներքևի բաղնիքը: Հաջորդ գարնանը մեր այգու մեջ խնձորենու բնին փաթափված մի թուփ չիթ գտանք...»

Ստեփանը մանրամասնորեն հիշում է իր հոր պատմությունները, նկարագրում 18-րդ դարի երկրորդ կեսի Յդնան, աշխարհի հետ նրա կապերը, լավ ու վատ օրերը, հաղթանակներն ու պատմությունները...

«Մի Աստվածածնի պատկերազարդ վարագույրը, որը 7 արշին երկա-

րություն և 4 արշին բարձրություն ուներ, նապոլեոնենց Ակունին կտրվե- տել էր, մեծ տաշտի մեջ դրել, լվացել:

— Այ Ակուն, անաստված, ի՞նչ ես արել,— ասել էր Արշավիրը:

— Քո խելքը ինչ է կտրում, Արշավիր, Յ չուխտ պարկ է դառել:

Եկեղեցու գմբեթի խաչը հանողին նախագահը երեք աշխօր է խոստանում:

Յդնաչի շուկայում Ավետիսն ու Ակուփը վիճում են, որը հայհոյանքի է վերածվում:

— Ես Ակուփը չլինեմ, թե ձեր ցորենի դեզը շայրեմ,— զայրացած սպառնում է Ակուփը: Սակայն երեկոյան հիշում է իր սպառնալիքն ու մտածում. «Հանկարծ Ավետիսի թշնամիները շղնան հրդեհեն դեզն ու իր վրա գցեն»: Ակուփը վերցնում է հրացանը և ուղիղ Ավետիսենց կալատեղը գնում: Մինչև կալը ծեծելը Ակուփը գիշերները հսկում էր իր հակառակորդի դեզը»:

Անցնում եմ փայտե կամուրջը և մոտավոր ուղղություն վերցնելով դեպի բարձունքի ապառաժները ու կիսաքանդ տները, անցնում եմ անծանոթ փողոցներով, մտովի գրուցում Ստեփան պապի հերոսների հետ: Իմ առջև մի եկիզեցի հայտնվեց: Երևի այստեղ էր, որ «100-ամյա Համաս-նանը ձեռնափայտը ջրուտ ձեռքով բռնած, տեր Սարգսին է հանդիպում:

— Բարի ողջուն, Համաս նանի,— ասում է քահանան:

— Տեր հայր, առողջությունդ ո՞նց է:

— Երկար եմ ապրելու, Համաս նանի, էնքան երկար, որ քեզ էլ կթաղեմ, հետո մեռնեմ:

— Է՛, տեր հայր,— պատասխանում է պատավը,— ես յոթ տերտեր եմ թաղել, ու ոնց որ երևում է՝ Ց-րդն էլ պիտի թաղեմ...»

Եկեղեցին 1968 թվականից գյուղական ակումբի էր վերածվել: Բարձունքից երևում են գյուղի տները: Իրիմացի լանջին աղավինների երամբ ապառաժից ապառաժ էր թռչում, քամու բերանն ընկած սլանում դեպի եկեղեցու գմբեթը:

Երևում է գյուղի կենտրոնը: Պատկերացնում եմ այն՝ լցված ջահելներով, որոնք խոչերի մեհամարտով են հրճվում: Հավանաբար, այդ մարտնչող խոչերի ոգին այդ մարդկանց է փոխանցվել:

«1919—20 թվականներին Թրքահայոց ու Պլան վայրերում դիրք մտած մի քանի հոգով պահակություն էինք անում: Փոխարինող պահակախումբը ուշանում էր: Որոշեցինք ընդառաջ գնալ: Տեսնում ենք բուրն էլ շուկայում հավաքված, արջ են մորթում: Լուր հասավ, թե Ղարավուլի Գյաղիկում զինված թուրքական մեծ ջոկատ է հայտնվել: Հրացանի երեք

կրակոցով նավասարդը գյուղին տազնապի նշան հաղորդեց: Անմիջապես ամեն մեկը նախապես որոշված իր դիրքը մտավ: Մղուց Քրիստափորը «Մաքսիմ» գնդացիքը շալակած Պլան էր շտապում: Աղունց Քար վայրում նավասարդը հրահանգներ էր տալիս, կազմակերպում գյուղի պաշտպանությունը: Քշնամին սկսեց գրոհել: Աբաս Գյուլի բեգի ավազակախումբն էր Բոհուդ-Վեդիից: Հրետանային զորքերի պաշտոնաթող սպա Հանփոն գիրքերում իր ձուլած թնդանոթներն էր տեղագրում: Մեկ ժամ հետո որոտացին թնդանոթները: Քշնամու գիրքերում խառնաշփոթ սկըսվեց: Ազադակելով թողեցին գիրքերն ու հետ փախան: Այսպես փրկվեցին Ցղնա, Ռամիս, Փարակա, Բիստ, Ալահի և Մասրվանիս (Մեսրոպի ավան) գյուղերը:

Իսկ խաղաղասեր Ագուլիսը ողջակեզ եղավ:»

Հասա Սողոմոնենց տան տեղը: Աղյուսե պատերն են մնացել: Կոմիտասի հանճարի ակունքները ես Գողթանում եմ տեսնում, երգ ու երաժրշտությունը, Աստվածածնի զանգերի ղողանջներով լեցուն այս ձորի մեջ: Ամեն ինչ այստեղ իր հնչողությունն ունեւր: Կարծես լսում եմ հորովելը, ապա զանգերի անուշ ու մեղմ ղողանջը, քաղցր պատարագը: Յղնան երգ էր, Գողթան աշխարհի երգը: Հողե պատերը խլացնում են երգը: Գիմացի ապառաժը իր մեջ պահում էր երգը, ձայնը զրնգոցով հասնում էր լեռան կատարը, մենավոր փոշնուն: Յղնան այսօր մոռացել է երգը: Զորը լուս է: Գետը խուլ միալար խշշում է: Ճարած, փլված պատը հիշում է...

— Ուրիշ ո՞վ կարող է անցած-գնացած դեպքերից պատմել,— հարցրի Ա. Դավթյանին:

— Իհարկե, Սուրենը: Նրա գլխով շատ բաներ են անցել: Բայց նրա կինը քանի ամիս է՝ հիվանդ է, ինքն է միակ խնամողը, հավանաբար գրուցելու տրամագրություն չունենա:

Արամի որդու՝ Գուրգենի հետ երեկոյան Յղնաի նեղ, սալահատակած փողոցներով դեպի Սուրենենց տուն ենք գնում:

— Նախապես պատմեմ Սուրենի մասին: Մեր գյուղում նրա անունը «Ղաշաղ Սուրեն» են դրել: Կարծեմ, 20-ական թվականներին էր, որ հրազենը պետությունը հանձնելու մասին հրահանգ եղավ, Սուրենին մի ուրիշ մարդու հետ հրացանները ձեռքներին բռնեցին, խլեցին ու մինչև հարցաքննելը բանտարկեցին: Սուրենը, որի հետ խորամանկության մեջ հագիվ թե որևէ մեկը կարողանար մրցակցել, իսկույն գտնում է ելքը: Նա բարձր ձայնով զոկերի բարբառով սկսում է մի երգ ծոր տալ ու երգի միջոցով բնկերոջը հասկացնել, որ իբր այսինչ տեղում ծառը կտրելիս փշա-

կում են հրացանները գտել: Ընկերը, որը որոշ բաներ չէր հասկացել, կրկին երգով հարցնում էր, խնդրում, որ նորից պատմի: Այդպես նրանք խոսքը մեկ են անում ու ազատվում:

— Սուրեն քեռի՛, այ Սուրեն քեռի՛,— մի մեծ դռան մոտ կանչեց ուղեկիցս:

80-նն անց, ուզրեկական թասակով մի բարձրահասակ մարդ բացեց դուռը:

— Սուրեն քեռի,— դիմեց Գուրգենը,— կարևոր գործ կա:

— Ո՞վ ես,— հարցրեց նա, ուշադիր զննեց դեմքը,— հա՛, մեր վարժապետի տղան ես: Ի՞նչ է պատահել:

— Երևանից է ընկերը, ուզում է գրուցել քեզ հետ:

— Հրուցելու ոչ ժամանակ ունեմ, ոչ էլ՝ տրամագրություն,— կրտրուկ պատասխանեց նա, ապա դարձավ իմ կողմը,— քեզ ի՞նչ է հետաքրքրում:

— Անցյալից, հին դեպքերից...

— Երկու հազար տարի գյուղը պահել են, էս վերջի 30—40 տարիներին ոչնչացրել: Ինչ ասեմ:— Լռեց, ապա շարունակեց,— ինչ որ ասեմ՝ ճիշտ չի հասկացվելու, հակա է դուրս գալու: Ոչինչ էլ չեմ ասի:— Հետ դարձանք: Թողակառու ուսուցիչ Արամ Դավթյանի հոգսերը անցյալից մեր ժամանակները վերադարձան:

— Գյուղի ութ վետերաններ հավաքվեցինք, դիմում գրեցինք, որ բնկուղենիները հատկացնեն մեզ: Վերջապես, մեր պապերի դրած բնկուղենիներն են, չէ՛: Մինչև հեղափոխությունը Մոսկվային ամենաշատ բնկուղյղ մատակարարող գյուղն էր Ցղնան: Մոսկովյան մի ֆիրմա հատուկ գալիս, գնում էր մեր բնկուղյղը: 10 հատը մի կուպեկ արժեքի: Տարեկան 300 տոննա բնկուղյղ էին առաքում: Էս վերևում մի գյուղ կա, Ստուպի ենք ասում, միշտ կտրում են մեր ջուրը: Ցավ ու կրակ է մեր գլխին: Հազար տարի այդ ջրից ենք օգտվել, հիմա թե՛ մեր ջուրն է:

— Այժմ քանի՞ ընտանիք կա գյուղում:

— Դե ո՞նց ընտանիք ասեմ դրանց: 40 հայկական ընտանիք և ոչ մի երեխա: Միայն թողակառուներն են մնացել:

— Իսկ աղբրեջանակա՞ն:

— 10 տուն: Դպրոցը աղբրեջանական է: Մի ուսուցիչ կա՝ 16 երեխա ունի է՛, ավելի լավ է՝ հին բաներից պատմեմ...

«Քավրիզ» անունով հյուրանոցի բակում հին արեւելյան բաղնիքների գմբեթներն են: Երբեմնի բաղնիքը վեր է ածվել դիսկոտեկայի:

— Ավելի ճիշտ չէ՞ր լինի հին բաղնիքը վերականգնելու: Դա ավելի մեծ արժեք կունենար,— ուղեկցիս դիմեցի ես:

— Ձէ, շինութեան հիմքը ցածր է, ջուրը հեռացնելու հնար չկա:

Քաղնիք-դիսկոտեկայի մուտքի մոտ քարակերտ խոչըր էին դրված: Դրանք, անշուշտ, Զուղայից են բերվել: Քարակերտ հուշարձաններից մեկի մեջքին մնացել են մետաղյա հատիչի հետքերը: Ինչ-որ մեկը անշնորհք ձևով հանել, շնչել էր հայոց գրերը: Քայց մնացել են մի քանի տառանշաններ: Երկար նայում եմ խոչերին ու իմ մեջ արթնանում է վաղեմի երազանքը. լինել Զուղայում և տեսնել հուշակալոր խաչքարերը, որոնք, անշուշտ, հայ ժողովրդի ստեղծագործական հանճարի ու գոյատևման վկաններն են և լիովին իրավունք ունեն մտնելու համաշխարհային արվեստի ոսկե զանձարանը:

Նախ Ազր. ԽՍՀ գրողների միութեան նախիջևանի մասնաճշուղի քարտուղար Իբրահիմովը, ապա մարզկոմի պրոպագանդայի բաժնի վարիչ տեղակալ Ալիևը առանձին-առանձին հանդիպեցին ինձ և հայտնեցին, որ իրենց հանձնարարված է ինձ ուղեկցել մինչև Սաղարակ՝ ՀԽՍՀ սահմանը: Ես, չենթարկվելով այդ առաջարկությանը, շարունակեցի ժամաօրնալ քաղաքին և համառորեն Բաֆֆու հետ կապված որևէ հետք որոնել:

Մամա Խաթունի դամբարանի (12-րդ դար) բակի սալահատակած հարթակում անկանոն ձևով ցուցադրված են հին Զուղայից բերված 25 խոչեր և տապանաքարեր: Հիշեցի Բաֆֆու մի արտահայտությունը այս հուշարձանների մասին.

«Սյունիքում շատ կան այդ արձաններից և դա զինվորական խորհրդանիշ է. խոյ նշանակում է ռազմիկ, նակատ առ նակատ կովոզ, հետևապես, դրանք պատերազմում ընկած հերոսների հուշարձաններն են»:

Հետաքրքիր է, քրիստոնյաների մահարձանները այլևս չե՞ն «պղղ-ծում» մահմեդական սրբավայրը: Դե իհարկե, այստեղ չկան Զուղայի հրաշագեղ խաչքարերը: Դրանք դեռևս լիովին չեն «յուրացվել» ավա-նական կուլտուրայի կողմից՝ չնայած Գ. Ախունդովը իր «Հին և վաղ միջնադարյան Ադրբեջանի նարտարապետությունը» գրքում դրա մի շատ անհաջող և ծիծաղելի փորձ էր արել:

Շուկայից ոչ հեռու մահմեդական մեջիթի մուտքից ոտից գլուխ սպիտակ շորով փաթաթված կանայք ու ջահել աղջիկներ էին ել ու մուտ անում: Ընդհանրապես, փողոցներում հաճախակի կարելի էր նման հան-

դերձով կանանց հանդիպել: Նրանց տեսնելիս ամեն անգամ թվում էր, թե պարսկական որևէ քաղաքում եմ հայտնվել: Հենց շուկայի մոտ տուֆակերտ մի կառույց նկատեցի: Եկեղեցի էր, որի բակը սպորտհրապարակ էր վերածվել, իսկ տաճարը՝ ինքնավար հանրապետության սպորտկոմիտեի: Այն 1869 թվականին հիմնված սբ. Գևորգ եկեղեցին էր:

Քիչ անց երկրագիտական թանգարան մտա: Այստեղ մեծ ջանասիրությամբ ցուցադրված են հայկական հինավուրց մշակույթը, արվեստի, աշխատանքի ու կենցաղի նմուշները, որոնք շոսյուրեն աղվաններին կամ ադրբեջանցիներին են վերագրված: Կարծես թե այս երկրամասում հայերը երբեք գոյություն չեն ունեցել, ու ինքնավար Հանրապետության ողջ տարածքով սփռված 4500 պատմաճարտարապետական հուշարձանները պարտավոր են պոկվել տեղից ու հեռանալ իրենց օրինական տե-րերի հետևից:

Սակայն ինձ ամենից շատ հետաքրքրողը սբ. Երրորդության եկեղեցին էր, որը ոչ մի տեղ չգտա: Այս եկեղեցու հետ էր կապվում արաբ պատմագիրների կողմից «Կրակի տարի» հիշատակված 705 թվականի ահեղ եղեռնագործությունը: 703 թվականին Վարդանակերտ քաղաքի մոտ (Քուտ և Արաբս գետերի միախառնման տեղից ոչ հեռու) պարտություն կրելով հայերից, արաբները որոշեցին որևէ կերպ ոչնչացնել հայոց ուժերը: 705 թվականին, իբր թե մատչաններում ցուցակագրելու և ոռճիկ բաժանելու նպատակով, արաբ խալիֆ Վալիդի դավադիր ծրագրով հայոց բոլոր նախարարներին իրենց հեծյալ գնդերով կանչեցին Նախիջևան: Իրենց պարզամտությամբ խարեություն գտն դառնալով, հայ նախարարներից 800 հոգի բանտարկվեցին Նախիջևանի սբ. Երրորդության եկեղեցում, 400 հոգի՝ հարևան կրամ ավանի եկեղեցում, ինչպես պատմիչ Ղևոնդն է գրում՝ «...հրակեզ արարին և տոշորէին ի յարկան աստվածային խորանին»:

«Պատմությունը կրկնվում է»,— գրում է Բաֆֆին: 1919 թվականին այստեղից ոչ հեռու Ազուլիսում, արդեն դարձյալ, նույնը կրկնում են թուրք և մուսավաթ եղեռնագործները:

Սուրբ Երրորդություն եկեղեցին հիմնահատակ ոչնչացվել է 1975 թվականին:

Բաֆֆու այցելության ժամանակ Նախիջևանի գավառը կազմում էր երևանյան նահանգի մի մասը: Ղևոնդ Ալիշանը գրում է Վիլլոզ քարոզչի հայերից լսած այն ստուգարանության մասին, քստ որի իբր թե «Նոյը շուանով շափել է հատակատեղին և շինել քաղաքը, որի պատճառով և կոչվել է Նախշուան»: Ե. Լալայանը նկարագրել է Նոյի դամբարանը: Բնիկ նախիջևանցիները հարյուրավոր տարիներ խնամքով պահպանել են այն,

իսկ ահա վերջին մի քանի տասնամյակներում այն խնամքով էլ ոչնչացվել է: Նահանգի մասին ամենահին տեղեկությունը տալիս է մեծ պատմահայրը, գրելով, որ Քրիստոսից 6 դար առաջ Երվանդյան Տիգրանը «Անուշիւն, Ածգահակի առաջին կնոջը և նրա ազգակից ուրիշ շատ աղջիկներ պատանիներով և ուրիշ գերիներով, 10 հազարից ավելի, բնակեցրեց Մեծ սարի արևելյան կողմում, մինչև Գողթնի սահմանները... մինչև Նախիջևան ամրոցը: Նոցա տալիս է նույնպես 3 քաղաքներ՝ Խրամ, Զուղա և Խոշակունիք, իսկ գետի մյուս կողմին տալիս է բոլոր դաշտը»: Սկզբում Նախիջևանը Վասպուրական աշխարհի կազմում էր: Մական 8-րդ դարի սկզբներին բնական դիրքն ու քաղաքական հանգանակները պատճառ դարձան, որ այն անցնի Սյունյաց աշխարհին: Մեկ շար հետո Արծրունյաց տունը այն հետ պահանջեց:

Նախիջևանը գտնվելով Հնդկաստանի և Փոքր Ասիայի առևտրական ճանապարհին, պատմական տարբեր ժամանակաշրջաններում զարգացել է, ապա ավերվել, կրկին վերականգնվել, ու կարծես ոչինչ էլ չի եղել, շարունակել է առևտրական գործը:

Նախիջևանը երկար ժամանակ կովածաղիկ էր Արծրունյաց և Բագրատունիների հարստությունների միջև: Չնայած Նախիջևանը արաբ կուսակալների նստավայրն էր, այն միշտ էլ հայկական գավառ էր մնացել: Ուելլամ Ռուբրուսի քարտեզը 1254 թ. անցնելով այս երկրամասով, այստեղ մինչև 7800 եկեղեցի է հաշվել: Խաչիկ Կաթողիկոսը 976 թվականին իր կոնդակներից մեկում նշում է, որ նրա թեմում այն կոչվում է «առաջին հոյակապ և հոշակավոր մայրաքաղաքն Նախշավան»: Շատ անգամ է Նախիջևանը զոհ գտնում սելջուկների, թաթար-մոնղոլների, ապա թուրքերի ու պարսից ուխտադրուժ արշավանքներին: Դավիթ-Բեկը իր 6 հավար կտրիճներով կովելով պարսից Ասլամազ Ղուլի խանի 14 հազարանոց բանակի դեմ, հաղթել է ու ազատագրել Նախիջևանը, նրանց Արաքսի այն կողմը բռնել:

Շրջում եմ քաղաքի փողոցներում ու մտածում, թե ինչու այն չբացեց իմ առջև իր գաղտնիքները, այդպես էլ ոչինչ չպատմեց Բաֆֆու այլևսությունների մասին: Վերջնականապես մերժվելով բոլոր հյուրանոցների կողմից (Նախիջևանը Բաֆֆու նկատմամբ է՛լ է նույնքան անհյուրընկալ եղել), ես որոշեցի անմիջապես մեկնել Մեղրի:

4. ԱՐԵՎԻԲ

Գետի մյուս կողմում Պարսկաստանն է:

Հարթ կտուրով հողաշին տներ հայտնվեցին: Գյուղի մի կողմում մի-նարեթն էր: Հավանաբար, պուղը էլեկտրականություն չունի, որովհետև սյուններ ու գծեր չէին երևում: Թեք ապառաժին սպիտակ քարերով պատկերված էր Իրանի իսլամական հանրապետության խորհրդանիշը: Երկու հոգի գետից ձուկ էին որսում:

Ավտոբուսը կտրուկ հեռացավ Արաքսից: Ազարակում փոքր քաղաքից հետո շարունակեցինք մեր ճանապարհն ու քիչ անց հայտնվեցինք Մեղրիում: Բաֆֆու 1881 թ. այցելությունը Մեղրի ամենևին էլ առաջինը չէր: Հավանաբար, Ազուլխում աշխատելու ընթացքում ես նա այցելել էր Մեղրի, հետաքրքրվել նրա անցյալով ու ներկայով: Ես արդեն գիտեի, որ ի տարբերություն Նախիջևանի, այստեղ կարող եմ ստույգ տեղեկություններ քաղել Բաֆֆու հետ կապված վայրերի, մարդկանց մասին:

Մեղրու հասարակական առաջին դպրոցի հիմնադրումը կապված է Բաֆֆու անվան հետ: Երբ հոկտեմբերի 20-ին վիպասանը Մեղրի է ժամանում, մասնավոր երեք դպրոցներից մեկի տնօրին Մատթևոս Շաֆյանը խնդրում է նրան օգնել ծրարական մեկդասյա դպրոց բացելու գործում: Բաֆֆին Մեղրիի հոգևորականներին ու մտավորականներին հանգամանորեն բացատրում է հասարակական դպրոց ունենալու անհրաժեշտությունը: Իսկ երբ Փայաջուկում լինելուց հետո Թիֆլիս գնալու ճանապարհին մայր աթոռի Մատենադարանում Դավիթ-Բեկի ու Ղարաբաղի մելիքների մասին արխիվային նյութեր ուսումնասիրելու նպատակով էջմիածին է այցելում, դիմում է Գեորգ 4-րդ կաթողիկոսին, միջնորդելով Մեղրիում դպրոց հիմնելու ձեռնարկին: Եվ ահա հաջորդ տարի, 1882 թվականին Մեղրիում ստանում են Ամենայն հայոց կաթողիկոսի կոնդակը, որտեղ վեհապետը շնորհավորում է մեղրեցիներին դպրոց հիմնելու առթիվ:

Մեղրիում Բաֆֆին տեսնում է Ազուլխի և Շուշիի ազգեցությունը: Այստեղ նա կիրթ և զարգացած մտավորականության է հանդիպում: Մասնավոր երեք դպրոցների ուսուցիչները Շուշիի ահալական ուսումնարանի կամ Թիֆլիսի ներսիսյան դպրոցի շրջանավարտներ էին: Եվ իզուր չէ, որ գրողն այստեղ յուրահատուկ ընդունելություն է գտնում: Նման միջավայրում, ինչ խոսք, որ Բաֆֆու համար իմաստ չէր ունենա անունը գաղտնի պահելը: Վիպասանի պատվին Գողթանում և Արեւիքում մեծ ժողովրդականություն վայելող Անապաստանաց եկեղեցու բակում, թթենիների տակ ճոխ ընդունելություն են կազմակերպում: Ըստ մի ավան-

դուժյան, մեղքեցիք այս վանքում ընդունել և պատվել են նաև մեծ լուս- սավորիչ նաշատուր Արովյանին և պրոֆեսոր Պարրոտին, որոնք պատ- րաստվում էին բրիլիանյան Արարատը բարձրանալ: Հենց վանքի բակում մի խումբ գյուղացիներ մտանում են Բաֆֆուն և խնդրում հոգալ իրենց օրվա հացի մասին: Վիպասանը խոստանում է անպայման գրել նրանց խնդրքի մասին:

Անշուշտ, Բաֆֆուն հետաքրքրել էր Դավիթ-Բեկի գործունեության հետ կապվող Մեղրիի բերդը: Մեղրին իրենց մեջ ներառած՝ ապառաժոտ բարձունքների սուր կատարներին ընդգծվում են հին բերդի աշտարակ- ները: Շրջանի կոմերիտմիության առաջին քարտուղար Ենոք Անդրեաս- յանի ուղեկցությամբ մագլցելով ժայռերը, հայտնվում եմ հին թաղի բերդ-աշտարակի տարածքում: Ըստ Ստ. Օրբելյանի, հինավուրց այս բերդը կարևոր դեր է կատարել 10—11-րդ դարերում, Սյունիքի թագավո- րության ստեղծման և հզորացման ժամանակաշրջանում: Օտար զավթիչ- ներին դիմազորվելու նպատակով Դավիթ-Բեկը հիմնովին վերակառու- ցում է այն: Մեծանուն գիտնական Մորուս Հասրաթյանը գրում է՝ «Առա- ջին կարևոր առանձնահատկությունն այն է, որ Մեղրու բերդը հայկական ճարտարապետության մեջ հայտնի միակ պաշտպանական կառուցվածքն է՝ իրականացված հրազենի օգտագործումը հաշվի առնելով»¹: Բերդը փաստորեն կազմված է վեց սուանձին աշտարակներից՝ առանց պարս- պապատերի: Բերդի պաշտպանական այս հատկություններից գերազանց օգտվելու շնորհիվ է, որ 1724 թ. Դավիթ-Բեկի համախոհները 400 հոգով պաշարված լինելով թուրքական բազմահազարանոց բանակի կողմից, 5 օր անընդհատ հետ են մղել նրանց գրոհները՝ մինչև Դավիթ-Բեկի օգ- նություն հասնելը:

Աշտարակի տարածքից գեղեցիկ տեսարան է բացվում դեպի Մեղրու գեղատեսիլ ձորը, դեպի հին թաղը: Միայն ցավալի է, որ ժամանակակից ճարտարապետները մի առանձին շանք չեն թափել այն գեղեցիկ կա- ռույցներով պատելու համար: Ընդհակառակը, հին Փոքր թաղում սկսված ավերումը կարող է Մեղրին գրկել իր ուրույն դիմանկարից: Փոքր թաղը՝ հին Մեղրու քիչ թե շատ պահպանված թաղամասը, թերության վրա տնե- րի տեղադրությամբ ու ճարտարապետությամբ անցյալ դարի քաղաքա- շինության մի վառ օրինակ է: Այստեղ արդեն զգում եմ Բաֆֆու ժամա- նակի շունչը: Պատերի շարվածքը, թերությամբ վեր գնացող սալահա-

¹ Մ. Հասրաթյանը, ըստ երևույթին, ծանոթ չէր Աննային Ղարաբաղի Գյուլիստանի բերդին, որը 1603 թվականին վերակառուցվում է՝ հարևարեցվելով ժամանակակից հրա- ղենի օգտագործման պահանջներին:

տակած նեղ փողոցները, փողոցի վրա երկու կողմից կախված շքեղ պատշգամբները, կանանց կասկածող ու շփտահող հայացքները, լըթ- ված, անխնամ տները անծանոթ այցելուին համակում են մի ափսո- սանքի զգացումով, որ այս ամենը շի վերականգնվելու ճիշտ կլինի, որ պրանք հատկացվեին կարիքավորներին մի պայմանով՝ վերակառու- ցումն իրականացվեր հատուկ նախագծով: Փոքր թաղի զարդը, անշուշտ, ն. Հովհաննես եկեղեցին էր: Եռանավ բազիլիկը լեցուն էր տախտակամա- ծով: Նաղաշ Հովնաթանի որմնանկարները կարծես հրաշքով երևակվում են մութ խավարից ու հառնում իրենց ողջ հմայքով: Բաֆֆին առաջին իսկ հայացքից ճանաչել էր մեծ գեղանկարչի ձեռագիրը ու համեմատել Ագուլիսյան որմնանկարների հետ:

Ընկերների հետ գնացինք տեսնելու 100-ամյա դպրոցը: Փայայա սյունաշարն ու շինությունները 1882 թվականից մինչև այս նույնն են մնացել:

— 1882 թվականին Մեղրում տոնեցին դպրոցի 100-ամյակը, — ասաց ուղեկցուհին՝ Մեղրիի միջնակարգ դպրոցի փոխտնօրեն Լիլիա Պողոսյանը, — բայց դա միանգամայն սխալ էր:

— Ինչո՞ւ, — հարցրի ես, — չէ՞ որ այս դպրոցն իրոք 100 տարե- կան է:

— Շենքն է 100-ամյա, իսկ, ընդհանրապես, Գրիգոր վարժապետը Մեղրում դեռևս 1832 թվականին է դպրոց հիմնել, — ոգևորությամբ պատմեց դպրոցի երիտասարդ փոխտնօրենը, — իսկ մինչև 1882 թվականը այնտեղ երեք դպրոց էին գործում՝ ս. Աստվածածին եկեղեցում, Գործա- բանային թաղում և Փոքր թաղի ս. Հովհաննես եկեղեցու գավթում:

Այնուհետև նա պատմում է երկգասյա դպրոցի, նրա առաջին ուսու- ցիչների մասին:

— Հովհաննես Տեր-Գրիգորյանը ուսաց լեզու, թվարանություն, ընդհանուր աշխարհագրություն էր ավանդում, շաբաթական 30 ժամ, 450 ուրբլի ուժեղով, — ասաց ուսուցչուհին այնպիսի համոզիչ տոնով, կարծես թե անձամբ տեսել էր նրան, — Մատթևոս Շահինյանցը, որը փաստորեն դպրոցի հիմնադրման նախաձեռնողն էր, հայոց լեզու և բնա- գիտություն էր դասավանդում՝ 100 ու ուժեղով: Երրորդ ուսուցիչը Երմո- գինոս Տեր-Պետրոսյանն էր՝ կրոնի, հայոց պատմության, վայելչագրու- թյան, երգեցողության առարկաներ էր դասավանդում՝ 170 ուրբլի ու- ճեղով: Զանգը ագուլիսցի Մակարյանն է բերել Ագուլիսից: Իսկ առաջին հոգաբարձուներն էին Ազա Վաչյանը, Փարամաղ Սարգսյանն ու Կարա- պետ Խաչիկյանը: Ի միջի այլոց, Բաֆֆուն հյուրընկալել է տանուտեղ Վաչյանը:

Այնուհետև ուղեկցուհիս ցույց է տալիս իր տետրերը, որոնք լցված են հին գրույցներով ու ավանդութիւններով: Հիացած ուսուցչուհու այս գործունեութեամբ, հենց նրան եմ վերագրում Շուշիի հոգևոր դպրոցի ուսուցիչ եղած իր յանձնարարական մասին Բաֆֆու խոսքերը:

«Նա իրեն նպատակ է դրել ամեն տեղ պատահած գրչագիր մատ- յաններէ հիշատակաւորները արագրելու, այլև հավաքելու այն բեր- նացի ավանդութիւնները, որոնք ժողովրդի մեջ պահպանված են գաւա- ճան ավերակների, բերդերի, ժայռերի, բլուրների և այլ վայրերի մասին: Իմ Շուշիում եղած ժամանակ պարտք տվեց ինձ իր հետաքրքիր հավա- քածուն: Այդպիսի շատ գյուտեր կարող են պատահել, միայն թե հետա- խույզներ լինեն»:

Արխիվային նյութերից վերցված վիճակագրական տեղեկութիւններում ասվում է, որ «1890 թ. դպրոցն ավարտել են 6 հոգի, 16-ը մնացել են նույն դասարանում, 4-ը ազատվել են»: Ինչպես երևում է, 100 տարի առաջ ուսուցիչները, հակառակ ժամանակակից ուսուցիչների, ամենևին էլ ընդունակ չէին կոմպոզիցիաների ու աշքի էին ընկնում անվիշում խստու- թյամբ: Ուսուցիչները հիմնականում Քիֆլիսի ներսիսյան դպրոցի կամ Շուշիի ռեալիական ուսումնարանի շրջանավարտներ էին: Նշանավոր ուսուցիչներից էր Գևորգ Խարմանյանը, որը ներսիսյան դպրոցից հետո մեկնել էր Փարիզ, տեղի համալսարանում ուսումնասիրել ֆրանսիական գրականութիւնը, ապա վերադարձել Մեղրի: 1913 թվականին մեղրեցի- ները մեծ շուքով տոնեցին նրա մանկավարժական գործունեութեան 25-ամյակը: Խարմանյանը ամենևին էլ չէր բավարարվում դասեր տալով: Նա դպրոցում ուսուցիչների ու աշակերտների ուժերով թատրոն էր հիմնել և ներկայացումներ բեմադրել: Երկրորդ սերնդի ուսուցիչներից Ղևոնդ Մեծլումյանը սկզբնական կրթութիւնը ստացել էր Մեղրիում, ապա սո- վորել Շուշիի թեմական դպրոցում, հետո ավարտել Մոսկվայի Լազար- յան ճեմարանը, իսկ 1887—90 թվականներին ուսանել Բեռլինի համալ- սարանում, այստեղ լսել Ֆրիդրիխ Էնգելսի դասախոսութիւնները: Մարք- սիստական գաղափարներով Մեծլումյանը վերադառնում է Մեղրի և իր գիտելիքները փոխանցում մատաղ սերնդին: Ուսուցիչներից նշանավոր էր նաև Ազարիա Աղելյանը, որը ուսանել էր Ռիգայում, այնտեղ բարե- կամացել Ստեփան Շահումյանի հետ: Վերադառնալով Մեղրի, նա ման- կավարժութեանը զուգահեռ գրադպել է գրական գործունեութեամբ, գրել մի շարք վիպակներ:

Լ. Պողոսյանը գրի է առել նաև ազգագրական տոների, ծեսերի մա- սին ժողովրդական ավանդութիւններ ու զրույցներ: Իսկուհի տատը բանա- հավաքին պատմել է Հոռոթնիկի տոնի մասին, որի արմատները, ըստ

Հավանականութեան, պետք է փնտրել հեթանոսական ժամանակաշրջա- նում: Պատկերացնում եմ, թե ինչպես Մեղրիի գեղեցիկ աղբիկները վաղ գարնանը կտրտում են ուռնու մատղաջ ճյուղերը ու շատալում դեպի Անապաստանաց եկեղեցին, որտեղ քահանան իրեն հատուկ հանդիսու- թյամբ օրհնում է ճյուղերը, բերրիութիւն: առատ տարի մաղթում: Աղ- ջիկները օրհնված ճյուղերից պսակներ էին հյուսում, խնամքով պահում մի շաբաթ, հույս ունենալով, որ դրանք կօգնեն իրենց առջև բախտի գոնէր բացվելուն ու անպայման երջանկութիւն կբերեն: Իսկ տղամար- դիկ, հենց եկեղեցու բակում, մեծ սեղան էին բացում, հյուրասիրում բոլորին:

Իսկ 95-ամյա Լուսիկ տատը պատմում է ձման վերջին շաբաթ օրը ավանդաբար նշվող «Սուգուն գիշերված» մասին, որը իսկապես հեթանո- սական տոն էր: Այն աստվածատուր գիշեր էր կոչվում, երբ ոչ ոք իրա- վունք չունէր ընկերոջից վիրավորվելու: Այդ օրը բոլորի տներում պար- տաղիր բլիթներ, լավաջ էին թխում ու մինչև լույս կենդանակերպ դիմակ- ներ հագած իրար տներ այցելում, կատակում: Այս տոնին չէին մասնակ- ցում միայն աղջիկները, որոնց ծնողները նրանց նախապես փակում էին թոնրատներում: Հաճախ տղամարդիկ կանացի շորեր էին հագնում, կանայք՝ տղամարդու Նրգն ու պարը, կատակները, ուրախ արամազրու- թիւնը կարծես երկնքից ցած էր թափվում, լցվում բոլորի տները, պա- տում ողջ Արևիք ու Գողթան գավառները: Այցելուին տանք ինչ որ դուր գար, կարող էր իրեն վերցնել: Թույլատրվում էր թռչնանոցից հավ բը- նել: Լուսիկ տատը հիշում էր, թե ինչպես մի այցելուից քանդակաղարդ շիրուխն էր վերցրել և նվիրել իր խանդոտ ամուսնուն:

85-ամյա Վահան պապը պատմում էր «Կանաչ-կարմիր» տոնակա- տարութեան մասին: Ուշ աշնան վերջին կիրակի օրը առավոտյան մեղ- րեցիք կանաչ ու կարմիր շորեր հագած, մրգերով, ուտելիքով լի սկու- տեղներով Ագուլիսից, Յղնալից, Գողթան և Արևիք գավառների բոլոր բնակավայրերից եկած հյուրերի հետ հավաքվում են Անապաստանաց եկեղեցու բակում, զոհեր մատուցում, սեղաններ բացում և ուրախանում մինչև ուշ գիշեր:

Ըստ երևութիւն, հենց այս ավանդութիւնները, տոներն են, որ Փա- րիզում, Բեռլինում կամ այլուր ուսանելու մեկնած մարդու մաս կարոտ են առաջացնում դեպի հայրենի գյուղը, երկիրը, ժողովուրդը: Ու այդ սերը, կարոտը միշտ հաղթանակել են եվրոպական մայրաքաղաքների գայթակղիչ ուժի նկատմամբ, նրանք առանց տատանվելու հայրենի տուն են վերադարձել, մատաղ սերնդին փոխանցել ձեռք բերած գիտե-

լիքները: Յավոթ, այժմ նույնիսկ Երևան սովորելու մեկնող երիտասարդ-ները այլևս Մեղրի շին վերադառնում:

1984 թվականին մեղրեցիք «Կանաչ-կարմիր» ավանդական տոնը վերակենդանացնելու փորձ արեցին, այն նշելով քաղաքային մարզադաշտում: Սակայն այն, կարելի է ասել, ոչնչով չէր տարբերվում շատ շրջակենտրոններում ավանդաբար նշվող բերքի տոններից: Թվում է, հարկ կա այն առանձնացնել բերքի տոնից և վերականգնել Անապաստանաց եկեղեցու բակում իր հինավուրց ձևով ու ծեսերով:

Հինավուրց Արևիք գավառից (Մեղրու շրջան) կրկին մեկնում եմ Գողթան, բայց մտովի շարունակելով մասնակցել Հոռոթի կիկի, Կանաչ-կարմիր և «Մազուն գիշեր» տոնակատարություններին, քայլում Փոքր Մազի նեղ փողոցներով:

ԱՆ. ՈՐԴՈՒԱՐԻ ՄԻԱԿ ՎԿԱՍ

Գնում եմ Որդուար (Օրդուբադ): Մտովի տեսնում եմ Մխտորաշենի հսկա սոսիս ու այն տեղադրում այսօրվա Օրդուբադի կենտրոնական հրապարակում, փշակում տեղադրում թեյարանը, շուրջը՝ առավոտից մինչև ուշ երեկո թե՛ խմող հաճախորդներով:

Որդուարի ծառը, որի տրամագիծը 18 մետր է հասնում, իր շափե-րով գերազանցում է դարաբաղյան հսկային, Հին, նախաքրիստոնեական ժամանակաշրջանում սոսիս որպես սուրբ ծառ պաշտամունքի առարկա էր: Հեթանոսական տաճարները շրջապատված էին որոշակի դասավորություններով տեղադրված հսկա սոսիսներով, որոնց սոսափյունի տակ էլ քրմերը կատարում էին իրենց ծիսակատարությունները:

Պատմելով քրիստոնեությունը տարածելու նպատակով Բարդուղիմեոս առաքյալի Գողթան գալու մասին, Ստ. Օրբելյանը գրում է. «Քանի որ Որդուար գյուղում վնասակար էր ջուրը, որ ամեն տարի ոռոգում էր բուրդ դաշտերն ու այգիները, աղոթեցին ու հանկարծակի խափանեցին այդ ջուրը, որի տեղը մինչև այսօր էլ երևում է»: Թվում է, որ պատմիչի նկարագրած այս իրադարձությունը կապվում է հին պատմության միակ վկայի՝ հսկա սոսու ճակատագրի, նրա լինել-չլինելու հետ: Ես արդեն պատկերացնում եմ բիրլիական անձնավորությանը հսկա սոսու տակ քարոզ կարդալիս կամ քրմերի հետ հավատքի շուրջ վիճելիս: Անշուշտ, այս ծառի տակ մեկ անգամ չէ, որ հանգստացել էր իր ստեղծած գրեթե ամբողջ կյանքը և համառոտ հեթանոս մնացած գողթանցիներին քրիստոնեությունից դավանանքին բերելու նպատակով այստեղ եկած Մխտորա Մաշտոցը: Ոչ հետո մի լեռան լանջին է գտնվում Մխտորապան (այժմ՝ Նասրվազ) գյուղը, որի մոտ, պատմիչ Կորյունի վկայությամբ, մի քար-

անձավում երկար ժամանակ (17 տարի) իր աշակերտների հետ մնացել էր մեծ գիտնականը:

Այդ սոսու տակ երեի հանգստացել են վարդան Մամիկոնյանը, Մովսես Խորենացին, Կորյունը, հայոց մյուս մեծերը: Վերջապես, հինավուրց Որդուար է եկել նաև Դավիթ-Քեկը, որը իր ջոկատով հսկա սոսու տակ մի փոքր դադար է առել՝ Մեղրու պաշտպաններին օգնության գնալու ճանապարհին: Ինչ խոսք, որ այս ծառով հիացել է ու նրա հովանու տակ հանգստացել մեծ վիպասանը՝ Բաֆֆին, Հայոց մեծերի երեսակայական այս շքերթով հիացած ես շանում էի մնալ երազի աշխարհում, երբ ավտոբուսը, Օրդուբադ չհասած, ցնցվեց, շարժիչը փնչացրեց ու կանգ առավ:

«Երեկոյան խավարը դեռ այնքան չէր թանձրացել, որ դժվար լինե՞ր առարկաները որոշել: Առջևում երևում էր խիտ այգիների մեջ թափված Օրդուբադը: Փռե-ինչ հեռու Արաբսը մի արծաթյա ժապավենի նման ոլորվում էր ձորի միջով: Գետի մյուս ափի վրա Քամ-Լուի լեռան բարձր գագաթը կիսով չափ ծածկված էր մթին ամպերի մեջ: Կայծակը շեշտակի կերպով նեղեց այդ ամպերը և նրան հետևեցին սաստիկ որոտ և դրդյուն: Կարծես, ամբողջ երկինքը թափ ավեցին, և անձրևը միանգամից սկսեց հեղեղի նման թափվել»:

— Գողթանի՞ց եք:

— Երնշակից: Բելիֆոն Ալեքսանյան: Շահբուզի շրջանի Արինջ գյուղից եմ:

— Կա՞ ձեր գյուղը:

— Կա: Բայց 1982-ին հայերը լքեցին գյուղը:

— Ինչո՞ւ, ո՞ր գնացին...

— Տնամերձ էինք ուղում՝ մերժեցին:

— Դու ինչո՞ւ չգնացիր:

— Ո՞ր գնամ...

Մանր լուսնու տերեց:

— Ինձ Օրդուբադի մեծ սոսին է հետաքրքրում: Կարդացել եմ նրա մասին, բայց չեմ տեսել:

Դառը ժպիտ երևաց տանջահար, իրենց լեռների պես հողմ ու անձրևից ակոսներով պատած լայն դեմքին: Պատասխանն ուշանում էր: Գլուխը ժխտական շարժեց: Շարժեցին շուրթերը:

— Զկա ծառը... — ասաց նա:

— Ինչպե՞ս...

— Այրվել, ոչնչացել է... — արագ կտրեց նա:

Թվաց, դատավճիռ են կարգում: Ոչ թե մի հանցապարտ մարդու, ծառի, այլև ամբողջ մի երկրամասի, ժողովրդի համար...

Ես կորցրի հայոց մեծերի հետ կապող երազ-թելը:

Ա. Թիֆլիսի հարյուրամյա հմայքը	3	Ա. Եւր հանգիստում	107
Բ. Դեպի Գանձակ	7	Բ. Հաղարթի հանապարհին	111
Գ. Կիրովաբադը երեկ և այսօր	8	Կ. Մանգի	114
Դ. Նյենգուֆ-Խանյար	13	Լ. Տոզ (Դոզ)	117
Ե. Հինավառց Գետաշենում	15	Լե. Գաիչ	123
Ջ. Տեւ Դանիելի գյուղը	24	ԼՁ. Ազոխ	125
Է. Մըջազարձ զնայի Բաֆֆի	27	ԼԵ. Ամաբաւ	126
Ը. Եպրաֆայա կայսի երկրում	28	ԼԸ. Հայոց մեծ ծառ	127
Թ. Կարաշինար	32	ԼԹ. Սյունիք	129
Ժ. Գյուլիստան	33	Խ. Խենարեսկ	135
ժԱ. Խարխափարի ձորանովտում	39	ԽԱ. Դեպի Միսեռնավանք	140
ժԲ. Հոռեկ	42	ԽԲ. Կյարես	145
ժԳ. Մատաղիսում	47	ԽԴ. Քարահունք	150
ժԴ. Վաչագան Բարեպաշտի շիրիմը	49	ԽԵ. Բարգուշատի ձոր	154
ժԵ. Տոնաշենցիք	53	ԽԶ. Տաթև	159
ժԶ. Տրուռական	59	ԽՁ. Հիւ Շինումայր	162
ժԷ. Հանդիպում	62	ԽԼ. Արծվանիկ	166
ժԸ. Ինը մաս	65	ԽԸ. Եղվառչ	173
ժԹ. Կուսանայ անապատ	66	ԽԹ. Կապան-Ղափան	178
Ի. Հարսեփ	68	Ս. Զեկու բերդը	183
ԻԱ. Դադի վանք	72	ՍԱ. Կրկին Տաթև	185
ԻԲ. Մաւտակերտ	78	ՍԲ. Հեքահունք	187
ԻԳ. Բաֆֆու ձեռագիրը	77	ՍԳ. Ըղբւծծ	188
ԻԴ. Գանձասար	80	ՍԴ. Բանակօր	192
ԻԵ. Քալատակ	89	ՍԵ. Երեջակ	196
ԻԶ. Տիգրանակերտ	91	ՍՁ. Ազա	199
ԻԷ. Շուշի	92	ՍԼ. Ազուլիս	203
ԻԸ. Դանբավը հիշում է	99	ՍԸ. Յղնա՝ ջեղ Անիից	207
ԻԹ. Վառանդա	103	ՍԹ. Խալիչկան	214
Լ. Ղաւարադի ճորովելը	105	Կ. Արևիք	217
		ԿԱ. Յրդանուսի միակ վկան	222

Бакур Аванесович Карапетян
«СТОЛЕТНИЙ ДИАЛОГ»

(На армянском языке)
Ереван «Айастан» 1990

Խմբագիր՝ Վ. Մ. Սարգսյան, Եկաբիչ՝ Ս. Ս. Մկրտչյան,
գեղ. խմբագիր՝ Դ. Ա. Պապոյան, տեխն. խմբագիր՝ Գ. Բ. Խանապետյան,
վերտուսողող սրբագրիչ՝ Կ. Ա. Տանոյան

ИБ 5973

Հանձնված է շարվածքի 2. 11. 1989 թ: Ստորագրված է տպագրության 23. 03. 1990 թ.:
ՎՅ 06429: Յորմատ՝ 60×84/16: Թուղթ՝ տպ. № 2: Տառատեսակ՝ «Գրքի տվարական»: Տպագրություն՝ բարձր: 14,41 պարմ. տպագր. մամ., 19,97 պարմ. Կերկ թերթ, 12,51 հրատ. մամ. + 12 ներգիր: Տպարանակ՝ 20 000: Պատվեր՝ 2358: Գրենք՝ 1 ս. 30 կողմ:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Ավ. Բաշակյան 28:

Издательство «Айастан», Ереван—9, ул. А. Исаакяна, 28.

ՀեՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի արտադրության կենտրոնի կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆիկոմբինատ, Երևան—9, Տեքյան 91:

Полиграфкомбинат им. Акопа Мегапарты Госкомитета Арм. ССР по делам издательства, полиграфии и книжной торговли, Ереван—9, ул. Теряна, 91.